ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ-2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ 10

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ 10

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 21

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ 47

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 59

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 89

ԳՈՐԾՈՆԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ) ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 96

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1 97

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում 97

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2 107

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում 107

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3 112

Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում 112

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4 122

ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման ստեղծում 122

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6 132

Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում 132

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7 135

Ազգային ժողովի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (անձ կամ ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում 135

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8 140

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագրի մշակում 140

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 9 143

Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, թեկնածուների, դատախազների թեկնածուների, քննիչների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, դատախազների և դատավորների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում 143

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 10 149

«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում 149

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 11 155

«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում 155

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 12 162

«Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների սահմանում 162

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 13 170

Պատգամավորի, քննիչի, վարքագծի կանոնների սահմանում, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերանայում 170

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 14 175

Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում 175

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 15 180

Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում 180

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 16 183

Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում, ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում 183

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 17 187

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցում 187

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 18 191

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում և դրա նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանում 191

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 19 196

Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության ապահովում, Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության դիտարկում 196

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 20 200

Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում 200

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 21 207

Գնումների ոլորտի բարելավում 207

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 22 211

Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրում 211

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 23 216

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում 216

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 24 220

Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում 220

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 25 224

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում 224

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 27 234

ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցում 234

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 28 238

Քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կարգավորումների սահմանում նոր Քրեական օրենսգրքով 238

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 29 241

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում 241

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 30 245

Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում 245
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 31 248
Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով 248
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 32 254
Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում 254
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 33 258
Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում 258
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 34 263
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում 263
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 35 267
Նոր Քրեական օրենսգրքի նախագծով Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում 267
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 36 270
«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում 270
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 37 274
Հանրային իրազեկման արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում 274
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 38 277
«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում 277
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 39 281
Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում 281
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40 284
Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության թեմայով 284
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 41 286
Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում 286

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42 288
Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում 288
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 43 291
Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում 291
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ 294
ՀԱՎԵԼՎԱԾ 1 318
ՀԱՎԵԼՎԱԾ 2 325

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոնիթորինգի և գնահատման սույն եզրափակիչ զեկույցով (այսուհետ՝ Զեկույց) ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրով (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն) 2022 թվականին կատարման ենթակա աշխատանքների իրականացման ընթացքը (այսուհետ նաև՝ գործոնային մոնիթորինգ) և նույն թվականի տարեկան մոնիթորինգի և գնահատման արդյունքները, ինչպես նաև 2019-2022 թվականներին կատարված աշխատանքների՝ եզրափակիչ մոնիթորինգի և գնահատման արդյունքները՝ ըստ այդմ ներկայացնելով նաև պատասխանատու մարմինների կողմից իրականացված աշխատանքների կատարման ընթացքը և դրանց բովանդակությունը (առաջընթացը), շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցությունը միջոցառման իրականացմանը, հանրային քննարկումները և դրանց արդյունքները, ինչպես նաև միջոցառմանը խոչընդոտող կամ անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները (մարտահրավերները):

2022 թվականի տարեկան Գնահատման շրջանակներում համադրվել են յուրաքանչյուր միջոցառման շրջանակներում իրականացված աշխատանքները և այդ միջոցառման համար 2022 թվականին ակնկալվող արդյունքը և վերստուգիչ ցուցիչը (այսուհետ նաև՝ արդյունքային ցուցանիշներ)՝ կատարված աշխատանքների՝ Հակակոռուպցիոն ռազմավարությանը համապատասխանելու, հնարավոր շեղումները և դրանց պատճառները պարզելու, ձեռք բերված առաջընթացը և միջոցառման կատարման կարգավիճակը գնահատելու նպատակներով:

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված աշխատանքների իրականացման (առաջընթացի) գնահատման՝ գործոնային մոնիթորինգի շրջանակում յուրաքանչյուր միջոցառման կատարման գնահատման արդյունքներն արտացոլվել են հետևյալ ցուցանիշներով՝

(1) ամբողջությամբ կատարված է (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 91-100%-ը կատարվել է),

(2) կատարված է մեծամասամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 61-90%-ը կատարվել է),

(3) կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 31-60%-ը կատարվել է),

(4) կատարված չէ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ կամ կատարվել է նախատեսված աշխատանքների մինչև 30%-ը):

Գործոնային մոնիթորինգի և գնահատման շրջանակներում կատարողականի ընդհանուր ցուցանիշը հաշվարկվում է վարիացիոն շարքի համակշռված միջինի հաշվարկման մեթոդով:

Այն դեպքում, երբ արտաքին ազդեցության հանգամանքների պատճառով դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների կատարման ընթացքը կասեցված է, գնահատմանը կից կատարվել է «կատարման ընթացքը կասեցված է» գրառումը:

Գնահատումն իրականացվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի հաշվարկման մեթոդով հետևյալ բանաձևով՝ (ամբողջությամբ կատարված միջոցառումների քանակx1+մեծամասամբ կատարված միջոցառումների քանակx0.75+ մասնակի կատարված միջոցառումների քանակx0,5+չկատարված միջոցառումների քանակx0)/43*100:

Զեկույցում ամփոփված են նաև միջանկյալ ժամանակահատվածում արդյունքային մոնիթորինգի արդյունքները (այսուհետ՝ Արդյունքային մոնիթորինգ): Արդյունքային մոնիթորինգի շրջանակներում, ըստ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված նպատակների, ուսումնասիրվել և վերլուծվել են Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումից (2019թ.) մինչև օրս իրականացված բարեփոխումների արդյունքում փաստացի գրանցված արդյունքները, վիճակագրական տվյալները, ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների գնահատման արդյունքները:

Զեկույցով ներկայացվել է նաև մոնիթորինգի և գնահատման պատասխանատու մարմնի՝ Արդարադատության նախարարության գնահատման և Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման համար պատասխանատու մարմինների ինքնագնահատման արդյունքների համառոտ համեմատականը:

Եզրափակիչ մասում ամփոփված են մոնիթորինգի և գնահատման արդյունքները, բացահայտված խնդիրները, ինչպես նաև ներկայացված են բացահայտված խնդիրների և մարտահրավերների լուծման հնարավոր ուղիները:

Զեկույցի մշակման շրջանակներում հիմք են ընդունվել Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի պատասխանատու մարմինների կողմից Արդարադատության նախարարություն ներկայացված՝ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ 2022 թվականին կատարման ենթակա աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունները (որոնց շրջանակներում պատասխանատու մարմիններն իրականացրել են նաև ինքնագնահատում), իրականացված աշխատանքների վերաբերյալ համացանցում առկա, ինչպես նաև Արդարադատության նախարարության կողմից մոնիթորինգի շրջանակներում ձեռք բերված տեղեկատվությունը, նախկին տարիների հաշվետվությունները, կոռուպցիայի կանխարգելման և կառուպցիոն հանցագործությունների բացահայտման վերաբերյալ վիճակագրական տվյալները, ոլորտային քաղաքացիական հասարակության

կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը և վերջիններիս կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, 2019-2021 թվականների հաշվետվություններով արձանագրված արդյունքները, արդյունքային մոնիթորինգի ցուցիչների առաջընթացի վերաբերյալ տեղեկատվությունը, միջազգային կազմակերպությունների կողմից գնահատման զեկույցները և առաջարկությունները, իրականացված հարցումների արդյունքները, միջազգային հետազոտությունները և վարկանիշային ցուցիչները, ներառյալ՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման 2022 թվականի համաթիվը: Համաշխարհային բանկի կոռուպցիայի վերահսկման ցուցիչը չի դիտարկվել, քանի որ 2022 թվականի վերաբերյալ դեռևս տվյալներ հասանելի չեն և հնարավոր չէ գնահատել Հակակոռուպցիոն ռազմավարությամբ ակնկալվող՝ 2018 թվականի 42.79 ցուցանիշի համեմատությամբ 2022 թվականին արձանագրված 10% աճը:

Զեկույցը մշակվել է Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության կողմից:

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Արդյունքային մոնիթորինգն իրականացվել է՝ հաշվի առնելով հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները: Հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացվում է հակակոռուպցիոն ռազմավարության դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն)[1] հիման վրա, համաձայն որի՝ հակակոռուպցիոն քաղաքականության ուղղություններն են՝

- ✓ Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ձևավորում
- ✓ Կոռուպցիայի կանխարգելում
- ✓ Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում
- ✓ Հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկում
- ✓ Մոնիթորինգը և հաղորդակցում

Արդյունքային մոնիթորինգի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել են Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումից՝ 2019 թվականից ի վեր իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումների արդյունքում փաստացի գրանցված արդյունքները, վիճակագրական տվյալները, ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության գնահատման արդյունքները, որից պարզ է դարձել հետևյալը.

➢ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Դեռևս 2019 թվականի նոյեմբերին ձևավորվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված ինքնավար մարմին՝ անկախության երաշխիքներով: 2019-2022 թվականներին ընդունված օրենսդրական փոփոխությունների արդյունքում էականորեն ընդլայնվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրավասությունների շրջանակը և գործիքակազմը: Մասնավորապես, իրավասությունների ընդլայնման արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին են վերապահվել օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության ուսումնասիրության իրականացման, կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության,

[1] Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշում

նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողության իրականացման և իրավախախտումների դեպքում համապատասխան վարչական պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների ստուգման, կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների կողմից ներկայացվող հայտարարագրերի ստուգումը և վերլուծությունը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուսումնասիրության շրջանակներում հայտարարագրի վերլուծության իրավասությունները, իսկ գործիքակազմի ընդլայնման արդյունքում Հանձնաժողովին օրենսդրական հիմքով հասանելիություն է տրվել պետական տվյալների շտեմարաններին, ինչպես նաև ֆինանսական, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններին, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններին, վարկային տեղեկատվությանը:

2022 թվականի դեկտեմբերին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կարգավորվել են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված հիմնահարցերը, որի շրջանակներում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին են վերապահվել նվերներ ընդունելու արգելքի պահպանմանը հետևելու, նվերների ռեեստրի վարման, նվերների գրանցման և հաշվառման կարգը սահմանելու գործառույթները: Նշյալը հնարավորություն կտա ապահովելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերների հաշվառումը և օրենքով սահմանված մյուս գործընթացների իրականացումը միասնական մեթոդաբանությամբ, ինչպես նաև ապահովելու արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ:

Բացի այդ, 2022 թվականի մայիսին «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում կատարվեցին փոփոխություններ՝ նպատակ ունենալով ապահովելու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության պատշաճ իրականացումը. կատարված փոփոխություններով կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգի սահմանման գործառույթը վերապահվեցին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

2022 թվականի դեկտեմբերին Ազգային Ժողովի կողմից ընդունվեց ««Ազդարարման համակարգի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքները, որոնց արդյունքում սահմանվեցին ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակով ստացված և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորություններին առնչվող դիմումները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից քննվելու կարգավորումները, այդ հաղորդումների հաշվառման և քննարկման կարգը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2022 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունների շրջանակը ևս ընդլայնվել է, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սեփական կարիքների վերհանման առնչությամբ պարբերաբար մշակում և շրջանառության է ներակայացնում մի շարք իրավական ակտեր: Միևնույն ժամանակ, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների կատարման գնահատումից պարզ է դառնում, որ ԿԿՀ-ն չի հասցրել ավատրին հասցնել մի շարք միջոցառումներ, հիմնականում խոչընդոտ դիտարկելով կամ ռեսուրսների անբավարարություն, կամ օրենսդրական կարգավորումների կատարելագործման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, մարդկային ռեսուրսների սղության հարցի լուծման համատեքստում ԿԿՀ-ն որպես անհրաժեշտություն է նշում քաղաքացիական ծառայության համակարգից դուրս գալը և որպես առանձին ծառայություն իր հաստիքների համալրումն արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունը: Ամբողջ վերոնշյալից կարելի է եզրահանգել, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական աճը պետք է շարունակի մնալ հակակոռուպցիոն քաղաքականության առաջնահերթություններից:

Հակակոռուպցիոն կոմիտե

2021 թվականի մարտի 24-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանն ուղղված օրենսդրական ակտերը: Նշված օրենսդրական փոփոխությունների հիման վրա ստեղծվել է Հակակոռուպցիոն կոմիտեն որպես կոռուպցիոն հանցագործությունների գործերով մասնագիտացված և անկախության երաշխիքներ ունեցող քննչական մարմին, որը իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն: Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ:

Հակակոռուպցիոն կոմիտեի մասնագիտական կազմը, այդ թվում՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք, պաշտոնի նշանակվում են մրցութային կարգով, որի շրջանակներում ստուգվում է նաև վերջիններիս բարեվարքությունը: Բացի այդ, Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել է այլ քննիչների համեմատությամբ ավելի բարձր աշխատավարձ և հավելումներ՝ որպես անկախության լրացուցիչ երաշխիք:

Հակակոռուպցիոն կոմիտեի համալրման գործընթացը մեկնարկել է և ներկայումս գտնվում է ընթացիկ փուլում: Մրցութային ընթացակարգի միջոցով արդեն ընտրվել և նշանակվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: ՀՀակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ լուծարվել է Հատուկ քննչական ծառայությունը, միաժամանակ սկզբնական շրջանում Հատուկ քննչական ծառայության 30 քննիչներ նշանակվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններում՝ որպես ժամանակավոր պաշտոնակատարներ՝ մինչև մրցութային կարգով այդ հաստիքների համալրումը: Զուգահեռաբար, Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-

հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման թափուր հաստիքների, ինչպես նաև ինքնավար պաշտոնների լրացման նպատակով անցկացվել են մրցույթներ:

Ներկայումս Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնավարում են 32 ինքնավար պաշտոն զբաղեցնող և 40 օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք, որոնք մրցութային կարգով նշանակվել են համապատասխան պաշտոնների: Հակակոռուպցիոն կոմիտեի մնացած թափուր հաստիքների համալրման նպատակով ներկայումս հայտարարվել են ևս մրցույթներ: Հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական ծառայողների 90%-ից ավելին մրցույթով նշանակվել է համապատասխան պաշտոնների, որոնց մի մասն (25%) արդեն անցել է վերապատրաստումներ: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց 70%-ից ավելին անցել են վերապատրաստումներ:

Զուգահեռաբար աշխատանքներ են իրականացվում Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումների ձևավորման նպատակով:

Գլխավոր դատախազության՝ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանում

Դեռևս 2019 թվականին Գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանով ստեղծվել էր Գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը:

Այնուհետև, Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամբողջականացման նպատակով օրենսդրական փոփոխությունների հիման վրա նշված ստորաբաժանման վերակազմակերպման արդյունքում Գլխավոր դատախազության կազմում 2021 թվականի նոյեմբերի 22-ին ստեղծվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը: Նշված վարչության դատախազների բարեվարքությունը ստուգվել է:

Զուգահեռաբար, Արդարադատության ակադեմիայում 2021-2022 թվականներին նշված ստորաբաժանման դատախազների համար անցկացվել են բազմաթիվ վերապատրաստումներ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող թեմաներով՝ մասնագիտացումը բարձրացնելու նպատակով: Բացի այդ, գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետը և դատախազները մասնացել են միջազգային ուսումնական այցերի:[2]

[2] Գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազները մասնակցել են Խորվաթիայի արդարադատության և հանրային կառավարման նախարարության կողմից կազմակերպված ուսումնական այցին Խորվաթիայի Հանրապետության Զագրեբ քաղաքում: Բացի

Բացի այդ, 2022 թվականի ապրիլի 7-ին իրավական ակտերի փոփոխությունների արդյունքում սահմանվել են հավելումներ Գլխավոր դատախազի, Գլխավոր դատախազի տեղակալների և Գլխավոր դատախազության՝ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն, մեղադրանքի պաշտպանություն, ինչպես նաև այդ գործերով պետության շահերի պաշտպանություն իրականացնող վարչության դատախազների համար:

Հակակոռուպցիոն դատարաններ

2021 թվականի ապրիլի 14-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել և նույն թվականի հոկտեմբերի 29-ին ուժի մեջ են մտել Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական ակտերը: Հակակոռուպցիոն դատարանը ստեղծվել է 2022 թվականի հուլիսին: 2022 թվականի դրությամբ նշանակվել են բոլոր 15 դատավորները, որոնցից 10-ը՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ: Նշված դատավորների բարեվարքությունը օրենքով սահմանված կարգով ստուգվել է: Դատավորների ընտրության գործընթացին օրենսդրական պահանջներին համապատասխան ներգրավված են եղել 1 ազգային փորձագետ (Մարինա Պողոսյան, այնուհետև՝ Վաղարշ Աղաբեկյան) և 1 միջազգային փորձագետ (Վիտալի Վիկտորի Կասկո): Մինչ Հակակոռուպցիոն դատարանի դատարվորների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձինք ուսումնառություն են անցնելու Արդարադատության ակադեմիայում:

Ինչ վերաբերում է Կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով կայացված դատական ակտերի՝ վերաքննության կարգով վերանայմանը, ներկայումս այն իրականացնում են համապատասխանաբար վերաքննիչ քրեական և վերաքննիչ քաղաքացիական դատարանների առաձին դատավորները, որոնց թվակազմը յուրաքանչյուր դատարանում նախատեսվել է առնվազն 6-ը: Վերաքննիչ քրեական և քաղաքացիական դատարաններում 2022 թվականին երեքական առանձին դատավորները նշանակվել են:

2022 թվականին դեկտեմբերի 23-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենսդրական ակտրը, որով նախատեսվում է վերաքննիչ նոր՝ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը՝ սահմանելով, որ 2024 թվական հունվարի 1-ից կոռուպցիոն հանցագործությունների և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված ակտերի՝ վերաքննության կարգով վերանայումն իրականացվելու է նշված դատարանի կողմից:

այդ, 2022 թվականի հուլիսի 13-15-ը ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետը և վարչության ավագ դատախազը Խորվաթիայի Զագրեբ քաղաքում մասնակցել են Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կողմից «Արդարության դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում կազմակերպել իր ուսումնական այցին:

2021 թվականին մշակվել է և 2022 թվականի փետրվարի 9-ին (ուժի մեջ է մտել 2022 թվականի փետրվարի 25-ին) Ազգային ժողովի կողմից ընդունվել է Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն ոլորտային մասագիտացման ապահովմանն ուղղված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որի հիման վրա Վճռաբեկ պալատում, ի թիվս այլնի, նախատեսվել է ստեղծել Հակակոռուպցիոն պալատ, որը քննելու է կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը: Ազգային ժողովի կողմից 2022 թվականի հունիսի 27-30 նիստերի ընթացքում ընտրվել են նաև Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի 6 դատավորները:

Հակակոռուպցիոն դատարանների դատարանի, ինչպես նաև Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորների վարձատրության առանձնահատկություններ են նախատեսվել օրենքով՝ սահմանելով հավելում պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով:

2022 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիան կազմակերպել է Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների 2022 թվականի ցուցակում ընդգրկված 16 (կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի 11, հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի 5) անձանց մասնագիտական պատրաստումը, ինչպես նաև իրականացվել է Վերաքննիչ դատարաններում հակակոռուպցիոն գործեր քննող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2022թ. ցուցակում ընդգրկված 10 անձանց մասնագիտական պատրաստումը:

Զուգահեռաբար, աշխատանքներ են իրականացվում Հակակոռուպցիոն դատարանի շենքային պայմանների ապահովման ուղղությամբ: 2022 թվականի ընթացքում ևս գործուն միջոցներ են ձեռնարկվել Հակակոռուպցիոն դատարանի գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների և նյութատեխնիկական միջոցների ապահովման ուղղությամբ:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2019-2022 թվականների ընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցությունը հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին արտացոլվել է ոչ միայն իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

ներկայացմամբ, հանրային կլոր սեղան քննարկումներին մասնակցությամբ[3], ինչպես նաև հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մարմինների լիազորությունների հզորացմանն ուղղված զեկույցների[4] մշակմամբ և ներկայացմամբ, այլև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներգրավվել են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության գործընթացին՝ որպես Մրցութային խորհրդի անդամ: Ներկայումս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ է ընդգրկված նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմում:

Բացի այդ, 2022 թվականի հունիսի 28-ին և 30-ին «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի նախնական տարբերակի վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, գիտակրթական ոլորտի, գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:

Հարկ է նշել նաև, որ 2022 թվականի մարտի 24-ից 31-ը Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների որոշման նախագծի վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ[5] շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, Փաստաբանների պալատի, գիտակրթական ոլորտի, գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:

2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2020-2021 թվականներին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել է գնահատման հինգերորդ պիլոտային փուլը (այսուհետ նաև՝ ՏՀԶԿ Գնահատում), որի նպատակն էր վեր հանել ոլորտում առկա խնդիրները՝ հնարավորություն տալով երկրներին շտկելու իրենց կատարողականը՝ մինչև 2023 թվականի հիմնական գնահատումը: Գնահատման արդյունքները ամփոփվել են «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» զեկույցում և հրապարակվել են 2022 թվականի մայիսին:[6]

---

[3] https://www.e-draft.am/projects/2256 , https://www.moj.am/article/2517 , https://www.moj.am/press/view/article/2645 , https://ngoc.am/hy/2020/02/12/news/ashkhatazhoghov-3/ , https://www.e-draft.am/projects/2644 , https://www.youtube.com/watch?v=UWFzoFfj0_Q , https://www.moj.am/article/2787 , https://armla.am/47563.htmlv https://transparency.am/hy/publications/view/378, https://transparency.am/hy/publications/view/377 https://www.e-draft.am/projects/3889/about

[4] https://armla.am/wp-content/uploads/2021/03/Final-Civil-Society-Report-Armenia-ALA-UNCAC-Coalition-Arm-Final.pdf

[5] Հանրային քննարկում հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների նախագծի վերաբերյալ - Ստորագրություններ - ՀՀ Կառուցողական ի կանխարգելման հանձնաժողով (cpcarmenia.am)

[6] https://www.oecd.org/countries/armenia/anti-corruption-reforms-in-armenia-e56cafa9-en.htm

ՏՀԶԿ Գնահատման արդյունքներով ըստ կատարողական դաշտերի՝ գնահատվել են հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը և իրականացմանն առնչվող ուղենիշները, հայտարարագրման համակարգի և հայտարարատուների շրջանակի ընդլայմանը, դատավորների համար սահմանված չափանիշներին, դատավորների նշանակման, առաջխաղացման և լիազորությունների դադարեցման առնչվող կարգավորումներին, Բարձրագույն դատախան խորհրդի կազմին և գործառույթներին, Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների ընտրության կառուցակարգերին, Բարձրագույն դատական խորհրդի գործունեության թափանցիկությանը, գնումների ոլորտի բարեփոխումներին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի բարելավմանը, իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվության ինստիտուտի ստեղծմանն առնչվող բազմաթիվ ուղենիշներ:

Միևնույն ժամանակ, ՏՀԶԿ Գնահատման արդյունքում ՏՀԶԿ-ի կողմից մի շարք կարգավորումներ և որոշ ուղղություններով իրավակիրառ պրակտիկան ըստ կատարողական դաշտերի համարվել է խնդրահարույց: Վերջինիս շրջանակներում անդրադարձ է կատարվել ինչպես հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին, այնպես էլ գնահատվել է կոռուպցիայի դեմ պայքարը դատական, դատախազական համակարգերում և քննչական մարմիններում: Համեմատելով գնահատման արդյունքները և ՏՀԶԿ Գնահատման փոփոխված ուղենիշերին առկա իրավիճակի համապատասխանությունը՝ հարկ է առանձնացնել հետևյալ խումբ խնդիրները.

<u>Մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինների վերաբերյալ.</u>

- Հակակոռուպցիոն քննչական մարմինը կամ ստորաբաժանումը չունի հասարակական վերահսկողության գործող մեխանիզմներ, ինչպիսիք են հանրային խորհուրդները, որոնք ներառում են հստակ չափանիշներով և թափանցիկ ընթացակարգով ընտրված հիմնական շահագրգիռ կողմերին:
- Անհրաժեշտ է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ապահովել բավարար մարդկային ռեսուրսներով՝ Հանձնաժողովի ընդլայնված լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով:
- Հակակոռուպցիոն մասնագիտացված քննչական մարմնում քննիչների միջև քրեական գործերի մակագրման, փոխանցման կանոններ սահմանված չեն, մինչդեռ այդպիսիք պետք է սահմանված լինեն և հիմնվեն օբյեկտիվ չափորոշիչների վրա:
- Առկա չէ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոռուպցիոն գործերով քննություն իրականացնող առանձին բաժին:
- Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության նկատմամբ դատախազական հսկողությունն ապահովելու համար անհրաժեշտ է նախատեսել բավարար թվով դատախազներ:
- Դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով հսկողություն իրականացնող ստորաբաժանումը ղեկավարող դատախազը պետք է ընտրվի մրցութային կարգով:

• Առկա չէ հակակոռուպցիոն քննչական մարմինների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու իրական լիազորություններ ունեցող հանրային խորհրդին նման որևէ կառույց կամ աշխատանքային խումբ:

• Առնվազն տարեկան հաշվետվություններում ներկայացված չեն կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ մասնագիտացված քննիչների և դատախազների աշխատանքին առնչվող մանրամասն վիճակագրություն. մասնավորապես պետք է առանձին նշվի բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունների, ընդհանուր առմամբ բացված և դատարան ուղարկված գործերի քանակը, գործերի քանակը, որոնցով վերջնարդյունքում սանկցիա է կիրառվել, կարճված վարույթների քանակը և այլն:

<u>Դատական համակարգի վերաբերյալ.</u>

• ՏՀԶԿ-ն խնդրահարույց է համարել Ազգային ժողովի կողմից դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամ նշանակելու իրավասությունը՝ այն համարելով միջամտություն դատական համակարգի անկախությանը:

• Դատարանների նախագահների պաշտոններում թեկնածուների ընտրության ընթացակարգը բավարար չափով թափանցիկ չէ, իսկ ընտրության չափանիշների օբյեկտիվությունը բարելավման կարիք ունի:

• Դատական համակարգի անկախության երաշխավորման համար հատկացվող ֆինանսավորումը բավարար չէ:

• Դատարանների աշխատակազմի և դատավորների օգնականների աշխատավարձը բավարար չափով բարձ չէ:

• Քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկերների դիրքորոշման համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը բավարար չափով անկախ չէ քաղաքական ազդեցությունից, առկա է հասարակական անվստահություն Բարձրագույն դատական խորհրդի գործունեության նկատմամբ:

• Դատավորների առաջխաղացման գործընթացը չի իրականացվում մրցութային, արժանիքահեն ընթացակարգով, թափանցիկ չէ, չի հրապարակվում:

• ԲԴԽ ոչ դատավոր անդամների ընտրությունը չի իրականացվում արժանիքահեն ու թափանցիկ ընթացակարգով:

• ԲԴԽ-ն պատասխանատու չէ Վճռաբեկ դատարանի դատավորների կարիերային առնչվող բոլոր հարցերով. ընտրությունը, առաջխաղացումը, փոխադրումը, գնահատումը և կարգապահությունը պետք է մոնիթորինգի ենթարկվի ԲԴԽ կողմից՝ հավաստիանալու, որ անձնական կապերի վրա հիմնված ավանդույթները չեն կիրառվում պրակտիկայում:

• ԲԴԽ որոշումները պետք է լինեն թափանցիկ և հիմնավոր (օրինակ՝ առաջխաղացման վերաբերյալ որոշումները)

• Դատավորների շահերի բախման սահմանումը նեղ է, շահերի բախման դեպքում դատավորների ինքնաբացարկի պրակտիկան շատ սահմանափակ է:

- Գործերի բաշխումը պետք է լինի ավտոմատացված, մինչդեռ քաղաքական առումով զգայուն գործերի բաշխման դեպքում այս կանոնը երբեմն կարող է շրջանցվել ԲԴԽ կողմից (օրինակ՝ որպես մասնագիտացված դատավորներ կոնկրետ անձանց նշանակելու միջոցով):
- Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը հստակ չեն և տարընկալումներ են առաջացնում:

<u>Դատախազական համակարգի վերաբերյալ.</u>

- Չի գործում առանձնացված Դատախազական մարմին, օրինակ՝ Դատախազական խորհրդի կամ անկախ փորձագիտական հանձնաժողով, որը կազմված կլինի թափանցիկ ընթացակարգով ընտրված մասնագետներից և կունենա լիազորություն ապահովելու և երաշխավորելու դատախազության մարմնի անկախությունը:
- Գլխավոր դատախազին ընտրում է Ազգային ժողովը՝ առանց արժանիքահեն կամ թափանցիկ մրցակցության, որպիսի պայմաններում քաղաքական որոշման կայացման մեծ ռիսկ է առկա:
- Չկան Գլխավոր դատախազի պաշտոնին հավակնող թեկնածուի նկատմամբ օրենքով սահմանված մասնագիտական պահանջներ կամ չափանիշներ: Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովը կարող է ներգրավել անկախ փորձագետների՝ թեկնածությունները քննարկելու համար, սակայն այն չի օգտվել այս հնարավորությունից ներկայիս Գլխավոր դատախազի նշանակման ժամանակ: Հայաստանում չկան նաև դատախազության ոլորտի կառավարման մարմիններ, ինչպիսիք են դատախազական խորհուրդը կամ, որպես այլընտրանք, անկախ փորձագիտական հանձնաժողովը, որոնք որևէ դերակատարություն (առավել ևս առանցքային դեր) կունենային այդ գործընթացում: ՏՀԶԿ-ն նշված խնդրի լուծման տարբերակ է առաջակում ապօրինի գույքի բռնագանձման հարցերով աշխատանքները համակարգող՝ Գլխավոր դատախազի տեղակալի ընտրության ընթացակարգի կիրառումը:
- Գլխավոր դատախազի ընտրության և լիազորությունների դադարեցման գործընթացներում առկա են թերություններ, մասնավորապես՝ Գլխավոր դատախազի ընտրությանը չի ապահովվում անկախ փորձագիտական կոմիտեի կամ Դատախազական կառավարման մարմնի մասնակցությունը, իսկ լիազորությունների դադարեցման գործընթացին առնչվող կարգավորումները լայն են, ոչ օբյեկտիվ և հստակեցման կարիք ունեն. չեն բացառում նաև քաղաքական կամ այլ միջամտություն:
- Գլխավոր դատախազի՝ պաշտոնում վերընտրվելու հնարավորությունը սահմանափակված չէ, իսկ սահմանված պաշտոնավարման ժամկետը բավականաչափ երկարաժամկետ չէ. Գլխավորը դատախազը կարող է երկու անգամ անընդմեջ ընտրվել նույն պաշտոնին: Նշվածի համատեքստում ՏՀԶԿ-ն ընդունելի է համարում Գլխավոր դատախազի պաշտոնավարման 1 ժամկետի նախատեսումտ, դիցուք, 12 տարով, սակայն առանց վերընտրվելու որևէ հնարավորության, ինչը բավարար երաշխիքներ կստեղծի Գլխավոր դատախազին քաղաքական ազդեցությունից զերծ պահելու համար:

- Գլխավոր դատախազության համակարգը ինքնին ունի կենտրոնացված բնույթ և խիստ աստիճանակարգություն, իսկ գործունեությունն այնքան էլ թափանցիկ չէ:
- Դատախազների նշանակման, առաջխաղացման գործընթացը մրցակցության սկզբունքին համապատասխանող և հստակ չափանիշներով որոշվող չէ, քանի որ գործնականում դատախազների թեկնածուների վերջնական ընտրությունը կատարում է Գլխավոր դատախազը և այդ հարցում ունի լայն հայեցողություն:
- Թափուր տեղերի մասին տեղեկությունները չեն հրապարակվում, գործընթացները թափանցիկ չեն:
- Պարգևավճարների տրամադրման հարցում բացառված չէ Գլխավոր դատախազի հայեցողությունը:
- Գոյություն չունի դատախազական համակարգի անկախությունը երաշխավորող մարմին, օրինակ, դատախազական խորհուրդ:
- Կարգապահական և էթիկայի հարցերով հանձնաժողովի անդամների մեծամասնությունը նշանակվում է Գլխավոր դատախազի կողմից, ինչը խնդրահարույց է: Իսկ ոչ դատախազ անդամներն էլ գերակշռող չեն և չեն կարող ազդեցություն ունենալ որոշումների վրա:
- Դատախազական կոլեգիան կամ այլ համանման մարմինը պատասխանատու է դատախազների կարիերայի բոլոր հարցերով՝ նշանակում, առաջխաղացում և այլն, այդ թվում՝ գնահատման, որն իրականացվում է թափանցիկ և օբյեկտիվ չափանիշների հիման վրա: Իսկ կայացվող որոշումներն էլ հասանելի են լայն հանրությանը: Նրանց գործունեության ընթացքում պահպանվում են շահերի բախման կանոնները: Գործերի բաշխումն ավտոմատացված է:
- Դատախազների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը հստակ չեն և տարընկալումներ են առաջացնում: Մինչդեռ դրանք պետք է սահմանվեն օրենքով և համապատասխան մեխանիզմներով՝ լսված լինելու հնարավորություն և այլն, երաշխավորեն դատախազների իրավունքները:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ (ԳՐԵԿՈ)

ԳՐԵԿՈ-ի կողմից 2015 թվականի հոկտեմբերին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» զեկույցով (այսուհետ՝ ԳՐԵԿՈ-ի զեկույց[7]) Հայաստանին ներկայացված 18 առաջարկություններից 11-ը դեռևս կատարված չէ:

ՄԱԿ-Ի ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

[7] https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia

2018 թվականից մեկնարկել են Հայաստանի կողմից ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 2-րդ և 5-րդ գլխով սահմանված պարտավորությունների գնահատման աշխատանքները, որի նախնական արդյունքներով 2021 թվականի հունիսի 14-ին հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության կողմից «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 2-րդ և 5-րդ գլխով սահմանված պարտավորությունների գնահատման գործառնական համառոտագրություն» փաստաթուղթը[8] (այսուհետ՝ ՄԱԿ-ի գնահատման համառոտագիր), որի արդյունքներով ինստիտուցիոնալ համակարգի առնչությամբ Հայաստանին առաջարկվել է երաշխավորել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների գործառնական, ֆինանսական և որոշում կայացնելու հարցերում անհրաժեշտ անկախությունը:

➢ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ կատարված ընդհանուր բարեփոխումները

Կոռուպցիայի կանխարգելման իրավական գործիքակազմի կատարելագործման նպատակով 2019-2022 թվականներին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

[8] https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf

- Սահմանվել է դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, դատախազների (այդ թվում՝ գլխավոր դատախազի և նրա տեղակալների) և քննիչների (Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների) թեկնածության հավակնորդների/թեկնածուների բարեվարքության ստուգման պահանջ և ներդրվել են համապատասխան կառուցակարգերը, իսկ բարեվարքության ստուգման իրավասությունը վերապահվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:
- Զուգահեռաբար, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստուգվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների, մյուս դատավորների գույքային դրությունը՝ համաձայն օրենքով սահմանված ժամկետների և կարգի:
- Ներդրվել է նոր՝ ծախսերի հայտարարագրման ինստիտուտը: Այս ինստիտուտի շրջանակում հայտարարատուի համար պարտականություն է սահմանվել հայտարարագրելու հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախսը, շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը, ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը, գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը, վարկի մարմանն ուղղված վճարումները, անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը, բացի այդ ցանկացած այլ ծախս, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է երկու միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:Հաշվետու ժամանակահատվածում վերը նշված ծախսերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, կամ նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Նշված կարգավորումների արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հնարավորություն ունի ստանալու ամբողջական տեղեկատվություն հայտարարատու պաշտոնատար անձի ֆինանսական դրության վերաբերյալ, ինչը կնպաստի հնարավոր խախտումների բացահայտմանը: Այսպիսով, 2022 թվականից հայտարարատու պաշտոնատար անձինք հայտարարագրում են նաև ծախսերը:
- Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2022 թվականին ներկայացվող՝ 2021 թվականի տարեկան հայտարարագրերում առաջին անգամ տեղեկություններ են ներկայացվել հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույքի (գույքերի) կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի (գույքերի), կամ անշարժ գույքի (գույքերի), որից (որոնցից) փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:
- Նվազեցվել է օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի դրամական շեմը՝ 8 միլիոնի փոխարեն սահմանելով 4 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արժույթ:

• Ներդրվել է մեխանիզմ, որի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո 2 տարվա ընթացքում անձի գույքի էական փոփոխության (գույքի ավելացում, պարտավորությունների նվազում կամ ծախս) կասկածի դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրավասու կլինի վերջինից պահանջել ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: 2022 թվականի դեկտեմբերի 7-ին Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները: Իրականացված օրենսդրական փոփոխություններով ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակը՝ ներառելով պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարներին: Նշված անձինք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջի հիման վրա կրելու են պարտականություն ներկայացնելու իրավիճակային հայտարարագիր: Վերոգրյալ կարգավորումները կգործեն 2024 թվականի հունվարի 1-ից: Վերանայվել են իրավիճակային հայտարարագրի հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, սահմանվել են իրավիճակային հայտարարագիր պահանջելու հիմքերը:

• Ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը:[9]

Այսպիսով, հայտարարատու անձանց թիվը 2022 թվականի դրությամբ կազմել է շուրջ 6000 հայտարարատու պաշտոնատար անձ:

• 2023 թվականի փետրվարի 1-ից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը գործարկել է հայտարարագրերի ներկայացման նոր էլեկտրոնային համակարգը, որի արդյունքում 2022թ. տարեկան հայտարարագրերի ներկայացման պարտականություն ունեցող հայտարարատուները (պաշտոնատար անձ և ընտանիքի անդամ) հայտարարագիր կներկայացնեն արդեն նոր կատարելագործված համակարգի միջոցով: Կուսակցությունների ընթացիկ և տարեկան ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից փոխանցվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ որպես մասնագիտացված անկախ մարմնի: Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես

[9] Այսպիսով, հայտարարատու անձանց շրջանակը ներառում է հետևյալ պաշտոնները զբաղեցնող անձանց (ինչպես նաև այդ պաշտոնը զբաղեցնող անձանց ընտանիքի անդամները)՝ պետական պաշտոն զբաղեցնող անձինք, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական պաշտոններ զբաղեցնող անձինք, հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, ոստիկանության, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք:

նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն: Հարկ է նաև հավելել, որ վերոնշյալ փոփոխություններով, ընդհանուր պետական ֆինանսավորումից զատ, նախատեսվել է նաև նպատակային պետական ֆինանսավորում, որի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողությունը ևս վերապահվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Հանձնաժողովին վերապահվել է վարչական իրավախախտման վարույթ հարուցելու և վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություն՝ կուսակցությունների հաշվետվության ստուգման արդյունքում օրենքի խախտումներ բացահայտելու դեպքում: Հանձնաժողովին է վերապահվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպումըՀանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից:

• 2022 թվականի դեկտեմբերի 7-ին Ազգային Ժողովի կողմից ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքներով կատարելագործվել են շահերի բախման, անհամատեղելիության պահանջների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները: Մասնավորապես, կարգավորվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված հիմնահարցերը: Թույլատրելի նվերի արժեք է սահմանվել քառասուն հազար ՀՀ դրամը: Մեկնարկել են նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները:

• ««Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-495-Ն օրենքով և հարակից օրենքներով կատարելագործվել են ազդարարման համակարգի իրավական մեխանիզմները, ընդլայնվել են ազդարարման տեսակները, սահմանվել է ազդարարման նոր տեսակ՝ «ազդարարում հանրությանը»: Այսուհետ ազդարարման էլեկտրոնային հարթակի (azdararir.am) միջոցով հնարավոր է ազդարարել նաև շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին: Իրականացված փոփոխություններով ազդարարման հետ կապված հարաբերությունները տարածվել են նաև մասնավոր ոլորտի առևտրային և ոչ առևտրային, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների վրա: Հստակեցվել են նաև ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմները:

• Մշակվել է քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամի ընտրության/նշանակման գործընթացի ընթացքում վերջիններիս բարեվարքության ստուգման կառուցակարգերը սահմանող օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթը: 2022 թվականի ընթացքում Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող թվով 512 անձանց վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն,ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել 505 խորհրդատվական բնույթի եզրակացություններ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՓՈՐՁԸ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020-2022 թվականների գործունեության վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2020-2021 թվականներին հարուցվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 99 վարույթ, անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ 4 վարույթ, շահերի բախման վերաբերյալ 1 վարույթ, 2021թ.՝ 3 կարգապահական վարույթ:
- Հանձնաժողովի կողմից Գլխավոր դատախազություն ներկայացված գործերի առնչությամբ հարկ է նշել, որ 2021 թվականին Հանձնաժողովի կողմից Գլխավոր դատախազություն է ուղարկվել և վերահասցեագրվել թվով 13 գրություն, որից 5-ը քաղաքացիների դիմումներ են:
- Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունների վերաբերյալ հարկ է նշել, որ վերոգրյալի վերաբերյալ Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից 11-ի մասով տրամադրվել է խորհրդատվություն:
- Անհամատեղելիության պահանջների վերաբերյալ տրամադրված պարզաբանումները հիմնականում վերաբերել են հանրային պաշտոնին զուգահեռ այլ վճարովի աշխատանքների կատարմանը կամ որևէ այլ հանրային կամ համայնքային պաշտոն զբաղեցնելուն: Հարուցվել է անհամատեղելիության 3 վարույթ, որոնցից մեկը մարզպետի, մեկը՝ համայնքի ղեկավարի, և մյուսը դատավորի նկատմամբ: Դատավորի նկատմամբ անհամատեղելիության պահանջների խախտման եզրակացության հիման վրա դադարեցվել են նրա լիազորությունները: Նշված վարույթների հիմքում եղել է պաշտոնատար անձանց կողմից պաշտոնին զուգահեռ բիզնես գործունեությամբ զբաղվելու հանգամանքը[10]:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իր աշխատանքի երկու տարիների ընթացքում առնչվել է անհամատեղելիության պահանջների և շահերի բախման հետ կապված մի շարք դեպքերի, որոնց մեծամասնությունը, սակայն, «Հանրային ծառայության մասին» օրենքի ներկա կարգավորումների շրջանակներում հնարավորություն չի ընձեռել Հանձնաժողովին հարուցելու համապատասխան վարույթ և ընթացք տալ:

[10] http://cpcarmenia.am/hy/news/item/2021/12/28/1/

- Դեպքերի մեծամասնությունը վերաբերել է պետական գնումների գործընթացին, որտեղ շահերի բախման ներկա կարգավորումներով ֆորմալ ընթացակարգերի պահպանումը զրկում է Հանձնաժողովին վարույթի շրջանակներում այս կամ այն պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական ազդեցությունը գնումների գործընթացի, կազմակերպվող մրցույթների և դրանց արդյունքների վրա գնահատելու հնարավորությունից: Նշված համատեքստում խնդիր է առաջացրել նաև հավատարմագրային կառավարման ինստիտուտի անկատարությունը[11]:
- Վերոնշյալի առնչությամբ հարկ է նշել, որ Կառավարության 2021-2026 թվակ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ սահմանվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից այլ օրենքների նախագծերի ընդունումը՝ անհամատեղելիության պահանջների, շահերի բախման վերաբերյալ կարգավորումները միջազգային փորձի հաշվառմամբ հստակեցնելու նպատակով, այն հանգամանքի հաշվառմամբ, որ իրավակիրառ պրակտիկայում ապահովվի սույն իրավահարաբերությունների միատեսակ ընկալումը և լրացվեն գործող իրավակարգավորումների բացերը:
- Հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների առնչությամբ հարկ է նշել հետևյալը.
- 2020 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 36 անձի բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել 36 խորհրդատվական բնույթի եզրակացություն:
- 2021 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 103 անձի բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել 96 խորհրդատվական բնույթի եզրակացություն: Մեկ անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխման արդյունքում: Իսկ ուսումնասիրություն անցնող անձանցից 6-ը եղել են Հանձնաժողովի անդամի թեկնածուներ. այս դեպքում Հանձնաժողովն ուսումնասիրում է միայն անձանց գույքային դրությունը:
- Հայտարարագիրը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու կամ համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրված տվյալը սխալ կամ ոչ ամբողջական ներկայացնելու համար կիրառված պատասխանատվության միջոցների առնչությամբ հարկ է նշել, որ 2020-2021թթ վերոնշյալ հիմքերով կիրառվել է 13 վարչական պատասխանատվության միջոց:

[11] http://cpcarmenia.am/hy/news/item/2021/12/28/1/

- Զուգահեռաբար, 2020-2021թթ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ստուգվել և վերլուծվել է 170 պաշտոնատար անձանց հայտարարագրեր, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերը:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի ընթացքում հարուցվել է ընդհանուր **143 վարչական վարույթ,** որից՝ **118**-ը հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ, օրենքի ուժով վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներին զուգահեռ դատավորների նկատմամբ հարուցված **15 կարգապահական վարույթներ**, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով թվով 8 վարույթներ, ևս 1-ը՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով, իսկ 1-ը՝ միայն իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով:
- Հարուցված վարույթներով պայմանավորված՝ Հանձնաժողովի կողմից Գլխավոր դատախազություն է ներկայացվել ընդհանուր 6 վարչական վարույթի գործերի նյութեր: Որոնցից՝ 2021 թվականին հարուցված *թվով 4,* ինչպես նաև 2022 թվականին հարուցված թվով 1 *հայտարարագրմանն առնչվող* վարչական իրավախախտումների գործերի վերաբերյալ վարույթների նյութերը *վարչական գույժի կիրառումից* հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագրերը Հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու ենթադրյալ հանցագործության դեպքերի առթիվ 2022 թվականի ընթացքում ներկայացվել են Գլխավոր դատախազություն:
- Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով 2022 թվականին հարուցված թվով 1 վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից ձեռք բերված նյութերի ուսումնասիրման (գնումների գործընթացում գնումների անցկացման կարգի խախտումներ, իսկ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի) արդյունքում առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերմամբ վարույթը կասեցվել է, իսկ վարույթի նյութերը ներկայացվել են Գլխավոր դատախություն:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ տրամադրված մասնագիտական խորհրդատվության մասին հարկ է նշել, որ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել է իրականացվել է թվով 42 դիմումի և 10 մեդիա հրապարակման ուսումնասիրություն և նշված 42 դիմումների վերաբերյալ տրամադրվել է խորհրդատվություն:
- 2022 թվականի ընթացքում, մեկ դիմումի հիման վրա, Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարույթ Շիրակի մարզպետի տեղակալի նկատմամբ՝ անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման հիմքով: Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունել է անհամատեղելիության պահանջի խախտման վերաբերյալ եզրակացություն: Խախտումը պայմանավորված է եղել

<<Հանրային ծառայության մասին>> օրենքի իմաստով անհամատեղելի պաշտոններում համաժամանակյա պաշտոնավարման հանգամանքով: Անհամատեղելիության պահանջների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ հարուցվել է ևս **երեք** վարույթ, որոնք 2022 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ գտնվել են ընթացքի մեջ: Բացի ստացված դիմումներից և մեդիա հրապարակումներից, Հանձնաժողովն իրականացրել է նաև սեփական նախաձեռնությամբ թվով 107 ուսումնասիրություն՝ պատգամավորների կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման վերաբերյալ:

- 2022 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ վարույթները գտնվել են ընթացքի մեջ:
- Հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների առնչությամբ հարկ է նշել հետևյալը.
- 2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող թվով 512 անձանց վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն,ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել 505 խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Թվով 4 անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չի եղել ուսումնասիրություն իրականացնել Թեկնածուի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների գույքային դրության, այդ թվում՝ փաստացի ստացած եկամուտների համապատասխանության առնչությամբ և գնահատել դրանց արժանահավատությունը՝ թերի լրացված հարցաթերթիկի պատճառով: Միաժամանակ, Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխվածության արդյունքում, 3 անձի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությամբ, վերջինիս բարեվարքության վերջնական գնահատական չի տրամադրվել: Տրամադրված թվով 505 եզրակացությունից դրական են եղել 278-ը, դրական վերապահումով՝ 163-ը, բացասական՝ 64-ը:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվել է 256 պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծություն (որից 97-ը բարեվարքության վերաբերյալ գույքային դրության ուսումնասիրության շրջանակներում, թվով 159 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների՝ ստուգված և վերլուծված հայտարարագրերի թիվը՝ 3044) և թվով 1703 հայտարարագրերի ստուգում: Ընդհանուր ստուգված և վերլուծված հայտարարագրերի թիվը՝ շուրջ 5000:
- 2022 թվականի դրությամբ հայտարարագիրը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու կամ համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրված տվյալը սխալ կամ ոչ ամբողջական ներկայացնելու համար կիրառված պատասխանատվության միջոցների քանակի վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.
- 2022 թվականի հարուցված հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ թվով 118 վարույթներից կարճվել են թվով 107 վարույթ, իսկ վարչական տույժը կիրառվել է 11 վարույթի արդյունքում, որից 10-ի դեպքում կիրառվել է տուգանք՝ 200 000 ՀՀ դրամի չափով (որից, 8-ը՝ հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով, 2-ը՝ հայտարարագիր չներկայացնելու հիմքով), 1-ի դեպքում՝ նախազգուշացում վարչական տույժը՝ հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման հիմքով:

ԿՈՌՈՒՊՑԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ

Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտում

Գործարար ոլորտում թափանցիկության բարձրացման նպատակով, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտման գործուն մեխանիզմներ ներդնելու համար դեռևս 2021 թվականի հունվարի 18-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի «Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N 30-Ա որոշումը, որով նախանշվել են իրական սեփականատերերի (շահառուների) բացահայտման առաջնային ոլորտները և համապատասխան ժամկետները:

Ճանապարհային քարտեզին համապատասխան՝ իրավաբանական անձանց իրական շահառուների համատարած բացահայտմանն ուղղված, ինչպես նաև բաց և հանրամատչելի ռեեստրի կարգավորումները սահմանող օրենսդրական ակտերն ընդունվել են 2021 թվականի հունիսի 3–ին: 2023 թվականի հունվարից իրական շահառուների հայտարարագրելու պահանջը տարածվել է բոլոր իրավաբանական անձանց համար: Հարկ է նշել, որ հայտարարագրման պահանջը տարածվում է ինչպես արդեն իսկ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված, այնպես էլ նոր հիմնադրվող և գրանցվող իրավաբանական անձանց վրա: Հայտարարագրման պահանջը չկատարելու, ոչ պատշաճ կատարելու համար սահմանված են քրեական և վարչական պատասխանատվության միջոցներ:

Միևնույն ժամանակ, գործարկվել է իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակը: 2023 թվականի մարտի 10-ի դրությամբ իրավաբանական անձնաց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակի միջոցով գրանցվել է շուրջ 37000 հայտարարագիր:

Գնումների ոլորտ

Ազգային ժողովի կողմից 2022 հունվարի 21-ին ընդունված գնումների ոլորտի օրենսդրության բարելավմանն ուղղված օրենսդրական ակտերով վերափոխել է գնումների բողոքարկման համակարգը՝ հաշվի առնելով նաև ԱՀԿ պետական գնումների համաձայնագրով և ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների պահանջները: Գործող կարգավորման համաձայն՝ գնման ընթացակարգի արդյունքները կարող են

բողոքարկվել ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով: Բողոք ներկայացնելու հնարավորություն ունի ցանկացած անձ:

Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու պարագայում կստեղծվի ռեսուրսների համախմբման և գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորություն, ինչը դրական ազդեցություն կունենա նաև պետական համակարգում նախաձեռնված բարեփոխումների գործընթացի վրա: Միաժամանակ Հայաստանի՝ ԱՀԿ պետական գնումների համաձայնագրին անդամակցությունը հնարավորություն է ընձեռում նշված գնումները ազգային ռեժիմով իրականացնելու նախադրյալներ ստեղծել: Այս կապակցությամբ Կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային Բանկի կողմից իրականացվել է գնումների ազգային օրենսդրության և ընթացակարգերի ուսումնասիրություն, որի արդյունքում ներկայացվել են նոր սկսվող ներդրումային ծրագրերի իրականացման համար գնումների այլընտրանքային պայմանավորվածությունների իրականացման այն պայմանները, որոնք գնումների հետ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում նախատեսվելու դեպքում հնարավոր կլինի կիրառել ազգային ընթացակարգերի նկատմամբ:

Տնտեսական մրցակցություն

2021 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունվել են տնտեսական մրցակցության օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրենսդրական ակտերը, որոնցով, ի թիվս այլնի, բարելավվել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ՄՊՀ) կողմից վարչական վարույթի իրականացման կարգավորումները և սահմանվել են առանձնահատկությունները, սահմանվել են վարույթի մասնակիցների իրավունքները և պարտականությունները, նախատեսվել են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության և ՄՊՀ-ին օպերատիվ տվյալներ տրամադրելու մեխանիզմներ: Նշված բարեփոխումները միտված են կատարելագործելու ՄՊՀ-ի գործիքակազմը ինչպես իրավախախտումները կանխելու, այնպես էլ դրանք բացահայտելու գործառույթներն իրականացնելիս:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ ՄՊՀ-ի կողմից պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից հակամրցակցային գործունեությանը, արգելված պետական օժանդակության տրամադրմանն առնչվող իրավախախտումների բացահայտումը, ինչպես նաև այդ իրավախախտումների կանխարգելումը էական նշանակություն ունի կոռուպցիայի դեմ պայքարի և կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում, քանի որ հակամրցակցային գործունեությունը Քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածով սահմանված հանցակազմի առկայության դեպքում հանդիսանում է կոռուպցիոն հանցագործություն:

Այդ կապակցությամբ հարկ է հավելել, որ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված նոր Քրեական օրենսգրքի շրջանակներում բարելավվել և ընդլայնվել են մրցակցության ոլորտի կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, որի արդյունքում կոռուպցիոն հանցագործություններ են համարվում նաև իշխանական կամ ծառայողական

լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով տնտեսական գործունեությունը համակարգելը կամ հակամրցակցային համաձայնություն կայացնելը կամ մենաշնորհ կամ գերիշխող դիրքը չարաշահելը կամ համակենտրոնացումը չհայտարարագրելը կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը, որը հանգեցրել է մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման և խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Նշված հանցագործությունների համար որպես պատիժ է սահմանվել երկուսից հինգ տարի ժամկետով ազատազրկումը, իսկ երբ նշված արարքը 1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից, 2) կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով, 3) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել կամ 4) կատարվել է առանձնապես խոշոր չափերի շահույթ ստանալով՝ ազատազրկում երեքից վեց տարի ժամկետով:

Ոլորտի իրավական բարեփոխումների շրջանակում իրականացվել է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը:

Այսպես, հաշվետվու ժամանկահատվածներում Հանձնաժողովի կողմից ընդունվել են 18 ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, այդ թվում՝ Հանձնաժողովի աշխատակարգը, չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի որոշման կարգը, պետական օժանդակության գնահատման կարգը, պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը, գաղտնագրման ենթակա հաղորդումը ներկայացնելու և այն գաղտնագրելու կարգը, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը և Հանձնաժողովի գործունեությունն ապահովող մի շարք այլ ակտեր:

Բարեվարքությունը գործարար ոլորտում

Գործարար ոլորտում բարեվարքության խթանման նպատակով Միացյալ Թագավորության Լավ կառավարման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Կորպորատիվ կառավարման և ֆինանսական հաշվետվողականության բարելավված կանոնակարգ» ծրագրի շրջանակում՝ Էկոնոմիկայի նախարարության անմիջական մասնակցությամբ, «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» (PwC) ընկերության ու Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից մշակվել և Կառավարություն է ներկայացվել Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագիծը, որով ի թիվս այլ սկզբունքների՝ ամրագրված են մասնավոր հատվածում էթիկական և հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող սկզբունքները, որոնց իրագործման պարտականությունը դրվել է տնօրենների խորհրդի վրա:

Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագծով նախատեսված է, որ կազմակերպություններում պետք է ձևավորվի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ, որի կարևոր բաղադրիչներից է համապատասխանության գործառույթը:

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից ձևավորվել և առաջնորդվում է Բիզնեսի բարեվարքության ակումբը, որի առաքելությունն է բարեվարքության մշակույթի միջոցով բարելավել Հայաստանի գործարար միջավայրը: Բիզնեսի բարեվարքության ակումբը խթանում է հայ գործարարների հավաքական գործողությունները կորպորատիվ կառավարմանն առնչվող խնդիրների շուրջ: Բիզնեսի բարեվարքության ակումբի նպատակն է բարձրացնել Հայաստանի գործարար միջավայրի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, վստահությունը երկրի տնտեսական համակարգի նկատմամբ և աջակցել տնտեսություն երկարաժամկետ, համբերատար ու կառուցողական ներդրումների ներգրավմանը, նպաստել գործարար հատվածի կենսունակությանը և խթանել ներառական տնտեսական աճը: Բիզնես բարեվարության ակումբի շրջանակներում շուրջ 22 ընկերություններում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր: Ակումբը ներառվել է Բազելի կառավարման ինստիտուտի հավաքական հակակոռուպցիոն նախաձեռնությունների ռեեստրում:

Բիզնեսի բարեվարքության ակումբի մասնակիցները 2022 թվականի փետրվարի 18-ին հաստատել են Ակումբին մասնակցության կանոնակարգի և մասնակցության վճարների նախագծերը: Բիզնեսի բարեվարքության ակումբին մասնակցության կանոնակարգը կարգավորում է Ակումբին մասնակցելու, մասնակցությունը դադարեցնելու, մասնակցության հանձնախմբի ձևավորման և վերջինիս գործունեության հետ կապված հարաբերությունները:

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի՝ որպես Բիզնեսի բարեվարքության ակումբի քարտուղարությունն իրականացնող կառույցի կողմից մշակվել է Ակումբի անդամների՝ Հակակոռուպցիոն հռչակագրի և լավ կառավարման սկզբունքներին համապատասխանության վերլուծության մեթոդաբանություն և գնահատման թերթիկ, որոնք գտնվում են քննարկման փուլում:

Հարկ է նշել, որ թողարկվել է Բիզնեսի բարեվարքության ակումբի #1(3) լրատուն , որի առանցքը Բիզնեսի բարեվարքության ակումբի գործունեությունն է ու վերջին զարգացումները: Լրատուի էջերում անդրադարձ է կատարվել նաև միջազգային զարգացումներին, հատկապես տարվա իրադարձություն համարվող BlackRock-ի գործադիր տնօրեն և նախագահ Լարի Ֆինկի տարեկան ուղերձին, բրիտանական ընկերություններում բազմազանությունն ու ներառականությունը խթանող նոր կանոններին, Իլոն Մասկի Twitter-յան գործարքին և այլ միջազգային կարևոր իրադարձությունների:

Էկոնոմիկայի նախարարությունը Հակակոռուպցիոն համապատասխանության ներդման խթանման առնչվող աշխատանքներն իրականացրել է Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի հետ համագործակցության միջոցով, որի արդյունքում.

- ✓ 2019-2021 թվականներին Կորպորատիվ Կառավարման Կենտրոնը Հայաստանի գործարար համայնքի ներկայացուցիչների համար կազմակերպել և անցկացրել է հակակոռուպցիոն համապատասխանության վերապատրաստումներ, որոնք զուգակցվում են գործնական օրինակների քննարկումներով, ինչպես նաև գործարար խաղարկումներով: Ընդհանուր առմամբ,

վերապատրաստումներն անցել են շուրջ 150 մասնակից: Հաշվի առնելով հակակոռուպցիոն համապատասխանության վերապատրաստումների անցկացման իր փորձառությունը՝ 2021թ.-ին Կորպորատիվ Կառավարման Կենտրոնը մշակել և իր էջում հրապարակել է **էլեկտրոնային դասընթաց** (http://training.corpgov.am/), որը հասանելի է թեմայով հետաքրքրված ցանկացած անձի:

✓ 2021թ.-ին Կորպորատիվ Կառավարման Կենտրոնն իրականացրել է երկու հետազոտություն, որոնց առարկան առնչվում է էթիկական և հակակոռուպցիոն համապատասխանությանը: Դրանք են՝

- **«Հնարավոր է արդյոք «շահակիցների կապիտալիզմին» անցումը Հայաստանի գործարար միջավայրում»** փորձագիտական հետազոտությունը (https://47-1548.s.cdn13.com/wp-content/uploads/2021/10/is-the-transition-to-stakeholder-capitalism-in-the-armenian-business-environment-possible_arm.pdf?download=false),
- **«Կորպորատիվ կառավարման արդյունավետ միջավայրը որպես կառուցողական կապիտալի** (https://corpgov.am/hy/news/2021/10/04/2889) **ներգրավման պայման»** հետազոտությունը, որն իրականացվել է գործարար համայնքի ներկայացուցիչների շրջանում (https://47-1548.s.cdn13.com/wp-content/uploads/2021/12/constructive-capitalcg_arm-results.pdf?download=false):

✓ 2021թ.-ին Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից Հայաստանում լավ կառավարման, այդ թվում՝ էթիկական և հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով հարցուպատասխանի ձևաչափով մշակվել և շահակիցներին ներկայացվել են հետևյալ նյութերը.

✓ **22 հարցուպատասխան խորհրդի մասին** (https://corpgov.am/wp-content/uploads/2021/08/22-22-qa-about-boards-arm.pdf?download=false),

✓ **12 հարցուպատասխան գործարար էթիկայի կանոնների մասին** (https://47-1548.s.cdn13.com/wp-content/uploads/2021/08/12-qa-about-code-of-business-ethics.pdf?download=false),

✓ **10 հարցուպատասխան ESG-ի (**"environmental, social, governance" (շրջակա միջավայր, սոցիալական հարցեր, կառավարում)**) մասին** (https://47-1548.s.cdn13.com/wp-content/uploads/2021/08/10-qa-about-esg.pdf?download=false),

✓ **10 հարցուպատասխան ISO 37000:2021 ստանդարտի մասին** (https://47-1548.s.cdn13.com/wp-content/uploads/2021/11/10-qa-about-iso-37000.pdf?download=false):

✓ 2021թ.-ին Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից թարգմանվել է նաև Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի կողմից մշակված **«Էթիկական վարքագծի և գործարար բարեվարքության ամրապնդում» զարգացող շուկաների ընկերությունների համար ուղեցույցը** (https://corpgov.am/wp-content/uploads/2021/08/cipe_-cipe-business-integrity-report_arm.pdf?download=false):

✓ Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից 2021թ.-ի մայիսի 21-ին առցանց հարթակում կազմակերպվել է**«Կորպորատիվ կառավարման ժամանակակից միտումները. միջազգային փորձ և հայաստանյան իրականություն»** առաջին

միջազգային համաժողովը, որի առաջին նստաշրջանը նվիրված էր բարեվարքության մշակույթի առաջխաղացման և ներդրումների ներգրավման հիմնախնդիրներին (https://corpgov.am/hy/news/2021/05/21/first-international-conference-modern-trends-in-corporate-governance-international-experience-and-armenian-reality):

✓ Բիզնեսի բարեվարքության ակումբի անդամների բաց հանդիպումների ձևաչափում 2022 թվականի մարտի 16-ին կազմակերպել էր «Ինչպե՞ս դառնալ հուսալի գործընկեր միջազգային գործարար ասպարեզում» վարպետության դասը, որը վարել էր միջազգային փորձագետ, RSM Netherlands Business Consulting Services B.V.-ի կորպորատիվ կառավարման և կորպորատիվ մշակույթի գծով տնօրեն Մարլին Յենսը.

✓ 2022թ. հունիսի 17-ին անց է կացրել իր ամենամյա համաժողովը՝ «Կորպորատիվ կառավարում. բարեվարքությունը գործարար համայնքում» խորագրի ներքո.

✓ 2022 թվականի դեկտեմբերի 16-ին Արդարադատության նախարարությունը «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ, ինչպես նաև «Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության» կենտրոնի աջակցությամբ իրականացրել է վերապատրաստում «Կոռուպցիայի դեմ պայքարը և դրանում գործարար ոլորտի դերակատարումը» թեմայով, որին մասնակցում էին գործարար ոլորտի, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

✓ Բիզնեսի բարեվարքության ակումբի մասնակից «Բի-Դի-Օ Արմենիա» ընկերությունը Orion Worldwide Innovations-ի հետ համատեղ 2022 թվականի նոյեմբերի 7–ից 8-ը Երևանում կազմակերպել էր «Այլընտրանքային ներդրումները Հայաստանում» միջազգային համաժողովը, որի ընթացքում կարևորվել է ընկերությունների կորպորատիվ կառավարման որակի բարձրացման հարցում private equity funds-ի դերը:

✓ Բիզնեսի բարեվարքության ակումբի կայացման հարցում Կորպորատիվ Կառավարման Կենտրոնին աջակցել է Միջազգային Մասնավոր Ձեռնարկատիրության Կենտրոնը «Եվրասիա. ձևավորել բարենպաստ պայմաններ կառուցողական կապիտալի համար, 2-րդ փուլ» և «Եվրոպա և Եվրասիա. կառուցողական կապիտալի համար բարենպաստ միջավայրի ձևավորում՝ 4-րդ փուլ» ծրագրերի շրջանակում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի Գնահատման արդյունքներով անդրադարձ է կատարվել նաև կոռուպցիայի կանխարգելման նպատակով իրականացող բարեփոխումներին, որի արդյունքում հայտարարագրման համակարգի և հայտարարատուների շրջանակի ընդլայմանը, շահերի բախումների և անհամատեղելությանն առնչվող կարգավորումներին վերաբերելի մի շարք ուղենիշներում Հայաստանի Հանրապետությունը գնահատվել է որպես պարտավորությունները կատարած: Միևնույն ժամանակ, ՏՀԶԿ Գնահատման զեկույցով առանձնացվել են հետևյալ խումբ խնդիրները.

- «Հանրային ծառայության մասին» օրենքով շահերի բախման իրավիճակների նեղ շրջանակ է նախատեսված, հավանական և թվացյալ շահերի բախման դեպքերը նախատեսված չեն, ինչպես նաև շահերի բախման բացառությունների շրջանակը լայն է:
- Անմիջական ղեկավար չունեցող պաշտոնների (անկախ և ինքնավար մարմինների անդամներ, համայնքների ղեկավարներ), նախարարների, նախարարների տեղակալների համար վարքագծի կանոնները բացակայում են, բարեվարքության կառուցակարգեր առկա չեն, շահերի բախման և անհամատեղելիության պահանջները հստակ և ամբողջական չեն, առկա չէ այդ պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին, խախտումների դեպքում սահմանված չեն սանկցիաներ:
- Պաշտոնատար անձանց կողմից ստացված նվերների հաշվառման և հանձնման կարգը դեռևս հաստատված չէ և դրա վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը չի հրապարակվում, նվերների ռեեստրը ստեղծված չէ:
- Շահերի բախման իրավիճակները կառավարելու և շահերի բախման առկայությունը պարզելու, ինչպես նաև շահերի բախումը լուծելու ընթացակարգ և մեթոդաբանություն սահմանված չէ:
- Դատավորների շահերի բախման սահմանումը նեղ է, շահերի բախման դեպքում դատավորների ինքնաբացարկի պրակտիկան շատ սահմանափակ է:
- Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը հստակ չեն և տարընկալումներ են առաջացնում:
- Հայտարարատուների ցանկը լիարժեք չէ, քանի որ դրանում պետական մասնակցությամբ ընկերությունների, ՊՈԱԿ-ների, ՀՈԱԿ-ների ղեկավար կազմը ներառված չէ, բացի այդ՝ պետական գնումների համար պատասխանատու անձանցից հայտարարատու է միայն գլխավոր քարտուղարը, մինչդեռ բոլոր պատասխանատուները պետք է լինեն հայտարարատու:
- Հայտարարագրերը պետք է օնլայն հասանելի լինեն և հեշտ փնտրելու համար (այժմ pdf են):
- Իրավիճակային հայտարարագրերի ստուգման չափորոշիչներ առկա չեն, որոնք թույլ կտան վեր հանել ռիսկերը:
- Համապատասխան վիճակագրություն պետք է վարվի և հրապարակվի (Հայտարարագրերը պատշաճ կարգով չներկայացնելու կամ ուշ ներկայացնելու կապակցությամբ կիրառվող սանկցիաների վերաբերյալ, հայտարարագրերի ստուգման արդյունքում շահերի բախման (ներառյալ անհամատեղելիության կանոնների խախտման, նվերների և այլ սահմանափակումների) համար կիրառվող պատժամիջոցների (սանկցիաների) վերաբերյալ, հայտարարագրի ստուգման արդյունքում ապօրինի

հարստացման (չհիմնավորված ակտիվների) համար կիրառվող պատժամիջոցների (սանկցիաների), բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կեղծ կամ թերի տեղեկատվության ներկայացման համար կիրառվող վարչական և քրեական պատասխանատվության վերաբերյալ, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների կամ քաղաքացիների հաղորդումների հիման վրա հայտարարագրերի ստուգման արդյունքում կիրառվող պատժամիջոցների/սանկցիաների վերաբերյալ):

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը չունի բավարար ռեսուրսներ, իսկ առանձին մարմիններում շահերի բախման նկատմամբ վերահսկողությունն արդյունավետ չէ: Նշված հարցով պատասխանատվության միջոցներ կիրառելու պրակտիկայի պակաս է առկա, և չի վարվում վիճակագրություն:

Հարկ է նշել, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և նվերների ինստիտուտի վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումների կատարելագործման, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում ստանձնած հանձնառությունների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2022թ. դեկտեմբերի 7-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքը»: Օրենքով վերանայվել է շահերի բախման հասկացությունը, հստակեցվել են շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված գործիքները, շահերի բախման կարգավորումների դեպքում պատասխանատվության միջոցների շրջանակը, վերանայվել է նվերների հասկացությունը, կատարելագործվել են նվերների հաշվառման կառուցակարգերը և ստեղծվել է նվերների հաշվառման ռեեստր, սահմանվել են նվերներ ստանալու սահմանափակումները խախտելու համար վարչական պատասխանատվության մեխանիզմները:Օրենքով վերանայել է հավատարմագրային կառավարման ինստիտուտը, ընդլայնել փոխկապակցված անձանց, հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակը, ներդրվել են Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների վերաբերյալ կարգավորումներ և այլն:

ՏՀԶԿ գնահատման հինգերորդ պիլոտային փուլի շրջանակներում 2022թ. մայիսի 30-ին հրապարակված «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» ՏՀԶԿ պիլոտային մոնիթորինգի զեկույցում ևս անդրադարձ է կատարվել հայտարարագրերի ստուգման և վերլուծության կարգին՝ նշելով, որ նախկինում գործող հայտարարագրերի համակարգը չի նախատեսում ավտոմատացված վերլուծության հնարավորություն:

Հարկ է նշել նաև, որ 2023թ. փետրվարի 1-ից գործարկվել է հայտարարագրերի ներկայացման նոր էլեկտրոնային համակարգը:

Գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և հակազդման առնչությամբ ՏՀԶԿ գնահատման զեկույցով դրական են գնահատվել գնումների ոլորտի օրենսդրական կարգավորումները, գնումների ապահովման թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Միևնույն ժամանակ առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- Մեկ անձից գնման ընթացակարգի դեպքում իրական շահառուի բացահայտման պահանջ սահմանված չէ: Հարկ է նշել, որ 2021 հունիսի 3-ին «Գնումների մասին օրենքում» փոփոխություն կատարելու մասին օրենքի ընդունմամբ իրական շահառուի բացահայտման պահանջ է սահմանվել նաև մեկ անձից գնման ընթացակարգի դեպքում:

- Մեկ անձից գնման ընթացակարգով գնումները մեծ տոկոս են կազմում, ինչը խնդրահարույց է և չպետք է գերազանցի ընդհանուր գնումների տասը տոկոսը:
- Կոռուպցիոն հանցագործություն կատարելու հիմքով անձանց պետական գնման ընթացակարգի մասնակցության իրավունքից զրկելու վերաբերյալ առանձին վիճակագրություն չի վարվում (վիճակագրություն չի վարվում պետական պաշտոնյաների կողմից պետական գնումների ոլորտում շահերի բախման կանոնների խախտման համար կիրառված սանկցիաների վերաբերյալ, ինչպես նաև պետական գնումների ոլորտում կոռուպցիոն հանցագործություններով վերջնական դատական ակտերի վերաբերյալ):
- Առկա չէ գործարար ոլորտի ներկայացուցիչների իրավունքները պաշտպանող, վերջիններիս կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող խորհրդատվություն տրամադրող մարմին, որը նաև անկախ կլինի, ինչպես օրինակ, բիզնես օմբուցմենը:
- Պետական մասնակցությամբ ընկերություններում, ՊՈԱԿ-ներ-ում և ՀՈԱԿ-ներում հակակոռուպցիոն համապատասխանության, կոռուպցիոն ռիսկերի կառավարման մեխանիզմներ առկա չեն:
- Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը չի սահմանում կոռուպցիոն ռիսկերի վերահսկման վերաբերյալ կարգավորումներ:
- Կառավարությունը մասնավոր ոլորտում կոռուպցիոն ռիսկերի վերահսկման, հակակոռուպցիոն համապատասխանության ներդրման ուղղությամբ որևէ խթանիչ նախաձեռնություն չի իրականացնում:
- Խոշոր պետական մասնակցությամբ ընկերությունների ներքին և արտաքին աուդիտորական եզրակացություններում անդրադարձ չի կատարվում բարեվարքությանը, միջազգային ստանդարտներով աուդիտ չի իրականացվում, տվյալ ընկերությունների գործունեության մասին ամբողջական տեղեկատվության հրապարակայնությունն ապահովված չէ:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ (ԳՐԵԿՈ)

ԳՐԵԿՈ-ի զեկույցում ևս անդրադարձ է կատարվել կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմի կատարելագործմանը, որի արդյունքում տրվել են հետևյալ հանձնարարականները.

- Ազգային ժողովում օրենսդրական գործընթացների թափանցիկության ապահովման առումով ԳՐԵԿՈ-ն շարունակաբար մտահոգություն է հայտնում հատուկ (արագացված) ընթացակարգով օրենքներ հաճախ ընդունելու պրակտիկայի կապակցությամբ և ընդգծում է, որ օրենքների ընդունման արագացված ընթացակարգերը պետք է կիրառվեն միայն հստակ սահմանված բացառիկ դեպքերում: Բացի այդ, պետք է ապահովվի նախագծերի շուրջ հանրային քննարկումների գործնական իրականացումը, ինչպես նաև օրենքների փոփոխությունները ժամանակին ներկայացվեն ԱԺ ու հրապարակվեն:
- Անհրաժեշտ է ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով հստակ կսահմանվեն շահերի բախման և հարակից ոլորտների, մասնավորապես՝ նվերների և այլ առավելությունների

ընդունման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ֆինանսական շահերի, տեղեկատվության և պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործման և երրորդ կողմերի, օրինակ՝ լոբբիստների հետ շփումներին առնչվող հարցերի վերաբերյալ ուղղորդիչ կարգավորումներ, դրա կիրարկումն ապահովել անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն, իրազեկվածության մակարդակի բարձրացում:

- Անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու պատգամավորների կողմից առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները: Ընդ որում, չնայած օրենսդրական արգելքներին, ԳՐԵԿՈ-ն արձանագրում է, որ գործնականում դեռևս առկա են խնդիրներ, որոնք անհրաժեշտ է շտկել:
- ԳՐԵԿՈ-ն առաջարկել է պատգամավորների էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգն զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու համար՝ էթիկայի կանոնների և անհամատեղելիության դեպքերի և այլ սահմանափակումների, շահերի բախման և նվերների ընդունման վերաբերյալ կանոնների անկախ, շարունակական և նախաձեռնողական վերահսկողությունը, համարժեք պատասխանատվության ենթարկելու միջոցով նորմերի կատարումը:
- Դատախազական համակարգում շահերի բախման և կոռուպցիայի կանխարգելման համար պետք է ապահովել բոլոր դատախազների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի և վարքագծի, անկողմնակալության ու անկախության, շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ թեմաներով:
- Ապահովել դատախազական համակարգում գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ էթիկայի և վարքագծի, անկողմնակալության ու անկախության, շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ, նշված հարցերի վերաբերյալ դատախազներիհիրազեկության մակարդակի բարձրացում:
- Անհրաժեշտ է մշակել պատգամավորների, դատավորների և դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող դեպքերում նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին: Չնայած ընդունած օրենսդրական կարգավորումներին, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են ընդհանուր պայմաններին՝ ԳՐԵԿՈ-ն դեռևս մտահոգություններ ունի որոշ կարգավորումների մասով:[12] Միաժամանակ անհրաժեշտ է ԵԽ չափանիշներին համապատասխան

[12] Թույլատրելի նվերների շարքին դասվող սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը, ինչպես նաև կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետևանքով, իսկ դատավորների դեպքում՝ նաև բարեկամից ստացված նվերները, եթե նվերն էությամբ և չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջև հարաբերությունների բնույթին հաշվառման ենթակա չեն:

ընդունել նվերների հաշվառման և հանձնման կարգը, արդյունավետ կերպով վերահսկողություն իրականացնել պահանջների պահպանման նկատմամբ:

- ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար պատգամավորների, դատավորների և դատախազների նկատմամբ կիրառվող գույքի հայտարարագրման վերաբերյալ կանոնների արդյունավետ հսկողությունը և հայտարարատուների կողմից հայտարարագրման պահանջի կատարման ապահովումը, մասնավորապես՝ ամրապնդելով կոռուպցիայի կանխարգելման մարմնի գործունեության անկախությունը, դրան վերապահելով ներկայացված հայտարարագրերը մանրակրկիտ ստուգելու, խախտումների դեպքերն ուսումնասիրելու, վարույթ հարուցելու և կանոնների խախտման դեպքում արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատասխանատվության միջոցներ կիրառելու հստակ մանդատ, լիազորություն և բավարար ռեսուրսներ: Տվյալ առաջարկությունը ԳՐԵԿՈ-ի կողմից շարունակաբար մասնակի կատարված է գնահատվում, քանի որ ԳՐԵԿՈ-ի գնահատմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ընտրության կառուցակարգն անկախ և ապաքաղաքական չի եղել: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների՝ հետագայում մրցույթի արդյունքում ընտրվելու, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման դեպքում առաջարկությունը կգնահատվի որպես կատարված[13]:

ՄԱԿ-Ի «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

ՄԱԿ-ի գնահատման շրջանակներում[14] կոռուպցիայի կանխարգելման առնչությամբ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) համապատասխանելու տեսանկյունից որպես ձեռքբերում և առաջադեմ փորձ է համարվել հետևյալը.

- Ողջունելի են համարվել շահերի բախման կանխարգելմանն ու լուծմանն ուղղված շահերի հայտարարագրման համակարգի ստեղծման ուղղությամբ Հայաստանի բարեփոխումները (Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 5-րդ կետ):
- Ողջունելի է Օրենքի նախագծերը e-draft միասնական հարթակի միջոցով պարտադիր հրապարակման պահանջը՝ թափանցիկությունն ու հասարակության մասնակցությունն ապահովելու համար (Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին կետ):
- Ողջունելի են համարվել հայտարարագրման համակարգի բարեփոխումները, ինչպես նաև հայտարարագրերի հրապարակայնությունը (Կոնվենցիայի 52-րդ հոդվածի 5-րդ կետ):

[13] 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Ազգային ժողովի կողմից ընտրվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 5-րդ անդամը, որի թեկնածուն ընտրվել է մրցութային ընթացակարգով՝ այդ նպատակով ձևավորված մրցութային խորհրդի կողմից: Վերոնշյալ նոր ընթացակարգի կիրառումը առաջիկա գնահատման շրջանակներում կապահովի ԳՐԵԿՈ-ի՝ սույն կետով նշված հանձնարարականի կատարումը:

[14] https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf

Միևնույն ժամանակ որպես պարտավորությունների կատարման մարտահրավերներ են նշվել և Հայաստանին առաջարկվել է հետևյալը.

- կոռուպցիայի կանխարգելման մարմնին տրամադրել անհրաժեշտ անկախություն (Կոնվենցիայի հոդված 6, կետ 2).
- ջանքեր գործադրել քաղաքացիական ծառայության պաշտոն չհանդիսացող հանրային ծառայության պաշտոնների համալրման ապահովման, առաջխաղացման, պաշտոնից ազատելու գործընթացների թափանցիկության, թոշակի անցնելու կարգավորումների բարելավման ուղղությամբ (Կոնվենցիայի հոդված 7, կետ 1).
- ջանքեր գործադրել բացահայտելու կոռուպցիայի տեսանկյունից հատկապես խոցելի պետական պաշտոնները և համապատասխան դեպքերում ընդունել այդպիսի պաշտոններ զբաղեցնող անձանց ընտրության, վերապատրաստման և ռոտացիայի պատշաճ ընթացակարգեր (Կոնվենցիայի հոդված 7, կետ 1(բ)).
- ջանքեր գործադրել պետական պաշտոնից ազատված պետական պաշտոնյաների մասնագիտական գործունեության և մասնավոր հատվածում վերջիններիս գործունեությանն առնչվող գործող սահմանափակումները բարելավելու ուղղությամբ (Կոնվենցիայի հոդված 7, կետ 4 և 12, կետ 2).
- խրախուսել պետական պաշտոնյաների շրջանում բարեվարքությունը, ազնվությունը և պատասխանատվությունը՝ տարածաշրջանային, միջտարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների համապատասխան նախաձեռնություններին համապատասխան մշակված վարքագծի կանոնների կամ վարքագծի չափորոշիչների կիրառման, ինչպես նաև ուսուցման միջոցով (Կոնվենցիայի հոդված 8-րդ, կետեր 1–3).
- քննարկել վարքագծի կանոնագրքերը կամ չափանիշները խախտող պետական պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական կամ այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը (Կոնվենցիայի հոդված 8, կետ 6).
- ջանքեր գործադրել գնումների անձնակազմին վերաբերող հարցերը կարգավորելու համար, օրինակ, շահերի հայտարարագիր պահանջել որոշակի պետական գնումների (օրինակ ոչ մրցութային ընթացակարգով գնումների) ժամանակ (Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետ).
- ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական ֆինանսների կառավարման ոլորտում, ինչպիսիք են ռիսկերի կառավարման և ներքին հսկողության արդյունավետ և գործող համակարգերը, որոնք կարող են ներառել միասնական օրենսդրություն և համակարգեր (Կոնվենցիայի հոդված 9, կետ 2).
- միջոցներ ձեռնարկել պետական կառավարման թափանցիկության բարձրացման ուղղությամբ, որոնք կարող են ներառել պարբերական զեկույցների հրապարակում կոռուպցիոն ռիսկերի մասին կամ ներկայացված հայտարարությունների, հարցումների և բողոքների մասին առցանց գրառումների տրամադրում՝ թույլ տալով վիճակագրական տվյալներ հավաքել հասարակայնության տեղեկատվության տրամադրման հետագա բարելավման համար (Կոնվենցիայի հոդված 10(գ)).

• դատավորների և դատախազների էթիկայի հարցերով գաղտնի խորհրդատվություն տրամադրելու գործիքակազմ նախատեսել (Կոնվենցիայի հոդված 11):

ՄԱԿ-ի գնահատման զեկույցը, անդրադառնալով **գործարար ոլորտում** կոռուպցիայի կանխարգելմանը, առաջարկում է հետևյալը.

• Միջոցներ ձեռնարել մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման, մասնավոր հատվածում հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտների ամրապնդման ուղղությամբ, մասնավորապես, հաշվապահական հաշվառման պահանջների պահպանման վերահսկողության և սերտիֆիկացման հաստատման միջոցով, ինչպես նաև իրավաբանական անձանց թափանցիկության ամրապնդման ուղղությամբ, և անհրաժեշտության դեպքում նախատեսել արդյունավետ պատժամիջոցներ դրանք չպահպանելու համար (Կոնվենցիա, հոդված 12, կետ 1 և 2):

• Միջոցներ ձեռնարկել Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 3-րդ կետում նշված գործողությունների արգելման ուղղությամբ:[15]

• Արգելել կաշառք ներկայացնող այն ծախսերի առնչությամբ հարկումից ազատումը, որոնք համարվում են Կոնվենցիայի 15-րդ և 16-րդ հոդվածներով այդպիսին ճանաչված իրավախախտումների տարրերից մեկը և, համապատասխան դեպքերում, այլ ծախսերի առնչությամբ, որոնք հետևել են կոռուպցիոն արարքներին: (Կոնվենցիայի հոդված 12-ի 4-րդ կետ):

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ ակտիվ գործունեություն են իրականացնում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ, որը դրսևորվում է ոչ միայն իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացմամբ և հանրային կլոր սեղան քննարկումներին մասնակցությամբ, այլև մի շարք ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացմամբ: Այսպես.

---

[15] Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր ներքին օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական հաշվետվության ներկայացման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտները կարգավորող կանոններին համապատասխան, կարող են անհրաժեշտ լինել հետևյալ արարքներն արգելելու համար, որոնք իրականացվում են իրավախախտումներից որևէ մեկը կատարելու համար՝ համաձայն սույն Կոնվենցիայի.

ա) չգրանցված հաշվետվության ստեղծում.

բ) չհաշվառված կամ ոչ ճիշտ գրանցված գործարքների կատարում.

գ) գոյություն չունեցող ծախսերի հաշվառում.

դ) պարտավորությունների ներառում՝ առանց դրանց նպատակի ճշգրիտ սահմանման.

ե) կեղծ փաստաթղթերի օգտագործում, և

զ) օրենսդրությամբ նախատեսված ժամկետներից շուտ հաշվապահական փաստաթղթերի միտումնավոր ոչնչացում (https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021):

➢ 2021թ. հրապարակվել է «Թրանսփարենսի Ինթենեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԹԻՀԿ) կողմից 2021թ. իրականացված «Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման ոլորտում էթիկայի հանձնաժողովներ, բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, ազդարարման հարցերով պատասխանատուներ» զեկույցը: Ուսումնասիրությունն իրականացվել է ԹԻՀԿ «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում, ԱՄՆ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ: Ուսումնասիրության նպատակն է հետազոտել Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն համակարգի, մասնավորապես էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների, ինչպես նաև ազդարարման հարցերով պատասխանատուների ինստիտուտների կայացվածությունը, դրանց գործունեության համապատասխանությունը «Հանրային ծառայության մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով սահմանված գործունեության պահանջներին և առանձնահատկություններին: Հետազոտությունն իրականացվել է 50 պետական, այդ թվում՝ ՀՀ Նախագահի, ՀՀ Վարչապետի և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմերի, ՀՀ նախարարությունների (12), ՀՀ կառավարությանն ենթակա (11), ՀՀ վարչապետին ենթակա (3), անկախ և ինքնավար մարմինների (5), իրավապահ և դատական համակարգի (6), տարածքային կառավարման (10) մարմիններում, և դրանց ենթակայությամբ գործող պետական ծառայություններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման 15 հազար բնակչությունը գերազանցող 25 խոշոր համայնքներում:

➢ 2021թ. հրապարակվել է ԹԻՀԿ Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում զեկույցը, որի նպատակն է օժանդակել կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ կառույցներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ձեռք բերելու համապարփակ գիտելիքներ շահերի բախման քաղաքականության մշակման և գործնականում կիրառման համար: Զեկույցում վերլուծության են ենթարկվել հանրային ծառայության ոլորտում շահերի բախման ինստիտուտի օրենսդրական կարգավորումները, վեր են հանվել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հանրային ծառայության առանձին ոլորտների գործունեությունը կանոնակարգող այլ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով հանրային պաշտոնյաների ու ծառայողների շահերի բախման հարցերի առնչությամբ առկա բացերը, անհամապատասխանությունները, կրկնությունները և մարտահրավերները, մշակվել են առաջարկություններ՝ շահերի բախման կառավարման միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին և ուղեցույցների պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով: Զեկույցում տեղ գտած առաջարկություններն ուղղված են շահերի բախման քաղաքականության բարեփոխումների մշակմանը և իրականացմանը, օրենսդրության կատարելագործման միջոցով հանրային պաշտոն զբաղեցնող

անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, իրավիճակային շահերի բախման կանխարգելման նոր կառուցակարգերի ու գործիքակազմերի մշակմանը:

➢ 2021 թվականին Իրավաբանների հայկական ասոցիացիան և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի Կոալիցիայի հետ համագործակցությամբ մշակել են այլընտրանքային զեկույց Հայաստանում ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի Գլուխ II-ի (Կոռուպցիայի կանխարգելում) և Գլուխ V-ի (Ակտիվների վերականգնում) իրականացման վերաբերյալ: Զեկույցով առաջարկվում է՝

– Ուժեղացնել բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարողությունները. ԿԿՀ- ին նախատեսել՝ որպես կենտրոնական մարմին, որը կհամակարգի և կվերահսկի Բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությունը, ներառյալ նրանց համար դասընթացների կազմակերպումը: Վերանայել բարեվարքության հարցերով կազմակերպիչների - ընտրության չափորոշիչները՝ դրանցում նախատեսելով հակակոռուպցիոն փորձի վերաբերյալ պահանջը:

– Բարձրացնել պաշտոնատար անձանց բարեվարքության մակարդակը. հրապարակել ԿԿՀ-ի կողմից իրականացվող բարեվարքության ստուգումների արդյունքները՝ պահպանելով անձնական տվյալների պաշտպանության դրույթները: Ընդունել պաշտոնյաների վարքագծի օրինակելի կանոններ՝ և քաղաքացիական ծառայողների, պատգամավորների և բնիչների վարքագծի կանոններ:

– Բարեփոխել քաղաքական, ֆինանսավորումների ոլորտը, ընդունել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում քաղաքական քարոզարշավների ֆինանսավորմանն առնչվող՝ փոփոխությունների նախագիծ և նախատեսել կամ աչայի պատասխանատվության միջոցներ օրենսգրքի 189.13-189,16 հոդվածներով նախատեսված հաշվետվությունների ներկայացման պահանջների, նվիրատվության իրավակարգավորումների և այլ իրավախախտումների համար:

➢ 2021թ. մարտին Իրավաբանների հայկական ասոցիացիան հրապարակել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2019-2022 թվականների տարեկան կատարման այլընտրանքային հասարակական մշտադիտարկման վերաբերյալ զեկույցը[16]՝ գնահատելով Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացման ընթացիկ իրավիճակի և արձանագրված առաջընթացը: Զեկույցով առաջարկվել է՝

– Ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում և հարակից այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը և նախատեսել ԿԿՀ-ին որպես կենտրոնական մարմին, որը

[16] https://armla.am/wp-content/uploads/2021/04/2019-22-ACC-Strategy-Monitoring-Final.pdf

կիամակարգի և կվերահսկի Բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությունը, ներառյալ՝ նրանց համար դասընթացների կազմակերպումը:

- Ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը՝ հանրությանը հասանելի դարձնելով ԿԿՀ-ի կողմից իրականացված հանրային ծառայողների բարեվարքության ստուգման արդյունքները՝ պահպանելով անձնական տվյալները՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
- Իրականացնել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի ձևավորման և կարողությունների իրական գնահատում, վեր հանել ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ ընդգրկված ՀԿ-ների անդամակցության, ինչպես նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի Խորհրդին անդամակցության արհեստական խոչընդոտների ոչ իրավաչափ հիմքերը և դրանց արդյունքում կայացնել համապատասխան իրավաչափ որոշումներ:
- Ընդունել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններ և քաղաքացիական ծառայողների, խորհրդարանի անդամների և քննիչների վարքագծի կանոններ:
- Ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց «ընտանիք» եզրույթի շրջանակը՝ նախատեսելով պաշտոնատար անձի հետ սերտ առնչություն ունեցող այնպիսի անձանց, ինչպիսիք են ամուսնու/կնոջ ծնողը, երեխան, եղբայրը կամ քույրը, ինչպես նաև կնքահայրսանիկ հարաբերություններում գտնվող անձինք:
- Վերապատրաստել հիմնական շահագրգիռ կողմերի (քաղաքականություն մշակողներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, գիտական հաստատություններ, լրատվամիջոցներ, պետական պատվիրատուներ, բիզնեսներ) ներկայացուցիչներին հակակոռուպցիոն և բարեվարքության թեմաներով՝ նպաստելով վերջիններիս կարողությունների ուժեղացմանը:

➢ 2022թ. Իրավաբանների հայկական ասոցիացիան հրապարակել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2021 թվականին իրականացման ենթակա գործողությունների մշադիտարկման արդյունքների վերաբերյալ զեկույցը[17]՝ առաջարկելով՝

- վերանայել բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունների մատչելիությունը, այն դարձնել բաց և հասանելի հանրության համար՝ ապահովելով օրենքով նախատեսված անձնական տվյալների գաղտնիությունը՝ հանրամատչելի անձնական տվյալների հաշվառմամբ:

[17] https://armla.am/wp-content/uploads/2022/06/%D5%80%D4%BF%D4%BF-%D5%B4%D5%B8%D5%B6%D5%AB%D5%A9%D5%B8%D6%80%D5%AB%D5%B6%D5%A3_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_AAC.pdf

- Շահերի հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շարքում ավելացնել հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց:
- Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման և վերլուծության գործընթացը ամբողջովին ավտոմատացնել՝ սահմանափակելով դրանում մեխանիկական եղանակով ուղղումների կատարումը, կիսաավտոմատացված ծրագրերի մուտքագրումը: Ապահովել այս համակարգի և Կառավարության այլ հարթակների ու տվյալների շտեմարանների միջև փոխգործելիությունը՝ տեղեկատվության ինքնաշխատ ներմուծման և համադրման նպատակով: Համակարգում նախատեսել հայտարարագրերի բարդ վերլուծական և հաշվետվողական հնարավորություններ: Արհեստական բանականության և հատուկ ալգորիթմների միջոցով մշակել և ունենալ կոնկրետ չափանիշների վրա հիմնված ավտոմատացված հաշվետվություններ, որը կապահովի ԿԿՀ-ի գործունեության թափանցիկություն և հաշվետվողականություն:
- Հակակոռուպցիոն կոմիտեի կազմում մրցութային կարգով ստեղծել հակակոռուպցիոն և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտական փորձառություն ունեցող հասարակական կազմակերպություններից բաղկացած խորհուրդ, որը հանրային վերահսկողություն կիրականացնի Կոմիտեի գործունեության նկատմամբ: Նախատեսել նաև, որ Կոմիտեն հաղորդում կներկայացնի այս խորհրդին և խորհրդի անդամներին իրավունք վերապահվի հարցեր տալու:
- Օրենքով սահմանել համապատասխան կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որպեսզի Կոմիտեի նախագահի կողմից՝ Կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիոն եղանակներով, իրականացնելը չդառնա «գործիք» իր համար «ոչ ցանկալի» ծառայողներին աշխատանքից հեռացնելու համար: Նախատեսել նաև, նման եղանակով Կոմիտեի նախագահի առաքինության ստուգման իրավական հնարավորությունը և այդ ստուգման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը: Անհրաժեշտ է լրացուցիչ քննարկել այն սուբյեկտային կազմը, որոնք իրականացնելու են այս գործառույթները:
- Վերացնել Կոմիտեի նախագահին տրված ավելորդ հայեցողական լիազորությունները՝ Կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնի սահմանային տարիքը հինգ տարի ժամկետով կամայականորեն երկարաձգելու կամ չերկարաձգելու մասով: Այս առաջարկը չընդունելու դեպքում, սահմանել Կոմիտեի նախագահի, նրա տեղակալների և Կոմիտեում պաշտոն զբաղեցնող այլ անձանց համար պաշտոնի սահմանային տարիքի նույնանման չափորոշիչներ՝ առանց տարբերակման (Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների պաշտոնի սահմանային տարիքը՝ 65-ն է, իսկ Կոմիտեում պաշտոն զբաղեցնող այլ անձանցը
- Վերացնել Կոմիտեի նախագահի կողմից միանձնյա որոշմամբ պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու կարգավորումը և Օրենքով նախատեսել, որ նախքան պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելը դրանց չափը պետք է համաձայնեցվի Կոմիտեի գործունեությունը վերահսկող հասարակական կազմակերպություններից բաղկացած խորհրդի անդամների հետ:

- Կոմիտեի նախագահի տեղակալներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու իրավասությունը վերապահել Կոմիտեի նախագահին՝ հիմնվելով Ջակարտայի սկզբունքների վրա, համաձայն որոնց՝ հակակոռուպցիոն մարմիններն իրենք պետք է լիազորություն ունենան հավաքագրելու և հեռացնելու իրենց անձնակազմի անդամներին:
- Սահմանել հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց կարգապահական պատասխանատվության քննության նոր մարմին, այն է՝ կարգապահական հանձնաժողովը:
- Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության համար նախատեսված Խորհուրդը համարվում է ձևավորված դրանում առնվազն չորս անդամի ներգրավումից հետո: Նախատեսել, որ մրցութային խորհրդի ձևավորման համար պահանջվող նվազագույն չորս անդամների կազմում պարտադիր ներգրավված լինեն մարդու իրավունքների պաշտպանի և մասնագիտական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը, որից հետո միայն այն կհամարվի ձևավորված:
- Սահմանել, որ մրցութային խորհուրդը մրցույթում հաղթող ճանաչի առավելագույն միավոր հավաքած մեկ թեկնածուի, իսկ միավորների հավասարության դեպքում անցկացնել մրցույթի հաջորդ փուլ: Այս դեպքում նախատեսել, որ Կառավարության նշանակումը կրում է արարողակարգային բնույթ:
- Ակտիվացնել աշխատանքները, այդ թվում՝ մարզերում, որպեսզի բնակչությունը, այդ թվում երիտասարդները, ձեռք բերեն/զարգացնեն հակակոռուպցիոն գիտելիքներ՝ հակակոռուպցիոն դպրոցների և այլ նախաձեռնությունների միջոցով:
- Ապահովել տարբեր գործողությունների և օրենսդրական ակտերի ընդունման գործընթացում հանրային քննարկումների թիրախային, մասնակցային և իմաստալից կազմակերպումը, ներգրավել ոլորտային անկախ և մասնագիտացված կառույցների, և չսահմանափակվել միայն e-draft.am կայքում իրավական ակտերի նախագծերի հրապարակումով: Յուրաքանչյուր ներկայացված առաջարկ մերժելու դեպքում ներկայացնել դրա հիմնավորումները՝ զերծ մնալով օրինակելի (շաբլոնային) տեքստերից: Դիտարկել իրավական ակտերի նախագծերի հասարակական փորձաքննության անցկացումը:
- **e-draft.am** կայքը հասանելի դարձնել նաև հաշմանդամություն ունեցող անձանց:
- Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների վերանայված ծրագրում կամ նոր ընդունվելիք ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում նախատեսել այնպիսի գործողություններ (օրինակ՝ ոլորտային հակակոռուպցիոն քաղաքականությունների մշակում), որոնք միտված կլինեն առանձին ոլորտներում, մասնավորապես, սոցիալական, կրթական, առողջապահության և մի շարք այլ ոլորտներում կոռուպցիայի ներկայիս մակարդակը նվազեցնելուն:
- Կոռուպցիայի տեսանկյունից բարձր ռիսկայինություն ունեցող ոլորտներում իրականացնել կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրություն և դրանց հիման վրա մշակել և ներդնել ոլորտային հակակոռուպցիոն քաղաքականություններ:

➢ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու և կոռուպցիայի հակազդումը կատարելագործելու նպատակով 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված նոր Քրեական օրենսգրքի շրջանակներում վերանայվել են կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը՝ համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին:

Միևնույն ժամանակ նոր Քրեական օրենսգրքով ներդրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը[18]: Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող քրեական պատասխանատվության միջոցներ են սահմանվել տուգանքը, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը, հարկադիր լուծարումը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանն առնչվող կարգավորումներն ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 1-ից:

Իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն սահմանելիս հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ քրեական պատասխանատվությունը հնարավորություն է տալիս ունենալ քննության մեթոդների և հարկադրանքի միջոցների առավել լայն շրջանակ, օգտագործել իրավական փոխօգնության գործիքակազմ՝ բացահայտելու հատկապես կոռուպցիոն և անդրազգային հանցավորության դրսևորումները, որում ներգրավված կլինեն իրավաբանական անձինք: Նշվածը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից և Հայաստանի Հանրապետությանը միջազգային կառույցների կողմից տրված հանձնարարականներից:[19]

Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իրավաբանական անձի մասնակիցները, բաժնետերերը կամ փայատերերը ձեռնարկել են ողջամտորեն անհրաժեշտ միջոցները հանցանք կատարած անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

2. Վերոգրյալի հաշվառմամբ համահունչ կարգավորումներ են նախատեսվել նաև նոր Քրեական դատավարության օրենսգրքում, որը ևս ընդունվել է 2021 թվականին: Մասնավորապես կարգավորվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ վարույթի

---

[18] Եթե նախկինում իրավաբանական անձի օգտին որոշակի գործողություններ կատարելու դեպքում քրեական պատասխանատվության էր ենթարկվում միայն տվյալ անձը, ապա այս դեպքում պատասխանատվության է ենթարկվում ոչ միայն տվյալ անձը, այլ այդ իրավաբանական անձը: Այսպես օրինակ, ընկերության տնօրենի գիտությամբ իր աշխատակցի կողմից այդ իրավաբանական անձի հարկային պարտավորություններից խուսափելու դեպքում նոր կարգավորումների համաձայն պատասխանատվության են ենթարկվելու թե՛ աշխատակիցը, թե՛ տնօրենը և թե՛ իրավաբանական անձը:

[19] ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի և ՏՀԶԿ-ի շրջանակներում ստանձնած պարտավորություններ, դրանց կատարման գնահատումներ:

ընդհանուր պայմանները, վարույթը նախաձեռնելու կարգը, իրավաբանական անձի վերաբերյալ վարույթով ապացուցման ենթակա հանգամանքները, քրեական հետապնդումը բացառող հանգամանքները, կիրառվող ապահովման միջոցները և այլն:

3. 2020 թվականին ստեղծվել և 2021 թվականին շարունակվել են կատարելագործվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգերը:

Այսպես, 2019 թվականին մշակվել և Ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունվել էին «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին օրենքները, որից հետո՝ այդ օրենքների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը և անհրաժեշտ այլ իրավական ակտերը:

2020 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նշանակվել էր ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտը համակարգող տեղակալը, իսկ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմում ստեղծվել էր պատասխանատու ստորաբաժանում՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում 2020-2021 թվականներին իրականացվել է 279 ուսումնասիրություն (214 ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացվել է 2020 թվականի ընթացքում, իսկ 65 որոշում՝ 2021 թվականի ընթացքում):

Բացի այդ, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունմամբ 2022 թվականին կատարելագործվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առկա գործիքակազմի նպատակով:

2022 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում ստացվել է քրեական գործով 50 նյութ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 25 նյութ՝ 84 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ: Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 77 որոշում (9 որոշմամբ ուսումնասիրություն է սկսվել 2021 թվականի տարեվերջին փոխանցված նյութերի հիման վրա), իսկ 18 անձի դեպքում կայացվել է ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին 18 որոշում: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով նախաձեռնվել է 2 ուսումնասիրություն:

Սկսված ուսումնասիրությունների շրջանակներում բանկային, վարկային, ապահովագրական, առևտրային և (կամ) նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով ներկայացվել է 134 դիմում, որից 127-ը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի և 7-ը՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարան: Ներկայացված դիմումներից չի բարարարվել

19-ը, որոնցից 4-ի բողոքարկման արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացվել է բողոքն ամբողջությամբ բավարարելու վերաբերյալ որոշում: Բողոքարկված մյուս գործով դեռևս դատական ակտ չի կայացվել:

Նույն ժամանակահատվածում 109 ուսումնասիրության շրջանակում կազմվել է ուսումնասիրության նախնական արդյունքների վերաբերյալ ամփոփագիր, որից 55-ով որոշվել է դադարեցնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը:

Բացի այդ, 43 ուսումնասիրության շրջանակում ներկայացվել է նաև հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին 52 դիմում, որից 18-ը ներկայացվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, իսկ 34-ը՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Ներկայացված դիմումների վերաբերյալ Վարչությունը ստացել է ամբողջությամբ կամ մասնակի բավարարման վերաբերյալ որոշումներ, և դրանք ուղարկվել են հարկադիր կատարման՝ համապատասխան անձանց գույքի (գույքերի) վրա դրվել է արգելանք:

Ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփման վերաբերյալ եզրակացություն է կազմվել 24 ուսումնասիրության շրջանակում, որից 3-ով որոշվել է ավարտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով ուսումնասիրությունը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 11 հայցադիմում, իսկ ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ևս 10 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ: Ներկայացված բոլոր հայցերը ներկայումս քննվում են ՀՀ հակակոռուպցիոն դատարանում: 2022 թվականին ներկայացված 21 հայցերով (2023 թվականի փետրվարի դրությամբ՝ 29 հայց) բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 52 միլիարդ ՀՀ դրամ, բռնագանձման են ենթակա նաև 296 գույքեր (ստացվել են նշված գույքերի մեծամասնության միջին շուկայական արժեքները, որոնց հանրագումարը շուրջ 34 միլիարդ ՀՀ դրամ է, իրավանաբական անձանց արժեքները գնահատված չեն):

Միջազգային կառույցների և այլ պետությունների հետ համագործակցության ապահովման նպատակով դեռևս 2020 թվականի նոյեմբերից ՀՀ գլխավոր դատախազությունը անդամակցում է CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ պաշտոնական ցանցին: Անդամակցության շրջանակներում ուղարկվել է թվով 7 հարցում, այդ թվում՝ 2 հարցում՝ Ռուսաստան, մեկական հարցումներ՝ Չեխիա, Սլովակիա, Ֆրանսիա, Հունաստան և Կիպրոս, որոնց արդյունքում ստացվել է թվով 6 պատասխան գրություն: Միաժամանակ, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել են մի շարք միջազգային հարցումներ՝ Ռումինիայից, Ուկրաինայից, Բելգիայից, Մոլդովայից:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով մասնագիտացված դատական քննությունն ապահովելու նպատակով դեռևս 2021 թվականին Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի ապրիլի 1-ի թիվ ԲԴԽ-19-Ն-7 որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 4 մասնագիտացված դատավորների վերապահվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերը քննելու իրավասություն: Այնուհետև 2022 թվականին Հակակոռուպցիոն դատարանի, Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի ստեղծմամբ և Վերաքննիչ դատարաններում հակակոռուպցիոն

գործերը քննող դատավորների նշանակմամբ ապօրինի ծագում ունեցող գործերի քննությունը հանձնվել է մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններին:

4. Գլխավոր դատախազության կողմից յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը հրապարակվում է տեղեկանք կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ, որը պարունակում է ոչ միայն վիճակագրական տեղեկություններ, այլև համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ:[20] Նշված տեղեկատվությունը ներառվում է նաև Դատախազության գործունեության տարեկան հաղորդումներում:[21] Տարեկան հաղորդումը նաև տեղեկություններ է պարունակում Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության գործունեության վերաբերյալ:

5. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման իրավակիառ պրակտիկայի առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

N/N	2020 թվական	2021 թվական	2022 թվական
1.	ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է **1810** նյութ:	ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է **1596** նյութ:	Նոր քրեական դատավարության օրենսգքրի ուժի մեջ մտնելու ուժով այլևս վերաբերելի չէ:
2.	ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման համակարգի միջոցով ստացվել է **140** ազդարարում	ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման համակարգի միջոցով ստացվել է **75** ազդարարում	ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման համակարգի միջոցով ստացվել է 116 ազդարարում
3.	ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ հարուցվել է **1232 քրեական գործ**, **183 քրեական գործ մեղադրական**	ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ հարուցվել է **1135 քրեական գործ**, **170 քրեական գործ մեղադրական**	2022 թվականին ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով նախաձեռնվել է **896** քրեական վարույթ, նախաձեռնված քրեական վարույթներից **178-ը՝ 397** անձի

[20] https://www.prosecutor.am/am/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC/

[21] https://www.prosecutor.am/am/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-%D5%80%D5%80-%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB%D5%B6/

	եզրակացությամբ ուղարկվել է դատարան:	**եզրակացությամբ** ուղարկվել է դատարան:	վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան

Այսպիսով, նշված տեղեկությունների ուսումնասիրությունից հետևում է, որ 2020 թվականի համեմատությամբ 2021 թվականին էականորեն նվազել են իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված նյութերի քանակը, ազդարարման համակարգի միջոցով ստացված ազդարարումների քանակը, սակայն 2023 թվականից կրկին աճել է ազդարարումների քանակը:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ հարուցված/նախաձեռնված քրեական գործերի ցուցանիշը թեև նվազել է, սակայն սակայն շուրջ 43%-ով աճել է մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի ցուցանիշի մասով:

Ազդարարման էլեկտրոնային համակարգով ներկայացված հաղորդումների վիճակագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում հետևյալը.

- Ազդարարման էլեկետրոնյաին համակարգի գործարկումից (2019թ) մինև օրս ստացվել է շուրջ շուրջ 418 ազդարարում:
- Ազդարարման էլեկտրոնային համակարգով ներկայացված հաղորդումներից ընդամենը 20, 19 % դեպքերում է քրեական գործ հարուցվել:
- Ազդարարման էլեկտրոնային հարթակի միջոցով ստացված հաղորդումների 48.89%-ն է ստուգվել օպերատիվ հետախուզական գործողությունների միջոցով:

Միջազգային պարտավորությունների գնահատման զեկույցների անդրադարձը

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՏՀԶԿ-ն Գնահատման շրջանակներում 2021 թվականին անդրադարձել է նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձին, ազդարարման համակարգին առնչվող կարգավորումներին և իրավակիրառ պրակտիկային, որի առնչությամբ նշել է հետևյալը.

- Ազդարարի վրա կիրառված ներգործության կապակցությամբ գործերի քննության դեպքում ապացուցման բեռը (այն առումով, որ կիրառված միջոցը կապված չէ ազդարարի գործողության հետ) պետք է դրվի գործատուի վրա:
- Կոռուպցիոն բնույթի հանցագործություն չհանդիսացող դեպքերի վերաբերյալ անանուն ազդարարելու հնարավորություն օրենքով նախատեսված չէ:
- Ներքին ազդարարման համակարգն արդյունավետ չէ:

• Օրենքը չի նախատեսում ազդարարների պաշտպանության արդյունավետ համակարգ, ինչպես նաև մինչև պաշտպանության մեխանիզմների կիրառումը կամ դրանից հետո համապատասխան մեխանիզմներ՝ խորհրդատվություն, փոխհատուցում և այլն:

• Անհրաժեշտ է իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով վաղեմության ժամկետի և նախաքննության իրականացման ժամկետների փոփոխություն. երկարաձգել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննության ժամկետը:

• ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների համար կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտ:

• Իրավաբանական անձի անբարեխիղճ աշխատակիցների, գործակալների, երրորդ անձանց կամ իրական սեփականատերերի գործողությունների արդյունքում կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտը բացակայում է:

• Առանց ֆիզիկական անձին հայտնաբերելու իրավաբանական անձի պատասխանատվության մոդելը ներդրված չէ:

• Անհրաժեշտ է նախատեսել իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող ոչ նյութական պատժամիջոցներ (օրինակ՝ պետական գնումներից զրկելը, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը և այլն):

• Անհրաժեշտ է ամրագրել իրավաբանական անձանց համար պատժի կիրառման սկզբունքները:

• Ներդնել իրավաբանական անձանց կողմից իրավական պաշտպանության գործիքակազմեր, այդ թվում՝ due diligence պաշտպանության ինստիտուտը, որոնք իրավաբանական անձը կարող է օգտագործել իր նկատմամբ կիրառվելիք պատժատեսակների վիճարկման կամ պատժատեսակները մեղմելու համար:

• Ներդնել դատարանի կողմից իրավաբանական անձանց նկատմամբ սանկցիաների կիրառման հետաձգման մոդելն այն դեպքերի համար, երբ իրավաբանական անձինք դատարանի որոշմամբ սահմանված կարգով ձեռնարկում են կատարված հանցագործության կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ:

• Կոռուպցիոն գործերով առգրավված և բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը և մասնագիտացված մարմինները բացակայում են:

• Քննչական մարմինները և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով պատասխանատու ստորաբաժանումը կոռուպցիոն գործերով նախաքննություն իրականացնելու և ապօրինի ծագման գույքի բռնագանձման գործընթացում չունեն պետական տվյալների շտեմարաններ, ինչպես նաև ֆինանսական տեղեկատվություն պարունակող շտեմարաններին ուղղակի մուտք գործելու հնարավորություն:

• Հիմնական շահագրգիռ կողմերի շրջանում չկա լայն ընկալում առ այն, որ վերադարձված գույքի թափանցիկ և արդյունավետ օգտագործումը, կառավարումը և մոնիթորինգն ապահովված է:

• Պետության կառավարման ներքո գտնվող կոռուպցիոն գործերով բռնագանձված գույքի վերաբերյալ տվյալների բազա չի գործում, որը կպարունակի տվյալներ դրա գտնվելու վայրի, արժեքի և այլ հանգամանքների մասին, և դրանում առկա տեղեկատվությունը կհրապարակվի առցանց:

• Բռնագանձված գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու անհրաժեշտության դեպքում պետք է ապահովվի մասնավոր սեկտորի ներգրավումը մրցակցային հիմունքներով:

• Բացակայում են բռնագանձված գույքի կառավարման պարբերական աուդիտները, հետևաբար նաև՝ դրանց արդյունքների հրապարակումը:

Վիճակագրության առնչությամբ նշվել են հետևյալ խնդիրները.

• Կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատավճիռների վերաբերյալ առանձին մանրամասն վիճակագրություն չի վարվում և հետևաբար չի հրապարակվում առցանց:

• Առանձին վիճակագրության չի վարվում կաշառք տալու և ստանալու գործերով հանրային և մասնավոր ոլորտներում, որոնցով կայացվել է դատավճիռ, կաշառք առաջարկելու կամ խոստանալու, կաշառքի շորթման կամ կաշառք ստանալու առաջարկը/խոստումը ընդունելու հանցակազմերով, որոնցով առկա է վերջնական մեղադրական դատական ակտ: Վիճակագրություն ոչ իրավաչափ ոչ նյութական բնույթի առավելություն ստանալու ձևով կաշառքի գործերով մեղադրական դատական ակտերի, առևտրային ոլորտում ազդեցության կիրառման հետ կապված հանցագործություններով մեղադրական դատական ակտերի, ապօրինի հարստանալու հանցակազմով մեղադրական դատավճռի կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով կայացված դատական ակտերի վերաբերյալ, օտարերկրացիների կաշառքի գործերով մեղադրական դատավճիռների, ինչպես նաև փողերի լվացման գործերով կայացված մեղադրական դատական ակտերի վերաբերյալ, որը վարվում է առանձին՝ անկախ հանրային ոլորտի կոռուպցիոն հանցագործությունների համար վարվող վիճակագրությունից:

• Առանձնացված վիճակագրություն առկա չէ, որը հնարավորություն կտար ստանալ վիճակագրական տեղեկություններ պաշտոնատար անձանց և մասնավոր ոլորտի անձանց կողմից կոռուպցիոն հանցագործությունների գործերով՝ առանձին-առանձին, առկա չէ վիճակագրություն դատարանի կողմից կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական պատասխանատվությունից ազատվելու վերաբերյալ գործերով, վիճակագրական տվյալների բացակայություն է առկա կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտված պետական պաշտոնատար անձանց ընդհանուր թվի և պաշտոնից ազատվածների վերաբերյալ:

• Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունների դեպքերն արտացոլված չեն կոռուպցիայի հայտնաբերման, քննության, քրեական հետապնդման և դրա մասով վճիռ կայացնելու վերաբերյալ վիճակագրության մեջ որպես առանձին կատեգորիա:

• Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ մեղադրական դատավճիռներիվերաբերյալ վիճակագրությունն առկա չէ:

• Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունների գործերով օտարերկրյա պետությունից վերադարձված կոռուպցիոն գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ վիճակագրություն չի վարվում:

• Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ վիճակագրական տվյալները առկա չեն հետևյալ ուղղություններով՝

• Կոռուպցիոն հանցագործությունների համար կիրառվող կորպորատիվ պատասխանատվության միջոցներ,

• իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող համաչափ և զսպող պատժամիջոցներ, ներառյալ դրամական տուգանքները,

• ուղղակի և անուղղակի կոռուպցիոն եկամուտների բռնագրավում,

• իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող ոչ նյութական պատժամիջոցներ,

• կոռուպցիոն բնույթի հանցագործություններով իրավաբանական անձանց հայտնաբերման, նախաքննության, հետապնդման, դատավարության և կիրառվող պատժատեսակների վերաբերյալ:

Համաձայն ՏՀԶԿ գնահատման զեկույցի՝ վերոնշյալից բացի, անհրաժեշտ է վարել և հրապարակել հետևյալ վիճակագրական տվյալները.

• կոռուպցիոն հանցագործություններից ստացված ածանցյալ (անուղղակի) եկամուտների բռնագանձման դեպքերը:

• գործին տեղյակ երրորդ կողմերին փոխանցված կոռուպցիոն հանցագործությունների կատարման գործիքների և դրանից ստացված եկամուտների բռնագանձման դեպքերը,

• այնպիսի գույքի բռնագրավման դեպքեր, որոնց դեպքում բռնագրավված գույքի արժեքը համապատասխանում է կոռուպցիոն հանցագործությունների կատարման գործիքների և դրանից ստացված եկամուտների արժեքին (արժեքի վրա հիմնված բռնագանձում),

• կոռուպցիոն հանցագործություններից ստացված եկամուտների, ինչպես նաև դրանից ստացված շահույթների խառը բռնագանձման դեպքերը,

• կոռուպցիոն հանցագործությունների կատարման գործիքների և դրանից ստացված եկամուտների՝ առանց դատապարտման բռնագանձման դեպքերը,

• քրեական գործերով ընդլայնված բռնագանձման դեպքերը,

• օտարերկրյա պետությունից վերադարձված կոռուպցիոն գործունեությունից ստացված եկամուտների դեպքերը,

• կոռուպցիոն բնույթի գործերով առգրավման և բռնագրավման միջոցների վերաբերյալ բազմակողմանի վիճակագրությունը և համապատասխան վերլուծությունը,

• տարեկան հաշվետվությունների հրապարակումը, որոնք պարունակում են կոռուպցիոն գործունեությունից ստացված եկամուտների բացահայտմամբ և հետագծմամբ, ինչպես նաև սահմանափակման միջոցների կիրառմանը ենթակա գույքի և բռնագանձված գույքի կառավարմամբ զբաղվող պաշտոնատար անձանց աշխատանքին առնչվող մանրամասն վիճակագրությունը, այդ թվում՝ նրանց աշխատանքի արդյունքների մասին տեղեկատվություն,

• չի հրապարակվում համապատասխան վիճակագրություն (պետական մարմինների կողմից ներքին և արտաքին ազդարարման արդյունքում ստացված տվյալների վերաբերյալ, Լիազոր մարմնի կողմից ազդարարներին տրամադրված խորհրդակցությունների, ազդարարման արդյունքում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հարուցված քրեական գործերի, ինչպես նաև ազդարարներին տրամադրված պաշտպանության վերաբերյալ):

ՄԱԿ-Ի ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

ՄԱԿ-ի գնահատման համառոտագրով ևս անդրադարձ է կատարվել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների բացահայտմանը, որի առնչությամբ առաջարկվել է հետևյալը.

• Անհրաժեշտ է բարձրացնել ֆինանսական հաստատությունների կողմից քաղաքական ազդեցություն ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների կամ նրանց անունից, ինչպես նաև ազգային և օտարերկրյա մակարդակներում քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սերտ գործընկերների հաշիվների ստուգման հաճախականությունը, ապահովել կանոնավոր մոնիթորինգի իրականացումը (Կոնվենցիայի հոդված 52, կետ 1):

• Միջոցներ ձեռնարկել ապօրինի ծագում ունեցող, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործության արդյունքում ստացված գույքի վերադարձման և տնօրինման/կառավարման կառուցակարգերը ներդնելու և առկա կառուցակարգերը զարգացնելու ուղղությամբ՝ Կոնվենցիայի 57-րդ հոդվածի 1-3-րդ կետերին համապատասխան՝ միաժամանակ ապահովելով բարեխիղճ երրորդ կողմերի իրավունքների պաշտպանությունը ոչ միայն բռնագանձման ժամանակ, այլ նաև վերադարձի ժամանակ (Կոնվենցիայի հոդված 57-րդ,մաս 1-3) և ապահովել բռնագանձված գույքի վերադարձը հայցող պետությանը Կոնվենցիայի 57-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, այդ թվում՝ այն դեպքերում, երբ երկկողմ պայմանագրերով այլ բան է նախատեսված (Կոնվենցիայի հոդված 57-րդ մաս 3 և 5):

• Ամրապնդել համագործակցությունը ֆինանսական մոնիթորինգի կենտրոնի և այլ հաստատությունների միջև ազգային և միջազգային մակարդակներում, ապահովել բանկային գաղտնիքի մասին օրենքներով առաջացած ցանկացած խոչընդոտների արդյունավետ հաղթահարումը (Կոնվենցիայի հոդված 58):

• Քննարկել Կոնվենցիայի V-րդ գլխի համաձայն իրականացվող միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով կոնկրետ համաձայնությունների կամ պայմանավորվածությունների կնքման հնարավորությունը (Կոնվենցիայի հոդված 59):

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական հասարակության մասնակցությունը կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանն ուղղված կառուցակարգերի կատարելագործմանը, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգերի ստեղծմանը հիմնականում ապահովվել է իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացմամբ և հանրային կլոր սեղան քննարկումներին մասնակցությամբ[22]:

Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության որոշ կազմակերպություններ իրականացրել են անհատական մի շարք միջոցառումներ: Այսպես.

✓ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (այսուհետ՝ ԹԻՀԿ) կողմից իրականացված հանրային կառավարման ոլորտում բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ հետազոտության[23] շրջանակներում ուսումնասիրվել է նաև ազդարարման համակարգի գործունեությունը: Հետազոտության արդյունքներով վեր են հանվել հետևյալ խնդիրները.

• պետական և ՏԻ մարմիններում ազդարարման հարցերով պատասխանատուների նշանակման համար սահմանված չեն պահանջներ և չափորոշիչներ, իսկ վերջիններիս նշանակման իրավասությունը վերապահված է իրավասու մարմնի ղեկավարին, ինչի արդյունքում չի կարող խրախուսվել ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական աճն ու ազդարարման գործընթացի ծավալումը,

• պետական և ՏԻ մարմինների ազդարարման հարցերով պատասխանատուների լիազորությունները իրականացնող պաշտոնատար անձանց տարաբնույթ կարգավիճակները չեն համապատասխանում «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ վերջինիս վերապահված լիազորությունների կամ գործառույթների շրջանակին.

• քաղաքացիական ծառայության գործընթացով, ինչպես նաև օրենսդրական այլ հանգամանքներով պայմանավորված ՀՀ Սահմանադրական դատարանում, ՀՀ դատական դեպարտամենտում, ՀՀ ազգային ժողովի աշխատակազմում դեռևս ձևավորված չէ ազդարարման հարցերով պատասխանատուների ինստիտուտը.

---

[22] https://www.moj.am/article/2540 , https://www.e-draft.am/projects/1931 , https://armla.am/46034.html , https://armla.am/44822.html

[23] https://transparency.am/hy/publications/view/385

• ազդարարման հարցերով պատասխանատուների կոնտակտային տվյալները պետական կառավարման և ՏԻ մարմինների կայքէջում ուղղակիորեն և ամբողջական հասանելի չեն պետական և ՏԻ մարմինների անձնակազմին և հանրությանը.

• ազդարարման հարցերով պատասխանատուները 2020թ. ընթացքում ընդհանրապես չեն անցել վերապատրաստում, այդ թվում մասնագիտական դասընթացներ, նրանց համար բացակայում են վերապատրաստում իրականացնող պատասխանատու կառույցները,

• ՀՀ գլխավոր դատախազության կողմից վարվող միասնական ազդարարման անանուն էլեկտրոնային համակարգը գործում է միայն կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ստացման ու մշակման նպատակով: Այն հասանելի չէ այլ պետական և ՏԻ մարմիններին, անանուն էլեկտրոնային միասնական հարթակով ստացված և հանցագործության էլեմենտներ չպարունակող հաղորդումներն այլ պետական և ՏԻ մարմիններին չեն հասցեագրվում,

• պետական և ՏԻ մարմիններում ազդարարման հարցերով պատասխանատուների կողմից ազդարարման վերաբերյալ հաղորդումների ու դիմումների բացակայության, ինչպես նաև ազդարարման հարցերով պատասխանատուներին ներքին ու արտաքին ազդարարման գործընթացների կազմակերպման ու իրականացման վերաբերյալ մեթոդական ու խորհրդատվական աջակցության բացակայության, էլեկտրոնային միասնական հարթակում անանուն ազդարարման միջոցով հանցագործությունների էլեմենտներ չպարունակող հաղորդումները այլ պետական և ՏԻ մարմիններին չփոխանցելու պայմաններում գործնականում ազդարարման ինստիտուտը պետական և ՏԻ մարմիններում կրում է ձևական բնույթ և չի գործադրվում:

Նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկվել է հետևյալը.

• ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ իրականացնել ՀՀ պետական և ՏԻ մարմիններում ստուգումներ՝ ապահովելու բոլոր պետական և 15,000-ից ավելի բնակչություն ունեցող ՏԻ մարմիններում ազդարարման հարցերով պատասխանատուների նշանակման գործընթացը, այդ թվում ՀՀ ԱԺ աշխատակազմում, ՀՀ դատական դեպարտամենտում և ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմում,

• «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով ապահովել ազդարարման հարցով պատասխանատուներին նոր՝ համապատասխանաբար պետական կամ համայնքային ծառայողի կարգավիճակի շնորհումը՝ ընտրությունը և նշանակումը նախատեսելով մասնագիտական, արժանիքահեն սկզբունքով,

• «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով ապահովել, որ ՀՀ արդարադատության նախարարությունը հանդիսանա ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության վերահսկման ու նրանց վերապատրաստման կազմակերպման պատասխանատու կառույց,

- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ՔԾԳի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ մշակել պետական կառավարման և ՏԻ մարմինների ազդարարման հարցերով պատասխանատուների գործունեության ապահովման ուղեցույցներ և մեթոդական նյութեր,
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ՔԾԳի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ, ազդարարման հարցերով պատասխանատուներին վերապահված լիազորությունների իրականացումը ապահովելու նպատակով՝ մշակել և իրականացնել պետական կառավարման և ՏԻ մարմինների ազդարարման հարցերով պատասխանատուների վերապատրաստման մասնագիտական դասընթացներ.
- պետական կառավարման մարմինների կայքէջերում միասնականացնել ազդարարման հարցերով պատասխանատուների կոնտակտային տվյալների հասանելիությունը՝ մասնավորապես հիմք ընդունելով ՀՀ մարզպետարաններում կիրառվող՝ http://syunik.mtad.am/azdararum/, իսկ ՏԻ մարմիններում՝ Աշտարակի համայնքապետարանի՝ https://ashtarak.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=359 միասնական փորձը.
- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով ապահովել ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի հասանելիությունը բոլոր պետական մարմիններին՝ ներառյալ ազդարարների կողմից հանցագործության էլեմենտներ չպարունակող հաղորդումների ներկայացման հնարավորությունները,
- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով սահմանել պետական և ՏԻ մարմինների կողմից ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրություն վարելու պարտականություն,
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ մշակել և իրականացնել ազդարարումը խրախուսող և լուսաբանող հանրային արշավների ծրագիր՝ ներառյալ քաղաքացիական հասարակության կողմից անանուն ազդարարումների միջոցով:

✓ ԹԻՀԿ-ի կողմից իրականացվել է ազդարարելու վերաբերյալ տեղեկատվական տեսանյութի պատրաստում և հրապարակում[24], ինչպես նաև մշակվել և հրապարակվել է «Ազդարարի ուղեցույց» խորագրով փաստաթուղթը[25]:

✓ «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագրի շրջանակներում դեռևս 2017 թվականից ստեղծվել և գործարկվում է «ԲիզՊաշտպան» (bizprotect.am) հարթակը[26], որի նպատակն է գործարար միջավայրի բարեփոխումը, կոռուպցիոն ռիսկերի և հանցագործությունների բացահայտումը: Այս ծրագիրն իրականացվել է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության, Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Եվրոպական բիզնես ասոցիացիայի կողմից:

[24] https://transparency.am/hy/whistleblowing/how
[25] https://transparency.am/wbl-files/files/1587547527-0-633961.pdf
[26] https://bizprotect.am/

«ԲիզՊաշտպան» հարթակի միջոցով նաև անանուն դիմելու հնարավորություն է տրվում տեղեկություն հայտնողի ինքնությունը գաղտնի է մնում, իսկ հայտնած տեղեկության իսկությունը ստուգվում և սեղմ ժամանակում պատասխան է տրվում:

«ԲիզՊաշտպան» հարթակի միջոցով ստացված հաղորդումների և դրանց ընթացքի վերաբերյալ վարվում է առանձին հաշվետվություն, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://bizprotect.am/am/statistic:

➢ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ ամրագրվել էր, որ անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համակարգային և պարբերական հակակոռուպցիոն կրթության տրամադրման հարցում: Ընդ որում, կառուցակարգային հարցերի լուծման նպատակով առաջարկվել էր հակակոռուպցիոն կրթության իրականացման գործառույթը վերապահել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ վերջինիս համար սահմանելով կրթական ծրագրերի, ուղեցույցների, պարբերական խորհրդատվական զեկույցների մշակման և հրապարակման պարտականություն:

Միևնույն ժամանակ կարևորելով հակակոռուպցիոն կրթության արմատավորումը դեռևս դպրոցական տարիներից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում դասավանդվում են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող այնպիսի թեմաներ, որոնք բավարար միջոց չեն կոռուպցիայի նկատմամբ կատարյալ անհանդուրժողականության ձևավորման և հակակոռուպցիոն վարքագիծ ուսանելու նպատակի իրագործման տեսանկյունից՝ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ առաջարկվել է կատարել ուսումնասիրություն ավագ դպրոցում ուսուցանվող «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ և վերանայել վերջիններիս բովանդակությունը: Միաժամանակ, ամրագրվել էր բարձրագույն ուսումնական հաստատություններում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որպես պարտադիր առարկա հակակոռուպցիոն կրթությունը ներառելու անհրաժեշտությունը:

Վերոնշյալի համատեքստում 2019-2021թթ. կատարված բարեփոխումների ուսումնասիրությունից պարզ է դառնում հետևյալը.

✓ Օրենսդրական փոփոխությունների արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի մշակման և այդ նպատակներով միջոցառումների իրականացման, կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացման, կրթական ծրագրերի իրականացման համար ուսումնամեթոդական ուղեցույցների և այլ նյութերի մշակման և տրամադրման լիազորություններ:

✓ «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է, առաջարկությունները ներկայացվել են, 2021 թվականին փոփոխություններ են կատարվել ավագ դպրոցի՝ 10-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրերում, որոնցում հասարակագիտության առարկայի շրջանակում ներառված են կոռուպցիային առնչվող բաժիններ:

✓ 2021 թվականից Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան:

✓ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվել է ուսումնասիրություն կոռուպցիայի կանխարգելմանը միտված գործող կրթական ծրագրերի ուղղությամբ, որի ընթացքում հարցումներ է ուղարկվել ՀՀ-ում գործող ԲՈՒՀ-եր: Համադրելով ստացված արդյունքները՝ պատրաստվել է ամփոփ զեկուցում և այն ներկայացվել է կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների և ՀԿ-ների ներկայացուցիչներին: Միաժամանակ ԿԿՀ-ի կողմից նախապատրաստվել է համագործակցային միջավայր բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և կնքվել է համագործակցության հուշագիր՝ ամրագրելով համագործակցային օրակարգը՝ պրակտիկաների կազմակերպում, կրթական ծրագրերի մշակում, ԿԿՀ-ի գործառույթներին առնչվող ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն[27]:

✓ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել և իրականացրել է բարեվարքություն թեմայով 25 վերապատրաստում (վերապատրաստման ծրագրում եղել են նաև մարդու իրավունքների և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ բաժիններ): Վերապատրաստումները կազմակերպվել են սեպտեմբերի 14-ից դեկտեմբերի 24-ը ներառյալ՝ յուրաքանչյուրը երկու աշխատանքային շաբաթ տևողությամբ: Վերապատրաստումներն իրականացվել են հեռավար եղանակով, որոնց մասնակցել են 390 քաղաքացիական ծառայողներ: 2021 թվականի մարտ ամսին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեվարքության թեմաներով, որին մասնակցել են համապատասխան մարմինների թվով 63 քաղաքացիական ծառայողներ: 2021 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը հեռավար եղանակով կազմակերպել է բարեվարքություն կոմպետենցիայի վերաբերյալ վերապատրաստում, որին մասնակցել են համապատասխան մարմինների թվով 133 քաղաքացիական ծառայողներ:

✓ Քաղաքացիական ծառայողների համար «Մարդու իրավունքներ» թեմայով մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ, հաստատվել է «1. Երեխաների իրավունքներ 2. Խտրականության դեմ պայքար 3. Կանանց իրավունքների և գենդերային հավասարություն» դասընթացների ընդհանուր նկարագիրը: Բացի այդ, մշակվել են բարեվարքություն, մարդու իրավունքների և կոռուպցիայի կանխարգելման թեմաներով հեռավար ուսուցման մոդուլները: Նշված թեմաները ներառվել են քաղաքացիական

[27] http://cpcarmenia.am/hy/news/item/2021/12/28/1/

ծառայողների վերապատրաստման ծրագրերում: Բարեվարքություն թեմայով (վերապատրաստման ծրագրում եղել են բաժիններ մարդու իրավունքների և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ) իրականացվել են վերապատրաստումներ, որոնց մասնակցել են 39 պետական մարմինների 390 քաղաքացիական ծառայողներ: 2021 թվականի մարտ ամսին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեվարքություն թեմայով, որին մասնակցել են համապատասխան մարմինների թվով 63 քաղաքացիական ծառայողներ: 2021 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը հեռավար եղանակով կազմակերպել է բարեվարքություն կոմպետենցիայի վերաբերյալ վերապատրաստում, որին մասնակցել են համապատասխան մարմինների թվով 133 քաղաքացիական ծառայողներ:

✓ Արդարադատության Ակադեմիայի կողմից Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման 2021 թվականին ծրագրի համաձայն՝ անցկացվել են դատախազների վերապատրաստումներ հետևյալ դասընթացներով.

Ա. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր

Դասընթացը նպատակ է հետապնդում ընդլայնել հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում գիտելիքների ծավալը: Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրանց դեմ տարվող պայքարի հիմնահարցերը, հակակոռուպցիոն պայքարի իրավական կարգավորումները (ներպետական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) հանձնարարականները, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակների (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ-ի և ՄԱՆԻՎԱԼ-ի գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարարական կազմակերպությունների, ՁԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

Բ. Կոռուպցիոն դեպքերի քննություն

Դասընթացը կոռուպցիոն դեպքերի քննությանն առնչվող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման նպատակ է հետապնդում: Դասընթացի շրջանակում քննարկվել են կոռուպցիոն դեպքերի քննության առանձնահատկությունները, դատախազության և դատախազական հսկողության դերակատարությունը կոռուպցիայի դեմ պայքարում, ուսումնասիրվելու են կոռուպցիոն հանցագործությունների պատճառները և հետևանքները, կոռուպցիայի դեմ պայքարի ազգային և միջազգային փորձը, կոռուպցիայի դեմ պայքարի իրավական և կազմակերպական հիմքերը (ՀՀ և միջազգային), կանխմանն ուղղված սահմանափակումները:

Գ. Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա

Դասընթացը կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու նպատակ է հետապնդում: Դասընթացը ներառում է հանցագործությունների քննության ընդհանուր մեթոդաբանությունը, հանցագործության մեխանիզմի հասկացությունը, առաջացման օրինաչափությունները, քրեագիտական դիագնոստիկան, ապացույցների ամրագրման տեխնիկա-քրեագիտական մեթոդները և ձևերը, քրեագիտական լուսանկարահանումը և տեսաձայնագրումը, առանձին քննչական գործողությունների (քննչական փորձարարություն, ճանաչման ներկայացնել, խուզարկություն, նմուշներ ստանալ, հարցաքննություն և այլն) կատարման տակտիկային, ինչպես նաև հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկային վերաբերող հարցերը (մասնավորապես՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, կիբեռհանցագործությունների քննության մեթոդիկայի, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները):

Դ. Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն

Դասընթացը պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննության ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման նպատակ է հետապնդում: Դասընթացի շրջանակում քննարկման առարկա են դարձել կոռուպցիայի դեմ պայքարի դատախազական մարտավարության քաղաքացիաիրավական տարրերը, մասնավորապես՝ կոռուպցիային արձագանքելու քաղաքացիաիրավական հիմքերը, մեխանիզմները, ՀՀ և արտասահմանյան երկրների օրենսդրությունը, միջազգային ուղենիշները, կոռուպցիոն ճանապարհով ստացված եկամուտների քաղաքացիաիրավական կարգով կամ կանխարգելիչ բռնագանձումը, ՀՀ և միջազգային փորձը, դատախազության կողմից պետության գույքային շահերի պաշտպանության հայց հարուցելը, այդ գործընթացում դատախազության իրավասությունը:

Զ. Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար

Դասընթացի նպատակը կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործությունների քննության և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ծավալի ընդլայնումն ու կատարելագործումն է: Դասընթացի շրջանակում քննարկվել են.

- ֆինանսական հանցագործությունների բնորոշումը. փողերի լվացում, բանկային գաղտնիք, արժեթղթերի շուկայի չարաշահումներ, հարկեր թաքցնել, եկամուտների հայտարարագրման հիմնախնդիրներ,
- անդրազգային կազմակերպված հանցավորությունը, սահմանումները, տիպերը, բնութագրերը, պատճառները, հետևանքները և ֆինանսական հանցագործություններին ու անդրազգային կազմակերպված հանցավորությանը արձագանքելու հետ կապված այլ հարցեր:

Դասընթացի շրջանակում ներկայացվելու են քննարկվող նյութի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, միջազգային փորձը, իրական կյանքից վերցված գործնական իրավիճակներ:

Վերապատրաստումներին դատախազների, ինչպես նաև դատախազների թեկնածության ցուցակում ընդգրկված անձանց մասնակցության վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

Դատախազներ				
Դասընթացներ	2020թ.		2021թ.	
	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատախազներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատախազներ
ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	83		112	21
Դատախազի վարքագծի կանոններ			72	
Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր			72	
Կոռուպցիոն դեպքերի քննությունը			23	8
Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը	80		63	10
Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը	53		50	7

Դատախազների համար կազմակերպված վերապատրաստումների քանակը[28] և թեմաները, ինչպես նաև դրանց մասնակցած դատախազների թիվը				
Դասընթացներ	2020թ.		2021թ.	
	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատախազներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության Դատախազներ
ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	113		120	20
ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	83		112	21
Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցեր			18	
ՀՀ էկոլոգիական իրավունքի արդի հարցեր			18	
Իրավարանական գիր և մեկնարանում			54	
Դատախազի վարքագծի կանոններ			72	
Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր			18	
Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար			72	

[28] 2020-2021 թվականներին առկա ուսուցման ձևով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել ապրիլ-մայիս ամիսները՝ ընդհանուր մասնագիտական, և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները՝ հատուկ մասնագիտական առարկաներով, իսկ հեռավար ուսուցման ձևով՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները:

Քրեական գործերով քննության ընագավառում միջազգային համագործակցություն			54	
Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր			72	
Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա	23		26	5
Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության, պրոբացիայի նկատմամբ դատախազական հսկողության հիմնախնդիրներ	73		89	13
Զինվորական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկություններ	27		13	3
Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր	53		50	7
Կոռուպցիոն դեպքերի քննությունը			23	8
Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը	80		63	10
Ներքին ուսումնասիրություններ(քննություն)	37		22	5
Կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ	86		106	16
Գենոների հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը			14	6
Անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	13		17	3
Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը	53		50	7
Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը	53		50	7
Ընտրական հանցագործությունների որակումը և քննության մեթոդիկան	10		9	2
Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր	53		50	7
Դատական փորձաքննությունների արդի հարցեր	27		28	9

Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	53		50	7
Հարցաքննության մեթոդներ և հաղորդակցության կառավարում	13		89	13
Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում	45		17	3
Խոշտանգումների քրեաիրավական բնութագիր և քննության առանձնակատկություններ	45		54	
Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները	45		14	6

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց համար կազմակերպված մասնագիտական պատրաստման քանակը և թեմաները, ինչպես նաև դրանց մասնակցած դատախազների թիվը[29]				
	2020թ.		2021թ.	
Դասընթացներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատախազի թեկնածուներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատախազի թեկնածուներ
ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	45		84	1
Դատախազների կողմից միջազգային իրավունքի կիրառման տեսական և գործնական հարցեր	45		52	1
ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	13		61	1
Հաղորդակցության և բանակցության հմտություն	45		52	1
Սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի	45		52	1

[29] Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում 2020 թվականին անցել է 2 խումբ, 2021 թվականին՝ 3 խումբ:

միտումներ/ ՀՀ սահմանադրության և սահմանադրական արդարադատության արդի հարցեր 2021				
Ներազդման հոգերանություն	45		52	1
Սթրեսի և ժամանակի կառավարում	45		52	1
Իրավավերլուծական փաստաթղթերի կազմում և իրավամեկնարանման ռազմավարության հնարքներ	45		52	1
Համակարգչային հմտություններ	45		52	1
Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և դատախազի վարքագծի կանոններ	45		52	1
Փաստարկում և հռետորարանություն	45		52	1
Քրեական գործերով միջազգային համագործակցություն			23	1

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում

Դասընթացներ	2020թ.		2021թ.	
	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատախազի թեկնածուներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատախազի թեկնածուներ
Քաղաքացիական իրավունքի արդի հարցեր	10			
Քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10			
«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման	10			

մասին» օրենքի կիրառման առանձնահատկությունները				
Ակտիվների վերականգնման միջազգային փորձը և այդ ոլորտում համագործակցությունը	10			

• Համաձայն ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման 2021 թվականին ծրագրի՝ Արդարադատության ակադեմիայում անցակցվել են հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստումներ հետևյալ դասընթացով՝ Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան: Դասընթացը կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների որակման և քննության մեթոդիկայի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ գիտելիքների կատարելագործման նպատակ է հետապնդում: Դասընթացը ներառում է՝

• հակակոռուպցիոն պայքարի միջազգային իրավական կարգավորումները, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) հանձնարարականները, վերջիններիս անդամակցող պետությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը,

• հակակոռուպցիոն պայքարի ներպետական իրավական կարգավորումները, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ, 312-րդ, 314-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի և կոռուպցիոն այլ հանցագործությունների քրեաիրավական բնութագրերը, որակման առանձնահատկությունները, ինչպես նաև դատական պրակտիկայում առկա իրավական դիրքորոշումները, կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները,

• ապօրինի հարստանալու քրեաիրավական բնութագիրը և քննության մեթոդիկան,

• հայտարարագրման պարտականության խախտման հետ կապված հանցատեսակների քրեաիրավական բնութագիրը և քննության մեթոդիկան:

Համաձայն ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման ուսուցման 2021 թվականին ծրագրի՝ ՀՀ արդարադատության ակադեմիայում անցակցվել են վերապատրաստումներ հետևյալ դասընթացներով.

Ա. Կոռուպցիոն դեպքերի քննությունը

Դասընթացը կոռուպցիոն դեպքերի քննությանն առնչվող հիմնահարցերի վերաբերյալ քննիչների գիտելիքների ծավալի ընդլայնման, դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման նպատակ է

հետապնդում: Դասընթացի շրջանակում քննարկվել են կոռուպցիոն դեպքերի քննության առանձնահատկությունները, ուսումնասիրվելու են կոռուպցիոն հանցագործությունների պատճառները և հետևանքները, կոռուպցիայի դեմ պայքարի ազգային և միջազգային փորձը, կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմքերը (ՀՀ և միջազգային), կանխմանն ուղղված

սահմանափակումները:

Բ. Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը

Դասընթացի նպատակը կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործությունների քննության և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ծավալի ընդլայնումն ու կատարելագործումն է: Դասընթացի շրջանակում քննարկվել են.

- ֆինանսական հանցագործությունների բնորոշումը. փողերի լվացում, բանկային գաղտնիք, արժեթղթերի շուկայի չարաշահումներ, հարկեր թաքցնել, եկամուտների հայտարարագրման հիմնախնդիրներ,
- անդրազգային կազմակերպված հանցավորությունը, սահմանումները, տիպերը, բնութագրերը, պատճառները, հետևանքները և ֆինանսական հանցագործություններին ու անդրազգային կազմակերպված հանցավորությանը արձագանքելու հետ կապված այլ հարցեր: Դասընթացի շրջանակում ներկայացվել են քննարկվող նյութի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, միջազգային փորձը, իրական կյանքից վերցված գործնական իրավիճակներ:

Արդարադատության ակատեմիայում քննիչների, ինչպես նաև ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ըստ թեմաների վերապատրաստումների/մասնագիտական ուսուցումների մասնակիցների առնչությամբ առկա է հետևյալ սխեմատիկ պատկերը.

- Համաձայն ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման 2021թվականին ծրագրի՝ Արդարադատության ակադեմիայում անցակցվել են հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստումներ հետևյալ դասընթացով՝ Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան: Դասընթացը կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների որակման և քննության մեթոդիկայի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ գիտելիքների կատարելագործման նպատակ է հետապնդում: Դասընթացը ներառում է՝
- հակակոռուպցիոն պայքարի միջազգային իրավական կարգավորումները, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) հանձնարարականները, վերջիններիս անդամակցող պետությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը,

• հակակոռուպցիոն պայքարի ներպետական իրավական կարգավորումները, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ, 312-րդ, 314-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի և կոռուպցիոն այլ հանցագործությունների քրեաիրավական բնութագրերը, որակման առանձնահատկությունները, ինչպես նաև դատական պրակտիկայում առկա իրավական դիրքորոշումները, կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները,

• ապօրինի հարստանալու քրեաիրավական բնութագիրը և քննության մեթոդիկան,

• հայտարարագրման պարտականության խախտման հետ կապված հանցատեսակների քրեաիրավական բնութագիրը և քննության մեթոդիկան:

Համաձայն ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման ուսուցման 2021 թվականին ծրագրի՝ ՀՀ արդարադատության ակադեմիայում անցակցվել են վերապատրաստումներ հետևյալ դասընթացներով.

Ա. Կոռուպցիոն դեպքերի քննությունը

Դասընթացը կոռուպցիոն դեպքերի քննությանն առնչվող հիմնահարցերի վերաբերյալ քննիչների գիտելիքների ծավալի ընդլայնման, դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման նպատակ է հետապնդում: Դասընթացի շրջանակում քննարկվել են կոռուպցիոն դեպքերի քննության առանձնահատկությունները, ուսումնասիրվելու են կոռուպցիոն հանցագործությունների պատճառները և հետևանքները, կոռուպցիայի դեմ պայքարի ազգային և միջազգային փորձը, կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմքերը (ՀՀ և միջազգային), կանխմանն ուղղված

սահմանափակումները:

Բ. Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը

Դասընթացի նպատակը կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործությունների քննության և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ծավալի ընդլայնումն ու կատարելագործումն է: Դասընթացի շրջանակում քննարկվել են.

• ֆինանսական հանցագործությունների բնորոշումը. փողերի լվացում, բանկային գաղտնիք, արժեթղթերի շուկայի չարաշահումներ, հարկեր թաքցնել, եկամուտների հայտարարագրման հիմնախնդիրներ,

• անդրազգային կազմակերպված հանցավորությունը, սահմանումները, տիպերը, բնութագրերը, պատճառները, հետևանքները և ֆինանսական հանցագործություններին ու անդրազգային կազմակերպված հանցավորությանը արձագանքելու հետ կապված այլ հարցեր: Դասընթացի շրջանակում ներկայացվել են քննարկվող նյութի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, միջազգային փորձը, իրական կյանքից վերցված գործնական իրավիճակներ:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 19.04.2022թ. որոշման հավելված 1-ով Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսները:

2022 թվականի Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստման ուսուցման ծրագրում ներառվել է «ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում» վերտառությամբ դասընթացը, որով վերապատրաստվել է 238 քննիչ:

Դասընթացի շրջանակում, ի թիվս այլնի, քննարկման առարկա է դառնում հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, այդ թվում անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, սեփականաթության դեմ ուղղված և կոռուպցիոն հանցագործությունների) և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը:

Արդարադատության ակատեմիայում քննիչների, ինչպես նաև ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ըստ թեմաների վերապատրաստումների/մասնագիտական ուսուցումների մասնակիցների առնչությամբ առկա է հետևյալ սխեմատիկ պատկերը.

Քննիչների համար կազմակերպված վերապատրաստումների քանակը[30] և թեմաները, ինչպես նաև դրանց մասնակցած քննիչների թիվը				
Դասընթացներ	**2020թ.**		**2021թ.**	
	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	**Արցախի Հանրապետության քննիչներ**	**Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում**	**Արցախի Հանրապետության քննիչներ**
ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	47		58	

[30] 2020-2021 թվականներին վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել հուլիս-դեկտեմբեր ամիսները:

ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	47		58	
Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	47		58	
Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա	47		58	

1. ՀՔԾ քննիչների համար կազմակերպված վերապատրաստումների քանակը[31] և թեմաները, ինչպես նաև դրանց մասնակցած քննիչների թիվը

Դասընթացներ	2020թ.		2021թ.	
	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության քննիչներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության քննիչներ
Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հիմնահարցեր	5		7	
Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան	5		7	
Ընտրական հանցագործությունների	5		7	

[31] 2020 թվականին վերապատրաստումն իրականացվել է՝ փետրվարի 3-ից 7-ը, 2021 թվականին՝ մարտի 6-ից 30-ը:

որակումը և քննության մեթոդիկան				
Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան	5		7	
Հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հիմնախնդիրները	5		7	
Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները	5		7	

ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում[32]		
Դասընթացներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում
	2020թ.	2021թ.
Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	47	58
Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա	47	58

[32] ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մանագիտական պատրաստում 2020 թվականին անցել է 2 խումբ, 2021 թվականին՝ 2 խումբ:

ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	47	58
ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	47	58

✓ Արդարադատության ակադեմիայում դատավորների, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց կողմից 2020-2021 թվականներին կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող վերապատրաստումների/մասնագիտական պատրաստումների առնչությամբ պատկերը հետևյալն է.

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման թեմաները, ինչպես նաև դրանց մասնակցած դատավորների թեկնածուների հավակնորդների թիվը[33]		
	2020թ.	**2021թ.**
Դասընթացներ	**Մասնակիցների քանակը**	**Մասնակիցների քանակը**
Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում	9	32
Դատարանների կողմից միջազգային իրավունքի կիրառման տեսական և գործնական հարցեր	9	15
Իրավավերլուծական փաստաթղթերի կազմում և իրավամեկնարանման ոճավարության հնարքներ	9	15
Հաղորդակցության և բանակցության հմտություններ	9	15
Համակարգչային հմտություններ	9	15
Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր	9	15
Ներազդման հոգերանություն	9	15
Սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները	9	15

[33] Դատավորների թեկնածուների հավակնորդների մասնագիտական պատրաստում 2020 թվականին անցել է 2 խումբ, 2021 թվականին՝ 3 խումբ:

Սթրեսի և ժամանակի կառավարում	9	15
Քաղաքացիական դատավարության արդի հարցեր	7	3
Քաղաքացիական իրավունքի արդի հարցեր	7	3
Քրեական իրավունքի արդի հարցեր	1	32
Քրեական վարույթի արդի հարցեր	1	32
Դատական նիստի վարման և դատական ակտի մշակման հմտություններ		17
Վարչական իրավունքի արդի հարցեր	2	
Վարչական դատավարության արդի հարցեր	2	

✓ Արդարադատության ակադեմիայում դատավորների, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց կողմից 2020-2021 թվականներին կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող վերապատրաստումների/մասնագիտականպատրաստումների առնչությամբ պատկերը հետևյալն է.

Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց համար կազմակերպված վերապատրաստումների քանակը[34] և թեմաները, ինչպես նաև դրանց մասնակցած դատավորների թիվը			
Դասընթացներ	2020թ.	2021թ.	2022թ.

****
****

	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատավորներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում	Արցախի Հանրապետության դատավորներ	Մասնակիցների քանակը յուրաքանչյուր խմբում
Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	17		32	1	
Աշխատանքային իրավունքի արդի հարցեր	29		30	1	
Ապահովագրական իրավահարաբերությունների արդի հիմնահարցեր			16	4	
Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը	42		8	1	
Դատական ակտերի մշակման հմտություններ			92	10	
Դատական իշխանության անկախություն և թափանցիկություն			92	10	
Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում			147	17	171
Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության	42		8	1	

առանձնահատկությունները					
Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը			8	1	
Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում	19		36	5	
Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	59		32	1	
Իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները քրեական գործերով	17		32	1	
Իրավական օգնություն, օտարերկրյա դատական ակտերի և արբիտրաժի վճիռների ճանաչման ու հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթ	29		30	1	
Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնա-հատկությունները»	19		36	5	
Կալանք և այլ խափանման միջոցներ	42		8	1	

Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը	19		36	5	40
Կոռուպցիոն դեպքերի քննությունը	19		36	5	40
Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	61		26	2	
Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր			121	12	189
Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար			55	7	
Հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրներ	11		16	4	
Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր			55	7	
Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը	17		32	1	
Հատուկ հայցային վարույթներով և հատուկ վարույթներով գործերով քննության առանձնահատկությունները	66		90	5	
Հատուկ վարույթի գործերով քննության	16		23	3	

առանձնահատկությունները					
ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները			55	7	
ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով	97		116	7	
ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր	21		19	3	
ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները վարչական գործերով	16		23	3	
ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	116		116	7	
ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցերը	31		26	2	
ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	19		36	5	
ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	17		32	1	
Ներքին ուսումնասիրություններ (քննություն)			92	10	
Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը	17		32	1	

Ոչ նյութական վնասի հատուցման հիմնախնդիրներ	26		44		
Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը	16		23	3	
Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը	42		8	1	8
Պատիժ նշանակելու, կատարելու, պատժից ազատելու կամ այն փոխարինելու նյութաիրավական և դատավարական հիմնախնդիրներ	19		36	5	
Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	50		45	5	
Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	21		45	5	
Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության արդի հարցեր	16		23	3	
Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	42		8	1	
Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների	26		44	0	

կիրառման արդի հարցեր					
Բանկային իրավունքի արդի հարցեր	19				
ՀՀ վարչական վարույթի արդի հարցեր	21				
ՀՀ էկոլոգիական իրավունքի արդի հարցեր	21				
Մնանկության վարույթի արդի հարցեր	19				
Ֆինանսական կառավարում	19				
Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը					2

Այսպես, 2022թ. ընթացքում «Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում» թեմայով վերապատրաստվել է 171 դատավոր և դատավորի թեկնածու, ինչը 7-ով ավել է 2021թ. ցուցանիշից՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատավորների թվից միասին վերցրած:

«Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր» թեմայով դասընթացով վերապատրաստվել է 189 դատավոր և դատավորի թեկնածու, ինչը 56-ով ավելին է 2021թ. ցուցանիշից:

2022թ. 2 դատավոր վերապատրաստվել է «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» վերտառությամբ դասընթացով: Հարկ է նշել, որ սույն դասընթացը ներառված չէր Արդարադատության ակադեմիայում դատավորների, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց կողմից 2020-2021 թվականներին կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող վերապատրաստումների/մասնագիտական պատրաստումների ծրագրում:

✓ Ոստիկանության ակադեմիայում ևս անցկացվել են վերապատրաստումներ, որոնց առնչությամբ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

h/h	Խմբի անվանումը	Թեմաների անվանումները
1.	ՀՀ ոստիկանության վարչության և բաժնի պետի ծառայության գծով տեղակալներ, ծառայության բաժնի պետի տեղակալներ, պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետեր և համայնքային ոստիկանության բաժանմունքի պետեր ՀՀ ոստիկանության միջին խմբի պաշտոններում նշանակված ծառայողներ	Շահերի բախման հիմնախնդրի և կոռուպցիոն ռիսկերի կապը ոստիկանությունում ՀՀ ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնների մեկնաբանությունը
		Քրեաիրավական քաղաքականությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում
		Կոռուպցիայի քրեաբանական բնութագիրը և կանխարգելումը
2.	ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ	Բարեվարքության տարրերը
		Կոռուպցիոն հանցագործությունների քրեաբանական բնութագիրը
3.	ՀՀ ոստիկանության շտաբի, կազմակերպական, վերլուծական, պլանավորման և հաշվառման աշխատանքների ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ	Շահերի բախման հիմնախնդրի և կոռուպցիոն ռիսկերի կապը ոստիկանությունում
		ՀՀ ոստիկանության էթիկայի կանոնները /մեկնաբանություն/
4.	ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության բաժնի և տարածքային պահպանության բաժնի պետերի, բաժնի պետի տեղակալների, բաժանմունքի պետի, գնդի, գումարտակի, վաշտի հրամանատարների և տեղակալների, դասակի հրամանատարների, ծառայության ավագ տեսուչի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ	Կոռուպցիոն բնույթի հանցագործություններ
		Բարեվարքության տարրերը
5.	ՀՀ ոստիկանության հերթապահ մասի և ՕԿԿ պետերի և տեղակալների, հերթապահ մասի և ՕԿԿ միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ	Ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները
		Շահերի բախման հիմնախնդրի և կոռուպցիոն ռիսկերի կապը ոստիկանությունում

		Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը
6.	ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության վարչական գործունեության բաժանմունքի ծառայողներ	Բարեվարքության տարրերը
		ՀՀ ոստիկանության էթիկայի կանոններ: /Մեկնաբանություններ
	ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության հերթապահ ծառայության ծառայողներ	
		Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը
	ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության հետախուզական հատուկ խմբի ծառայողներ	
	ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության կադրային ապարատի ծառայողներ	
	ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության իրավաբանական բաժանմունքի ծառայողներ	
7.	ՀՀ ոստիկանության ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում նշանակված ծառայողների երկամսյա վերապատրաստման դասընթաց	Կոռուպցիայի հասկացությունը և ընդհանուր բնութագիրը: Կոռուպցիոն հանցագործություններ
		Շահերի բախման հիմնախնդրի և կոռուպցիոն ռիսկերի կապը ոստիկանությունում
		ՀՀոստիկանության ծառայողի էթիկայի կանոնների մեկնաբանություն
8. 9.	ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման տեսչական պաշտոններ զբաղեցնող ծառայողներ	Շահերի բախման հիմնախնդրի և կոռուպցիոն ռիսկերի կապը ոստիկանությունում

	ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման օպերատիվ ծառայողների /ՔՀ բաժանմունքի պետի տեղակալ, տարածքային բաժանմունքի պետի տեղակալ, ՔՀ, ԱԳ և ԸԲԿ ՀԿԳ ավագ օպերլիազոր, ավագ օպերլիազոր, օպերլիազոր/	
10.	ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի բաժնի պետի պաշտոնակատար, ոստիկանության մայոր Միքայել Աշոտի Միքայելյանի հետ անցկացվող վերապատրաստման դասընթաց	Շահերի բախումը և կոռուպցիոն ռիսկերը ոստիկանությունում
		ՀՀ ոստիկանության էթիկայի կանոններ: Մեկնաբանություն:
		Կոռուպցիոն հանցագործություններ
11.	ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության, ՀԿԱ և պրոֆիլակտիկայի միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ	Բարեվարքության տարրերը
12.	ՀՀ ոստիկանության վարչության պետի օպերատիվ գծով տեղակալների, բաժնի պետերի և բաժնի պետերի օպերատիվ գծով տեղակալների, տարածքային, քրեական հետախուզության, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետեր	Քրեաիրավական քաղաքականությունը փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում: Եվրոպական և ազգային ոլորտներ
		Ձեռնարկատիրական գործունեության արդի իրավական կառուցակարգերը ոստիկանությունում ծառայության արգելքի համատեքստում ՀՀ ոստիկանության էթիկայի կանոններ: /Մեկնաբանություն
13.		Կոռուպցիոն հանցագործություններ

	ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ասատուր Ալեքսանի Աբասյանի հետ անցկացվող վերապատրաստման դասընթաց ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության «Զվարթնոց» օդանավակայանի բաժնի պետ, ոստիկանության մայոր Ագապի Մուշեղի Ավագյանի վերապատրաստման դասընթաց	Շահերի բախումը և կոռուպցիոն ռիսկերը ոստիկանությունում ՀՀ ոստիկանության էթիկայի կանոններ: /Մեկնաբանություն

Նշված դասընթացը ուսուցանվել է առկա եղանակով. 2021 թվականի սեպտեմբերից կրթահամալիրում ուսուցումն իրականացվել է լսարանային պայմաններում, և համավարակի հետ կապված իրավիճակով պայմանավորված չի կատարվել անցում առցանց դասավանդման: Նշված դասընթացն առցանց դասավանդելու անհրաժեշտություն առաջանալու և ոստիկանության մարզային վարչությունների ստորաբաժանումների համար առցանց դասընթացին միանալու տեխնիկական հնարավորության առկայության պարագայում դասընթացը կարող է իրականացվել նաև առցանց:

Միևնույն ժամանակ, «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում դասավանդվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջում (12 լսարանային ժամ ընդհանուր տևողությամբ, որից 6 ժամ՝ դասախոսություն, 4 ժամ՝ սեմինար, 2 ժամ՝ գործնական պարապմունք), իսկ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնահարցեր» առարկան նշված կիսամյակում դասավանդվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայում (16 լսարանային ժամ ընդհանուր տևողությամբ, որից 12 ժամ՝ դասախոսություն, 4 ժամ՝ սեմինար):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՋԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ.

ՄԱԿ-ի գնահատման շրջանակներում[35] հակակոռուպցիոն կրթության առնչությամբ նշվել է հետևյալը.

- անհրաժեշտ է ջանքեր գործադրել խթանելու կրթական և ուսումնական ծրագրերը պետական գործառույթների ճիշտ, արժանապատիվ և պատշաճ կատարման համար, միաժամանակ կրթական ծրագրերում ներառել թեմաներ կոռուպցիոն ռիսկերի և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ (Կոնվենցիայի հոդված 7, կետ 1 (դ)).

****

- անհրաժեշտ ջանքեր գործադրել հակակոռուպցիոն իրավական գործիքների և վարչական միջոցների պարբերական մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի ներդրման համար, որը կներառի հակակոռուպցիոն ռազմավարությունը և գործողությունների ծրագրի սահմանումը, համապատասխան մեթոդաբանության և մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծումը՝ ռազմավարական նպատակների իրականացումը և առաջընթացի գնահատումը հնարավոր դարձնելու նպատակով (Կոնվենցիայի հոդված 5, կետ 3).
- անհրաժեշտ է ջանքեր գործադրել խթանելու կրթական և ուսումնական ծրագրերը պետական գործառույթների ճիշտ, արժանապատիվ և պատշաճ կատարման համար, միաժամանակ կրթական ծրագրերում ներառել թեմաներ կոռուպցիոն ռիսկերի և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ (Կոնվենցիայի հոդված 7, կետ 1 (դ)).

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Գնահատման արդյունքում նշված եզրահանգումները կատարվել են՝ հիմք ընդունելով 2018 թվականի դրությամբ ներկայացված տեղեկությունները: Մինչդեռ սույն զեկույցի «Հակակոռուպցիոն կրթություն» բաժնում ներառված մոնիթորինգի արդյունքներից պարզ է դառնում, որ 2021 թվականի դրությամբ հակակոռուպցիոն կրթության ապահովման հարցում Հայաստանի Հանրապետությունն արդեն զգալիորեն ձեռքբերումներ ունի:

ԳՐԵԿՈ-ի զեկույցում ևս անդրադարձ է կատարվել հակակոռուպցիոն կրթությանը, որի արդյունքում ներկայացվել են հետևյալ հանձնարարականները.

- Պատգամավորների համար վարքագծի կանոնների ընդունումից հետո վերջիններիս համար անցկացնել մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն, իրազեկվածության մակարդակի բարձրացում շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, վարքագծի կանոններին առնչվող այլ թեմաներով:
- Դատախազական համակարգում շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու համար անհրաժեշտ է բոլոր դատախազների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացումը՝ էթիկայի և վարքագծի, անկողմնակալության ու անկախության, շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարևորելով հակակոռուպցիոն կրթության և իրազեկման քաղաքականության առանցքային նշանակությունը արդյունավետ հակակոռուպցիոն պայքարի հարցում՝ քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ ակտիվ գործունեություն են իրականացնում հակակոռուպցիոն կրթության ապահովման հարցում: Այսպես.

✓ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից ստեղծվել և գործարկվում է հակակոռուպցիոն էլեկտրոնային հարթակը: Այն այլընտրանքային կրթության գործիք է, որը հնարավորություն է տալիս տարբեր շահառուների ստանալ ոչ ֆորմալ կրթություն

իրենց հետաքրքրության ոլորտներում, ինչպես օրինակ՝ հակակոռուպցիոն ուսուցում, ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների ներքին կարողությունների զարգացում և այլն: Հակակոռուպցիոն էլեկտրոնային ուսուցման հարթակը (այսուհետ՝ Հարթակ) ստեղծվել է Շվեդիայի կառավարության ֆինանսավորմամբ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից իրականացվող «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր): Հարթակի նպատակն է՝ կրթել երիտասարդներին հակակոռուպցիոն և բարեվարքության ոլորտներում, ինչպես նաև, տրամադրել պրակտիկ գործիքներ՝ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային, տարածաշրջանային (ռեգիոնալ) և ազգային փորձի վերաբերյալ: Հարթակի գործարկման շրջանակներում ներկայացվում է կոռուպցիայի դեմ պայքարի առաջավոր փորձը՝ ներկայացնելով միջազգային մեխանիզմները, հաջողությամբ գործարկված հակակոռուպցիոն գործիքները, համաշխարհային, տարածաշրջանային և ազգային մակարդակում դրանց կիրառելիության սահմանները, ինչպես նաև, այս ոլորտում նախատեսվող զարգացման միտումները:

✓ 2019 թվականի գարնանից Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (այսուհետ՝ ԹԻՀԿ) մեկնարկել է Հակակոռուպցիոն դպրոց կրթական ծրագիրը:[36] ԹԻՀԿ 2022թ. փետրվարի 18-ին մեկնարկել է ԹԻՀԿ-ի թվով 5-րդ հակակոռուպցիոն դպրոցը, որտեղ 163 դիմորդներից ԹԻՀԿ հակակոռուպցիոն կրթական թիմի կողմից ընտրված 28 մասնակիցները ձեռք են բերել գիտելիքներ կոռուպցիայի, դրա պատճառների և տեսակների, քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ ոլորտներում առկա կոռուպցիոն ռիսկերի ու դրանց հետևանքների, կոռուպցիայի դեմ պայքարի մեթոդների և այլ թեմաների մասին:[37]

✓ 2021 թվականի սեպտեմբերից Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ), կարևորելով երիտասարդ մասնագետների դերը կոռուպցիայի դեմ պայքարում, մեկնարկել է երկամսյա կրթական ծրագիր, որի նպատակն է տրամադրել գիտելիքներ և գործիքակազմ նորմատիվ իրավական ակտերում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և չեզոքացման մեթոդների վերաբերյալ:[38]

✓ 2022թ. նոյեմբերի 11-ին մեկնարկել է ԹԻՀԿ-ի թվով 6-րդ հակակոռուպցիոն դպրոցը: ԹԻՀԿ «Հակակոռուպցիոն վեցերորդ դպրոցի» շրջանավարտների կողմից նախաձեռնվել է «Հակակոռուպցիոն մեդիա դպրոց» ծրագիրը, որի նպատակն է ապագա լրագրողներին զինել կրթել կոռուպցիայի դեմ պայքարում ՁԼՄ-ների առանցքային դերի և կոռուպցիայի լուսաբանման սկզբունքների

*

*[37] https://transparency.am/hy/media/trainings/article/4594

մասին անհրաժեշտ հմտություններով և գիտելիքներով: 2023թ. փետրվարի 28-ին «Հակակոռուպցիոն մեդիա դպրոց» ծրագրի շրջանակներում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեյի նախագահ Սասուն Խաչատրյանը հանդիպել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների հետ և ներկայացրել իր ղեկավարած կառույցի գործառույթներին, անդրադարձել կոռուպցիայի դեմ տարվող պայքարի մեխանիզմներին, ինչպես նաև այդ երևույթի շուրջ հանրային ընկալման, կոռուպցիոն և, ընդհանրապես, իրավական թեմաների լուսաբանման առանձնահատկություններին:[39]

✓ 2023թ. մարտի 10-ին Աղվերանում մեկնարկել է ԹԻՀԿ հակակոռուպցիոն 7-րդ դպրոցը[40]: Դասընթացն ընդգրկում է մի շարք թեմաներ, այդ թվում՝ կոռուպցիայի տեսակները և դրանց չափման միավորները, հանրային ծառայողների բարեվարքությունը, շահերի բախումը, կոռուպցիան և անվտանգության համակարգը, կաշառքը Հայաստանում որպես կոռուպցիայի ձև և կոռուպցիայի ազդեցությունը տնտեսության վրա: ԹԻՀԿ-ի «Հակակոռուպցիոն դպրոց» ծրագիրն իրականացվում է Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

✓ 2022թ. հոկտեմբերին «Հակակոռպուպցիոն դպրոց» ծրագրի շրջանակներում ԹԻ Ռուսաստանի գրասենյակի ներկայացուցիչ Այյոնա Վանդիշևան պրակտիկ դասընթաց է անցկացրել «Հակակոռուպցիոն կրթության կազմակերպումը» թեմայով և ներկայացրել կոռուպցիայի և բարեվարքության մասին գիտելիքի տարածման լավագույն փորձը, մեթոդներն ու մոտեցումները[41]: Դասընթացին ներկա էին ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր իրականացնող անհատներ և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

[39] https://transparency.am/hy/media/trainings/article/4845
[40] https://transparency.am/hy/media/trainings/article/4856
[41] https://www.transparency.am/hy/media/events/article/4724

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

➢ Վարչապետի 2022 թվականի հուլիսի 18-ի N 820-Լ որոշմամբ հաստատվել և նույն թվականին իրականացվել է Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագիրը, որը մշակվել էր դեռևս 2020 թվականից:

Հաղորդակցման գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել են Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների վերաբերալ իրազեկման արշավներ հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում գովազդային տեսահոլովակների հեռարձակման/ցուցադրման, սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով:

Բացի այդ, Արդարադատության նախարարությունը կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավի շրջանակներում իրազեկող տեսահոլովակներ է հեռարձակել (ցուցադրել), տեղեկատվական նյութեր է հրապարակել սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում, հնարավորության դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցներում, ինչպես նաև, իրականացվել են տեղեկատվական արշավներ Կոռուպցիայի կանխարգելման և հակազդման մարմինների գործունեության վերաբերյալ, իրականացվել են վերապատրաստումներ և սեմինարներ գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով, պետական մարմինների մամուլի քարտուղարների կամ հասարակայնության կապերի մասնագետների և լրագրողների համար կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով, ինչպես նաև տեղեկատվական նյութեր են հրապարակվել Ազդարարման համակարգի և ազդարարման մեխանիզմների, հանրային իրազեկում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի՝ www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին:

Հաղորդակցման գործողությունների ծրագրի իրականացման կիսամյակային հաշվետվությունը հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում և հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքում, որի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումներով՝ https://moj.am/storage/uploads/REPORT%20ON%20COMMUNICATION%20ACTION%20PLAN.pdf; https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=138:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման համար պատասխանատու մարմինները հանրությանը պարբերաբար տեղեկացրել են իրենց կողմից իրականացվող հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ[42]: Բացի այդ, իրականացվում են հարցումներ՝ հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ հասարակության ընկալումը պարզելու նպատակով[43]:

➢ Դեռևս 2020 թվականին Արդարադատության նախարարության կազմում ստեղծվել էր հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն), որը բաղկացած է 2 բաժիններից՝ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժինը (հաստիքներ՝ 1 բաժնի պետ, 1 գլխավոր մասնագետ, 2 ավագ մասնագետ) և Մոնիթորինգի բաժինը (հաստիքներ՝ 1 բաժնի պետ, 2 գլխավոր մասնագետ): Վարչություն ունի 8 հաստիք, բոլոր աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են: Վարչության գործառույթները հետևյալ են.

- Հակակոռուպցիոն քաղաքականության, ներառյալ ռազմավարությունների և ծրագրերի մշակում Կառավարության ծրագրով և այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված՝ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցառումների մշակում և իրականացում
- Կոռուպցիայի պայքարի ոլորտի իրավական ակտերի մշակում Իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն՝ կոռուպցիայի տեսանկյունից խնդրահարույց լինելու տեսանկյունից Արդարադատության նախարարության իրավասությունների շրջանակում
- Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ապահովում Հակակոռուպցիոն ռազմավարությունների և ծրագրերի կատարման նկատմամբ հսկողություն, մոնիթորինգ և գնահատում, համապատասխան զեկույցների կազմում
- Հակակոռուպցիոն պատասխանատուների աշխատանքի համակարգում, մասնագիտական աջակցության տրամադրում
- Հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն և աշխատանքների համակարգում Հակակոռուպցիոն միջազգային կազմակերպությունների (OECD ACN, GRECO, UNODC, Summit for Democracy, etc.) հետ հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացում, այդ կառույցների մարմինների գործունեությանը մասնակցություն Միջազգային պարտավորությունների գնահատման շրջանակներում հարցաշարերի լրացում, ինքնագնահատման զեկույցների կազմում, այդ միջազգային կազմակերպությունների տարբեր մասնագիտացված աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցություն

---

[42] Կատարված աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները հասանելի են Հակակոռուպցիոն ռազմավարության տարեկան հաշվետվություններում, որոնք հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://anti-corruption.gov.am/am/ (Հաշվետվություններ (2019-2022) բաժնում):

[43] Նշված հարցումների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները հասանելի են Հակակոռուպցիոն ռազմավարության տարեկան հաշվետվություններում, որոնք հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://anti-corruption.gov.am/am/ (Հաշվետվություններ (2019-2022) բաժնում),

- Փորձագիտական աշխատանքի իրականացում ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի մարմիններում և ՏՀԶԿ Հակակոռուպցիոն ցանցի մարմիններում:

Մոնիթորինգի բաժնի գործառությները նեառում են, ըստ էության, հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահամանն առնչվող բոլոր գործառույթները, միջազգային պարտավորությունների շրջանակում աշխատանքների ապահովումը, համակրգումը և հաշվետվողականությունը, հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին մեթոդական աջակցության ապահովումը և վերջիններիս աշխատանքի համակարգումը, հակակոռուպցիոն ծրագրերի կատարման նկատմամբ հսկողությունը:

- 2022 թվականին փոփոխություններ են կատարվել Հակակոռուպցիոն ռազմավարության մեջ, որի այդյունքում, ի թիվս այլնի՝
  - միջազգային փորձի հաշվառմամբ սահմանվել են Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման իրականացման նոր կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան իրականացնելու ոչ միայն կատարողականի գնահատում՝ քանակական մոնիթորինգ, այլև որակական մոնիթորինգ՝ պարզելով կատարված գործողություններով ձեռք բերված փաստացի արդյունքները և ազդեցությունը, բացահայտելով առկա խնդիրները և մարտահրավերները,
  - սահմանվել է կիսամյակային և տարեկան հաշվետվությունների ձևաչափը, որը փաստացի կիրառվել է Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի իրականացման շրջանակներում՝ նախորդող 2 տարիների ընթացքում,
  - ահմանվել են մոնիթորինգի իրականացման նոր ընթացակարգ և գնահատման կառուցակարգեր, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվության հրապարակման ժամկետը 2-օրյա ժամկետից երկարաձգվել է մինչև մարտ ամսվա 2-րդ տասնօրյակը,
  - ստակեցվել են մոնիթորինգային ցուցիչները կամ սահմանվում են նոր ցուցիչներ՝ գնահատման թերությունները շտկելու համար, սահմանվել են արդյունքային ցուցիչներ՝ կատարված բարեփոխումների ազդեցությունը պարզելու նպատակով,
  - հստակեցվել է Հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների կատարման համար պատասխանատու մարմինների շրջանակը՝ տարանջատելով հիմնական կատարող և համակատարող մարմինները,
  - սահմանվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կողմից ներգերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման նկատմամբ համակարգման մեխանիզմները:

- Ներդրվել է Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտը, ինչ ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակվել են անձինք, ովքեր պատասխանատու են հակակոռուպցիոն ռազմավարություններով, ծրագրերով և ոլորտային միջազգային պարտավորություններով իրականացված կամ իրականացվելիք աշխատանքների համակարգման և ներկայացման գործառույթների իրականացման համար: Յուրաքանչյուր դեպքում մարմինների միջև արդյունավետ և օպերատիվ համագործակցությունն ապահովելու համար պետական և տեղական ինքակառավարման

մարմիններում պետք է նշանակվի հակակոռուպցիոն ծրագրի պատասխանատուին փոխարինող առնվազն 1 անձ, որը պատասխանատուի բացակայության դեպքում կփոխարինի վերջինիս: Միևնույն ժամանակ, նշված կարգավորումներով սահմանվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների մեթոդական աջակցության մեխանիզմները, լիազոր մարմինը:

➢ Օրենքով սահմանված կարգով հանրապետական իշխանության մարմիններում, պետական կառավարման մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ: Հակակոռուպցիոն պատասխանատուների վերաբերյալ տվյալները հրապարկված են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքում, Արդարադատության նախարարության կայքում, ինչպես նաև պետական մարմինների կայքերում:

Նշված մեխանիզմը հնարավորություն կտա ապահովելու ներգրեատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ծրագրերի և միջազգային պարտավորությունների կատարման աշխատանքների համակարգվածությունը և հաշվետվողականությունը:

➢ Դեռևս 2019 թվականին ստեղծվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, որի կազմում ընդգրված են ՀՀ վարչապետը (խորհրդի նախագահ), ՀՀ փոխվարչապետ (ոլորտը համակարգող), ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը (ոլորտը համակարգող), Բարձրագույն դատական խորհրդի նախագահը, ՀՀ գլխավոր դատախազը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահը, Մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հանձնաժողովի նախագահը, ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, ՀՀ Ազգային ժողովի խմբակցություններից մեկական ներկայացուցիչ, ՀՀ պետական վերահսկողական ծառայության պետը, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների յոթ ներկայացուցիչ, որոնցից երկուսը՝ գործարար ոլորտի շահերը ներկայացնող:

Հակակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի քննարկման հարցերի շրջանակը ներառում է՝

1) հակակոռուպցիոն ռազմավարությունները, ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքականությանն առնչվող իրավական ակտերը.

2) հակակոռուպցիոն ռազմավարությունների հիման վրա մշակված ոլորտային ծրագրերը.

3) հակակոռուպցիոն ռազմավարություններից և Հայաստանի Հանրապետության ստանձնած համապատասխան միջազգային պարտավորություններից բխող միջոցառումների իրականացման գործընթացները.

4) հակակոռուպցիոն ռազմավարությունների և ծրագրերի կատարողականները և մոնիթորինգի արդյունքները.

5) կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում միջազգային միջկառավարական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների հետ համագործակցության արդյունքները.

6) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ներգրավված միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընթացքը:

2022 թվականի դեկտեմբեր-2023 թվականի հունվար ամիսներին անցկացվել է մրցույթ՝ հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում նոր հասարակական կազմակերպություններ ներգրավելու և ըստ այդմ՝ ռոտացիա ապահովելու նպատակով:[44]

Հակակոռուպցիոն քաղաքականության գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկությունները հասանելի են Հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմում՝ https://anti-corruption.gov.am/am/[45]:

➢ Արդարադատության նախարարության կողմից հրապարակվում են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ պատասխանատու մարմինների կողմից Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերաբերյալ: Տարեկան հաշվետվության շրջանակում ներկայացվում են նաև Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման կարգավիճակը, ձեռքբերումները, առկա խոչընդոտները, ինչպես նաև գնահատվում է միջոցառումների կատարումը: Հաշվետվությունները հասանելի են Արդարադատության նախարարության (https://moj.am/legal/browse/h_reports/) և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքէջերում (www.anti-corruption.gov.am): Նշված հաշվետվությունների արդյունքները քննարկվում են Հակակոռուպցիոն քաղաքականության նիստերի ընթացքում:

➢ Միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ ներկայումս մշակվում է մոնիթորինգի էլեկտրոնային նոր հարթակ, որի գործարկման արդյունքում թվայնացվելու է Արդարադատության նախարարության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից մոնիթորինգի և գնահատման, հաշվետվությունների կազմման գործընթացը, կատարող մարմինների կողմից տեղեկությունների ներբեռնման, հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացները:

Ամփոփելով նշված ուղղությամբ արձանագրված արդյունքները, այնուամենայնիվ հարկ է նշել, որ Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիթորինգի վարչության կողմից հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև միջազգային պարտավորությունների համակարգման գործընթացի շրջանակներում էապես դժվարություններ է ստեղծում իրավասու մարմիններից սահմանված ժամկետում տեղեկությունների չներկայացումը կամ ոչ ամբողջական ներկայացումը, նույնաբովանդակ տեղեկատվության առնչությամբ տարբեր մարմինների կողմից ներկայացված տեղեկությունների անհամապատասխանությունը և այլն: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով Վարչության մեծածավալ գործառույթները և դրանց կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար՝ անհրաժեշտ է դիտարկել Վարչության հաստիքների համալրման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման հնարավորությունները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆԸ

[44] https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=135 , https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=137

[45] https://anti-corruption.gov.am/am/news?content.pid=3

ՄԱԿ-ի գնահատման շրջանակներում[46] նշվել է, որ անհրաժեշտ է ջանքեր գործադրել հակակոռուպցիոն իրավական գործիքների և վարչական միջոցների պարբերական մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի ներդրման համար, որը կներառի հակակոռուպցիոն ռազմավարությունը և գործողությունների ծրագրի սահմանումը, համապատասխան մեթոդաբանության և մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծումը՝ ռազմավարական նպատակների իրականացումը և առաջընթացի գնահատումը հնարավոր դարձնելու նպատակով (Կոնվենցիայի հոդված 5, կետ 3).

ՏՀԶԿ զեկույցի համաձայն՝

• Մոնիթորինգի գործող համակարգը արդյունքային ցուցանիշների տեսանկյունից թերի է, բացի դրանից, քաղաքացիական հասարակության այլընտրանքային զեկույցների արդյունքներն արտացոլված չեն մշադիտարկման և գնահատման զեկույցներում:

• Մոնիթորինգի շրջանակներում էլեկտրոնակային գործիքներ չեն կիրառվում:

• Պետական մարմիններում նշանակված հակակոռուպցիոն ռազմավարության հարցերով պատասխանատուները բավարար չափով չեն տիրապետում իրենց իրավասություններին, գերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի իրականացման աշխատանքների պատշաճ համակարգում չի իրականացվում:

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐՆԳԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իրավաբանների հայկական ասոցիացիան Հայաստանի ՔԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ յուրաքանչյուր կիսամյակ իրականացնում է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգ և գնահատում, ինչպես նաև ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:[47]

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը պարբերաբար իրականացնում է մշտադիտարկում հակակոռուպցիոն ռազմավարության առանձին ուղղությունների իրականացման վերաբերյալ[48]:

Իրազեկ քաղաքացիներ միավորում հասարակական կազմակերպությունը ևս պարբերաբար ներկայացնում է դիրքորոշում հակակոռուպցիոն ռազմավարության առանձին ուղղությունների իրականացման վերաբերյալ:[49]

---

[46] https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf

[47] https://armla.am/49074.html , https://armla.am/?s=%D5%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6+%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6+%D6%87+%D5%A4%D6%80%D5%A1+%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6

[48] Մանրամասները տես սույն զեկույցի «Կոռուպցիայի կանխարգելում» բաժնի «Կոռուպցիայի կանխարգելումը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները» ենթաբաժնում:

[49] https://uic.am/?s=%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6+%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6

Վերոնշյալի համատեղքստում հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությունն ապահովվում է նաև Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությանը վերջիններիս մասնակցությամբ[50]:

[50] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173833

ԳՈՐԾՈՆԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ) ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

2022 թվականի ակնկալվող արդյունք

2022 թվականի համար ակնկալվող արդյունք սահմանված չէ

Վերստուգիչ ցուցիչ

Միջազգային մասնագիտացված կազմակերպությունների (ՏՀԶԿ) զեկույցներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության վերաբերյալ դրական անդրադարձերի առկայություն (2021թ./2022թ. զեկույց)

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2019 թվականի նոյեմբերի 19-ին ձևավորվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված իրավակարգավորումների համաձայն՝ Հանձնաժողովի առաջին կազմի ընտրության վերաբերյալ Ազգային ժողովն ընդունել է որոշում, որով սահմանվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման մասին հարցի քննարկման հատուկ ընթացակարգ:

Հանձնաժողովի անդամների պաշտոններն ինքնավար պաշտոններ են: Նշված պաշտոնները զբաղեցնող անձանց լիազորությունների իրացման առանձնահատկությունները, մասնավորապես, ամրագրված են «Հանրային ծառայության մասին» օրենքով, որով սահմանված իրավակարգավորումներից բխում է, որ այդ պաշտոնը զբաղեցնող անձը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում **անկախության սկզբունքի հիման վրա** ընդունում է որոշումներ, օրենքով նախատեսված դեպքերում համակարգում դրանց կատարումը, ինչպես նաև **պատասխանատվություն է կրում իր պաշտոնից** բխող նպատակների և խնդիրների իրականացման համար: Նույն օրենքով ամրագրված է նաև, որ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն իր պաշտոնավարման ժամանակահատվածում **չի փոփոխվում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում,** ինչն իր հերթին երաշխավորում է վերջինիս գործունեության ընթացքում քաղաքական չեզոքություն պահպանելու սկզբունքի առարկայացումը: Բացի այդ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքով սահմանված են այնպիսի գործունեության սկզբունքներ, ինչպիսիք են քաղաքական չեզոքությունը, կոլեգիալությունը, ֆինանսական ինքնուրույնությունը, հանրային հաշվետվողականությունը, թափանցիկությունը:

Հանձնաժողովն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է իր ընդունած որոշումները և եզրակացությունները, ինչպես նաև աշխատակազմի միջոցով ապահովում է իր գործունեության վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածին առնչվող հաշվետվությունների կազմումը և հրապարակումը:

2021 թվականի հունվարի 19-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով և հարակից օրենքների փաթեթով փոփոխություն է կատարվել նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, որով վերանայվել է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակը: Մասնավորապես, հայտարարատուի կողմից փաստացի գույքի տիրապետման հանգամանքը պարզելու համար Հանձնաժողովը իրավասու է դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալ անհրաժեշտ տեղեկություններ: Հանձնաժողովին նաև տրվել է իրավասություն հայտարարատուի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո երկու տարվա ընթացքում նրա գույքի էական փոփոխության կասկածի դեպքում նրանից պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Բարեվարքության ուսումնասիրության շրջանակներում հստակեցվել է Հանձնաժողովին տրված, անձի՝ քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն իրականացնելու լիազորությունը: Հանձնաժողովը վերոնշյալի համատեքստում իրավասու է դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն

իրականացնող մարմիններին և ստանալ տեղեկություններ: 2021 թվականի հունվարի 20-ից ուժի մեջ է մտել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամները պարտավոր են Հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր: Վերոնշյալ օրենքով սահմանվել է կարգավորում առ այն, որ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ www.azdarar.am հարթակում, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև, գույքի վերաբերյալ հաշվետվություն և դրանից հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Հանձնաժողովին: Սույն համատեքստում Հանձնաժողովի լիազորությունների շրջանակը ընդլայնվել է և սահմանվել է, որ վերջինս «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում: Կուսակցությունը Հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև, վարկային տեղեկատվություն:

Հիմք ընդունելով հայտարարագրման ինստիտուտի հանրային նշանակությունը, ինչպես նաև հաշվի առնելով օրենսդրի կողմից Հանձնաժողովին վերապահվող իրավասությունների ընդլայնման միտումը, ինչն, իր հերթին առաջ է բերում Հանձնաժողովի՝ որպես վարչարարություն իրականացնող մարմնի, գործունեությունն ապահովող ընթացակարգային նորմերի հստակեցման անհրաժեշտություն՝ Հանձնաժողովի կողմից 2021 թվականի ընթացքում նախաձեռնվել է և 2022 թվականի ապրիլի 25-ին պաշտոնական շրջանառության է ներկայացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որով առաջարկվող իրավակարգավորումները նպատակ են հետապնդում ոչ միայն սահմանել մարմնի համար կանխատեսելի վարչարարություն ապահովող իրավակարգավորումներ, այլ նաև բարձրացնել Հանձնաժողովին վերապահված գործառույթների իրացման արդյունավետությունը: Այսպես, նախագծերի փաթեթով կարգավորվում են Հանձնաժողովի ֆինանսական ինքնուրույնության, գործող իրավակարգավորումների իրավական որոշակիության ապահովման, Հանձնաժողովի առանձին գործառույթների իրականացման արդյունավետ կառուցակարգերի, հայտարարագրերի վերլուծության և բարեվարքության ուսումնասիրության գործընթացի որոշակիացման, ինչպես նաև առանձին կառուցակարգերի ներդրման և մի շարք այլ էական հարցեր:

Օրենսդրական փաթեթում առանցքային է դիտարկվել հատկապես հայտարարագրերի վերլուծությունը կանոնակարգող օրենսդրական դրույթների կատարելագործումը՝ հաշվի առնելով այն, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի գործող խմբագրությունը պարունակում է զգալի անորոշություններ, մասնավորապես, հստակ չի կանոնակարգում հայտարարագրերի վերլուծության ժամկետների հարցը, և չի պարունակում անհրաժեշտ օրենսդրական սահմանումները: Արդյունքում, գործնականում խնդիր է առաջանում պարզել, թե օրենքով, որպես վերլուծության հիմքեր թվարկված դրույթներից որն է վերլուծությունը, որը ստուգումը, և արդյոք դրանք վարույթներ են, գործողություններ, թե վարույթի ընթացքում կատարվող ընթացակարգային գործողություններ: Նախագծով առաջարկվող տարբերակում հայտարարագրերի վերլուծությանը վերաբերող հոդվածն ամբողջությամբ խմբագրվել է: Նախևառաջ, օրենսդրական փաթեթը հստակ սահմանում է «հայտարարագրերի ստուգում» եզրույթը, թվարկում դրա տեսակները, ինչպես նաև կարգավորում տվյալ ստուգման տեսակների ժամկետների հարցը: Նախագծով առաջարկվում է նաև կարգավորվել է հայտարարագրերի ստուգման հիմքերը: Մասնավորեպես, Հանձնաժողովի նախաձեռնությամբ ստուգում իրականացնելու դեպքում սահմանվել է, որ այն իրականացվելու է Հանձնաժողովի կողմից մշակված ռիսկային չափորոշիչների, ինչպես նաև Հանձնաժողովի լիազորությունների իրականացման արդյունքում Հանձնաժողովին հայտնի դարձած տեղեկությունների կիրառմամբ, ինչը բացառելու է ընտրովի ստուգումների իրականացման հնարավոր վտանգը:

Օրենսդրական փաթեթը ներկայացվել է շահագրգիռ կողմերի կարծիքին, որից հետո լրամշակվել է և նորից ներկայացվել կարծիքի: Ներկայումս օրենսդրական փաթեթը գտնվում է Հանձնաժողովում՝ լրամշակման փուլում:

Բացի այդ, ազդարարման համակարգի բարեփոխումների համատեքստում 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված ՀՕ-496-Ն օրենքով փոփոխություններ են նախատեսվել նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, որի համաձայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համար նախատեսվել է պարտականություն իրականացնել ազդարարման դեպքում իր իրավասության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկման ապահովումը, միջոցների ձեռնարկումը, վիճակագրության վարումը և «Ազդարարման համակարգի մասին» օրենքով սահմանված մյուս գործառույթների իրականացումը:»:

Միաժամանակ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունները հստակեցվել և ընդլայնվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի շրջանակում ընդունված օրենսդրական փոփոխությունների համատեքստում (ՀՕ-541): Մասնավորապես, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին է վերապահվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելը, նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը: Վերջինիս է վերապահվել նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստր վարելու իրավասությունը:

Սահմանվել են իրավիճակային հայտարարագիր պահանջելու հիմքերը. դիցուք՝ Հանձնաժողովի պատճառաբանված որոշման հիման վրա գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր պահանջելու հիմքերն են՝

հայտարարագրման ենթակա տվյալների արժանահավատության, ամբողջականության, գույքի էական փոփոխության (գույքի ավելացում, նվազում կամ ծախս) օրինականության վերաբերյալ հրապարակումները, Հանձնաժողովին ուղղված ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները, Հանձնաժողովի լիազորությունների իրականացման ընթացքում, ինչպես նաև այլ պետական մարմիններից Հանձնաժողովին հայտնի դարձած տեղեկությունները:

Ընդլայնվել է նաև հայտարարատու անձանց շրջանակը. այսուհետ այդպիսիք են համարվում նաև նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները (կոլեգիալ գործադիր մարմնի անդամները), որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով ներկայացնում են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձինք մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Հայտարարատու պաշտոնատար անձը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր չներկայացրած անձը համարվում է հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած («Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-540 օրենք):

Վերոշարադրյալ լիազորությունների իրականացման համար Հանձնաժողովին անհրաժեշտ կադրերով ապահովելու նպատակով փոփոխություններ են կատարվել Հանձնաժողովի հաստիքացուցակում: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակը և հաստիքացուցակը հաստատելու մասին» 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 1500-Ա որոշման մեջ 2022 թվականին իրականացվել են թվով երկու փոփոխություններ՝ N 114-Ա և N 1139-Ա որոշումներով, որոնց արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հաստիքների թիվը ներկայումս հասել է 57-ի: 2023թ. փետրվարի 23-ին Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 1500-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին և 2018 թվականի հունիսի 11-ի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշումների նախագծերը՝ Հանձնաժողովի հաստիքները 65 դարձնելու նպատակով:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի շրջանակներում 2022թ. մայիսի 30-ին հրապարակվել է ՏՀԶԿ պիլոտային մոնիթորինգի զեկույցը՝

«Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» (այսուհետ՝ Զեկույց) վերտառությամբ[51]: Զեկույցում անդրադարձ է կատարվել դեռևս 2019-2022թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախանշված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Հակակոռուպցիոն կոմիտեի և Հակակոռուպցիոն դատարանների ստեղծմանը: Զեկույցում նշվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված Հանձնաժողովի լիազորությունները և գործառույթները: Անդրադարձ է կատարվել հայտարարագրերի ստուգման և վերլուծության կարգին՝ որպես թերություն նշելով, որ նախկինում (2023թ. փետրվարի 1-ից գործարկվել է հայտարարագրերի ներկայացման նոր էլեկտրոնային համակարգը) գործող հայտարարագրերի համակարգը չի նախատեսում ավտոմատացված վերլուծության հնարավորություն: Զեկույցով դրական են գնահատվել կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ իրականացված բարեփոխումները:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կողմից «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում պարտավորությունների կատարման վերաբերյալ» ԳՐԵԿՈ-յի 2021 թվականի միջանկյալ զեկույցում[52] ևս անդրադարձ է կատարվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին և վերջինիս գործունեությանը՝ ընդգծելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրավակիրառ գործունեության վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի ընթացքում հարուցված վարչական վարույթներ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի ընթացքում հարուցված **վարչական վարույթների թիվը**՝ ընդհանուր **143** վարույթներ, որոնցից՝ **118**-ը հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ, օրենքի ուժով վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներին զուգահեռ դատավորների նկատմամբ հարուցված **15 կարգապահական վարույթներ**, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով թվով 8 վարույթներ, ևս 1-ը՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով, իսկ 1-ը՝ միայն իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով:

2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն ներկայացված գործեր.

Հարուցված վարույթներով պայմանավորված՝ Հանձնաժողովի կողմից ***ՀՀ գլխավոր դատախազություն*** է ներկայացվել ընդհանուր 6 գործերի նյութեր: Որոնցից՝ 2021 թվականին հարուցված *թվով 4,* ինչպես նաև 2022 թվականին հարուցված թվով 1 *հայտարարագրմանն առնչվող* վարչական իրավախախտումների գործերի վերաբերյալ վարույթների նյութերը *վարչական կոդեքսի*

[51] https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia_e56cafa9-en;jsessionid=VxiTZLN6b3JKtxDd5-2IjmkqTmcbpW5wUdhyINQx.ip-10-240-5-157
[52] https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad

կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագրերը Հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու ենթադրյալ հանցագործության դեպքերի առթիվ 2022 թվականի ընթացքում ներկայացվել են ***ՀՀ գլխավոր դատախազություն:*** *Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով 2022 թվականին հարուցված թվով 1 վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից ձեռք բերված նյութերի ուսումնասիրման (գնումների գործընթացում գնումների անցկացման կարգի խախտումներ, իսկ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի) արդյունքում առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերմամբ վարույթը կասեցվել է, իսկ վարույթի նյութերը ներկայացվել են* ***ՀՀ Գլխավոր դատախություն:***

3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ տրամադրված մասնագիտական խորհրդատվությունը՝ 2022 թվականի դրությամբ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել է թվով 42 դիմումի և 10 մեդիա հրապարակման ուսումնասիրություն, որոնցից.

1) Անհամատեղելիության պահանջներ – 33 դիմում
2) Այլ սահմանափակումներ – 1 դիմում
3) Շահերի բախում – 4 դիմում
4) Վարքագծի կանոնների խախտում – 4 դիմում
5) Շահերի բախում – 3 մեդիա հրապարակում
6) Անհամատեղելիության պահանջներ – 5 մեդիա հրապարակում
7) Այլ սահմանափակումներ – 2 մեդիա հրապարակում

Վերոնշյալ **դիմումների** վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է խորհրդատվություն:

2022 թվականի ընթացքում, մեկ դիմումի հիման վրա, Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարույթ Շիրակի մարզպետի տեղակալի նկատմամբ՝ անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման հիմքով: Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունել է անհամատեղելիության պահանջի խախտման վերաբերյալ եզրակացություն: Խախտումը պայմանավորված է եղել <<Հանրային ծառայության մասին>> օրենքի իմաստով անհամատեղելի պաշտոններում համաժամանակյա պաշտոնավարման հանգամանքով: Մասնավորապես, մարզպետի տեղակալը, զբաղեցնելով պետական վարչական (հանրային) պաշտոն, ստանձնել է նաև ավագանու անդամի՝ համայնքային քաղաքական պաշտոն: Անհամատեղելիության պահանջների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ հարուցվել է ևս **երեք** վարույթ, որոնք 2022 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ գտնվել են ընթացքի մեջ:

Բացի ստացված դիմումներից և մեդիա հրապարակումներից, Հանձնաժողովն իրականացրել է նաև սեփական նախաձեռնությամբ թվով 107 ուսումնասիրություն՝ պատգամավորների կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման վերաբերյալ:

2022 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ վարույթները գտնվել են ընթացքի մեջ: Հանձնաժողովը 2023 թվականին թվով 5 պատգամավորի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքում ընդունել է խախտման բացակայության վերաբերյալ եզրակացություն, իսկ 1 պատգամավորի նկատմամբ հարուցված վարույթը դեռևս գտնվում է ընթացքի մեջ:

4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների թիվը՝ 2022 թվականի դրությամբ,

- 2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող թվով 512 անձանց վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն,ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել 505 խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Թվով 4 անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չի եղել ուսումնասիրություն իրականացնել Թեկնածուի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների գույքային դրության, այդ թվում՝ փաստացի ստացած եկամուտների համապատասխանության առնչությամբ և գնահատել դրանց արժանահավատությունը՝ թերի լրացված հարցաթերթիկի պատճառով: Միաժամանակ, Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխվածության արդյունքում, 3 անձի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությամբ, վերջինիս բարեվարքության վերջնական գնահատական չի տրամադրվել: Տրամադրված թվով 505 եզրակացությունից դրական են եղել 278-ը, դրական վերապահումով՝ 163-ը, բացասական՝ 64-ը:

5. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի ընթացքում վերլուծված և ստուգված հայտարարագրերի թիվը,

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի ընթացքում վերլուծված և ստուգված հայտարարագրերի թիվը՝ թվով 256 պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծություն (որից 97-ը բարեվարքության վերաբերյալ գույքային դրության ուսումնասիրության շրջանակներում, թվով 159 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների՝ ստուգված և վերլուծված հայտարարագրերի թիվը՝ 3044), թվով 1703 հայտարարագրերի ստուգում: Ընդհանուր ստուգված և վերլուծված հայտարարագրերի թիվը՝ շուրջ 5000:

6.Հայտարարագիրը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու կամ համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրված տվյալը սխալ կամ ոչ ամբողջական ներկայացնելու համար կիրառված պատասխանատվության միջոցների քանակը 2022 թվականի դրությամբ:

2022 թվականի հարուցված հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ թվով 118 վարույթներից կարճվել են թվով 107 վարույթ, իսկ վարչական տույժը կիրառվել է 11 վարույթի արդյունքում, որից 10-ի դեպքում կիրառվել է տուգանք՝ 200 000 ՀՀ դրամի չափով (որից 8-ը՝ հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով, 2-ը՝ հայտարարագիր չներկայացնելու հիմքով), 1-ի դեպքում՝ նախազգուշացում վարչական տույժը՝ հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման հիմքով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը անցել են հանրային քննարկում, ինչպես նաև քննարկվել են շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
	Միջազգային մասնագիտացված կազմակերպությունների (ՏՀԶԿ) զեկույցներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության վերաբերյալ դրական անդրադարձերի	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի 2022 թվականի զեկույցում և Հայաստանի Հանրապետության կողմից «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում պարտավորությունների կատարման վերաբերյալ» ԳՐԵԿՈ-յի 2021 թվականի միջանկյալ զեկույցում առկա են դրական	**Կատարված է ամբողջությամբ**

	առկայություն (2021թ./2022թ զեկույց)	անդրադարձներ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության վերաբերյալ: Վերոնշյալի համատեքստում սույն միջոցառման վերստուգիչ ցուցիչի և արձանագրված արդյուքների համադրությունից հետևում է, որ միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթն իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից:
Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումները կազմավորվել են:

Վերստուգիչ ցուցիչ

Հակակոռուպցիոն կոմիտեի կենտրոնական մարմինն ապահովված է անհրաժեշտ տարածքային, նյութական միջոցներով,
Հակակոռուպցիոն կոմիտեի կենտրոնական մարմնի հաստիքների առնվազն 50-%-ը համալրվել է (2022թ.):
Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների 40%-ը վերապատրաստվել է (2022թ.):
Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում և ՄԺԾԾ-ում նախատեսված է Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորման առանձին տող (2022թ.):
2022թ.-ին կազմավորվել է առնվազն 2 տարածքային բաժին, ապահովված են շենքային ու նյութատեխնիկական պայմանները:

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)
Քննչական կոմիտե (համաձայնությամբ)
Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)
Ոստիկանություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ
☐Կատարված է մասնակի
☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 23-ին ամբողջությամբ ուժի մեջ է մտել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքը» և կազմավորվել է Հակակոռուպցիոն կոմիտեն: Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ:

2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեում որպես պաշտոնակատար պաշտոնավարել են 29 (քսանինը) ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք: Միևնույն ժամանակ, նույն ժամանակահատվածում անցկացվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման թափուր հաստիքների համալրման նպատակով առաջին մրցույթը, որի արդյունքում պաշտոնի նշանակվել են 29 անձ, ինչպես նաև հայտարարվել է մնացած թափուր պաշտոնների համար ևս երկու մրցույթ: Բացի այդ, Հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական ծառայողների 90%-ից ավելին մրցույթով նշանակվել է համապատասխան պաշտոնների, որոնց մի մասն (25%) արդեն անցել է վերապատրաստումներ: Միևնույն ժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները ժամանակավորապես զբաղեցնող անձանց 70%-ից ավելին, իսկ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց 10%-ը ևս անցել է վերապատրաստումներ:

Ներկայումս Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնավարում են 32 ինքնավար պաշտոն զբաղեցնող և 40 օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք, որոնք մրցութային կարգով նշանակվել են համապատասխան պաշտոնների: Հակակոռուպցիոն կոմիտեի մնացած թափուր հաստիքների համալրման նպատակով ներկայումս հայտարարվել են ևս մրցույթներ: Հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական ծառայողների 90%-ից ավելին մրցույթով նշանակվել է համապատասխան պաշտոնների, որոնց մի մասն (25%) արդեն անցել է վերապատրաստումներ: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց 70%-ից ավելին անցել են վերապատրաստումներ:

Պետական բյուջեում և ՄԺԾԾ-ում 2021-2022թթ.-ի համար Հակակոռուպցիոն կոմիտեի համար նախատեսվել է ֆինանսավորման առանձին տող:

Ինչ վերաբերում է տարածքային բաժինների ձևավորմանը, ապա Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումները չեն ձևավորվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Կոմիտեին պետք է տրամադրվեն լրացուցիչ հաստիքներ, որն իրականացվելու է 2023 թվականի հունվարի 1-ից փուլային կարգով: Բացի այդ, 2023 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունիսի 11-ի 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Վարչապետի 1450-Ա որոշումը, որի շրջանակներում Կոմիտեի հաստիքների թիվը, Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների քանակի ավելացման, ինչպես նաև, գործերի ծավալի և ծածկագրված ծառայողների ներգրավման անհրաժեշտությամբ պայմանավորված, ավելացել է 100 հաստիքով:

Այսպիսով Հակակոռուպցիոն կոմիտե ապահովված է անհրաժեշտ տարածքային, նյութական միջոցներով, Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների առնվազն 50-%-ը համալրվել է, իսկ աշխատակիցների 70%-ից ավելին վերապատրաստվել: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում և ՄԺԾԾ-ում նախատեսվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորման առանձին տող 2021-2022թթ.-ի համար:

Ինչ վերաբերում է տարածքային բաժինների ձևավորմանը, ապա Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումները չեն ձևավորվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Կոմիտեին պետք է տրամադրվեն լրացուցիչ հաստիքներ, որն իրականացվելու է 2023 թվականի հունվարի 1-ից փուլային կարգով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացումը հանրային քննարկում չի պահանջում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթն իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից: Հակակոռուպցիոն	Հակակոռուպցիոն կոմիտեի կենտրոնական մարմինն ապահովված է անհրաժեշտ տարածքային,նյութական միջոցներով, Հակակոռուպցիոն կոմիտեի կենտրոնական	Սույն միջոցառման շրջանակներում Հակակոռուպցիոն կոմիտե ապահովված է անհրաժեշտ տարածքային, նյութական միջոցներով, Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների առնվազն 50-%-ը համալրվել է, իսկ աշխատակիցների 70%-ից ավելին վերապատրաստվել: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում և ՄԺԾԾ-ում նախատեսվել է Հակակոռուպցիոն	**Կատարված է մեծամասամբ:**

կոմիտեի տարածքային ստորաբաժանումները կազմավորվել են:	մարմնի հաստիքների առնվազն 50-%-ը համալրվել է (2022թ.): Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների 40%-ը վերապատրաստվել է (2022թ.): Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում և ՄԺԾԾ-ում նախատեսված է Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորման առանձին տող (2022թ.): 2022թ.-ին կազմավորվել է առնվազն 2 տարածքային բաժին, ապահովված են շենքային ու նյութատեխնիկական պայմանները:	կոմիտեի ֆինանսավորման առանձին տող 2021-2022թթ.-ի համար: Ինչ վերաբերում է տարածքային բաժինների ձևավորմանը, ապա Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումները չեն ձևավորվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Կոմիտեին պետք է տրամադրվեն լրացուցիչ հաստիքներ, որն իրականացվելու է 2023 թվականի հունվարի 1-ից փուլային կարգով: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2022 թվականի համար սահմանված միջոցառման վերստուգիչ ցուցիչի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2022 թվականի համար նախատեսված աշխատանքներն կատարվել են մեծամասամբ:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումները չեն չկազմավորվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել էին սահմանափակ թվով հաստիքներ: Հակակոռուպցիոն կոմիտեին ընդհանուր առմամբ տրամադրվել էր 170 հաստիք, որի մեջ ընդգրկվում էր ինչպես ինքնավար, այնպես էլ քաղաքացիական ծառայության, հայեցողական պաշտոնների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձց հաստիքները: Ներկայումս, Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կազմավորումը գտնվում է ընթացիկ փուլում, որն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոմիտեին պետք է տրամադրվեն լրացուցիչ հաստիքներ, որն իրականացվելու է 2023 թվականի հունվարի 1-ից փուլային կարգով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3

Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Հակակոռուպցիոն դատարանը ձևավորվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում նշանակվել են հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորներ, իսկ վերաքննիչ քրեական դատարանում՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորներ:

Ապահովված են բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ մասնագիտացված դատարանների գործունեության ապահովման համար:

Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող դատավորները շարունակաբար վերապատրաստվում են:

Վերստուգիչ ցուցիչ

Մշակվել և հաստատվել են հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների համար մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերը (2022թ.):

Հակակոռուպցիոն դատարանի դատավորների առաջին կազմը ձևավորվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները նշանակվել են (2022 թ.):

Դատավորների առնվազն 50%-ը անցել է համապատասխան մասնագիտական պատրաստման ուսուցումներ (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

Արդարադատության ակադեմիա

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հակակառուպցիոն դատարանի ստեղծման գործընթացը մեկնարկել է դեռևս 2021 թվականի ապրիլի 14-ին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) և հարակից այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող օրենսդրական ակտերի ընդունմամբ, որոնք ուժի մեջ մտան 2021 թվականի հոկտեմբերի 29-ին: Հակակոռուպցիոն դատարանի ենթակայությանն են հանձնվել կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթները, քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը: Սահմանադրական օրենքի անցումային դրույթներով Հակակոռուպցիոն դատարանում դատավորների թվակազմը սահմանվել է 15-ը, իսկ Հակակոռուպցիոն դատարանի գործելու սկիզբը պայմանավորվել է կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ 5 և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ 3 դատավորների նշանակման պահով:

Ընդ որում, 2022 թվականին նշանակվել են բոլոր 15 դատավորները, որոնցից 10-ը՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ:Նշված դատավորների բարեվարքությունը օրենքով սահմանված կարգով ստուգվել է: Դատավորների ընտրության գործընթացին ներգրավված են եղել 1 ազգային փորձագետ (Մարինա Պողոսյան, այնուհետև՝ Վաղարշ Աղաբեկյան) և 1 միջազգային փորձագետ (Վիտալի Վիկտորի Կասկո):

2022 թվականից մինչ օրս Բարձրագույն դատական խորհրդի կողմից գործուն միջոցներ են ձեռնարկվում Հակակոռուպցիոն դատարանի ձևավորման հետ կապված գործընթացներն ավարտին հասցնելու ուղղությամբ: Մասնավորապես, 2022 թվականի

հունվար-փետրվար ամիսներին անցկացվել են դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման ենթաբաժնի և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման ենթաբաժնի արտահերթ համալրելու նպատակով որակավորման քննություններ: Այնուհետև, Արդարադատության ակադեմիայում իրականացվել է դատավորների թեկնածուների ուսուցման և փորձաշրջանի անցկացումը:

Հարկ է նշել նաև, որ Դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի կողմից մշակվել և 2022 թվականի փետրվարի 28-ի թիվ 06/22-Ու որոշմամբ Արդարադատության ակադեմիա է ներկայացվել դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ընդգրկված անձանց, ՀՀ վերաքննիչ քրեական և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց առաջին խմբի մասնագիտական պատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկությունները՝ ուսուցման ծրագրում ներառելու նպատակով:

Միաժամանակ 2022 թվականի հունիսի 21-ին Բարձրագույն դատական խորհուրդը՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ Վճռաբեկ դատարանի վարչական, հակակոռուպցիոն պալատների դատավորների թափուր տեղերում ընտրելու համար ՀՀ Ազգային ժողովին է առաջարկել Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված անձանց թեկնածությունները (վարչական պալատի 3 թափուր տեղի համար, հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի 5 թափուր տեղի համար և հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի 5 թափուր տեղի համար):

Միևնույն ժամանակ, Բարձրագույն դատական խորհրդի կողմից գործուն միջոցներ են ձեռնարկվել նաև Հակակոռուպցիոն դատարանի գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների և նյութատեխնիկական միջոցների ապահովման ուղղությամբ:

Դրանից բացի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 661-Ա որոշումը, Բարձրագույն դատական խորհուրդը վերանայել է Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և պաշտոնների անվանացանկը, որոնց հիման վրա իրականացվել է Հակակոռուպցիոն դատարանի աշխատակազմի ձևավորման հետ կապված գործընթացներ:

Ազգային ժողովի կողմից 2022 թվականի հունիսի 27-30 նիստերի ընթացքում ընտրվել են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի 6 դատավորները:

Զուգահեռաբար, Հակակոռուպցիոն դատարանի դատավորներին պատշաճ աշխատանքային պայմաններով ապահովելու նպատակով՝ Արդարադատության նախարարության կողմից մշակվել և 2022 թվականի հունիսի 6-ին շրջանառության մեջ է դրվել

«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություններ, ՀՀ կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվել է, մեկ անձից գնման միջոցով, ընթացիկ վերանորոգման աշխատանքներ իրականացնել դատավորների ժամանակավոր տեղակայման համար նախատեսված վարչական շենքերում, մասնավորապես՝ Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի, Բաշինջաղյան 100, Թբիլիսյան խճուղի 3/9, Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան 5 (Վճռաբեկ դատարանի վարչական շենք) և Գարեգին Նժդեհի 23/1 հասցեներում գտնվող վարչական շենքերում:

Կառավարության որոշումն ընդունվել է 2022 թվականի հունիսի 17-ին և մեկ անձից գնման ընթացակարգով Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնանորգման աշխատանքների ձեռքբերումն իրականացվել է «Բաղրամյանշին» բաց բաժնետիրական ընկերությունից, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունները՝ համապատասխանաբար՝ «ԷԱԳ» և «ԱՐՔԻԹԵՔՏՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից, Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան 5 հասցեում տեղակայված Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Երևան քաղաքի Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում գտնվող վարչական շենքերի և Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի Բաշինջաղյան 100 հասցեում գտնվող 2-րդ մասնաշենքի 1-ին ու 2-րդ հարկերի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերումն իրականացվել է «ԱԳԱԹ 777» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Բացի այդ, Աջափնյակ վարչական շրջանի «Սպանդարյան» կայարանի երկաթգծին հարակից 15 հեկտար մակերեսով տարածքում Հակակոռուպցիոն նոր դատարանի շենքի կառուցման նպատակով իրականացված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ընթացքում պարզ էր դարձել, որ տվյալ տարածքում հնարավոր է առկա լինեն դամբարանադաշտեր: Նշված տարածքում հետագա շինարարական աշխատանքների իրականացման հնարավորության բացահայտման նպատակով՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև 2022 թվականի ապրիլի 14-ին N ՀՀՔԿ-ՄԱԱԾՁԲ-22/11 ծածկագրով կնքվել է Աջափնյակ վարչական շրջանի «Սպանդարյան» կայարանի երկաթգծին հարակից 15 հեկտար մակերեսով հողատարածքում երկրաբանական հետազոտական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը: Հետազոտական աշխատանքների ավարտից հետո շարունակվում են աշխատանքները:

Ինչ վերաբերում է նշված գործերով կայացված դատական ակտերի՝ վերաքննության կարգով վերանայմանը, ապա սահմանվել է, որ այն իրականացնելու են համապատասխանաբար վերաքննիչ քրեական և վերաքննիչ քաղաքացիական դատարանների առաջին դատավորները, որոնց թվակազմը յուրաքանչյուր դատարանում նախատեսվել է առնվազն 6-ը: Սահմանադրական օրենքի անցումային դրույթների գործող տեքստի համաձայն՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները և

վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորներն այդ պաշտոնում պաշտոնավարումն սկսելու են սույն հոդվածով սահմանված կարգով երեքական առանձին դատավորներ նշանակվելու պահից: Հարկ է նկատել, որ վերաքննիչ քրեական և քաղաքացիական դատարաններում 2022 թվականին երեքական առանձին դատավորները նշանակվել են:

Միևնույն ժամանակ, 2022 թվականի դեկտեմբերի 23-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2024 թվական հունվար 1-ից նախատեսվում է վերաքննիչ նոր՝ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը՝ սահմանելով, որ կոռուպցիոն հանցագործությունների և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված ակտերի՝ վերաքննության կարգով վերանայումն իրականացվելու է նշված դատարանի կողմից:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանում քննարկվող գործերով կայացվող դատական ակտերի վճռաբեկության կարգով վերանայմանը՝ պետք է նկատել, որ սկզբում Սահմանադրական օրենքով այդ նպատակով Վճռաբեկ դատարանի քրեական պալատում նախատեսվել է դատավորների թվակազմի՝ 2 դատավորով ավելացում: Սակայն, Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական և քրեական գործերի առավել մասնագիտացված և աղյունավետ քննությունն ապահովելու նպատակով 2022 թվականի փետրվարի 9-ին Ազգային ժողովի կողմից ընդունված Դատական օրենսգրքում նոր փոփոխություններ նախատեսող սահմանադրական օրենքով (ուժի մեջ է մտել 2022 թվականի փետրվարի 25-ին) սահմանվել է Վճռաբեկ դատարանում առանձին՝ Հակակոռուպցիոն պալատի ստեղծումը: Սահմանվեց, որ Հակակոռուպցիոն պալատում գործելու են կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմեր՝ յուրաքանչյուրը հինգ դատավորի թվակազմով: Այս սահմանադրական օրենքի անցումային դրույթներով էլ Հակակոռուպցիոն պալատի գործելու սկիզբը պայմանավորվեց յուրաքանչյուր դատական կազմի դատավորների առնվազն երեք թափուր պաշտոնները համալրելու պահով: Հարկ է նշել, որ Հակակոռուպցիոն պալատը 2022 թվականի հուլիս ամսից գործում է, քանի որ դատավորների՝ նշված քանակով թափուր պաշտոնները համալրված են:

Հակակոռուպցիոն դատարանի դատավորների համալրման գործընթացի վերաբերյալ հարկ է նշել, որ այն չի ավարտվել և ներկայումս շարունակվում է, քանի որ Հակակոռուպցիոն դատարանում դեռևս առկա են թվով 2 թափուր հաստիքներ, որոնցից 1-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավորի, 1-ը՝ կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող դատավորի:

Միևնույն ժամանակ, հարկ է հավելել, որ քննարկման առարկա գործընթացն ավարտին չի հասցվել այն պատճառով, որ դատավորի թեկնածուի հավակնորդները չեն հաղթահարել օրենքով սահմանված որակավորման ստուգման բոլոր փուլերը, դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձը իր դիմումի համաձայն հանվել է ցուցակից, ինչպես նաև մի շարք դեպքերում Հանրապետության նախագահի կողմից Օրենքի 117-րդ հոդվածով սահմանված կառուցակարգի շրջանակներում ներկայացվել են առարկություններ: Հարկ է նաև հավելել, որ ներկայումս Վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիոն

պալատում առկա են թվով 2 թափուր հաստիքներ, որոնցից 1-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմում, 1-ը՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմում, Վերաքննիչ քրեական դատարանում՝ թվով 2 թափուր հաստիքներ, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ թվով 3 թափուր հաստիքներ:

Դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի նախագահի 28.02.2022թ. թիվ ԴԴ-1 Ե-1513 գրությամբ Արդարադատության ակադեմիայի ռեկտորին է ուղարկվել Դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի 28.02.2022թ. «Դատավորների թեկանծուների հավակնորդների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ընդգրկված անձանց, Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ քաղաքացիական դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակում ընդգրկված անձանց առաջին խմբի մասնագիտական պատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ Արդարադատության ակադեմիա առաջարկություններ ներկայացնելու մասին» թիվ 06/22-Ու որոշումը: Այնուհետև, Դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերով հանձնաժողովի նախագահի 01.08.2022թ. թիվ Ե-6168 գրությամբ Արդարադատության ակադեմիային է հասցեագրվել՝ Ուսումնական հարցերով հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 1-ի «Դատավորների, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների 2023 թվականի վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ Արդարադատության ակադեմիա առաջարկություններ ներկայացնելու մասին» թիվ 22/22-Ու որոշումը, որով, ի թիվս այլնի, նախատեսվել են նաև հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործեր և հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավորների վերապատրաստման համար անհրաժեշտ առարկայական դասընթացների թեմաները:

Արդարադատության ակադեմիան 2022 թվականի մարտ ամսին կազմակերպել է Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների 2022թ. ցուցակում ընդգրկված 16 (կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի 11, հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի 5) անձանց, 2022 թվականի մայիսին՝ Վերաքննիչ դատարաններում հակակոռուպցիոն գործեր քննող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2022թ. ցուցակում ընդգրկված 10 (Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար 4, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար 6) անձանց, ինչպես նաև 2022 թվականի օգոստոս ամսին Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների 2022թ. ցուցակում ընդգրկված 1 (հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժին) և Վերաքննիչ դատարաններում հակակոռուպցիոն գործեր քննող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2022թ. ցուցակում ընդգրկված 1 (Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման

ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար) անձի մասնագիտական պատրաստումը:

Հակակոռուպցիոն դատարանի դատավորների վերապատրաստումներն օրենքով սահմանված կարգով Արդարադատության ակադեմիայում կկազմակերպվեն 2023 թվականին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն դատարանի դատավորների առաջին կազմը նշանակվել է միայն 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, ինչպես նաև, 2023 թվականի ընթացքում պետք է համալրվեն հակակոռուպցիոն դատարանի դատավորների թափուր հաստիքները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնցով նախատեսվել է վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը, հանրային քննարկման է ներկայացվել 23.09.2022 - 08.10.2022 թթ. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/4767):

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի ստեղծումը նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի՝ Ազգային ժողովի առաջինից երկրորդ ընթերցում Կառավարության գրավոր առաջարկությունների հիման վրա լրամշակման արդյունքում (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://parliament.am/draft_history.php?id=12955):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Հակակոռուպցիոն դատարանը ձևավորվել է:	Մշակվել և հաստատվել են հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների համար մասնագիտական	Սույն միջոցառման շրջանակներում Արդարադատության ակադեմիայի կողմից Մշակվել և հաստատվել են հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների համար մասնագիտական	**Կատարված է մեծամասամբ**

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում նշանակվել են հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորներ, իսկ վերաքննիչ քրեական դատարանում՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորներ: Ապահովված են բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ	պատրաստման ուսուցման ծրագրերը (2022թ.): Հակակոռուպցիոն դատարանի դատավորների առաջին կազմը ձևավորվել է: Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները նշանակվել են (2022 թ.): Դատավորների առնվազն 50%-ը անցել է համապատասխան մասնագիտական պատրաստման ուսուցումներ (2022թ.):	պատրաստման ուսուցման ծրագրերը, ձևավորվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավորների առաջին կազմը, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող երեքական դատավոր 2022 թվականին արդեն նշանակվել են: Բոլոր երեք ատյաններով նշանակված դատավորները Արդարադատության ակադեմիայում անցել են համապատասխան մասնագիտական պատրաստման ուսուցումներ: Ինչ վերաբերում է դատավորների մասնագիտական վերապատրաստումներին, ապա Հակակոռուպցիոն դատարանի դատավորների վերապատրաստումներն օրենքով սահմանված կարգով Արդարադատության ակադեմիայում կկազմակերպվեն 2023 թվականին: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2022 թվականի համար սահմանված միջոցառման ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցիչի	

մասնագիտացված դատարանների գործունեության ապահովման համար: Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող դատավորները շարունակաբար վերապատրաստվում են:		համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2022 թվականի համար նախատեսված աշխատանքներն կատարվել են մեծամասամբ, քանի որ 2022 թվականի դրությամբ վերապատրաստումներ չեն իրականացվել:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Ընդհանուր առմամբ խոչընդոտներ առկա չեն եղել: Դատավորների կողմից վերապատրաստումների անցկացումը հետաձգվել է՝ պայմանավորված դատավորների նշանակումների ժամկետներով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4

ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման ստեղծում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության դատախազների համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ մասնագիտացումը բարձրացնելու նպատակով:

Վերստուգիչ ցուցիչ

Կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կազմի առնվազն 60%-ը անցել է համապատասխան վերապատրաստումներ (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարողներ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Համակատարողներ

Արդարադատության նախարարություն

Արդարադատության ակադեմիա

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2022 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծված ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատակիցների համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ մասնագիտացումը բարձրացնելու նպատակով: Մասնավորապես, «ՀՀ քրեական նոր օրենսգիրք» և «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք» վերտառությամբ վերապատրաստման դասընթացներ անցել են ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների 90%-ը:

Հարկ է նաև հավելել, որ 2022 թվականի հուլիսի 3-7-ը ներառյալ ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության երեք դատախազ մասնացել են Խորվաթիայի արդարադատության և հանրային կառավարման նախարարության կողմից կազմակերպված ուսումնական այցին Խորվաթիայի Հանրապետության Զագրեբ քաղաքում: Բացի այդ, նույն թվականի հուլիսի 13-15-ը ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետը և վարչության ավագ դատախազը Խորվաթիայի Զագրեբ քաղաքում մասնակցելու են Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կողմից «Արդարացի դատահրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում կազմակերպվելիք ուսումնական այցին:

Զուգահեռաբար, 2022 թվականին Արդարադատության ակադեմիայի կողմից ևս ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման աշխատակիցների համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ մասնագիտական գիտելիքները կատարելագործելու նպատակով: Մասնավորապես, 2022 թվականին «ՀՀ քրեական նոր օրենսգիրք» և «ՀՀ քրեական դա-տավարության նոր օրենսգիրք» վերտառությամբ, ինչպես նաև այլ մասնագիտական դասընթացներով վերապատրաստրաստվել են ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների 90%-ը:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Միջոցառման իրականացումը 2022 թվականին հանրային քննարկում չի ենթադրում:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության դատախազների համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ մասնագիտացումը բարձրացնելու նպատակով:	Կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կազմի առնվազն 60%-ը անցել է համապատասխան վերապատրաստումներ (2022թ.):	Սույն միջոցառման շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման դատախազների կազմի 90%-ը անցել է համապատասխան վերապատրաստումներ: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2022 թվականի համար սահմանված միջոցառման վերստուգիչ ցուցիչի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2022 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են:	**Կատարված է ամբողջությամբ**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

   Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Հասարական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում վերջիններիս կարիքների գնահատման հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվում են վերապատրաստման ծրագրեր:

Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում են հասարական կազմակերպությունների ներկայացուցիչների վերապատրաստումներ:

Հասարական կազմակերպությունների ներկայացուցիչները պարբերաբար վերապատրաստվում են:

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվում են:

Իրավասու ստորաբաժանումների գործառույթները հստակ տարանջատված են:

Վերստուգիչ ցուցիչ

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների առնվազն 40%-ն անցել է վերապատրաստում (2022թ.):

Իրականացվել է առնվազն 2 վերապատրաստում հասարական կազմակերպությունների ներկայացուցիչների համար (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Արդարադատությա ն նախարարություն

Համակատարողներ

Հասարական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

"Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի
☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) աշխատակիցները մասնակցել են մի շարք վերապատրաստման դասընթացների հետևյալ թեմաներով.

- Եվրոպական միության աջակցությամբ ՀՀ-ում Արդարադատության համակարգի բարեփոխման ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինար-վերապատրաստում՝ նվիրված Հաղորդակցման ռազմավարության ծրագրի պլանավորման գործնական հմտություններին, 2022 թվականի հունվարի 18,
- Արդարադատության բարեփոխումների ռազմավարության վերաբերյալ հաղորդակցության ծրագրի մասով վերապատրաստում «Արդարադատության բարեփոխումներին և բյուջեի աջակցության իրականացմանը» ԵՄ Տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում, 2022 թվականի փետրվարի 9,
- «Հակակոռուպցիոն բարեփոխումների ռազմավարության և գործողությունների ծրագրի շուրջ հաղորդակցության ռազմավարության մշակում» աշխատաժողով, 2022 թվականի փետրվարի 11,
- «Հայաստանի Հանրապետությունը քաղաքացիական ծառայության շարունակական բարեփոխումներ» ԵՄ թվիննինգ ծրագրի շրջանակներում առաջնորդության դասընթաց ավագ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց համար, 2022 թվականի մարտի 4,
- Ուսումնական այց Թբիլիսի (Վրաստանի Հանրապետություն)՝ «Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն հասարակական կազմակերպության և «Բազմազգ Վրաստան» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Մեդիա ոլորտի բարեփոխումներ» վերտառությամբ աշխատաժողովին մասնակցություն, Վրաստանի մեդիա միջավայրի և մեդիայի կարգավորման համակարգի, մինչդատական արդարադատության և թափանցիկության քաղաքականության և գործելակերպի, մեդիագրագիտության մոտեցումների ուսումնասիրություն, 2022 թվականի մարտի 18-21,
- Ուսումնական այց Ալբանիայի Հանրապետություն՝ Տիրանա քաղաք, տվյալ պետության դատական համակարգում հակակոռուպցիոն բարեփոխումների փորձը ուսումնասիրելու և լավագույն օրենսդրական և իրավակիրառական պրակտիկայի լուծումները Հայաստանում տեղայնացնելու նպատակով, 2022 թվականի ապրիլի 25-28,

- «Տեխնիկական աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների համար բյուջետային աջակցության ծրագրին» ռազմավարական և ինստիտուցիոնալ պլանավորման գործնական մեթոդաբանություն» աշխատաժողով, 2022 թվականի հունիսի 16, քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն,
- Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից կազմակերպված «Էթիկայի և հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիրը» վերապատրաստման դասընթաց, 2022 թվականի ապրիլ-մայիս,
- «Հայաստանի արդարադատության հատվածի հաստատությունների հաղորդակցման կարողությունների կառուցման գործողություններ» թեմայով վերապատրաստում, 2022 թվականի հունիսի 17-29,
- Վերապատրաստման դասընթացներ «Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրում», «Բարեվարքություն»,
- «Իրավական ակտի մշակման և մեկնաբանման հմտություններ», «Միջազգային կառույցներում ներկայացուցչության ապահովման հմտություններ» թեմաներով, 2022 թվականի հունիս,
- Ուսումնական այց Խորվաթիայի Հանրապետություն՝ Զագրեբ քաղաք, տվյալ պետության հակակոռուպցիոն բարեփոխումների փորձը ուսումնասիրելու և լավագույն օրենսդրական և իրավակիրառական պրակտիկայի լուծումները Հայաստանում տեղայնացնելու նպատակով, 2022 թվականի հուլիսի 13-15:
- «Հայաստանում բարեվարքության խթանում և հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելում» Եվրոպական Միության թվիննինգ ծրագրի շրջանակներում ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության կարողությունների զարգացում, 2022 թվականի հունիսի 13:
- Հակակոռուպցիոն ոլորտային հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացման նպատակով Արդարադատության նախարարությունը 2022 թվականի ապրիլի 26-ին դիմել է ոլորտային քաղաքացիական կազմակերպություններին՝ կարիքների առկայության դեպքում դրանք ստանալու և դրանց հիման վրա վերապատրաստման գործընթաց նախաձեռնելու նպատակով: Ներկայացված առաջարկությունները խմբավորվել են՝ միջազգային դոնոր կազմակերպությունների հետ դրանք քննարկելու և հասարակական կազմակերպությունների վերապատրաստման գործընթացին միջազգային փորձագետների ներգրավվածությունն ապահովելու համար:
- Արդարադատության նախարարությունը «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ, ինչպես նաև «Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության» կենտրոնի աջակցությամբ իրականացրեց վերապատրաստում «Կոռուպցիայի դեմ պայքարը և դրանում գործարար ոլորտի դերակատարումը» թեմայով, 2022 թվականի դեկտեմբերի 16, որին մասնակցում էին նաև տնտեսական ոլորտի հասարակական կազմակերպությունները:
- «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում» PGG II ԵՄ/ԵՄ, 20-23 փետրվար, 2023թ:

• Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիում «Ապօրինի ակտիվների վերականգնումը և բռնագանձված ակտիվների կառավարումը» թեմայով վերապատրաստում, հունվարի 30-31 2023 թ:

• IRI-ի կողմից Երևան քաղաքում կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց <<Հակակոռուպցիոն քաղաքականության (ռազմավարության) հիմնական ուղղությունները և վերջին 4 տարվա ձեռքբերումները>> թեմայով, սեպտեմբերի 29-ին, 2022թ:

• ԵՄ «Տեխնիկական աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների համար բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում ռիսկերի կառավարում, քաղաքականության մշտադիտարկում, ֆինանսական գործընթացներ» թեմայով վերապատրաստում, նոյեմբերի 10, 2022 թվական:

• ՀՀ 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման մեթոդական ցուցումների վերաբերյալ առցանց սեմինար-խորհրդակցություն, փետրվարի 17- 20, 2023թ:

• Տեխնիկական Աջակցություն (ՏԱ) «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» բյուջետային աջակցություն ծրագրի շրջանակներում Արդարադատության նախարարության (ԱՆ), Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ), Հակակոռուպցիոն դատարանի (ՀԴ), Գլխավոր դատախազության (ԳԴ), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կամ այլ առանցքային արդարադատության/հակակոռուպցիոն հաստատությունների ռազմավարական պլանավորման և հաղորդակցության, պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) ոլորտներում մշտադիտարկում և գնահատում , <<Աջակցություն ՀՀ-ում արդարադատության ոլորտի բարեփոխումներին>> ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում Մշտադիտարկման և Գնահատման (Monitoring and Evaluation) հմտությունների և կարողությունների զարգացման վերաբերյալ աշխատաժողով, սեպտեմբերի 23, 2022թ.:

• IRI-ի կողմից Երևան քաղաքում կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց <<Հակակոռուպցիոն քաղաքականության (ռազմավարության) հիմնական ուղղությունները և վերջին 4 տարվա ձեռքբերումները>> թեմայով, սեպտեմբերի 29-ին, 2022թ:

• ԵՄ «Տեխնիկական աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների համար բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում ռիսկերի կառավարում, քաղաքականության մշտադիտարկում, ֆինանսական գործընթացներ» թեմայով վերապատրաստում, նոյեմբերի 10, 2022 թվական:

• Արդարադատության նախարարությունը «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ, ինչպես նաև «Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության» կենտրոնի աջակցությամբ իրականացրեց վերապատրաստում «Կոռուպցիայի դեմ պայքարը և դրանում գործարար ոլորտի դերակատարումը» թեմայով, 2022 թվականի դեկտեմբերի 16, որին մասնակցում էին նաև տնտեսական ոլորտի հասարակական կազմակերպությունները:

- Եվրոպայի խորհրդի կողմից Ֆրանսիայի Հանրապետության Ստրասբուրգ քաղաքում կազմակերպված «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում «Կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» թեմայով տարածաշրջանային աշխատաժողով, դեկտեմբերի 19-22, 2022 թ.: Աշխատաժողովի շրջանակներում մասնակցել են նաև հասարակական կազմակերպության ներկայացուցիչները:Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիում «Ապօրինի ակտիվների վերականգնումը և բռնագանձված ակտիվների կառավարումը» թեմայով վերապատրաստում, հունվարի 30-31 2023 թ:
- «Հայաստանում բարեվարքության խթանում և հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելում» ԵՄ թվիննինգ ծրագրի շրջանակներում Արդարադատության նախարարության կողմից կազմակերպված դասընթաց Հանրային ծառայության մասին օրենքի փոփոխություններով ներդրված հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտի վերաբերյալ, փետրվարի 15, 2023թ.:
- ՀՀ 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման մեթոդական ցուցումների վերաբերյալ առցանց սեմինար-խորհրդակցություն, փետրվարի 17- 20, 2023թ:
- «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում» PGG II ԵԽ/ԵՄ, «Փողերի լվացման (ՓԼ) և ահաբեկչության ֆինանսավորման (ԱՖ) ռիսկերը՝ կապված վիրտուալ ակտիվների և համապատասխան մեղմացման հետ այդ ռիսկերը վերացնելուն ուղղված միջոցառումներ» ծրագրի շրջանակներում սեմինար-վերապատրաստում, 20-23 փետրվար, 2023թ:
- «Հայաստանում բարեվարքության խթանում և հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելում» Եվրոպական Միության թվիննինգ ծրագրի աշխատանքային զեկույցի 3-րդ բաղադրիչի 3.1-3.5 միջոցառումների շրջանակներում Հակակոռուպցիոն ռազմավարության կատարողականի բարձրացման նպատակով Արդարադատության նախարարության աշխատակիցների համար նախատեսվել է մոնիթորինգի կարողությունների զարգացում:

Վարչության բաժինների իրավասությունները հստակ տարանջատվել են դեռևս 2020 թվականին՝ Վարչության ձևավորման պահից:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացումը հանրային քննարկում չի ենթադրում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները,	Կատարման կարգավիճակը

		հիմնավորումներ և մեկնաբանություններ	
Հասարական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում վերջիններիս կարիքների գնահատման հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվում են վերապատրաստման ծրագրեր: Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում են հասարական կազմակերպությունների ներկայացուցիչների վերապատրաստումներ: Հասարական կազմակերպությունների ներկայացուցիչները պարբերաբար վերապատրաստվում են:	Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների առնվազն 40%-ն անցել է վերապատրաստում (2022թ.): Իրականացվել է առնվազն 2 վերապատրաստում հասարական կազմակերպությունների ներկայացուցիչների համար (2022թ.):	Սույն միջոցառման իրականացման շրջանակներում Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման բոլոր աշխատակիցները անցել են վերապատրաստումներ: Միևնույն ժամանակ, դոնոր կազմակերպությունների աջակցությամբ կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով վերապատրաստումներ են անցկացվել գործարար ոլորտի հասարական կազմակերպությունների համար Երևանում, ինչպես նաև Ֆրանսիայի Հանրապետության Ստրասբուրգ քաղաքում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի 2 հասարական կազմակերպությունների մասնակցությամբ: Միևնույն ժամանակ, հասարական կազմակերպությունների համար վերապատրաստման ծրագրեր չեն մշակվել: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2022 թվականի համար սահմանված միջոցառման վերստուգիչ ցուցիչի	**Կատարված է մեծամասամբ**

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվում են: Իրավասու ստորաբաժանումնումների գործառույթները հստակ տարանջատված են:		համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2022 թվականի համար նախատեսված աշխատանքներն մեծամասաբ են կատարվել:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

   Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6

Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ պարբերաբար քննարկումներ են իրականացվում:

Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն ըստ անհրաժեշտության անց է կացնում նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը:

Վերստուգիչ ցուցիչ

Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ իրականացվել է առնվազն 1 քննարկում (2021-2022թթ.):

Դոնորների ներգրավվածությունը հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարման գործընթացին համամասնորեն բաշխված և համակարգված է (2021- 2022թթ):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

"Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ոլորտի ծրագրերի աջակցության և շարունակական համագործակցությունը ապահովելու նպատակով միջազգային դոնոր կազմակերպությունների հետ 2022 թվականի ընթացքում անցկացվել են համատեղ մի շարք հանդիպումներ: Դոնորների համակարգման աշխատանքներն իրականացվում են Արդարադատության նախարարության կողմից: Այդ նպատակով Արդարադատության նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ, որին անդամակցում են դոնորները, շահագրգիռ մարմինները և ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը մեծապես աջակցում են դոնոր կազմակերպությունները՝ ընտրվել է վերջիններիս հետ համատեղ հաճախակի հանդիպումներ կազմակերպելու, ներկայացուցչական կազմով աշխատանքային խմբի շրջանակում դոնորների աշխատանքների համակարգումն ապահովելու մոդելը:

Նշվածից բացի, 2022 թվականի մարտի 24-ին ՄԱԿ-ի մշտական կոորդինատորի պարտականությունները կատարող Լիլյա Փիթերս Յահիայի և ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի նախաձեռնությամբ անցկացվել է դոնորների համակարգման նիստ «Կառավարում, իրավունքի գերակայություն և մարդու իրավունքներ» ոլորտներում արդարադատության նախարարության բարեփոխումների ծրագրերը քննարկելու համար, որոնց շրջանակում ի թիվս այլնի ներառվում է նաև հակակոռուպցիոն ոլորտը: Նիստի ընթացում քննարկվել են Արդարադատության նախարարության կողմից կատարված ու կատարվելիք աշխատանքները: Միջազգային գործընկերները բարձրացրել են իրենց հետաքրքրող ու մտահոգող հարցերը: Ուրվագծվել են տարբեր ոլորտներում միջազգային գործընկերների հետ համագործակցության ուղղությունները:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ	Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ	Սույն միջոցառման շրջանակներում թեև դոնորների հետ պարբերաբար իրականացվել են հանդիպումներ, ներգրավվել են նաև շահագրգիռ մարմիններ, սակայն դոնորների և շահագրգիռ մարմինների համաժամանակյա հանդիպումները պարբերական բնույթ չեն կրել, ինչի արդյունքում սույն միջոցառումը գնահատվում է մեծամասամբ կատարված:	**Կատարվել է մեծամասամբ**

մարմինների հետ պարբերաբար քննարկումներ են իրականացվում: Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն ըստ անհրաժեշտության անց է կացնում նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը:	մարմինների հետ իրականացվել է առնվազն 1 քննարկում (2021-2022թթ): Դոնորների ներգրավվածությունը հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարման գործընթացին համամասնորեն բաշխված և համակարգված է (2021- 2022թթ):		

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7

Ազգային ժողովի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (անձ կամ ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Ազգային ժողովի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ (անձ կամ ստորաբաժանում) նշանակման համար անհրաժեշտ իրավական հիմքերը սահմանվել են: Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները (պատասխանատու ստորաբաժանման աշխատողների) նշանակվել են, վերջիններիս պաշտոնի անձնագրերում (աշխատանքի նկարագիր) կամ համապատասխան անհատական իրավական ակտերում ամրագրված են հակակոռուպցիոն ծրագրերի և հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների իրականացումից բխող գործառույթներ:

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (պատասխանատու ստորաբաժանման աշխատողների) վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակված է համապատասխան մարմինների պաշտոնական կայքէջերում և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքում:

Վերստուգիչ ցուցիչ

Ազգային ժողովի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում անհատական իրավական ակտով կամ պաշտոնի անձնագրերով սահմանվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ (անձ/ստորաբաժանում) (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարողներ՝

Ազգային ժողովի աշխատակազմ (համաձայնությամբ)

Վարչապետի աշխատակազմ
Անկախ մարմիններ (համաձայնությամբ)
Ինքնավար մարմիններ (համաձայնությամբ)
Քննչական մարմիններ (համաձայնությամբ)
Պետական կառավարման համակարգի մարմիններ
Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համակարողներ՝
Արդարադատության ակադեմիա
Հասարակական կազմակերպություններ

Կատարման կարգավիճակը (2022 թվական)
☐Կատարված է ամբողջությամբ
"Կատարված է մեծամասամբ
☐ Կատարված է մասնակի
☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

2022 թվականի դեկտեմբերին «Հանրային ծառայության մասին» օրենքում կատարվել են լրացումներ և փոփոխություններ, որոնց արդյունքում ներդրվել է Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտը: Նշված օրենսդրական փոփոխություններով սահմանվել է, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, համապատասխան աշխատակիցների պաշտոնի անձնագրերով կամ օրենքով սահմանված այլ իրավական հիմքով նախատեսվում է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների և նրանց գործունեությունը համակարգողների գործառույթների սահմանումը:

Համաձայն նշյալ կարգավորումների՝ Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի ինստիտուտը ենթադրում է, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պետական կամ համայնքային ծառայություն իրականացնող կամ հանրային պաշտոն զբաղեցնող համապատասխան անձանց գործառույթներին ի լրումն սահմանել հակակոռուպցիոն ռազմավարություններով, ծրագրերով և ոլորտային միջազգային պարտավորություններով իրականացված կամ իրականացվելիք

աշխատանքների համակարգման և ներկայացման գործառույթներ: Յուրաքանչյուր դեպքում մարմինների միջև արդյունավետ և օպերատիվ համագործակցությունն ապահովելու համար պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պետք է նշանակվի հակակոռուպցիոն ծրագրի պատասխանատուին փոխարինող առնվազն 1 անձ, որը պատասխանատուի բացակայության դեպքում կփոխարինի վերջինիս: Միևնույն ժամանակ, նշված կարգավորումներով սահմանվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների մեթոդական աջակցության մեխանիզմները, լիազոր մարմինը:

Օրենքով սահմանված կարգով հանրապետական իշխանության մարմիններում, պետական կառավարման մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ: Հակակոռուպցիոն պատասխանատուների վերաբերյալ տվյալները հրապարկված են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքում, Արդարադատության նախարարության կայքում[53], ինչպես նաև պետական մարմինների կայքերում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Շահարգիռ մարմինների հետ քննարկվել է նախատեսվող փոփոխությունը, իսկ «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի նախնական տարբերակը քննարկվել է www.e-draft.am հարթակում (https://www.e-draft.am/projects/4314), ինչպես նաև Ազգային ժողովի կայքում (http://www.parliament.am/draft_history.php?id=13643 http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=68124)

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Ազգային ժողովի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում,	Ազգային ժողովի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում,	Սույն միջոցառման կատարման շրջանակներում օրենսդրական ակտով ամրագրվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտի գործարկման համար անհրաժեշտ կարգավորումները, ներառյալ վերջինիս գործառույթները, իրավունքները և պարտականությունները, միջազգային պարտավորությունների շրջանակում վերջիններիս գործունեության համակարգման մեխանիզմները,	**Կատարված է մեծամասամբ**

[53] https://moj.am/page/626

Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ (անձ կամ ստորաբաժանում) նշանակման համար անհրաժեշտ իրավական հիմքերը սահմանվել են: Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները (պատասխանատու ստորաբաժանման աշխատողների) նշանակվել են, վերջիններիս պաշտոնի անձնագրերում (աշխատանքի նկարագիր) կամ համապատասխան անհատական իրավական ակտերում	Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում անհատական իրավական ակտով կամ պաշտոնի անձնագրերով սահմանվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ (անձ/ստորաբաժանում) (2022թ.):	հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների մեթոդական աջակցության կարգավորումները և այդ աջակցությունը տրամադրող լիազոր մարմինը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում և Վարչապետի աշխատակազմում Հակակոռուպցիոն ծրագրի պատասխանատու նշանակված չէ: Բացի այդ, ապահովված է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների վերաբերյալ տվյալների հրապարակայնությունը Արդարադատության նախարարության և հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքէջերում: Մնացյալ մարմինների կայքէջերում հրապարկման գործընթացը դեռևս ամբողջությամբ չի ավարտվել: Այսպիսով, սույն միջոցման վերստուգիչ ցուցիչի, ակնկալվող արդյունքի և կատարված աշխատանքների համադրությունից հետևում է, որ սույն միջոցառումն կատարված է մեծամասամբ:	

ամրագրված են հակակոռուպցիոն ծրագրերի և հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների իրականացումից բխող գործառույթներ: Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (պատասխանատու ստորաբաժանման աշխատողների) վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակված է համապատասխան մարմինների պաշտոնական կայքէջերում և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքում:			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագրի մշակում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Մշակվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը և ներկայացվել է Կառավարության հաստատմանը:

Վերստուգիչ ցուցիչ

Կառավարության կողմից հաստատվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարողներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարողներ

Արդարադատության նախարարություն

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

" Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը և Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի գնահատման միջոցառումների իրականացման ծրագիրը (այսուհետ՝ Հայեցակարգի նախագիծ), որը շահագրգիռ մարմինների կողմից ներկայացրած առաջարկություններն ամփոփելուց հետո 2022 թվականի սեպտեմբերի 1-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, սակայն հանվել է պետահիրավական նախարարական կոմիտեի նիստի օրակարգից՝ հեղինակի նախաձեռնությամբ՝ լրամշակելու նպատակով: Ըստ Հայեցակարգի նախագծի և դրանում ամրագրված միջոցառումների՝ ակնկալվում է Հանձնաժողովի համար ստեղծել իրավական հիմք՝ մշակելու և հաստատելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և ռիսկերի կառավարման մեթոդաբանությունը, ինչպես նաև մշակելու և հաստատելու մեթոդաբանության կիրարկման ուղեցույցները: Ակնկալվում է Հանձաժողովին ընձեռել իրավասություն՝ մշակելու և հաստատելու Կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և կառավարման ոլորտային մեթոդաբանությունները, կազմակերպելու, իրականացնելու և վերահսկելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և ռիսկերի կառավարման, ինչպես նաև հակակոռուպցիոն (առողջացման) ծրագրերի ներդրման գործընթացները, մշակելու և ՀՀ Կառավարության հաստատմանը ներկայացնելու պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և կառավարման տարեկան միջոցառումների ծրագիրը:

Հայեցակարգի նախագիծը ներկայացվել է միջազգային կառույցներին՝ ԱՄՆ ՄԶԳ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ, Համաշխարհային բանկ կարծիքի և լրամշակման արդյունքում կրկին ներկայացվել է շահագրգիռ մարմինների կարծիքին: Ներկայումս նախագիծը ամփոփվում է:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագիծը անցել է հանրային քննարկում, ապահովվել է շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության իրազեկվածությունը (https://www.e-draft.am/projects/4563):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

Կառավարության կողմից հաստատվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը (2022թ.):	Կառավարության կողմից հաստատվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը (2022թ.):	Կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը գտնվում է լրամշակման փուլում: Ուստի, սույն միջոցառումը մասնակի է կատարվել:	**Կատարված է մասնակի**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Հայեցակարգի՝ լրամշակման փուլում գտնվելը պայմանավորված է պետական մարմինների իրավասությունների հատման բացառման հարցի, վերջիններիս իրավասությունների առանձնահատկությունների և միջազգային փորձի համապարփակ ուսումնասիրման անհրաժեշտության հանգամանքներով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 9

Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, թեկնածուների, դատախազների թեկնածուների, քննիչների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, դատախազների և դատավորների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրականացնում է ««Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, դատավորների՝ այդ թվում սահմանադրական դատարանի, թեկնածուների հավակնորդների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների թեկնածուների հավակնորդների, օրենքով սահմանված դեպքերում՝ քննիչների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց հիման վրա համապատասխան անձանց ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ:

Մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր, որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա նշանակելու/ընտրելու իրավասություն ունեցող անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն:

Վերստուգիչ ցուցիչ

Քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամի ընտրության/նշանակման գործընթացը ներառում է բարեվարքության ուսումնասիրության փուլ (2022թ.):
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ՀՀ պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության վերաբերյալ 2022թ.-ին ներկայացրել է առնվազն 150 եզրակացություն:

Կատարող մարմին՝

Հիմնական կատարողներ

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

" Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Մշակվում է նախագիծ, որը միտված է ինքնավար և անկախ մարմինների, ինչպես նաև ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածուների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանց բարեվարքության ստուգման մեխանիզմների ներդրմանը:

2022 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող թվով 512 անձանց վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն,ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել 505 խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Թվով 4 անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չի եղել ուսումնասիրություն իրականացնել Թեկնածուի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների գույքային դրության, այդ թվում՝ փաստացի ստացած եկամուտների համապատասխանության առնչությամբ և գնահատել դրանց արժանահավատությունը՝ թերի լրացված հարցաթերթիկի պատճառով: Միաժամանակ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխվածության արդյունքում, 3 անձի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությամբ, վերջինիս բարեվարքության վերջնական գնահատական չի տրամադրվել: Տրամադրված թվով 505 եզրակացությունից դրական են եղել 278-ը, դրական վերապահումով՝ 163-ը, բացասական՝ 64-ը:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Նախագծի վերջնական տարբերակը պատրաստ լինելուն պես այն կացնի հանրային քննարկում, կուղարկվի շահագրգիռ մարմիններին կարծիքի, ինչպես նաև կապահովվի նախագծի կարգավորումներին քաղաքացիական հասարակության իրազեկվածությունն ու մասնակցությունը:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրականացնում է ««Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, դատավորների՝ այդ	Քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև Ինքնավար և անկախ մարմինների անդամի ընտրության/նշանակման գործընթացը ներառում է բարեվարքության ուսումնասիրության փուլ (2022թ.): Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ՀՀ պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության վերաբերյալ 2022 թ.-ին ներկայացրել է առնվազն 150 եզրակացություն:	Սույն միջոցառման շրջանակներում 2022 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող թվով 512 անձանց վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել 505 խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Միևնույն ժամանակ մշակվել է քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամի ընտրության/նշանակման գործընթացի ընթացքում վերջիններիս բարեվարքության ստուգման կառուցակարգերը սահմանող օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթը: Այսպիսով, սույն միջոցառման վերստուգիչ ցուցիչի, ակնկալվող արդյունքի և կատարված աշխատանքների համադրությունից հետևում է, որ այս միջոցառումը մասնակի է կատարվել:	**Կատարված է մասնակի**

թվում սահմանադրական դատարանի, թեկնածուների հավակնորդների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների թեկնածուների հավակնորդների, օրենքով սահմանված դեպքերում՝ քննիչների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց հիման վրա համապատասխան անձանց ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ: **2.** Մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել «Կոռուպցիայի կանխարգելման			

հանձնաժողովի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր, որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա նշանակելու/ընտրելու իրավասություն ունեցող անձանց խորհրդատվական եզրակացություններ			

տրամադրելու վերաբերյալ իրավասություն:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Միջոցառման կատարումը ձգձգող պատճառ է ռեսուրսների անբավարարությունը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 10

«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը: Գնահատումների հիման վրա ՀՀ Վարչապետին ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:

Վերստուգիչ ցուցիչ

«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման վերաբերյալ գնահատման արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթը քննարկվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում, որի վերաբերյալ շահագրգիռ մարմիններին տրվել են համապատասխան հանձնարարականներ (2022թ.)

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ

Համակատարողներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

"Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2022 թվականի ընթացքում գնահատվել են Տեղեկատվական հարթակում էլեկտրոնային եղանակով ընթացող մրցույթների թափանցիկությունը, «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների պահանջների պահպանումը: Մասնավորապես, առցանց կարգով ուսումնասիրվել են համապատասխան մարմինների կողմից հրապարակված շուրջ 3030 մրցույթների հայտարարությունները: 50-ից ավելի մրցույթների հայտարարություններում հայտնաբերվել են թերություններ սահմանված ժամկետները չպահպանելուց մինչև իրավական ակտերի հղումները և հոդվածները չնշելը: Ուսումնասիրվել են համապատասխան մարմինների կողմից անցկացված շուրջ 1500 մրցույթների փաթեթներ՝ մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած մասնակիցների փաստաթղթերը, համապատասխան մարմինների կողմից կայացրած որոշումները, հարցազրույցի փուլն անցկացնելու համար ձևավորված հանձնաժողովի կազմերին ներկայացվող պահանջների պահպանումը, հարցազրույցի փուլի գնահատման չափորոշիչների պահանջների պահպանումը, պաշտոնում նշանակված քաղաքացու փաստաթղթերի համապատասխանությունը, ամենօրյա ռեժիմով իրականացվել են ուղիղ հեռարձակմամբ ընթացող մրցույթների մշտադիտարկումներ, որի արդյունքում վերհանվել են նաև խախտումներ, այդ թվում՝ կասեցվել է մրցույթի թեստավորման փուլի ընթացքը:

Միջոցառումից **փաստացի ակնկալվող արդյունքն է** Տեղեկատվական հարթակի էլեկտրոնային գործիքների կատարելագործման միջոցով ապահովել մրցույթների թափանցիկությունը, «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող գործընթացների պահպանումը, իրազեկել քաղաքացիական ծառայողներին բարեվարքության կանոնների, դրանք չպահպանելու դեպքում առաջացող խնդիրների մասին:

Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը գնահատելու համար կարևոր է հիշյալ օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունումը: Այս առումով հարկ է նշել, որ 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-205-Ն օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկերը հաստատվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 756-Ա որոշմամբ: Հիշյալ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը ընդունվել են՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 756-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 23-րդ կետով նախատեսված «Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման, զենք տրամադրելու, զենքը պահելու, կրելու, օգտագործելու կարգը, պայմանները, համազգեստների, ուսադիրների և տարբերանշանների նկարագրերը և այդ մարմինների ցանկը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծից: 2018

թվականի օգոստոսի 20-ի նախանիստում «Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման, զենք տրամադրելու, զենքը պահելու, կրելու, օգտագործելու կարգը, պայմանները, համազգեստների, ուսադիրների և տարբերանշանների նկարագրերը և այդ մարմինների ցանկը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի քննարկման ժամանակ առաջարկվել է կառավարության նոր որոշումն առայժմ չընդունել՝ հաշվի առնելով, որ դեռևս ոչ բոլոր պետական մարմիններն են ընդգրկվել քաղաքացիական ծառայության համակարգ, իսկ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 756-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 23-րդ կետով նախատեսված Կառավարության որոշման նախագիծը մշակելիս պետք է հաշվի առնել համապատասխան մարմինների առջև դրված խնդիրների առանձնահատկությունները:

Հարկ է նշել, որ նախագծի մշակման աշխատանքները վերսկսելու վերաբերյալ գրություն է ներկայացվել Արդարադատության նախարարություն, ինչի արդյունքում ակնկալվում է համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում և ընդունում:

2018-2022 թթ. ընթացքում ենթաօրենսդրական ակտերում կատարվել են 11 փոփոխություններ:

Գործողության շրջանակում 2021-2022 թթ. «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքի վերաբերյալ իրականացված գնահատումների արդյունքերով ձևավորվել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 9 և «Հանրային ծառայության մասին» օրենքի 3 փոփոխություններից բաղկացած փաթեթ, որը աշխատանքային կարգով ներկայացվել է Արդարադատության նախարարություն՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի առաջիկա նիստում քննարկելու նպատակով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման շրջանակներում Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է հանդիպումներ համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների, քաղաքացիական ծառայողների և «Այթիռեսուրսիս» հիմնադրամի ներկայացուցիչների (Տեղեկատվական հարթակի ծրագիրը մշակող թիմ) հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը: Գնահատումների հիման վրա ՀՀ Վարչապետին ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:	«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման վերաբերյալ գնահատման արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթը քննարկվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում, որի վերաբերյալ շահագրգիռ մարմիններին տրվել են համապատասխան հանձնարարականներ (2022թ.)	Սույն միջոցառման շրջանակներում տեղեկատվական հարթակի միջոցով 2022 թվականի ընթացքում գնահատվել են էլեկտրոնային եղանակով ընթացող մրցույթների անցկացման թափանցիկությունը, «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների պահանջների պահպանումը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ուսումնասիրվել են և ներկայում էլ ուսումնասիրվում և գնահատվում են Տեղեկատվական հարթակով ընթացող մրցույթներին մասնակցելու թույլտվություն ստացած մասնակիցների փաստաթղթերը, համապատասխան մարմինների կողմից կայացրած որոշումները, հարցազրույցի փուլն անցկացնելու համար ձևավորված հանձնաժողովի կազմերին ներկայացվող պահանջների պահպանումը, հարցազրույցի փուլի գնահատման չափորոշիչների պահանջների պահպանումը, պաշտոնում նշանակված քաղաքացու փաստաթղթերի համապատասխանությունը, իրականացվել են ուղիղ հեռարձակմամբ ընթացող մրցույթների մշտադիտարկումներ, որի արդյունքում վերհանվել են նաև խախտումներ, այդ թվում՝ կասեցվել է մրցույթի թեստավորման փուլի ընթացքը: Տեղեկատվական հարթակի գործող լուծումները հնարավորություն են տալիս ապահովելու մրցույթների թափանցիկությունը. մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած քաղաքացու փաստաթղթերն ընդունվում են էլեկտրոնային եղանակով և քաղաքացու և պետական ծառայողի միջև շփումը բացակայում է: Քաղաքացուն ուղղված բոլոր ծանուցումները, մրցույթի թեստավորման նախապատրաստական աշխատանքները, մրցույթի ուղիղ	**Կատարված է մեծամասամբ**

		հեռարձակման ընթացքը իրականացվում է միայն էլեկտրոնային տիրույթում: Մրցույթի ընթացքի գործող իրավակարգավորումներն արժանացել են նաև ԵՄ փորձագետների բարձր գնահատականին: Առկա լուծումները հնարավորություն են տալիս չեզոքացնելու կոռուպցիոն ռիսկերը և ներկա պահին մրցույթների մասով իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Ինչ վերաբերում է «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման վերաբերյալ գնահատման արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթը Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում քննարկելուն, ապա, պայմանավորված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմի ընթացիկ ձևավորման աշխատանքներով՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստը չի կայացել: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2022 թվականի համար սահմանված միջոցառման ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցիչի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2022 թվականի համար նախատեսված աշխատանքներն կատարվել են մեծամասամբ:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Դեռևս ոչ բոլոր պետական մարմիններն են ընդգրկվել քաղաքացիական ծառայության համակարգ, հետևաբար գործառութային վերլուծություն և ըստ դրա առաջարկությունների փաթեթի մշակումը ձգձգվել է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 11

«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը մշակվել է և ներկայացվել է Ազգային ժողով:

Վերլուծվել և գնահատվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել են էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցներ:

Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար մշակվել են վերապատրաստման ծրագրեր, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: Բարեվարքության հարցերով կազմակերպիչներն ապահովվել են իրենց գործառույթների գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմով:

Վերստուգիչ ցուցիչ

Մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը (2022թ.):

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել է էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության առնվազն 2 ուղեցույց (2022թ.)

Բարեվարքության հարցերով կազմակերպիչներն ունեն իրենց գործունեությունն ապահովող համապատասխան գործիքակազմ (2022թ.):

Առնվազն պետական մարմինների շրջանակում իրականացվել է առնվազն 1 վերապատրաստում (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարողներ

Արդարադատության նախարարություն

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

"Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքության ծրագրի» աջակցությամբ, 2022 թվականի հունվարի 13-ին և 14-ին իրականացրել է աշխատաժողով՝ պետական կառավարման համակարգի մարմինների բարեվարքության հարցերով ավելի քան 60 կազմակերպիչների մասնակցությամբ: Աշխատաժողովի ընթացքում բարեվարքության հարցերով կազմակերպիչներին ներկայացվել է Հանձնաժողովի և վերջինիս կառուցվածքային ստորաբաժանումների/վարչությունների գործունեությունն ու դերակատարությունը, հայտարարագրման համակարգը և հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ մանրամասներ (նպատակը, կառուցվածքը, կապը բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության հետ): Ըստ էության, այս աշխատաժողովը բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ առաջին ուղղակի կոնտակտն էր/հաղորդակցությունը, որը հիմք հանդիսացավ շարունակական հանդիպումների/վերապատրաստումների համար:

Հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 23-ին, ԵԽ գործընկերության «Հանուն լավ կառավարման» 2-րդ ծրագրի շրջանակներում, կազմակերպել է մեկ այլ աշխատաժողով՝ նվիրված բարեվարքությանը և կոռուպցիայի կանխարգելմանը: Աշխատաժողովին մասնակցել են Հանձնաժողովի անդամները, ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) գործադիր քարտուղարը, ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաներ և միջազգային փորձագետներ, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ինչպես նաև՝ կառավարման համակարգի բարեվարքության հարցերով կազմակերպիչներ: Մասնակիցների հետ քննարկվել է Հանձնաժողովի կողմից մշակված հանրային ծառայողների վարքագծի կանոնների նախագիծը:

Ինչ վերաբերում է բարեվարքության հարցերով կազմակերպիչների նշանակմանը, ապա պետական մարմիններում, որոնք արդեն անցել են նոր չափանիշներով պաշտոնների գնահատման և դասակարգման համակարգին, նշանակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ (48 պետական մարմին): Այդ պետական մարմիններում հաստատվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը, սահմանվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների իրավունքները, պարտականությունները և գործառույթները, որոնք բխում են «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներից:

Դեռևս 2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ից պետական մարմիններում էլեկտրոնային եղանակով էթիկայի հանձնաժողովի ձևավորման նպատակով իրականացվել է քաղաքացիական ծառայողներին քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում ընդգրկելու գործընթացը, իսկ մինչև էլեկտրոնային հարթակի գործարկումը՝ էթիկայի հանձնաժողովը ձևավորվում էր ոչ էլեկտրոնային եղանակով՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վարվող, գրասենյակի ղեկավարի որոշմամբ հաստատված թեկնածուների ցանկից: Ներկայումս քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար քաղաքացիական ծառայողի երկուական թեկնածուներ են լրացրել փաստացի քաղաքացիական ծառայության համակարգում գտնվող բոլոր պետական մարմինները, հետևաբար քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում թեկնածուներ ընդգրկած պետական մարմիններում քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպիչը արդեն իսկ կարող է պատահականության սկզբունքով ձևավորել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 1-Ն որոշմամբ սահմանել է հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, իսկ Փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 697-Ն որոշմամբ հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների հիման վրա սահմանվել է քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը:

2022 թվականին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել և շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացվել «Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման» Ուղեցույցը:

Քաղաքացիական ծառայության գրասենյակը 2022 թվականին կազմակերպել է վերապատրաստում «Բարեվարքություն» թեմայով, որին մասնակցել են համապատասխան մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներ և էթիկայի հանձնաժողովների անդամության թեկնածուներ: Վերապատրաստումը վերաբերել է «Հանրային ծառայության մասին» օրենքից բխող հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների

խախտումների վերաբերյալ իրավակարգավորումներին և իրականացվել է Պետական կառավարման ակադեմիայի մասնագետների կողմից:

2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ԱՄՆ ՄԶԳ համագործակցության շրջանակում Արդարադատության նախարարության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կազմակերպվել և իրականացվել են թվով 6 մարզերում հանրային ծառայողների, այդ թվում բարեվարքության հարցերով կազմակերպիչների իրազեկման արշավներ-վերապատրաստումներ: Վերապատրաստման հիմնական բովանդակային նյութ է հանդիսացել բարեվարքության համակարգի բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, մասնավորապես վարքագծի տիպային կանոնների հետ ծանոթացումը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում իրականացված բարեփոխումները:

2023թ. հունվարի 2-ին ուժի մեջ է մտել «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-540-Ն օրենքը, որով ավելացվել են բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները, մասնավորապես՝ վերջինս նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին և հանրային ծառայողներին տրամադրում է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ նվերների ստացման իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք:

2023թ. հունվարի 27-ին Արդարադատության նախարարությունը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ համատեղ, կազմակերպել է պետական կառավարման համակարգի, ինչպես նաև անկախ և ինքնավար մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերապատրաստում: Բարեվարքության հարցերով կազմակերպիչներին ներկայացվել են հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը, այդ մարմինների համակարգում Արդարադատության նախարարության ունեցած դերն ու նշանակությունը, բարեվարքության համակարգի բաղադրիչները, անհրաժեշտությունն ու կազմակերպիչների դերն ու գործառույթները, այդ թվում՝ վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների համատեքստում:

2023թ. փետրվարի 2-ին նույն հարցերի շուրջ Արդարադատության նախարարությունը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ համատեղ, կազմակերպել է վերապատրաստում տեղական ինքնակառավարման մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Էթիկայի հանձնաժողովների ձևավորման և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության վերաբերյալ պետական մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների ղեկավարների հետ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակում կազմակերպվել է քննարկում: Միևնույն ժամանակ, շահագրգիռ անձանց մասնակցությունն ապահովվել է շարունակական վերապատրաստումների միջոցով:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը մշակվել է և ներկայացվել է Ազգային ժողով: Վերլուծվել և գնահատվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելու	Մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարության հարցերով կազմակերպիչների գործունեության իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը (2022թ.): Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել է էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության	Սույն միջոցառման իրականացման շրջանակներում հիմունքներով բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար շարունակական հիմունքներով իրականացվել են վերապատրաստումներ, քննարկվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների արդյունավետ իրականացման հարցերը: Մինչդեռ բարեվարքության կազմակերպիչների համար էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցները մշակված և հաստատված չեն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը մշակված չէ, ուստի սույն միջոցառումը կատարված չէ:	**Կատարված չէ**

համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել են էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցներ: Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար մշակվել են վերապատրաստման ծրագրեր, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:	առնվազն 2 ուղեցույց (2022թ.) Բարեվարքության հարցերով կազմակերպիչներն ունեն իրենց գործունեությունն ապահովող համապատասխան գործիքակազմ (2022թ.): Առնվազն պետական մարմինների շրջանակում իրականացվել է առնվազն 1 վերապատրաստում (2022թ.):		

Բարեվարքության հարցերով կազմակերպիչներն ապահովվել են իրենց գործառույթների գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմով:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից որպես խոչընդոտ նշվել են հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները և դրա հիման վրա քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագրքի ուշ սահմանումը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 12

«Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների սահմանում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա ընդունվել և հրապարակվել են քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները:

Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել են պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները, զուգահեռաբար սահմանվել են լիազորող նորմերը:

Վերստուգիչ ցուցիչ

Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոններն ընդունվել են (2022թ.):

Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա ընդունվել են քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները (2022թ.):

Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել են վարքագծի կանոններ (2022թ.):

Պաշտոնական կայքէջերում հրապարակվել են հանրային ծառայողի վարքագծի կանոնները և քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները, պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Արդարադատության նախարարություն
Համակատարողներ
Պետական կառավարման համակարգի մարմիններ

Կատարման կարգավիճակը (2022 թվական)
☐Կատարված է ամբողջությամբ
☐Կատարված է մեծամասամբ
"Կատարված է մասնակի
☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 15-րդ մասը, 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը, «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասը, Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 01-Ն որոշմամբ սահմանել է հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները:

Հարկ է նշել, որ հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մշակմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես՝ վերաբերելի միջազգային փորձի ուսումնասիրությունը, ուսումնասիրության արդյունքում առաջարկությունների դուրս բերումը/հավաքագրումը մեկնարկել էր դեռևս 2021 թվականին (երկրորդ կիսամյակում): Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մշակման նպատակով Եվրոպայի Խորհրդի միջազգային փորձագետների ներգրավմամբ կազմվել է վարքագծի տիպային կանոնների նախագիծը: Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի տիպային կանոնները, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի Գլոբալ հակակոռուպցիոն ուղեցույցը, Հանրային բարեվարքության վերաբերյալ ՏՀԶԿ Հանձնարարականը և այլ միջազգային փաստաթղթեր, ինչպես նաև՝ տարբեր երկրների ներպետական իրավական ակտեր: Նախագծի մշակման աշխատանքներում ուսումնասիրվել են նաև Հայաստանի Հանրապետության տարբեր պետական մարմինների կողմից արդեն իսկ մշակված և գործող ներքին կանոնագրքերը և դրանցում ներառված կարգավորումները:

Փորձագետների ներգրավմամբ կազմված Տիպային կանոնների նախագծի լրամշակումը և վերջնականացումը իրականացվել է Հանձնաժողովի կողմից: 2022 թվականի մարտի 15-ին Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների որոշման նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման www.e-draft.am հարթակում: 2022 թվականի մարտի 24-ից 31-ը իրականացվել են հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, Փաստաբանների պալատի, գիտակրթական ոլորտի, գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:

Նախագծի պաշտոնական շրջանառմանը և թիրախային խմբերի հետ հանրային քննարկումներին նախորդել է բարձր մակարդակի համաժողով՝ 2022 թվականի փոտրվարի 24-ին՝ նվիրված բարեվարքությանը և կոռուպցիայի կանխարգելմանը: Համաժողովին մասնակցել են Հանձնաժողովի անդամները, ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների (ԳՐԵԿՈ) գործադիր քարտուղարը, ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային փորձագետներ, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել է վարքագծի տիպային կանոնների նախագիծը, հավաքագրվել են նախագծի առնչությամբ բարձացված հարցերը և մասնակիցների դիտարկումները, որոնք ևս հիմք են հանդիսացել նախագծի լրամշակման/կատարելագործման համար:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշումը արդեն իսկ պաշտոնապես հրապարակվել է և ուժի մեջ է մտել սույն թվականի հունիսի 23-ին (ստորև հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164523): Տիպային կանոնները հասանելի են հայերեն և անգլերեն տարբերակներով:

Հանձնաժողովի կողմից Տիպային կանոնների սահմանմամբ, ըստ էության, մեկնարկել է վարքագծի կանոնների միասնական համակարգի առարկայացումը: Տիպային կանոնների սահմանմամբ Հանձնաժողովը նպատակ է հետապնդել ապահովել հանրային ծառայողների բարեվարք և կանխատեսելի վարքագիծը, բարեվարքության վերաբերյալ հանրային ծառայողների ընկալման միասնականությունը, նպաստել կոռուպցիայի նկատմամբ զգոնության ու անհանդուրժողականության ամրապնդմանը և վերջնարդյունքում՝ բարձրացնել հանրային ծառայության նկատմամբ հանրային վստահությունը:

Տիպային կանոնների հաստատումից հետո՝ 2022 թվականի հուլիսի 4-ին, Հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի համատեղ նախաձեռնությամբ ևտեղի է ունեցել Տիպային կանոնների պաշտոնական շնորհանդեսը՝ Հայաստանի հանրային կառույցների, քաղաքացիական հասարակության և միջազգային դոնոր կազմակերպությունների ավելի քան 60 բարձրաստիճան ներկայացուցիչների համար:

Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 756-Ա որոշման N 2 հավելվածի 13-րդ կետով սահմանված է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանելու մասին» փոխվարչապետի որոշման նախագիծը Կառավարություն է ներկացվում վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանվելուց մեկ ամիս հետո, ուստի Փոխվարչապետի 2022 թվականի

հոկտեմբերի 4-ի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» թիվ 697-Ն որոշմամբ հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների հիման վրա սահմանվել է քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը:

ՀՀ ՊԵԿ նախագահի 31.01.2022թ.-ի թիվ 92-Լ հրամանով հաստատվել են մաքսային ծառայողի վարքագծի (էթիկայի) կանոնները, իսկ ՀՀ ՊԵԿ նախագահի 16.01.2023թ.-ի թիվ 23-Լ հրամանով հաստատվել է հարկային ծառայողի վարքագծի կանոնագիրքը: Նշված հրամանները հրապարակվել են ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքէջում:

Պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները հաստատելու կապակցությամբ հայտնում ենք, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

2022 թվականի մարտի 15-ին Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների որոշման նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման https://www.e-draft.am/projects/4098 հարթակում: 2022 թվականի մարտի 24-ից 31-ը իրականացվել են հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, Փաստաբանների պալատի, գիտակրթական ոլորտի, գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:

Քննարկումների արդյունքում ստացված առաջարկությունները ամփոփվել են, Նախագիծը ներկայացվել է Արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացության: Իրավական փորձաքննության արդյունքում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա ընդունվել և հրապարակվել են քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները: Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել են պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները, զուգահեռաբար	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոններն ընդունվել են (2022թ.): Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա ընդունվել են քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները (2022թ.): Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի,	Սույն միջոցառման իրականացման շրջանակներում հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները և դրա հիման վրա քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները սահմանվել են: Բացի այդ, ապահովված է դրանց հրապարակայնությունը: Զուգահեռաբար անցկացվել են մի շարք վերապատրաստումներ: Մինչդեռ պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները դեռևս սահմանված չեն: Միևնույն ժամանակ, սահմանված չեն նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց համար վարքագծի կանոնները: Նման պայմաններում բնականաբար քննարկման առարկա չի կարող դրանց հրապարակայնության հարցը: Ուստի սույն միջոոցառումը մասնակի է կատարվել:	**Կատարված է մասնակի**

սահմանվել են լիազորող նորմերը:	Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել են վարքագծի կանոններ (2022թ.): Պաշտոնական կայքէջերում հրապարակվել են հանրային		

	ծառայողի վարքագծի կանոնները և քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները, պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները (2022թ.):		

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 13

Պատգամավորի, քննիչի, վարքագծի կանոնների սահմանում, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերանայում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հաշվառմամբ պատգամավորի և քննիչի վարքագծի կանոնների նախագծերը լրամշակվել են և հաստատվել են:
Դատախազների և դատավորների վարքագծի կանոնները վերանայվել են՝ հաշվի առնելով հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները:

Վերստուգիչ ցուցիչ

Միջազգային փորձի հիման վրա մշակված պատգամավորի,քննիչի վարքագծի կանոնները հաստատվել են (2022թ.):
Դատախազների և դատավորների վարքագծի կանոնները վերանայվել են (2022թ.):
Քննիչների և պատգամավորների համար իրականացվել է առնվազն 2 վերապատրաստում (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարողներ

Ազգային ժողով (համաձայնությամբ)
Քննչական կոմիտե (համաձայնությամբ)
Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող

Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)
Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)
Քննչական կոմիտե (համաձայնությամբ)
Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

"Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը): Պատգամավորների և քննիչների համար վարքագծի կանոնների սահմանումը դուրս է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշումը արդեն իսկ պաշտոնապես հրապարակվել է և ուժի մեջ է մտել սույն թվականի հունիսի 23-ին: Միևնույն ժամանակ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց), որի նախագիծը հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է և դրվել շրջանառության մեջ:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ներքին կարգապահական կանոններում նախատեսվող փոփոխություններով պայմանավորված՝ 2022 թվականի առաջին կիսամյակում ՀՀ քննչական կոմիտեում մշակվել է նոր իրավական ակտի նախագիծ, որում ներառվել է նաև ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները: ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները հաստատվել են ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 93-Լ հրամանով: Նշված հրամանով սահմանվում են ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնների հասկացությունը, սկզբունքները, Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի

վարքագծի ընդհանուր կանոնները, վարքագծի կանոնները ինչպես պաշտոնեական, այնպես էլ ոչ պաշտոնեական հարաբերություններում: Մասնավորապես՝ դրույթներ են նախատեսվել քննիչի բարոյական նկարագրի, օրենսդրության պահանջների պահպանման, գործընկերների և այլ անձանց հետ փոխհարաբերությունների, ծառայողական գույքը օգտագործելու տեսանկյունից նրա վարքագծի վերաբերյալ և այլն: Հարկ է նաև հավելել, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները հաստատելու մասին» թիվ 93-Լ հրամանն իրազեկելուց բացի, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի կողմից շրջաբերական է ուղարկվել բոլոր ստորաբաժանումների պետերին՝ վերոնշյալ հրամանի դրույթներն անձնակազմին ծանոթացնելու և իրազեկելու վերաբերյալ:

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից տիպային կանոնների հիման վրա արդեն իսկ մշակվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնների նախագիծը, որը ներկայացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ հավանություն ստանալու համար: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացվել է Ուղեցույցի նախագիծ, որի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից կհաստատվի Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի սահմանած տիպային կանոնների հիման վրա:»:

Ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի դիրքորոշման՝ նկատի ունենալով այն հագանամանքը, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարքագծի կանոնների սահմանումը հնարավոր է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Ուղեցույցի հաստատումից հետո, ուստի Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնների նախագիծը կհաստատվի դրանից հետո:

Դատախազների վարքագծի կանոնների վերանայման առնչությամբ Գլխավոր դատախազությունը է նշել, որ վերանայումը ևս պայմանավորված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Ուղեցույցի հաստամամբ:

Պատգամավորների վարքագծի կանոնների առնչությամբ դեռևս 2020 թվականի փետրվարին Ազգային ժողովում ստեղծվել է ոչ ֆորմալ աշխատանքային խումբ՝ էթիկայի մշտական հանձնաժողով ստեղծելու և էթիկայի կանոնագիրք կազմելու շուրջ Ազգային ժողովի պլանները նախագծելու և իրագործելու համար: 2020 թվականի ապրիլին Եվրոպայի Խորհրդի փորձագետների ներգրավմամբ մշակվել է «Ազգային ժողովի պատգամավորի վարքագծի կանոնագրքի առաջարկվող տարբերակ» փաստաթուղթը: 2020 թվականի հուլիսին աշխատանքային խումբը Ազգային Ժողովի երեք խմբակցություններին է ուղարկել նաև ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան, 39 ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից մշակված խորհրդարանական բարեվարքության և դրան առնչվող օրենսդրության քարտեզագրման շուրջ երկու զեկույցները: Բացի այդ, ձեռք

է բերվել պայմանավորվածություն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան, ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում էթիկայի կանոնագիրքը փորձագետների հետ համատեղ մշակելու մասին: Նույն ծրագրի շրջանակներում մշակվել է նաև անանուն հարցաշար, որը ուղարկվել է բոլոր պատգամավորներին որպես հավելյալ գործիք առանցքային հարցերի շուրջ նրանց դիրքորոշումները վեր հանելու համար: Հարցաշարի արդյունքները կամփոփվեն և կարտացոլվեն հետագա աշխատանքներում: Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնները ներկայումս գտնվում են մշակման փուլում:

Դատավորների վարքագծի կանոնների առնչությամբ հարկ է նշել, որ Ազգային ժողովի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունվել է ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-540-Ն օրենքը, ինչպես նաև ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-556-Ն սահմանադրական օրենքը, որով վերանայվել են դատավորի վարքագծի կանոնները:

2021-2022 թվականներին շուրջ 72 դատախազներ վերապատրաստվել են դատախազների վարքագծի կանոնների վերաբերյալ թեմայով: 2023 թվականի ապրիլ-մայիս և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին պլանավորված են դատախազների համար վերապատրաստման դասընթացներ դատախազի վարքագծի կաննոներ և անհամատեղելիության պահանջներ թեմաներով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Ուղեցույցը քննարկվում է շագարգիռ մարմինների հետ: Մշակված օրենսդրական ակտերը սահմանված կարգով կդրվեն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հաշվառմամբ պատգամավորի և քննիչի	Միջազգային փորձի հիման վրա մշակված պատգամավորի,քննիչի վարքագծի կանոնները հաստատվել են (2022թ.): Դատախազների և դատավորների	Սույն միջոցառման շրջանակներում հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հաշվառմամբ հաստատվել է Քննչական կոմիտեի քննիչների վարքագծի կանոնները: Պատգամավորների, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարքագծի կանոնները մշակվել են, իսկ դատախազների վարքագծի կանոնները կլրամշակվեն և կհաստատվեն Ուղեցույցի հաստատումից հետո: Դատավորների վարքագծի կանոնները վերանայվել են:	**Կատարված է մասնակի**

վարքագծի կանոնների նախագծերը լրամշակվել են և հաստատվել են: Դատախազների և դատավորների վարքագծի կանոնները վերանայվել են՝ հաշվի առնելով հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները:	վարքագծի կանոնները վերանայվել են (2022թ.) Քննիչների և պատգամավորների համար իրականացվել է առնվազն 2 վերապատրաստում (2022թ.)	Վերապատրաստումների առնչությամբ հարկ է նշել, որ թեև դատախազների համար անցկացվել են վերապատրաստումներ վարքագծի կանոնների վերաբերյալ թեմայով: Մնացյալ բոլոր պաշտոնատար անձանց համար վերապատրաստումները կանցկացվեն վարքագծի կանոնների հաստատումից հետո: Այսպիսով, սույն միջոցառումը մասնակի է իրականացվել:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Հակակոռուպցիոն կոմիտեի և Գլխավոր դատախազության դիրքորոշման համաձայն՝ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների և դատախազների վարքագծի կանոնների վերանայումը ձգձգվում է, քանի որ դա կարող է իրականացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Ուղեցույցի հաստատմումից հետո:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 14

Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Վերանայվել են քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգերը՝ գրոյականացնելով քաղաքացիական ծառայողների ներգրավման գործընթացում քաղաքական ազդեցությունը:
Սահմանվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման հստակ չափանիշներ

Վերստուգիչ ցուցիչ

Ընդունվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը (2022թ.):
Առնվազն 10 մրցույթ իրականացվել է նոր կարգով (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ

Համակատարողներ

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ
☐Կատարված է մեծամասամբ
☐Կատարված է մասնակի
☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
"Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 2 հավելվածի 15-րդ միջոցառման ապահովման հիմքում դրվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի 2-րդ բաղադրիչը, որը վերաբերվում է համալրման և ընտրության ուժեղացված համակարգերի համապատասխանությունը պետական կառավարման սկզբունքներին:

Ծրագրի աշխատանքները ավարտվել են 2022 թվականի մայիսի 30-ին: Միջոցառմանը կատարումը ձգձգող հանգամանքների մասին նախկինում ներկայացվել է հիմնավորում: Առաջարկությունների փաթեթի ներկայացմամբ ակնկալվում է մրցույթները կազմակերպել հնարավորինս թափանցիկ՝ բարձրացնել մրցութային հանձնաժողովների գործունեության նկատմամբ վստահությունը, հնարավորինս բացառել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց ազդեցությունը մրցութային հանձնաժողովի անդամների որոշում կայացնելու վրա: Բացի այդ, ամենօրյա աշխատանքի արդյունքում Քաղաքացիական ծառայության գրասենյակը համապատասխան մարմիններին իրազեկում է այն անձանց շրջանակի մասին, որոնք կարող են լինել մրցութի հարցազրույցի փուլն անցկացնող հանձնաժողովի անդամներ:

Միջոցառման շրջանակներում Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է հանդիպումներ համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների, քաղաքացիական ծառայողների հետ, քննարկումներ են կազմակերպվել Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի մասնագետների հետ: Վերջիններիս կողմից ներկայացվել են փորձագիտական վերլուծության արդյունքում վերհանված կոռուպցիոն ռիսկերի չեզոքացմանը կամ նվազեցմանը միտված առաջարկություններ:

Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից 2022 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում կազմակերպված համապատասխան մարմինների գլխավոր քարտուղարների 6 մրցույթներից հինգի դեպքում հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք չեն ներգրավվել:

Բացի այդ, ամենօրյա աշխատանքի արդյունքում Քաղաքացիական ծառայության գրասենյակը համապատասխան մարմիններին իրազեկում է այն անձանց շրջանակի մասին, որոնք կարող են լինել մրցութի հարցազրույցի փուլն անցկացնող հանձնաժողովի անդամության թեկնածուներ: Քաղաքացիական ծառայության գրասենյակը միջոցառման շրջանակներում ամենօրյա կտրվածքով Տեղեկատվական հարթակում շարունակում է ուսումնասիրել համապատասխան մարմինների կողմից ձևավորված հանձնաժողովի կազմերը և իրականացնել մոնիթորինգ: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հանձնաժողովների կազմերում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց մասնակցության շատ քիչ դեպքեր են արձանագրվել: Այդ համատեքստում

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի շրջանակներում՝ պետական կառավարման սկզբունքներին համապատասխան համալրման և ընտրության կայացած համակարգ ունենալու նպատակով, 2022 թվականին մարտ ամսին կազմակերպվել են վերապատրաստումներ համապատասխան մարմինների թվով 75 քաղաքացիական ծառայողների համար, որոնք եղել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հարցազրույց փուլի հանձնաժողովի անդամության թեկնածուներ: Վերապատրաստման շրջանակներում մասնակիցների շրջանում անցկացվել են հարցումներ համալրման գործընթացում առկա թերությունների մասով և, մեծամասամբ մատնանշված խնդիրները վերաբերվել են գործող իրավակարգավորումներին հանձնաժողովի անդամության թեկնածուների իրազեկված չլինելուն:

2022 թվականի սեպտեմբեր ամսից մինչ դեկտեմբեր ամսվա երկրորդ տասնօրյակը քաղաքացիական ծառայության գրասենյակի մասնագետների կողմից Պետական կառավարման ակադեմիայում իրականացվել են վերապատրաստումներ «Քաղաքացիական ծառայության օրենսդրություն» թեմայով, որի բաղադրիչներից մեկն էլ քաղաքացիական ծառայողներին մրցույթների հարցազրույցի փուլի ընթացքում հանձնաժողովի անդամության թեկնածուների դերին և պատասխանատվությանը իրազեկելն ու օրենսդրության ճիշտ կիրառումն ապահովելն էր: Հարցազրույցի փուլի իրավակարգավորումները և Տեղեկատվական հարթակի գործող լուծումները ներկա պահին հնարավորություն են տալիս ապահովելու մրցույթների թափանցիկությունը և արժանիքահեն համակարգի ձևավորումը, մասնավորապես՝ հարցազրույցի ավարտից անմիջապես հետո մրցույթի մասնակցի ներկայությամբ հանձնաժողովի անդամների կողմից հարցազրույցը գնահատելը, հարցազրույցի փուլի տեսաձայնագրումը այն կարևոր գործիքակազմերն են, որոնք կոչված են բարձրացնելու դիմորդի վստահությունը հանձնաժողովի անդամների նկատմամբ: Առկա լուծումները հնարավորություն են տալիս հնարավորինս չեզոքացնելու կոռուպցիոն ռիսկերը և ներկա պահին մրցույթների մասով իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը վերանայվում է:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման շրջանակներում Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է հանդիպումներ համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների հետ:

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

Վերանայվել են քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգերը՝ զրոյականացնելով քաղաքացիական ծառայողների ներգրավման գործընթացում քաղաքական ազդեցությունը: Սահմանվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման հստակ չափանիշներ	Ընդունվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը (2022թ.): Առնվազն 10 մրցույթ իրականացվել է նոր կարգով (2022թ.):	Սույն միջոցառման իրականացման շրջանակներում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի փորձագետների աջակցությամբ գնահատվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման համար ամրագրված պահանջները, ուսումնասիրվել են Տեղեկատվական հարթակի միջոցով ընթացող մրցույթների հանձնաժողովների կազմերի համապատասխանությունը իրավական ակտերի պահանջներին, գնահատվել են առկա ռիսկերը, որոնց հիման վրա ներկա պահին հանձնաժողովների ձևավորման մասով իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը վերանայվում է: Զուգահեռաբար իրականացվել են վերապատրաստումներ քաղաքացիական ծառայողների մրցույթների հարցազրույցի փուլի ընթացքում հանձնաժողովի անդամության թեկնածուների դերին և պատասխանատվությանն առնչվող թեմաներով: Սակայն հարկ է նշել, որ մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը չեն մշակել և ընդունվել, հետևաբար նոր կարգով մրցույթներ ևս չեն անցկացվել, ուստի սույն միջոցառումը կատարված չէ:	**Կատարված չէ**

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառմանը կատարումը ձգձգող հանգամանքները պայմանավորված են եղել արտակարգ և ռազմական դրության ռեժիմի հետևանքով Թվինինգ ծրագրի փորձագետների աշխատանքի կասեցմամբ և ըստ այդմ ժամկետների վերանայմամբ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 15

Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Քննարկվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության և հակակոռուպցիոն փորձաքննության համակարգերի ներդրման նպատակահարմարությունը՝ որպես լիազոր մարմին դիտարկելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Վերստուգիչ ցուցիչ

Քննարկվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության և հակակոռուպցիոն փորձաքննության համակարգերի ներդրման նպատակահարմարությունը՝ որպես լիազոր մարմին դիտարկելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (2021- 2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

"Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից առաջարկվել է որպես վարչական կոռուպցիայի վերահսկման առանցքային խնդիր ռազմավարության շրջանակներում վերանայել և կարգավորման ազդեցության գնահատումն այս պահին փոխարինել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությամբ: Առաջարկվում է իրավական ակտերի

նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության գործառույթի իրականացումը վերապահել Հանձնաժողովին, ինչն համատեղելի է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և ռիսկերի զսպման մեթոդաբանության մշակման գործառույթի հետ: Գործառույթը իրականացնելու նպատակով անհրաժեշտ կլինի Հանձնաժողովի կառուցվածքում գործող մեթոդական աջակցության վարչությունում ձևավորել նոր բաժին՝ երեք հաստիքով, որի ներուժը զարգացնելով Հանձնաժողովը հնարավորություն կունենա 2023 թվականից ապահովել նշված գործառույթի իրականացումը: Նման առաջարկը հիմնավորվում է նրանով, որ կարգավորման ազդեցության գնահատման (ԿԱԳ) համակարգի բարեփոխումն ու որպես համակարգ ամբողջական իրականացման ապահովումը նախատեսվում է Հանրային կառավարման բարեփոխումների նախագծով, որտեղ մասնավորապես նախատեսվում է.

- ԿԱԳ գործող կարգավորումների վերլուծություն և որակի գնահատում՝ միջազգային լավագույն պրակտիկաների հենանշմամբ,
- ԿԱԳ ապակենտրոնացված մոդելի ներդրում փուլային փորձարկման մեխանիզմով,
- ԿԱԳ կենտրոնական մարմնի լիարժեք կայացում,
- Պետական կառավարման մարմիններում ԿԱԳ համակարգի ամբողջական ներդրում, ներառյալ՝ գործարար միջավայրի ու մրցակցության, սոցիալական, առողջապահական, շրջակա միջավայրի և հանրային ֆինանսների ազդեցության ոլորտները:

Նշված հարցի լուծմանն ուղղված վերջանական դիրքորոշումը կկայցվի նոր՝ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Շահագրգիռ մարմինների հետ քննարկվել է, սակայն հանրային քննարկում չի անցկացվել 2022 թվականին:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Քննարկվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության և հակակոռուպցիոն փորձաքննության համակարգերի ներդրման	Քննարկվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության և հակակոռուպցիոն փորձաքննության համակարգերի ներդրման	Սույն միջոցառման կատարման շրջանակներում հարցն ըստ էության քննարկվել է և արդյունավետության հանգամանքով պայմանավորված՝ առաջարկվել է կարգավորման ազդեցության գնահատումն այս պահին փոխարինել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությամբ:	**Կատարված է մեծամասամբ**

նպատակահարմարությունը՝ որպես լիազոր մարմին դիտարկելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:	նպատակահարմարությունը՝ որպես լիազոր մարմին դիտարկելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (2021-2022թ.):	Քննարման արդյունքներով մոտեցում է որեդգրվել նշված հարցի լուծմանն ուղղված վերջանական լուծումը տալ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում, ուստի սույն միջոցառում մեծամասամբ է կատարված:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Միջոցառման կատարումը խոչընդոտող հանգամանքներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 16

Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում, ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Ընդունված կարգավորումների շարունակական կիրարկման ապահովում

Վերստուգիչ ցուցիչ

Ներդրվել է ծախսերի հայտարարագրման ինստիտուտը (2022թ.):

Պատասխանատու մարմին

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2022 թվականին ներկայացվող՝ 2021 թվականի տարեկան հայտարարագրերում առաջին անգամ տեղեկություններ են ներկայացվել հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույքի (գույքերի) կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի (գույքերի) կամ այն անշարժ գույքի (գույքերի) մասին, որից (որոնցից) փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն: Ի թիվս այդ տեղեկությունների՝ ներկայացվել են նաև տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերի վերաբերյալ: Հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հետևյալ ծախսերը.

1) հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախսը.

2) շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը.

3) ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը.

4) գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը.

5) վարկի մարմանն ուղղված վճարումները.

6) անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը.

7) ցանկացած այլ ծախս, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

1-6-րդ կետերով սահմանված հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, կամ նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հայտարարագրման գործընթացն առավել դյուրին դարձնելու համար տարբեր գերատեսչություններից նշանակված խորհրդատուների հետ տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ, որոնց ժամանակ մանրամասն ներկայացվել են հայտարարագրման գործող էլեկտրոնային համակարգի հետ աշխատանքները, հայտարարագրերի լրացման քայլերի հաջորդականությունը, առանձնահատկությունները:

Հայտարարատուներին հայտարարագրերի լրացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու նպատակով միջազգային գործընկերների աջակցությամբ ստեղծվել են հայտարարագրերի լրացման քայլերն ու առանձնահատկությունները նկարագրող տեսահոլովակներ:

Իրազեկման միջոցառումների արդյունքում ավելացել է հայտարարագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ հայտարարատուներից ստացված դիմումների թիվը:

Իրազեկման միջոցառումների արդյունքում մեծացել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր ներկայացրած պաշտոնատար անձանց թիվը՝ 90/10 հարաբերակցությամբ: «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց ուղարկվել են գրավոր ծանուցումներ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունենալու վերաբերյալ:

2023 թվականի փետրվարից գործարկվել է հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգը, ինչի արդյունքում առավել դյուրին են դառնալու հայտարարագրման գործընթացի կազմակերպման, հայտարարագրերի լրացման, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման, մարդկային գործոնի հնարավոր բացառման գործընթացները: Մասնավորապես, 2023 թվականի փետրվարին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տարբեր գերատեսչությունների հայտարարատու պաշտոնատար անձանց ներգրավվմամբ իրականացրել է նոր համակարգի փորձարկումը(հանդիպման վերաբերյալ մանրամասները հասանելի են հետևյալ հղումով https://moj.am/article/3481), որի շրջանակներում վեր հանված խնդիրների հաշվառմամբ շարունակվելու է համակարգի կատարելագործումը:

Միաժամանակ, 2022 թվականի դեկտեմբերի 7-ին Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները: Իրականացված օրենսդրական փոփոխություններով ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակը՝ ներառելով պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարներին: Նշված անձինք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջի հիման վրա կրելու են պարտականություն ներկայացնելու իրավիճակային հայտարարագիր: Վերոգրյալ կարգավորումները կգործեն 2024 թվականի հունվարի 1-ից:

Միաժամանակ, իրականացված փոփոխություններով վերանայվել են իրավիճակային հայտարարագրի հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, սահմանվել են իրավիճակային հայտարարագիր պահանջելու հիմքերը և իրականացվել են այլ փոփոխություններ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի ներդրման նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տարբեր գերատեսչությունների հայտարարատու պաշտոնատար անձանց ներգրավվմամբ իրականացրել է նոր համակարգի փորձարկումը (հանդիպման վերաբերյալ մանրամասները հասանելի են հետևյալ հղումով https://moj.am/article/3481):

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Ընդունված կարգավորումների շարունակական կիրարկման ապահովում	Ներդրվել է ծախսերի հայտարարագրման ինստիտուտը (2022թ.)	Սույն միջոցառման կատարման շրջանակներում դեռևս 2021 թվականի կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներդրվել է ծախսերի հայտարարագրման ինստիտուտը, իսկ 2022 թվականից հայտարարատու պաշտոնատար անձինք արդեն իսկ հայտարարագրում են նաև ծախսերը: Նշվածից հետևում է, որ սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

   Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 17

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Վերստուգիչ ցուցիչ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցմանն ուղղված օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Նշված փաթեթով, ի թիվս այլնի, հստակեցվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, սահմանվել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում այն հավատարմագրային կառավարման կարող են հանձնել ֆինանսական շուկայի մասնագիտացված անձանց: Բացի այդ, վերանայվել են շահերի բախման վերաբերյալ կարգավորումները (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)

Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

Հայաստանի Հանրապետության գլխավորդատախազություն (համաձայնությամբ)

Քննչական կոմիտե (համաձայնությամբ)

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ ☐Կատարված է մասնակի ☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է ☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

2022 թվականի դեկտեմբերի 7-ին Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները: Կատարելագործվել են շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և նվերների ինստիտուտի վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները:

Մասնավորապես՝ վերանայվել են շահերի բախման հասկացությունը, շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված գործիքների, շահերի բախման կարգավորումների դեպքում պատասխանատվության միջոցների շրջանակը: Որպես շահերի բախման դրսևորում՝ օրենսդրական մակարդակով ամրագրվել է պոտենցիալ շահերի բախման իրավիճակը: Այս համատեքստում հարկ է նշել, որ սահմանափակվել է անհարկի հայեցողության դրսևորման հնարավորությունը, ինչպես նաև, ներդրվել են կարգավորումներ, որոնք հնարավորություն կընձեռեն կիրառել պատասխանատվության համապատասխան միջոցներ:

Միաժամանակ, սույն օրենքի շրջանակում տրվել է «մասնավոր շահ» հասկացությունը: Միջազգային փորձի հաշվառմամբ կատարելագործվել է հավատարմագրային կառավարման ինստիտուտը: Ընդլայնվել է փոխկապակցված անձանց շրջանակը, սահմանվել պաշտոնատար անձի և հավատարմագրային կառավարչի փոխկապակցվածությունը բացառող կարգավորում: Զուգահեռաբար հավատարմագրային կառավարիչների համար սահմանվել է մասնագիտացվածության պահանջ: Փոխկապակցված անձանց շրջանակում ներառվել են ոչ միայն ազգակցական կապերով կապված անձինք, այլև ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերությունների մեջ գտնվող, ինչպես նաև առևտրային իրավաբանական անձինք և այլն:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Նախագծերը ուղարկվել են շահագրգիռ անձանց, դրանց կարգավորումների վերաբերյալ ապահովել է քաղաքացիական հասարակության իրազեկվածությունը, կազմակերպվել են համապատասխան հանրային քննարկումներ (https://www.e-draft.am/projects/4314):

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

Ազգային ժողով է ներկայացվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցման ուղղված օրենսդրական փաթեթը:	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցմանն ուղղված օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Նշված փաթեթով, ի թիվս այլնի, հստակեցվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, սահմանվել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն	Սույն միջոցառման իրականացման շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-540-Ն օրենքով հստակեցվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները: Արգելվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հանրային ծառայողին փոխկապակցված անձի հետ կնքել առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիր: Բացի այդ, վերացվել է «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով առկա բացառությունը, որի արդյունքում առևտրային կազմակերպության մասնաբաժնի կառավարումը կարող է իրականացվել միայն լիցենզավորված կազմակերպության կողմից, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հավատարմագրային կառավարման գործունեությունը դարձվել է ծանուցվող գործունեություն, որը նույնպես հնարավորություն կընձեռի ապահովել գործունեության մասնագիտացվածությունը: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի կառավարման գրանցումը դարձել է պարտադիր: Արդյունքում, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի և բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի կառավարումը կդառնա վերահսկելի և կբացառվի պաշտոնյայի հետ փոխկապակցված անձանց որպես հավատարմագրային	**Կատարված է ամբողջությամբ**

	(բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում այն հավատարմագրային կառավարման կարող են հանձնել ֆինանսական շուկայի մասնագիտացված անձանց: Բացի այդ, վերանայվել են շահերի բախման վերաբերյալ կարգավորումները (2022թ.):	կառավարիչ հանդես գալը: հարկ է նաև հավելել, որ սահմանվել է հստակ ժամկետ, որի ընթացքում պաշտոնյան պարտավոր կլինի պաշտոնավարման ընթացքում ձեռք բերված մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման: Նշվածից բացի, Խմբագրվել է ձեռնարկատիրական գործունեության հասկացությունը: Այսպիսով, սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառումն անխափան իրականացվել է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 18

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում և դրա նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Մշակվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանման ուղղված օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթ:

Նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով:

Զուգահեռաբար մշակվել է նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքը:

Վերստուգիչ ցուցիչ

Նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Զուգահեռաբար մեկնարկել են նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները (2022թ):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարողներ

Արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարողներ

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1.Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

2022 թվականի դեկտեմբերի 7-ին Ազգային Ժողովի ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքներով կարգավորվել են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված հիմնահարցերը: Մասնավորապես՝ հստակեցվել են նվերներ ընդունելու արգելքին առնչվող կարգավորումները, սահմանվել է այն նվերների շրջանակը, որը թույլատրելի է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար:

Ըստ նոր կարգավորումների՝ թույլատրելի նվերների շրջանակը ընդգրկում է պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը, ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը, կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքում, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

Սահմանվել է կարգավորվում առ այն, որ եթե պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերների կամ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերների արժեքը գերազանցի վաթսուն հազար ՀՀ դրամը, ապա դա կհամարվի պետական կամ համայնքային սեփականություն: Ուստի, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

Ըստ նոր կարգավորումների՝ որպեսզի ստացվող նվերը համարվի թույլատրելի, վերջինիս արժեքը չպետք է գերազանցի քառասուն հազար ՀՀ դրամը: Սահմանվել է նաև, որ քառասուն հազար ՀՀ դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման, բացառությամբ նույն աղբյուրից վեց ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (հինգ և ավելի) բնույթ կրող դեպքերի: Չեն հաշվառվի նաև օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից հրապարակային կարգով տրված արարողակարգային նվերները:

Իրականացված փոփոխությունների համաձայն՝ ներդրվելու է նվերների ռեեստրը, որի արդյունքում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերների հաշվառումը և օրենքով սահմանված մյուս

գործընթացները իրականացվելու են միասնական մեթոդաբանությամբ և ապահովվելու են վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:

Կարևոր է հիշատակել նաև այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նախատեսվել են պատասխանատվության միջոցներ այն դեպքերի կապակցությամբ, երբ խախտվում են նվերներ ընդունելու կամ դրանք սահմանված կարգով հաշվառելու կարգերը:

Զուգահեռաբար, նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը անցել են հանրային քննարկում, դրանց վերաբերյալ իրազեկվել են շահագրգիռ անձինք և քաղաքացիական հասարակությունը (https://www.e-draft.am/projects/4336):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Մշակվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված	Նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Զուգահեռաբար մեկնարկել են նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման	2022 թվականի դեկտեմբերի 7-ին Ազգային Ժողովի ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքներով կարգավորվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված հիմնահարցերը: Զուգահեռաբար, մեկնարկել են նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները: Այսպիսով, սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանման ուղղված օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթ: Նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Զուգահեռաբար մշակվել է նվերների ռեեստրի տեխնիկական	աշխատանքները (2022թ):		

առաջադրանքը:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Միջոցառումը անխոչընդոտ իրականացվել է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 19

Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության ապահովում, Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության դիտարկում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել կուսակցութունների թափանցիկության ապահովման նպատակով կառուցակարգեր սահմանող իրավական ակտերի նախագծերի փաթեթ:

Շահագրգիռ կողմերի հետ քննարկվել է Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության հարցը:

Վերստուգիչ ցուցիչ

Իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով (2022թ.):

Բարձրացվել է կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը (2022թ.):

Պատասխանատու մարմին

Հիմնական կատարողներ

Արդարադատության նախարարություն

Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարողներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Ազգային ժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

"Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Դեռևս 2020 թվականի դեկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվել էին «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և հարակից օրենքները, որոնցով կուսակցությունների ընթացիկ և տարեկան ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից փոխանցվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ որպես մասնագիտացված անկախ մարմնի:

Միաժամանակ, 2022 թվականի մայիսի 4-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքները: Նշված օրենսդրական փոփոխությունների ապահովվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության պատշաճ իրականացումը: Մասնավորապես, համաձայն նշված փոփոխությունների՝ Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Միաժամանակ, վերանայվել են կուսակցության ղեկավար մարմինների կողմից տարեկան հայտարարագրերի ներկայացման, կուսակցության տարեկան հաշվետվության հրապարակման ժամկետները, իրականացվեցին գործնականում առաջացած խնդիրների լուծմանն ուղղված այլ փոփոխություններ:

Զուգահեռաբար ուսումնասիրվել է Իռլանդիայի, Լեհաստանի, Լիտվայի, Ավստրիայի լոբբիստական գործունեության փորձը: Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել է «Լոբբիստական գործունեության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի նպատակն է ձևավորել լոբբինգ ինստիտուտը, որը կնպաստի իշխանության և քաղաքացիների կապի ամրացմանը և հնարավորություն կընձեռնի ներկայացնել քաղաքացիների, կազմակերպությունների շահերը հատուկ մարմնի միջոցով: Նշված ինստիտուտի կարգավորման հարցը դեռևս քննարկման փուլում է:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

2022 թվականի մայիսի 4-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքները, որոնց նախագծերը

ներկայացվել էին հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (https://www.e-draft.am/en/projects/3939/justification):

Միաժամանակ 2023 թվականի հունվար ամսին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և շահագրգիռ մարմինների մասնակցությամբ կազմակերպվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի կիրառման արդյունքում վերհանված խնդիրների վերաբերյալ հանրային քննարկում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել իրավական ակտերի նախագծերի փաթեթ: Շահագրգիռ կողմերի հետ քննարկվել է Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության հարցը:	Իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով (2022թ.) Բարձրացվել է կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը	Սույն միջոցառման կատարման շրջանակներում ներդրվել են կուսակցությունների ֆինանսական թափանցիկությանն ուղղված կառուցակարգերը, սակայն լոբբիստական գործունեության կագրավորման հարցը քննարկման փուլում է: Ուստի, սույն միջոցառումը մասնակի է կատարվել:	**Կատարված է մասնակի**

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտող հանգամանքներ չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 20

Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Գործարար ոլորտի կազմակերպությունների համար հակակոռուպցիոն համապատասխանություն թեմայով վերապատրաստման դասընթացներ են անցկացվել:

Ձևավորվել է բիզնես բարեվարքության ակումբ, որին անդամակցում են մասնավոր ոլորտի ընկերությունները:

Հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը համապատասխան իրավական ակտերով սահմանվել է որպես առավելություն տվող չափանիշ գործարար ոլորտի ներկայացուցիչներին պետական աջակցություն տրամադրելիս:

Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերով:

Վերստուգիչ ցուցիչ

Գործարար ոլորտի համար նախատեսված պետական աջակցության առնվազն 1 ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը համապատասխան իրավական ակտերով սահմանվել է որպես առավելություն տվող չափանիշ (2022թ.):

Առնվազն 10 ընկերությունում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներ (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Էկոնոմիկայի նախարարություն

«Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)

Համակատարողներ

ՀՀ արդարադատության նախարարություն

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

"Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Միացյալ Թագավորության Լավ կառավարման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Կորպորատիվ կառավարման և ֆինանսական հաշվետվողականության բարելավված կանոնակարգ» ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության անմիջական մասնակցությամբ «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» (PwC) ընկերության ու Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագիծը (այսուհետ՝ Կանոնագրքի նախագիծ), որով ի թիվս այլ սկզբունքների՝ ամրագրված են մասնավոր հատվածում էթիկական և հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող սկզբունքները, որոնց իրագործման պարտականությունը դրվել է տնօրենների խորհրդի (խորհրդի) վրա:

Բացի այդ, Կանոնագրքի նախագծում նախատեսված է, որ կազմակերպություններում պետք է ձևավորվի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ, որի կարևոր բաղադրիչներից է համապատասխանության գործառույթը: Կանոնագրքի նախագծով այս գործառույթն իրականացնող անձի վրա դրված է նաև հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրմանը նպաստելու և դրա նկատմամբ մշտադիտարկումն իրականացնելու պարտականությունները:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կանոնագրքի մշակման (այդ թվում՝ համապատասխանության ծրագրերին առնչվող դրույթների մասով) նախարարությունը համագործակցում է Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի հետ, իսկ սույն կետով նախատեսված միջոցառման իրականացման համար որպես հիմնական կատարող մարմին, բացի ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ արդարադատության նախարարություններից, հանդես են գալիս նաև հասարակական կազմակերպությունները՝ էկոնոմիկայի նախարարության և վերջինիս միջև ստորագրվել է մտադրությունների մասին հուշագիր, որի նպատակն է համատեղ ջանքերով նպաստել Հայաստանի գործարար հատվածում բարեվարքության և հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունմանը, խթանել պետություն և գործարար համայնք համագործակցությունը հակակոռուպցիոն համապատասխանության ապահովման հարցերում:

Էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկվել է մշակման փուլում գտնվող «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության բնագավառում ներդրումային ծրագրերի չափանիշները, գնահատման, հաստատման, աջակցության

տրամադրման կարգը և չափը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը, այլ չափանիշների համատեքստում, դիտարկել որպես պետական աջակցության տրամադրման պահանջ: Ընթանում են աշխատանքներ՝ ուղղված Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունմանը:

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից ձևավորված և առաջնորդվող Բիզնեսի բարեվարքության ակումբի առաքելությունն է բարեվարքության մշակույթի միջոցով բարելավել Հայաստանի գործարար միջավայրը: Բիզնեսի բարեվարքության ակումբը խթանում է հայ գործարարների հավաքական գործողությունները կորպորատիվ կառավարմանն առնչվող խնդիրների շուրջ: Բիզնեսի բարեվարքության ակումբի նպատակն է բարձրացնել Հայաստանի գործարար միջավայրի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, վստահությունը երկրի տնտեսական համակարգի նկատմամբ և աջակցել տնտեսություն երկարաժամկետ, համբերատար ու կառուցողական ներդրումների ներգրավմանը, նպաստել գործարար հատվածի կենսունակությանը և խթանել ներառական տնտեսական աճը: Բիզնես բարեվարության ակումբի շրջանակներում շուրջ 22 ընկերություններում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր:

Բիզնեսի բարեվարքության ակումբը դարձել է աշխարհի հակակոռուպցիոն հավաքական 260 նախաձեռնությունների ընտանիքի անդամ:

Ակումբը ներառվել է Բազելի կառավարման ինստիտուտի հավաքական հակակոռուպցիոն նախաձեռնությունների ռեեստրում: Սա Ակումբի միջազգային ճանաչման սկիզբն է և կարևոր իրադարձություն ոչ միայն Բիզնեսի բարեվարքության ակումբի, այլև դրա յուրաքանչյուր անդամի համար:

Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի նպատակով Բազելի կառավարման ինստիտուտն ամբողջ աշխարհում համագործակցում է պետական և մասնավոր հատվածի գործընկերների հետ: Բազելի կառավարման ինստիտուտի Հավաքական գործողությունների B20 կենտրոնը կոռուպցիայի դեմ պայքարի հավաքական գործողությունների ռեսուրսային և տեղեկատվական կենտրոն է, որի նպատակն է ամրապնդել կոռուպցիայից զերծ գործարար պրակտիկան:

Հարկ է նշել, որ Բիզնեսի բարեվարքության ակումբի մասնակիցները 2022 թվականի փետրվարի 18-ին հաստատել են Ակումբին մասնակցության կանոնակարգի և մասնակցության վճարների նախագծերը: Բիզնեսի բարեվարքության ակումբին մասնակցության կանոնակարգը կարգավորում է Ակումբին մասնակցելու, մասնակցությունը դադարեցնելու, մասնակցության հանձնախմբի ձևավորման և վերջինիս գործունեության հետ կապված հարաբերությունները: Կանոնակարգը նախատեսում է մի շարք քաղաքականություններ, որոնք վերաբերում են Ակումբի միջոցառումներին մասնակիցների հաճախումներին, նրանց համապատասխանության վերլուծությանը և բարեվարքության առաջընթացի մասին հաշվետվականությանը:

Բիզնեսի բարեվարքության ակումբը նոր մասնակիցների հավաքագրման գործընթացը կազմակերպելու նպատակով ձևավորել է մասնակցության հանձնախումբ: Համաձայն Բիզնեսի բարեվարքության ակումբի մասնակցության կանոնակարգի՝

մասնակցության հանձնախումբը քննարկում է Ակումբին մասնակցության հայտերը, մասնակցությունը դադարեցնելու հիմքերը, որոշում է կայացնում մասնակցության հետ կապված այլ հարցերի վերաբերյալ:

Մասնակցության հանձնախումբն ունի հետևյալ կազմը՝

- Նվարդ Անանյան, «Քարդ Ագրոսերվիս» ՓԲԸ տնօրեն, «Քարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ խորհրդի անդամ,
- Արգամ Աբրահամյան, «Սթեփ ափ» ՍՊԸ տնօրեն, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ՓԲԸ տնօրինության անդամ,
- Նարինե Մելիքյան, Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի տնօրեն, «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի խորհրդի անդամ:

Բիզնեսի բարեվարքության ակումբի գործունեության մեկ տարին լրանալու առիթով CIPE-ի բլոգում նյութ է հրապարակվել:

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի՝ որպես Բիզնեսի բարեվարքության ակումբի քարտուղարությունն իրականացնող կառույցի կողմից մշակվել է Ակումբի անդամների՝ Հակակոռուպցիոն հռչակագրի և լավ կառավարման սկզբունքներին համապատասխանության վերլուծության մեթոդաբանություն և գնահատման թերթիկ, որոնք գտնվում են քննարկման փուլում:

Հարկ է նշել, որ թողարկվել է Բիզնեսի բարեվարքության ակումբի #1(3) լրատուն , որի առանցքը Բիզնեսի բարեվարքության ակումբի գործունեությունն է ու վերջին զարգացումները: Լրատուի էջերում անդրադարձ է կատարվել նաև միջազգային զարգացումներին, հատկապես տարվա իրադարձություն համարվող BlackRock-ի գործադիր տնօրեն և նախագահ Լարի Ֆինկի տարեկան ուղերձին, բրիտանական ընկերություններում բազմազանությունն ու ներառականությունը խթանող նոր կանոններին, Իլոն Մասկի Twitter-յան գործարքին և այլ միջազգային կարևոր իրադարձությունների:

2022թ. հունիսի 17-ին Կորպորատիվ Կառավարման Կենտրոնն կազմակերպել է իր ամենամյա համաժողովը՝ «Կորպորատիվ կառավարում. բարեվարքությունը գործարար համայնքում» խորագրի ներքո: Համաժողովում բացման խոսքով հանդես է եկել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Երանուհի Թումանյանցը, ով կարևորել էր գործարար համայնքում հակակոռուպցիոն համապատասխանության և բարեվարքության մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը՝ որպես գործարար միջավայրի առողջացման ու կենսունակության ապահովման գրավականի: Համաժողովին մասնակցել են Հայաստանի գործարար, հանրային, հասարակական հատվածները, ինչպես նաև միջազգային կառույցները ներկայացնող շուրջ 100 մասնակից:

2022 թվականի դեկտեմբերի 16-ին Արդարադատության նախարարությունը «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ, ինչպես նաև «Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության» կենտրոնի աջակցությամբ իրականացրեց վերապատրաստում «Կոռուպցիայի դեմ պայքարը և դրանում գործարար ոլորտի դերակատարումը» թեմայով: Դասընթացին մասնակցում էին գործարար ոլորտի, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Արդարադատության նախարարության Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության ներկայացուցիչը ներկայացրել է կոռուպցիայի դեմ պայքարում

Հայաստանի Հանրապետության վերջին 4 տարիների ձեռքբերումները, գործարար ոլորտին առնչվող հակակոռուպցիոն բարեփոխումները, գործարար ոլորտի համար պարտավորություններ և իրավական հետևանքներ նախատեսող փոփոխությունները (իրական շահառուների բացահայտում, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն և այլն): Վերապատրաստման մասնակիցներին ներկայացվել են նաև ներկայումս մշակման փուլում գտնվող նոր հակակոռուպցիոն ռազմավարությամբ գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համար նախատեսվող բարեփոխումների ուղղությունները: Արդարադատության նախարարության ներկայացուցիչը մասնակցիներին ներկայացրել է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Կառավարության շարունակական աշխատանքների մասին, ինչպես նաև ընդգծել է կոռուպցիայի դեմ պայքարի շարունակականության անհրաժեշտությունը՝ պետականությունն ամրապնդելու և ուժեղ տնտեսություն ունեցող պետություն կառուցելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի տնօրեն Նարինե Մելիքյանը ներկայացրել է բիզնեսի հակակոռուպցիոն անհատական և հավաքական գործողությունների դերակատարումը կոռուպցիայի կանխարգելման հարցերում, ինչպես նաև մանրամասնել է Բիզնեսի բարեվարքության ակումբի՝ որպես Հայաստանի Հանրապետության առաջին հակակոռուպցիոն հավաքական նախաձեռնության գործունեության հիմնական ուղղությունները և զարգացման հեռանկարները:

Բիզնեսի բարեվարքության ակումբի անդամների բաց հանդիպումների ձևաչափում 2022 թվականի մարտի 16-ին կազմակերպել էր «Ինչպե՞ս դառնալ հուսալի գործընկեր միջազգային գործարար ասպարեզում» վարպետության դասը, որը վարել էր միջազգային փորձագետ, RSM Netherlands Business Consulting Services B.V.-ի կորպորատիվ կառավարման և կորպորատիվ մշակույթի գծով տնօրեն Մարլին Յենսը.

Բիզնեսի բարեվարքության ակումբի մասնակից «Բի-Դի-Օ Արմենիա» ընկերությունը Orion Worldwide Innovations-ի հետ համատեղ 2022 թվականի նոյեմբերի 7–ից 8-ը Երևանում կազմակերպել էր «Այլընտրանքային ներդրումները Հայաստանում» միջազգային համաժողովը, որի ընթացքում կարևորվել է ընկերությունների կորպորատիվ կառավարման որակի բարձրացման հարցում private equity funds-ի դերը:

Բիզնեսի բարեվարքության ակումբի կայացման հարցում Կորպորատիվ Կառավարման Կենտրոնին աջակցել է Միջազգային Մասնավոր Ձեռնարկատիրության Կենտրոնը «Եվրասիա. ձևավորել բարենպաստ պայմաններ կառուցողական կապիտալի համար, 2-րդ փուլ» և «Եվրոպա և Եվրասիա. կառուցողական կապիտալի համար բարենպաստ միջավայրի ձևավորում՝ 4-րդ փուլ» ծրագրերի շրջանակում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացման շրջանակներում շահարգիռ անձանց ներգրավվածությունն ապահովել է սույն միջոցառման «Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը» բաժնով ներկայացված կարգով:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Գործարար ոլորտի կազմակերպությունների համար հակակոռուպցիոն համապատասխանություն թեմայով վերապատրաստման դասընթացներ են անցկացվել: Ձևավորվել է բիզնես բարեվարքության ակումբ, որին անդամակցում են մասնավոր ոլորտի ընկերությունները: Հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը համապատասխան իրավական ակտերով սահմանվել է որպես առավելություն տվող չափանիշ գործարար ոլորտի ներկայացուցիչներին	Գործարար ոլորտի համար նախատեսված պետական աջակցության առնվազն 1 ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը համապատասխան իրավական ակտերով սահմանվել է որպես առավելություն տվող չափանիշ (2022թ.): Առնվազն 10 ընկերությունում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներ (2022թ.):	Սույն միջոցառման կատարման շրջանակներում բիզնես բարեվարության ակումբի մասնակց շուրջ 22 ընկերություններում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր: Բացի այդ, մշակվել է պետական աջակցության ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը որպես առավելություն տվող չափանիշի սայմանմանն ուղղված իրավական ակտի նախագիծը: Նկատի ունենալով, որ նշյալ նախագիծը դեռ ներքին քննարկումների փուլում է՝ սույն միջոցառումը մասնակի է կատարվել:	**Կատարվել է մասնակի**

պետական աջակցություն տրամադրելիս: Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերով:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Ըստ Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի՝ Հայաստանում լավ կառավարման սկզբունքների, այդ թվում՝ բարեվարքության տարածման հարցում իր գործունեությունը կաշկանդող գործոն է շահակիցների (ոչ միայն գործարար հատվածի) անտարբերությունը, որը որոշ դեպքերում վերածվում է դիմադրության: Ինչ վերաբերում է խթանող գործոններին, ապա Ըստ Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի անհրաժեշտ է արագացնել ՀՀ կորպորատիվ կառավարման վերանայված կանոնագրքի ընդունումը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 21

Գնումների ոլորտի բարելավում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել է նախագծերի փաթեթ՝ ուղղված գնման գործընթացների պարզեցմանը, գնման գործընթացի որոշակիության ապահովմանը, արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու պարագայում՝ գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորության ստեղծմանը:

Վերստուգիչ ցուցիչ

Գնումների համակարգի կատարելագործմանն ուղղված նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով (2022թ.):
Գնումների համակարգը կատարելագործվել է (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Ֆինանսների նախարարություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Դեռևս 2021 թվականին մշակվել և Ազգային ժողովի կողմից 2022 հունվարի 21-ին ընդունվել են գնումների ոլորտի օրենսդրության բարելավմանն ուղղված օրենսդրական ակտերը, որոնց նպատակն է վերափոխել գնումների բողոքարկման համակարգը՝ հաշվի առնելով նաև ԱՀԿ պետական գնումների համաձայնագրով և ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների պահանջները: Գործող կարգավորման համաձայն՝ գնման ընթացակարգի արդյունքները կարող են բողոքարկվել ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով: Բողոք ներկայացնելու հնարավորություն ունի ցանկացած անձ: Կատարված ախտորոշումները ցույց են տվել, որ արտադատական բողոքարկման համակարգն արդյունավետ չէ այն տեսակետից, որ կայացվող որոշումները գնումների մասին ՀՀ օրենսդրության տեսանկյունից խնդրահարույց են, կայացվում են միմյանց հակասող որոշումներ, որոնց հետևանքով կամ այդ որոշումները բողոքարկվում են դատարաններում կամ գնման ընթացակարգերը հայտարարվում են չկայացած, ինչը դրանք կազմակերպելու և անցկացնելու տեսակետից հանգեցնում է ծրագրերի ձախողման, դժգոհությունների և ֆինանսական կորուստների:

Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու պարագայում ռեսուրսների համախմբման և գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորության ստեղծել, ինչը դրական ազդեցություն կունենա նաև պետական համակարգում նախաձեռնված բարեփոխումների գործընթացի վրա: Մասնավորապես, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած միջոցների հաշվին գնումների կատարման ժամանակ կիրառվում են ազգային ռեժիմից տարբերվող ընթացակարգեր, որպիսի պայմաններում խնդրահարույց է գնումների ընթացակարգերի կազմակերպման համար միասնական կանոններ չունենալու հանգամանքը, որը հանգեցնում է նաև դրանց կազմակերպման և կառավարման համար տարբեր մասնագիտական կարողություններ և աշխատանքային ունակություններ ունեցող մասնագետների անհրաժեշտության: Միասնական կանոնների բացակայությունը որոշակի բարդություններ է առաջացնում նաև գնման գործընթացների հնարավոր մասնակիցների համար: Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու պարագայում կստեղծվեն ռեսուրսների համախմբման և գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորություն, ինչը դրական ազդեցություն կունենա նաև պետական համակարգում նախաձեռնված բարեփոխումների գործընթացի վրա: Միաժամանակ Հայաստանի՝ ԱՀԿ պետական գնումների համաձայնագրին անդամակցությունը հնարավորություն է ընձեռում նշված գնումները ազգային ռեժիմով իրականացնելու նախադրյալներ ստեղծել: Այս կապակցությամբ Կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային Բանկի կողմից իրականացվել է գնումների ազգային օրենսդրության և ընթացակարգերի ուսումնասիրություն, որի արդյունքում ներկայացվել են նոր սկսվող ներդրումային ծրագրերի իրականացման համար գնումների այլընտրանքային պայմանավորվածությունների իրականացման այն պայմանները, որոնք գնումների հետ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում նախատեսվելու դեպքում հնարավոր կլինի կիրառել ազգային ընթացակարգերի նկատմամբ: Նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվել են նշվածի առնչությամբ այն պայմանները, որոնք կարող են սահմանվել օրենքով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերի փաթեթը քննարկվել է շահագրգիռ պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միավորների ներկայացուցիչների հետ: Նախագծերը դրվել են նաև հանրային քննարկման www.e-draft.am հարթակում (https://www.e-draft.am/projects/2300/about):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել է նախագծերի փաթեթ՝ ուղղված գնման գործընթացների պարզեցմանը, գնման գործընթացի որոշակիության ապահովմանը, արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու	Գնումների համակարգի կատարելագործմանն ուղղված նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով (2022թ.): Գնումների համակարգը կատարելագործվել է (2022թ.):	Սույն միջոցառման կատարման շրջանակներում գնումների համակարգի կատարելագործմանն ուղղված օրենսդրական ակտերի փաթեթը ընդունվել է և ըստ այդմ գնումների համակարգը կատարելագործվել է, ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարվել է:	**Կատարված է ամբողջությամբ**

պարագայում՝ գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորության ստեղծմանը:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

   Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 22

Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Ճանապարհային քարտեզը հաստատվել է:

Ճանապարհային քարտեզին համապատասխան մշակվել է իրավաբանական անձանց իրական շահառուների համատարած բացահայտմանն ուղղված, ինչպես նաև՝ բաց և հանրամատչելի ռեեստրի կարգավորումները սահմանող օրենսդրական փաթեթը:

Ճանապարհային քարտեզին համապատասխան իրավաբանական անձանց իրական շահառուների համատարած բացահայտմանն ուղղված, ինչպես նաև՝ բաց և հանրամատչելի ռեեստրի կարգավորումները սահմանող օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով:

Իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակը գործարկվում է:

Վերստուգիչ ցուցիչ

2022 թվականին իրավաբանական անձանց կողմից ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ 200 հայտարարագիր:

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Մասնավոր ոլորտում թափանցիկության բարձրացման նպատակով, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտման գործուն մեխանիզմներ ներդնելու համար դեռևս 2021 թվականի հունվարի 18-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի «Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N 30-Ա որոշումը, որով նախանշվել են իրական սեփականատերերի (շահառուների) բացահայտման առաջնային ոլորտները և համապատասխան ժամկետները:

Նշված ճանապարհային քարտեզին համապատասխան 2021 թվականի հունիսի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստրի ստեղծմանը, ինչպես նաև Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց համար փուլ առ փուլ իրական շահառուների բացահայտման պարտադիր պահանջի սահմանմանն ուղղված օրենսդրական փաթեթը: Մետաղական հանքարդյունաբերության և էներգետիկայի ոլորտների կազմակերպություններն արդեն իսկ 2020 թվականից ներկայացնում են իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր, իսկ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող և տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց համար հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը ուժի մեջ է մտել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից: Մյուս իրավաբանական անձանց համար իրական շահառուներին բացահայտելու պարտականությունը ուժի մեջ է մտել 2022 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների, որոնց համար իրական շահառուներին բացահայտելու պարտականությունը ծագել է 2023 թվականի հունվարի 1-ից:

Հայտարարագրման պահանջը տարածվում է ինչպես արդեն իսկ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված, այնպես էլ նոր հիմնադրվող և գրանցվող իրավաբանական անձանց վրա: Հայտարարագրման պահանջը չկատարելու, ոչ պատշաճ կատարելու համար սահմանված են քրեական և վարչական պատասխանատվության միջոցներ:

Միևնույն ժամանակ, գործարկվել է իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակը:

2023 թվականի մարտի 10-ի դրությամբ իրավաբանական անձնաց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակի միջոցով գրանցվել է շուրջ 37000 հայտարարագիր:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Շահարգիռ անձանց տեղեկացնելու նպատակով Արդարադատության նախարարությունն իրականացրել է հանրային իրազեկման արշավներ, մանրամասն տեղեկությունները հասանելի են հետևյալ հղումներում՝ https://www.youtube.com/watch?app=desktop&v=AID39yEeJik

- https://www.youtube.com/watch?v=ItRFCwfVwYk
- https://www.youtube.com/watch?v=RpwT7Ka1HuE

https://www.facebook.com/photo/?fbid=542108424624445&set=a.246838754151415

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Ճանապարհային քարտեզը հաստատվել է: Ճանապարհային քարտեզին համապատասխան մշակվել է իրավաբանական անձանց իրական շահառուների համատարած բացահայտմանն ուղղված, ինչպես նաև՝ բաց և հանրամատչելի ռեեստրի կարգավորումները սահմանող	2022թ.-ին իրավաբանական անձանց կողմից ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ 200 հայտարարագիր:	Սույն միջոցառման կատարման շրջանակներում ճանապարհային քարտեզին համապատասխան իրավաբանական անձանց իրական շահառուների համատարած բացահայտմանն ուղղված, ինչպես նաև՝ բաց և հանրամատչելի ռեեստրի կարգավորումները սահմանող օրենսդրական ակտերը դեռևս 2021 թվականին ընդունվել էին: 2023 թվականի հունվարից իրական շահառուների հայտարարագրելու պահանջը տարածվել է բոլոր իրավաբանական անձանց համար: Միևնույն ժամանակ, գործարկվել է իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակը: 2023 թվականի մարտի 10-ի դրությամբ իրավաբանական անձնաց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացվել է շուրջ 37000 հայտարարագիր: Նման պայմաններում սույն միջոցառումը համարվում է ամբողջությամբ կատարված:	**Կատարված է ամբողջությամբ**

օրենսդրական փաթեթը: Ճանապարհային քարտեզին համապատասխան իրավաբանական անձանց իրական շահառուների համատարած բացահայտմանն ուղղված, ինչպես նաև՝ բաց և հանրամատչելի ռեեստրի կարգավորումները սահմանող օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակը գործարկվում է:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 23

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Ընդունվել են օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը:

Վերստուգիչ ցուցիչ

Օրենսդրական Օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերն ամբողջությամբ ընդունվել են (2022թ)

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Մրցակցության պաշտպ անության հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարողներ

Արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Դեռևս 2021 թվականին ընդունվել են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում (այսուհետ՝ Նախագիծ) և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքները:

Նշված օրենսդրական փոփոխություններում, ի թիվս այլնի,

- տարբերակվել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից իրականացվող վարույթները՝ սահմանելով դրանց բնորոշ առանձնահատկությունները:
- Տարբերակվել են իրավախախտման վարույթի մասնակիցները, նրանց իրավունքների ու պարտականությունների ծավալը, վարույթի հարուցման առիթները:
- Նախատեսվել է իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու առիթները նախնական ստուգման ենթարկելու ընթացակարգ և վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պայմաններում հարուցումը մերժելու հնարավորություն:
- Կարգավորվել են վարչական վարույթների միացման ու առանձնացման ընթացակարգերը:
- Տարբերակվել են իրավախախտման վարույթներով ընդունվող որոշումների տեսակները և դրանց առանձնահատկությունները:
- Նախատեսվել է Հանձնաժողովի թղթակցությունը վարույթի մասնակիցներին էլեկտրոնային եղանակով հանձնելու ընթացակարգ:
- Նախատեսվել է Հանձնաժողովի նիստերին տեսաձայնային կապի միջոցով մասնակցելու հնարավորություն:
- Նախատեսվել է Հանձնաժողովի որոշումներով իրավախախտման վարույթի պատասխանողի գույքի վրա կիրառված տուգանքի չափով արգելանք դնելու հնարավորությունը:
- Սահմանվել է բանակցային ուժեղ դիրքի չարաշահման արգելք:
- Նախատեսվել է հակամրցակցային այլ համաձայնությունների արգելք:
- Նախատեսվել են համակենտրոնացման նոր ձևեր:
- Նախատեսվել է տուգանքների կիրառման առավել արդյունավետ մեխանիզմ:
- Սահմանվել է Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների ընտրության հստակ չափանիշներ սահմանելու հնարավորություն:
- Նախատեսվել է շարունակական մշտադիտարկումներ իրականացնելու հնարավորություն:
- Նախատեսվել է համակենտրոնացումների գնահատման պարզեցված կարգ:
- Նախատեսվել է անձանց խմբի ներսում իրականացվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների վերահսկման մեխանիզմ:
- Սահմանվել են Հանձնաժողովի կողմից ընդունվելիք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նորմատիվ հիմքերը:
- Ստուգումներ իրականացնող անձանց լիազորություններում նախատեսվել է տնտեսվարող սուբյեկտի տրամադրության տակ գտնվող ցանկացած շենք կամ փաստաթղթեր կապարակնքելու, տնտեսվարող սուբյեկտի մոտ առկա տեխնիկական միջոցներից օգտվելու հնարավորություն:

- Ֆիզիկական անձանց կողմից կատարվող մի շարք իրավախախտումների համար նախատեսվել է վարչական պատասխանատվություն
- Նախատեսվել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության մեխանիզմ:
- Նախատեսվել է Հանձնաժողովի հանձնարարական պարունակող որոշումների հարկադիր կատարման հնարավորություն:

Նախագծերի փաթեթը ներկայացվել է շահագրգիռ բոլոր մարմիններին՝ այդ թվում պետական մարմիններին, Փաստաբանների պալատին, գիտական հանրույթին, հասարակական կազմակերպություններին և այլն՝ դիրքորոշում ստանալու նպատակով: Քննարկումների հիման վրա Նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Կառավարություն:

Ոլորտի իրավական բարեփոխումների շրջանակում իրականացվել է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը:

Այսպես, հաշվետվու ժամանկահատվածներում Հանձնաժողովի կողմից ընդունվել են 18 ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, այդ թվում՝ Հանձնաժողովի աշխատակարգը, չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի որոշման կարգը, պետական օժանդակության գնահատման կարգը, պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը, գաղտնագրման ենթակա հաղորդումը ներկայացնելու և այն գաղտնագրելու կարգը, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը և Հանձնաժողովի գործունեությունն ապահովող մի շարք այլ ակտեր:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Մինչև Օրենքների նախագծերի կազմումը, քննարկումներ են տեղի ունեցել գիտական հանրույթի և հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններս ակտիվ մասնակցություն են ունեցել նաև Նախագծերի շուրջ իրականացված հանրային քննարկումներին: Օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում (https://www.e-draft.am/projects/2502), որի արդյունքում ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագծերի փաթեթը լրամշակվել է: Օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է նաև պետական բոլոր մարմիններին, Փաստաբանական պալատին, գիտական հանրույթին և հասարակական կազմակերպություններին՝ դիրքորոշման ստացման նպատակով: Օրենքների նախագծերի լրամշակված փաթեթը ներկայացվել է նաև Եվրասիական տնտեսական միությանը: Տեղի է ունեցել նաև տեսահամաժողովի ձևաչափով քննարկում Հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում մանրամասն քննարկվել են Նախագծերով ամրագրված կարգավորումները՝ Եվրասիական տնտեսական միության նորմատիվ իրավական կարգավորումների լույսի ներքո: Օրենքների նախագծերի փաթեթը քննարկվել է նաև միջազգային շահագրգիռ կազմակերերպությունների հետ: 155

Օրենքների նախագծերի փաթեթը մեծ հետաքրքրություն է առաջացրել շահագրգիռ անձանց, կազմակերպությունների և պետական մարմինների շրջանում: Դրա մասին է վկայում փաթեթի վերաբերյալ ստացված առաջարկություններն ու դիտարկումներն ամփոփող շուրջ 500 էջանոց ամփոփաթերթը: Քննարկումներ են տեղի ունեցել նաև Ազգային ժողովում Նախագծերի 1-ին և 2-րդ ընթերցումների ժամանակահատվածում: Ներկայացված առաջարկությունների հիման վրա Օրենքների նախագծերի փաթեթը լրամշակվել է:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Ընդունվել են օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը:	Օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերն ամբողջությամբ ընդունվել են (2022թ)	Սույն միջոցառման կատարման շրջանակներում օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերն ամբողջությամբ ընդունվել են, ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ:**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Առկա չեն նման հանգամանքներ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 24

Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Ներդրված են վիճակագրական նոր գործիքներ, որոնք ապահովում են իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման բաց և թափանցիկ գործընթացը: Իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ:

Վերստուգիչ ցուցիչ

Իրականացվել են առնվազն 2 հանրային իրազեկման միջոցառումներ (2022թ.):
www.e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի դիտելիությունը աճել է 10%-ով (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)
Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ
☐Կատարված է մեծամասամբ
☐Կատարված է մասնակի
☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի մայիսի 26-ին Արդարադատության նախարարության և ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի գործարար միջավայրի բարելավում ծրագրի կողմից կազմակերպվել է «e-draft.am առցանց հարթակի առավելություններն ու խնդիրները» թեմայով աշխատանքային կլոր-սեղան քննարկում, որի ընթացքում պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած երկխոսության արդյունքում ձևակերպված և ներկայացված առաջարկությունների հիման վրա www.e-draft.am հարթակի արդիականացման տեխնիկական առաջադրանքը լրամշակվել է: www.e-draft.am հարթակի արդիականացման տեխնիկական առաջադրանքի լրամշակված տարբերակը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ՝ Թվայնացման խորհրդի նիստում քննարկելու և ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով: www.e-draft.am հարթակի արդիականացման տեխնիկական առաջադրանքով նախատեսվում է ապահովել հասարակության լայն շրջանակի համար պետության իրավաստեղծ գործընթացին մասնակցության հնարավորությունը:

2022 թվականի հոկտեմբերի 12-ին Արդարադատության նախարարությունը իր պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան, յութուբյան և մի շարք այլ առցանց հարթակներում մշակել և հրապարակել է հանրային իրազեկում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի՝ www.e-draft.am հարթակի (այսուհետ՝ Հարթակ), ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին տեղեկատվական նյութ և տեսահոլովակ, որտեղ ներկայացվում է Հարթակի ստեղծման, վերջինիս օգտվելու կանոնների, հանրությանը ներկայացնելու, առցանց տարբերակով հանրային քննարկումներ կազմակերպելու և մի շարք այլ հնարավորություններ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվ մասնակցության հնարավորությունը օրինաստեղծ աշխատանքներին: Բացի այդ, տեսանյութում ներկայացված է, թե ինչպես կարելի է ծանոթանալ կայքում տեղադրված նախագծերին, որոնել նախագծեր, հետևել դրանց հետագա ընթացքին. ծանոթանալ ներկայացված առաջարկություններին, իսկ կայքում գրանցվելու դեպքում նաև ներկայացնել առաջարկություններ, ծանոթանալ նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ամփոփաթերթին, ընդունված առաջարկություններին կամ դրանք չընդունելու հիմնավորումներին և այլն:[54] Նշված տեղեկությունների տարածման նպատակով ֆեյսբուքյան հարթակում միացվել է գովազդ:

2019 թվականի (այցելությունների քանակի՝ 244694) համեմատությամբ 2022 թվականի դրությամբ www.e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի դիտելիությունը՝ այցելությունների քանակը 353312 (2022 թվականի ապրիլ-դեկտեմբերի ամիսների միջին ցուցանիշ) է, այսինքն՝ 2022թ՝ 144,3% աճ:

[54] https://moj.am/media/view/article/529

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Շահագրգիռ անձանց մասնակցությունն ապահովվել է իրազեկման արշավներով:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Ներդրված են վիճակագրական նոր գործիքներ, որոնք ապահովում են իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման բաց և թափանցիկ գործընթացը: Իրականացվում են www.edraft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության	Իրականացվել են առնվազն 2 հանրային իրազեկման միջոցառումներ (2022թ.): www.e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի դիտելիությունը աճել է 10%-ով (2022թ.):	Սույն միջոցառման կատարման շրջանակներում իրականացվել են հանրային իրազեկման միջոցառումներ, սակայն www.e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի դիտելիությունը՝ այցելությունների քանակը 2019 թվականի (այցելությունների քանակի՝ 244694) համեմատությամբ 2022 թվականի դրությամբ www.e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի դիտելիությունը՝ այցելությունների քանակը 353312 (2022 թվականի ապրիլ-դեկտեմբերի ամիսների միջին ցուցանիշ) է, այսինքն՝ 2022թ՝ 144,3% աճ: Ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

իրազեկման միջոցառումներ:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 25

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Իրականացվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման միջոցառումներ

Վերստուգիչ ցուցիչ

Մշակվել ու առնվազն 3 պետական մարմինների կայքէջերում հրապարակվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ դիմումի լրացման օրինակելի ձևերը (2021թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Համակատարողներ

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Պետական մարմինների կայքէջերում, ինչպես նաև գործող e-gov.am հարթակում որոշ ծառայությունների համար ներկայացված են դիմելու կարգը, պահանջները, ինչպես նաև դիմումների համար նախատեսված օրինակելի ձևերը: Միաժամանակ, e-gov հարթակի արդիականացման՝ հանրային ծառայությունների մատուցման միասնական հարթակի ստեղծման շրջանակում նախատեսվում է հարթակում ներկայացնել պետական մարմինների կողմից մատուցվող յուրաքանչյուր ծառայության վերաբերյալ տեղեկատվություն:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման միջոցառումներ՝

- ✓ Գործարկվել են «Protectedareas.am» հարթակը և «Red book of Armenia» բջջային հավելվածը, որոնք նպաստում են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ տեղեկացվածությանը, հանրությանն առավել հասանելի ու մատչելի տեղեկատվություն տրամադրելուն:
- ✓ ՀՀ տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման՝ սիրողական որսի և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի, սիրողական ձկնորսության էլեկտրոնային դիմում-հայտերը քաղաքացիների կողմից ներկայացվում են շրջակա միջավայրի նախարարության էլեկտրոնային minenv@env.am փոստին, http://www.env.am/shrjaka-mijavayr/vorsahandakner հղումով: minenv@env.am փոստին ներկայացման մասին հայտարարություններ են զետեղվել նախարարության պաշտոնական env@env.am կայքում http://www.env.am/announcement/category-1/haytararutyun-kendanakan-ashkharh հղումով և սոցիալական ցանցերում, ինչն էլ նվազեցրել է ծառայություն մատուցողների ու մասնավոր հատվածի միջև շփումները՝ պակասեցնելով կոռուպցիոն դրսևորումները: Ստացվել է 3981 հայտ, որից 3535՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

• Շրջակա միջավայրի նախարարությունում կայացել է հանրային լսում՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի լրամշակված փաթեթը քննարկելու նպատակով: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման՝ սիրողական որսի և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի, սիրողական ձկնորսության էլեկտրոնային դիմում-հայտերի օրինակելի ձևերը տեղադրված են շրջակա միջավայրի նախարարության env.am կայքում: Քաղաքացիները դիմում-հայտերը ներկայացնում են շրջակա միջավայրի նախարարության էլեկտրոնային minenv@env.am փոստին, http://www.env.am/shrjaka-mijavayr/vorsahandakner հղումով:

• ՀՀ ԱԳՆ և դիվանագիտական ծառայության մարմիններն իրենց կայքէջերում և հրապարակային հարթակներում տեղադրել են Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության նպատակով ՀՀ վերադարձող քաղաքացիներին ՀՀ տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների համար վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի արտոնություններից ազատման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանող տեսանյութ և տեղեկատվություն՝ հաշվի առնելով հարցերի մեծաթիվ քանակը՝ https://russia.mfa.am/hy/customs-privileges/, https://www.mfa.am/hy/customs-privileges/ և այլն: Բացի այդ, Արտաքին գործերի նախարարությունը հաշվետու ժամանակահատվածում գործարկվել է էլեկտրոնային հյուպատոսական համակարգի նորացված տարբերակը: Համակարգը հագեցած է ժամանակակից տեխնիկական լուծումներով և հնարավորություն է ընձեռում գրանցվել և մուտք գործել համակարգ, հետևել դիմումների ընթացքին, կատարել մի շարք առցանց գործարքներ, լրացնել առցանց հայտեր, արագ փնտրել ու ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ դիվանագիտական ներկայացուցչություններում գործող հյուպատոսական կետերի գործառույթների, տեղակայման հասցեների, հեռախոսահամարների, մատուցվող ծառայությունների, և այլ հարցերի վերաբերյալ: Համակարգում ներառվել են նոր ծառայություններ, ավելացվել են վճարումներ կատարելու և օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանություն (հյուպատոսական հիմնարկ) այցելություն ամրագրելու հնարավորությունը, որի շնորհիվ հյուպատոսական ծառայությունների մատուցման գործընթացը կիրականացվի առավել կազմակերպված ձևով՝ առանց հերթերի կուտակումների: Նոր համակարգի գործարկման շրջանակներում նախատեսվում է ավելացնել ամբողջությամբ առցանց մատուցվող հյուպատոսական ծառայությունների ցանկը:

Տեղեկատվությունը հրապարակված է https://consular.e-gov.am/am/ էլեկտրոնային հյուպատոսական համակարգի պաշտոնական կայքէջում:

• Արտակարգ իրավիճակների նախարարությունն իր կայքի միջոցով հանրությանը տեղեկացրել է ներքին և արտաքին ազդարարման համակարգի մեխանիզմների և պատասխանատու անձի կոնտակտների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև՝ պետական մարմինների հետ հարաբերակցվելիս հանրության և ԱԻՆ աշխատակիցների իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

• ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության կազմում ստեղծվել է սոցիալ-իրավական աջակցության և խորհրդատվության բաժին, որը մեկ պատուհանի սկզբունքով իրականացնում է տեղեկատվության հասանելիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում, գործող և նոր ընդունված օրենսդրական ակտերի վերաբերյալ օպերատիվ և հանրամատչելի պարզաբանումների տրամադրումը, ինչպես նաև շահառուների բարձրացրած հարցերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների կազմակերպումը: Նշված գործառույթների իրականացման շրջանակներում սպասարկվել է 9772 շահառու:

• Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով ակտիվ աշխատանքներ են տարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և

վիզաների վարչության պաշտոնական կայքը գործարկելու ուղղությամբ, ներկայումս այն պատրաստ է, ուղարկվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ անվտանգության մասով փորձաքննության ենթարկելու նպատակով: ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից դրական պատասխան ստանալուց հետո նախատեսվում է կայքը գործարկել մինչև սույն թվականի հուլիսի 1-ը:

Կայքի գործարկումը նպատակ ունի նաև ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող շարունակական բարեփոխումների շրջանակներում ավելի բարելավել քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը, ապահովել հանրության իրազեկվածության բարձրացում, ստորաբաժանման կողմից կատարվող աշխատանքները դարձնել առավել թափանցիկ ու մատչելի:

• ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից ներկայացվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ դիմումների հետևյալ օրինակելի ձևերը, որոնք տեղադրվել են police.am կայքում.

• Բացի այդ, հարկ է նշել, որ Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների, դրանց համար անհրաժեշտ փաստաթղթերի, ծառայությունների մատուցման ժամկետների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների շրջանակներում հաստատվել է ՀՀ ՊԵԿ նախագահի 14.03.2019թ. «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտը, ծառայությունների տեսակները, իրականացման ժամկետները և տրամադրման ձևերը հաստատելու մասին» թիվ 169-Լ հրամանը, որը տեղադրված է ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքէջում՝ https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIServiceSingleStandard հղումով: Միաժամանակ, մատուցվող ծառայությունների մասով ընդունվող նոր օրենսդրական փոփոխություններին համահունչ՝ նշված հրամանում պարբերաբար կատարվում են փոփոխություններ ու լրացումներ: Այդ առնչությամբ 2022 թվականին հաստատվել են ՀՀ ՊԵԿ նախագահի 14.03.2019թ. թիվ 169-Լ հրամանում փոփոխություններ կատարելու մասին 10.01.2022թ. թիվ 12-Լ ու 24.10.2022թ. թիվ 1109-Լ հրամանները:

• Միաժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան՝ ՀՀ ՊԵԿ կողմից իրականացվում է օրինապահ հարկ վճարողի գործող հավաստագիր ունեցող հարկ վճարողին հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մասին անհատական իրազեկում համապատասխան իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրվանից հետո 10 օրվա ընթացքում՝ հարկ վճարողի էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: 2022 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին իրականացվել է 2796 իրազեկում:

• ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն այսուհետ՝ (Կոմիտե) միացել է էլեկտրոնային եղանակով swis.trade.gov.am համացանցային կայքէջում հասանելի «Միասնական հայտ» համակարգին, ապահովելու՝ միջուկային նյութերի, ռադիոակտիվ նյութերի և ռադիոակտիվ թափոնների լիցենզիայի հայտին կից փաստաթղթերի ընդունումը և լիցենզիայի տրամադրումը նաև էլեկտրոնային եղանակով: Կոմիտեն իրականացնում է իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական

գրանցում: Աղբյուրների հետ գործունեություն իրականացնող անձանց հանրային իրակզեկումն ապահովելու նպատակով կոմիտեն մշակել և իր ինտերնետային կայքում տեղադրել է դրանց գրանցման մասին ուղեցույց:

• Քաղաքաշինության կոմիտեն քաղաքացիների համար ոլորտին վերաբերող տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով Կոմիտեի կայքէջում պարբերաբար թարմացվում է քաղաքաշինության բնագավառին առնչվող նորմատիվ իրավական ակտերի, քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց, արտոնագրված ճարտարապետների և ճարտարագետ-կոնստրուկտորների մասին և անհրաժեշտ այլ տեղեկատվությունն ու նյութերը (մեթոդական նյութեր, տիպային նախագծեր, դիմումների, հայտերի օրինակելի ձևեր):

• Գործում է Քաղաքաշինության կոմիտեի կողմից սպասարկվող՝ քաղաքաշինության ոլորտում թույլտվությունների առցանց տրամադրման էլեկտրոնային համակարգը (www.e-permits.am), քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների հայտերն ընդունվում են բացառապես էլեկտրոնային եղանակով (http://minurban.am/am/info/license), իսկ լիցենզավորված անձանց մասին տեղեկատվությունը տեղադրվում և պարբերաբար թարմացվում է ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում՝ www.e-license.am կայքում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացումը հանրային քննարկում չի ենթադրում: Շահարգիռ մարմինները սահմանված կարգով ներգրավված եղել են:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Իրականացվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի	Մշակվել ու առնվազն 3 պետական մարմինների կայքէջերում հրապարակվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ	Պետական մարմինների կողմից մշակվել և իրենց պաշտոնական կայքէջերում տեղադրված են ծառայությունների ստացման համար անհրաժեշտ դիմումների օրինակելի ձևերը, ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

ներդրման միջոցառումներ	դիմումի լրացման օրինակելի ձևերը (2021թ.):		

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 26 **Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում և ազդարարների պաշտպանության օրենսդրական մեխանիզմների բարելավում** **<u>2022 թվականի ակնկալվող արդյունք</u>** Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջակությունները ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Առաջարկությունների հիման վրա մշակվել և Վարչապետի աշխատակազմ են ներկայացվել ազդարարման համակարգի և ազդարարների պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի փաթեթ: Ներքին և արտաքին ազդարարման վիճակագրության վարման միասնական մեխանիզմի սահմանում: Ազդարարման համակարգի և ազդարարների պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: **<u>Վերստուգիչ ցուցիչ</u>**

Ազդարարման դեպքերի վիճակագրությունը ներառված է Արդարադատության նախարարության տարեկան հաշվետվության մեջ, Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում (2020թ., 2021թ.,2022թ.):
Առաջարկությունների հիման վրա ձևավորված իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ազդարարման համակարգը բարելավվել է (2022թ)
Ազդարարների պաշտպանության օրենսդրական մեխանիզմները միջազգային փորձին համապատասխան կատարելագործվել են (2022թ.):
Հայտարարագրերին, շահերի բախումներին և անհամատեղելիությանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ ազդարարման կառուցակարգերի սահմանման, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ազդարարման համակարգին հասանելիության ապահովման կարգավորումները սահմանվել են (2022թ.):

Կատարող մարմին՝
Հիմնական կատարող
Արդարադատության նախարարություն
Համակատարող
Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)
"Կատարված է ամբողջությամբ
☐Կատարված է մեծամասամբ
☐Կատարված է մասնակի
☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2022 թվականի դեկտեմբերի 7-ին Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Ազդարարման համակարգի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքները: ««Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-495-Ն օրենքով և հարակից օրենքներով կատարելագործվեցին ազդարարման համակարգի իրավական մեխանիզմները: Օրենսդրական մակարդակով ընդլայնվեցին ազդարարման տեսակները, սահմանվեց ազդարարման նոր տեսակ՝ «ազդարարում հանրությանը»: Օրենքի ընդունման միջոցով իրական հնարավորություն

ստեղծվեց ազդարարման էլեկտրոնային հարթակի (azdararir.am) միջոցով ազդարարել նաև շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին:

Իրականացված փոփոխություններով ազդարարման հետ կապված հարաբերությունները տարածվել են նաև մասնավոր ոլորտի առևտրային և ոչ առևտրային, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների վրա:

Հստակեցվել են նաև ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմները: Միաժամանակ, ազդարարման համակարգի գործունեության ամբողջական պատկեր ունենալու նպատակով և զուգահեռաբար հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական մարմինների կողմից իրականացվում են ներքին և արտաքին ազդարարման աշխատանքներ և դրանց արդյունքները չեն ամփոփվում, սահմանվել է, որ Մարդու իրավունքների պաշտպանին (ՄԻՊ) հանդիսանում է իրավասու մարմին, որը կհավաքի պետական մարմինների կողմից ստացված վիճակագրությունը, և որը ենթակա կլինի հրապարակման:

Բացի այդ, ՄԻՊ-ին են վերապահվել ազդարարների պաշտպանության իրականացմանը հետևելու, ազդարարների պաշտպանության վերաբերյալ տվյալների հավաքագրման և այլ լիազորություններ:

Նշված օրենսդրական ակտերով նաև սահմանվել են հայտարարագրերին, շահերի բախումներին և անհամատեղելիությանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ ազդարարման կառուցակարգերը:

Ազդարարման վերաբերյալ վիճակագրությունը արտացոլված է Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում (https://azdararir.am/am/statistics):

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագիծը անցել է հանրային քննարկում, իրազեկվել, ապահովվել՝ շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցությունը (https://www.e-draft.am/projects/4470):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն	Ազդարարման դեպքերի վիճակագրությունը ներառված է Արդարադատության նախարարության	Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ազդարարների պաշտպանության օրենսդրական մեխանիզմները միջազգային փորձին համապատասխան կատարելագործվել են, հայտարարագրերին, շահերի բախումներին և	**Կատարված է ամբողջությամբ**

ուղղված առաջակությունները ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Առաջարկությունների հիման վրա մշակվել և Վարչապետիաշխատակազմ են ներկայացվել ազդարարման համակարգի և ազդարարների պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագծեր փաթեթ: Ներքին և արտաքին ազդարարման վիճակագրության վարման միասնական մեխանիզմի սահմանում: Ազդարարման համակարգի և ազդարարների պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված նախագծերիփաթեթը	տարեկան հաշվետվության մեջ, Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում (2020թ., 2021թ.,2022թ.): Առաջարկությունների հիման վրա ձևավորված իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ազդարարման համակարգը բարելավվել է (2022թ.): Ազդարարների պաշտպանության օրենսդրական մեխանիզմները միջազգային փորձին համապատասխան կատարելագործվել են (2022թ.): Հայտարարագրերին, շահերի բախումներին և անհամատեղելիությանն առնչվող	անհամատեղելիությանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ ազդարարման կառուցակարգերը սահմանվել են: Սահմանվել են նաև վիճակագրության վարմանը ներկայացվող պահանջները: Բացի այդ, Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում հրապարակվում է ազդարարման դեպքերի վիճակագրությունը: Նման պայմաններում սույն միջոցառումը գնահատվում է ամբողջապես կատարված:	

ներկայացվել է Ազգային ժողով:	իրավախախտումների վերաբերյալ ազդարարման կառուցակարգերի սահմանման, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ազդարարման համակարգին հասանելիության ապահովման կարգավորումները սահմանվել են (2022թ.)		

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Միջոցառումն անխոչընդոտ իրականացվել է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 27

ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցում

2022 թվականի ակնկալվող արդյունք

2022 թվականի համար արդյունք սահմանված չէ

Վերստուգիչ ցուցիչ

Ապահովվել է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի ուղենիշային սահմանումը՝ ըստ ՏՀՀԿ հակակոռուպցիոն ցանցի, ԵԽ ու ԵՄ փորձագետների առաջարկությունների (2019թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Քննչական կոմիտե (համաձայնությամբ)

Ազգային անվտանգության ծառայություն

Ոստիկանություն

Պետական եկամուտների կոմիտե

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որը ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին: Նոր քրեական օրենսգրքի Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները գլխում ավելացել են կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալու, բռնի անհետացման հանցակազմերը, պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմը միավորվել է պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի հետ, ընդլայնվել է պաշտոնատար անձի հասկացությունը, որը տրված է 3-րդ հոդվածում:

Քրեական նախկին օրենսգրքում տարբերակվում էին պաշտոնատար անձ և հանրային ծառայող հասկացությունները. պաշտոնատար անձի հասկացությունը նախատեսված էր օրենսգրքի 308-րդ հոդվածի 4-րդ մասում: Քրեական նոր օրենսգրքում, պաշտոնատար անձի հասկացությունը սահմանելիս, ոչ միայն նախատեսվել են քրեական նախկին օրենսգրքում որպես պաշտոնատար անձ դիտարկվող կատեգորիաները, այլև այս հասկացությունն ընդլայնվել է. օրենսդիրը որպես պաշտոնատար անձ է դիտարկում հանրային ծառայողին, հանրային պաշտոն զբաղեցնող անձին, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձին: Այս փոփոխությունը համահունչ է Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածին, որը ևս պաշտոնատար անձի հասկացությունը սահմանելիս առավել ընդգրկուն մոտեցում է դրսևորել:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հավելված 1-ով սահմանվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների ցանկը:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի սահմանման առնչությամբ սույն միջոցառումն իրականացվել է դեռևս 2020 թվականին. միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ «Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) համագործակցության արդյունքում մշակվել և 2020 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ քրեական օրենսգրքում (հին Քրեական օրենսգիրք) լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքը, որով վերանայվել են կոռուպցիոն բնույթի որոշ հանցակազմեր՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափանիշներին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

ՀՀ քրեական օրենսգրքում (հին Քրեական օրենսգիրք) լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը հանրային քննարկման է ներկայացվել 2019 թվականի նոյեմբերի 19-ին (https://armenpress.am/arm/news/998602.html) և 2019 թվականի դեկտեմբերի 12-ին (https://www.moj.am/article/2603):

Հանրությանը իրազեկելու նպատակով Նախագծի փաթեթի վերաբերյալ տեղեկատվական նյութեր են հրապարակվել ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
	Ապահովվել է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի ուղենիշային սահմանումը՝ ըստ ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի, ԵԽ ու ԵՄ փորձագետների առաջարկությունների (2019թ.):	Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ «Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) համագործակցության արդյունքում մշակվել և 2020 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ քրեական օրենսգրքում (հին Քրեական օրենսգիրք) լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքը, որով վերանայվել են կոռուպցիոն բնույթի որոշ հանցակազմեր՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափանիշներին: Այնուհետև՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանվել է նաև նոր Քրեական օրենսգրքով: Ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացման շրջանակներում խոչընդոտներ չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 28

Քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կարգավորումների սահմանում նոր Քրեական օրենսգրքով

2022 թվականի ակնկալվող արդյունք

Կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, ինչպես նաև վաղեմության ժամկետները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկները ներառվել են նոր Քրեական օրենսգրքի նախագծի շրջանակներում:

Վերստուգիչ ցուցիչ

Ըստ արդյունքների՝ առաջարկությունները ներառված են Քրեական օրենսգրքի նախագծում (2021թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Քննչական կոմիտե (համաձայնությամբ)

Ազգային անվտանգության ծառայություն Ոստիկանություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ «Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) համագործակցության արդյունքում մշակվել և 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որը ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին: Նոր քրեական օրենսգրքով վերանայվել են կոռուպցիոն բնույթի որոշ հանցակազմեր՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափանիշներին: Ընդ որում, նշված հանցակազմերի շրջանակներում խրախուսական նորմեր առկա չեն:

Հարկ է նշել նաև, որ 2021 թվականի փետրվարի 11-ին առաջին ընթերցմամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որը ևս ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Նախագծերի փաթեթը հանրային քննարկման է ներկայացվել 2019 թվականի նոյեմբերի 19-ին (https://armenpress.am/arm/news/998602.html) և 2019 թվականի դեկտեմբերի 12-ին (https://www.moj.am/article/2603):

Հանրությանը իրազեկելու նպատակով Նախագծի փաթեթի վերաբերյալ տեղեկատվական նյութեր են հրապարակվել ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

Նախագծերի փաթեթը քննարկվել է նաև միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, ինչպես նաև վաղեմության ժամկետները միջազգային չափանիշներին	Ըստ արդյունքների՝ առաջարկությունները ներառված են Քրեական օրենսգրքի նախագծում (2021թ.):	Նոր քրեական օրենսգրքով վերանայվել են կոռուպցիոն բնույթի որոշ հանցակազմեր՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափանիշներին: Ընդ որում, նշված հանցակազմերի շրջանակներում խրախուսական նորմեր առկա չեն:	**Կատարված է ամբողջությամբ**

համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկները ներառվել են նոր Քրեական օրենսգրքի նախագծի շրջանակներում:		Ուստի սույն միջոցառումն ամբողջապես կատարվել է:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

   Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 29

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկայի բարելավվել է՝ միաժամանակ նախատեսելով կոնկրետ գործիքակազմերի կիրառության վերաբերյալ կարգավորումներ, վերլուծական կարողություններ զարգացնող մեթոդական ցուցումներ: Պարբերաբար անցկացվում են վերապատրաստումներ

Վերստուգիչ ցուցիչ

Իրականացվել է առնվազն 4 վերապատրաստում (2021-2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Համակատարողներ

Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Ազգային անվտանգության ծառայություն

Արդարադատության ակադեմիա

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդական ուղեցույցը մշակվել է և հաստատվել Գլխավոր դատախազի 2021 թվականի մարտի 22-ի N 35 հրամանով դեռևս 2021 թվականին: Ուղեցույցի մեջ մանրամասն վերլուծված են կոռուպցիոն հանցագործությունների էությունը և դրանց կանխարգելման իրավական հիմքերը, կոռուպցիայի հակազդման իրավակազմակերպական հիմքերը, կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը: Առանձին գլխում ներկայացված է ապօրինի հարստացման էությունը, իրավական հիմքերը և առանձնահատկությունները: Ներկայացված են նաև կոռուպցիոն հանցագործությունների գործերով պարզաբանման ենթակա հանգամանքները, կոռուպցիոն հանցագործությունների քննության քրեադատավարական և կրիմինալիստիկական բնութագրերը, այդ թվում նաև՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով կատարվող առանձին քննչական գործողությունների առանձնահատկությունները:

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան ներառված է քրեական հետապնդման մարմինների վերապատրաստման ծրագրերում:

2021 թվականին Հատուկ քննչական ծառայության 7 քննիչներ և Քննչական կոմիտեի 58 քննիչներ անցել են վերապատրաստումներ «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկա» թեմաներով: Դատախազների համար 2021 թվականին անցկացվել են դատախազների վերապատրաստումներ «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր», «Կոռուպցիոն դեպքերի քննություն», «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Կոռուպցիոն դեպքերի քննություն», «Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն», «Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար» թեմաներով:

Դատախազների տարեկան վերապատրաստման 2022 թվականի ուսուցման ծրագրի ընդհանուր և հարակից դասընթացների մոդուլում ներառված է «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացը, որը պարտադիր է բոլոր դատախազների համար, հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ներառված են՝ «Կոռուպցիոն դեպքերի քննություն», «Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն», «Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար» վերտառությամբ դասընթացները, իսկ դատախազների տարեկան վերապատրաստման 2022 թվականի ուսուցման ծրագրի հեռավար ուսուցման ձևով իրականացվող դասընթացների մոդուլում, ի թիվս այլնի, ներառված է «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» վերտառությամբ դասընթացը:

2021-2022 թվականներին վերապատրաստումներն անցկացվել են սահմանված կարգով՝ յուրաքանչյուր տարի՝ ապրիլ-մայիս և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Ուղեցույցն շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների միջև և վերջիններիս դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ենթարկվել է վերջնական լրամշակման: Ուսուցման ծրագրերը կազմվում են շահագրգիռ կառույցների առաջարկությունների հիման վրա: Մասնավորապես, յուրաքանչյուր տարի Գլխավոր դատախազը Արդարադատության ակադեմիայի ռեկտորին է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները, որոնք ընդգրկվում են ուսուցման ծրագրերի կազմում: Յուրաքանչյուր տարի ՀՀ քննչական կոմիտեի նախագահը ռեկտորին է ներկայացնում իր համաձայնությունը կամ առարկություններն ու դիտողությունները ներկայացված ծրագրերի վերաբերյալ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկայի բարելավվել է՝ միաժամանակ նախատեսելով կոնկրետ գործիքակազմերի կիրառության վերաբերյալ կարգավորումներ, վերլուծական կարողություններ	Իրականացվել է առնվազն 4 վերապատրաստում (2021-2022թ.):	Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդական ուղեցույցը մշակվել է և հաստատվել Գլխավոր դատախազի 2021 թվականի մարտի 22-ի N 35 հրամանով դեռևս 2021 թվականին: Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան ներառված է քրեական հետապնդման մարմինների վերապատրաստման ծրագրերում: Թեման ընդգրկվել է դատախազների տարեկան վերապատրաստման 2022 թվականի ուսուցման ծրագրի ընդհանուր և հարակից դասընթացների մոդուլում, վերապատրաստումներն իրականացվել են յուրաքանչյուր տարի՝ ապրիլի մայիս և սեպտեմբերի դեկտեմբեր ամիսներին:	**Կատարված է ամբողջությամբ**

զարգացնող մեթոդական ցուցումներ: Պարբերաբար անցկացվում են վերապատրաստումներ		Նշված միջոցառման ակնկալվող արդյուքնի, վերստուգիչ ցուցիչի և կատարված աշխատանքների համադրությունից հետևում է, որ միջոցառումն ամբողջությամբ կատարվել է:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

   Խոչընդոստներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 30

Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության վարման կարգերը հաստատված են:

Կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով

Վերստուգիչ ցուցիչ

Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով (2021թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Համակատարողներ

Ոստիկանություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Հարկ է հավելել, որ դեռևս 2019 թվականին ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի և 2020 թվականի հուլիսի 2-ի համապատասխան հրամաններով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:

Բացի այդ, Գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ տեղեկանք, որում ոչ միայն ներկայացվում են վիճակագրական տվյալներ, այլև՝ վերլուծվում են այդ տվյալները և համեմատական է անցկացվում նախորդ տարվա տվյալների հետ: Նշված տարեկան տեղեկանքները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://n9.cl/wpagk:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Աշխատանքներն իրականացվում են շահագրգիռ մարմինների հետ համագործակցության շրջանակներում: Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաշվետվությունները յուրաքանչյուր կիսամյակ տրամադրվում են նաև ՀՀ վիճակագրական կոմիտե և հրապարակվում են վերջինիս պաշտոնական կայքէջում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով դեռևս 2021 թվականին, վիճակագրության վարման համապատասխան կարգերը հաստատված են: Ուստի սույն միջոցառումն մաբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

վարման կարգերը հաստատված են: Կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով	մասին տվյալներով (2021թ.):		

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

   Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 31

Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով

2022 թվականի ակնկալվող արդյունք.

Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմիններին էլեկտրոնային եղանակով ամբողջական հասանելության ապահովման և էլեկտրոնային հարցումներ կատարելու խոչընդոտները բացահայտվել են, վեր են հանվել խնդիրները և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ գործողությունների իրականացում:

Իրավապահ մարմիններն ունեն էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննության համար:

Վերստուգիչ ցուցիչ

Իրավապահ մարմինների կողմից էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների տեղեկատվական բազաներին հասանելիություն տվող ծրագրային ապահովումը մշակվել է և լիարժեք գործարկվում է (2022թ.):

Իրականացվել է առնվազն 5 հարցում (2022թ):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Փոխվարչապետի գրասենյակ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)

Համակատարողներ

Արդարադատության նախարարություն

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Ազգային անվտանգության ծառայություն Քննչական կոմիտե (համաձայնությամբ)

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Տվյալների շտեմարաններին հասանելիությունն ապահովվել է ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1849-Ն որոշմամբ սահմանված կարգով: Շուրջ հիսուն վեբ ծառայությունների միջոցով հնարավոր է տվյալներ ստանալ տարբեր պետական շտեմարաններից: Ընդ որում, ԿՓՀ-ի միջոցով կատարված հարցումները 2022 թվականին կազմել են շուրջ 170 մլն.:

Իրավապահ մարմինների՝ էլեկտրոնային հարցման եղանակով պետական մարմինների էլեկտրոնային բազաների հասանելիության վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

➢ Ոստիկանությունը հասանելիություն ունի Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների բազային, Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրին, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրին, ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրին, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազային, կադաստրի կոմիտեի տվյալների բազային, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության տվյալների բազային, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների բազային, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ տվյալների բազային, ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրին:

➢ Քննչական կոմիտեն հասանելիություն ունի ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրին, ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների բազային, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրին, ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրին, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, Պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազային, Կադաստրի

կոմիտեի տվյալների բազային, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության տվյալների բազային: Բացի այդ, ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում օգտվում են «Էկենգ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ապահովվող այլ պետական մարմինների տվյալների հետևյալ բազաներից: Մասնավորապես՝

- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստր,
- ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի դատվածության և հետախուզման վերաբերյալ տեղեկատվական շտեմարան,
- ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության տրանսպորտային միջոցների էլեկտրոնային ռեգիստր,
- ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարորդական վկայականների էլեկտրոնային ռեգիստր,
- ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարչական ակտերի էլեկտրոնային ռեգիստր,
- ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր,
- ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային ռեգիստր,
- ՀՀ կադաստրի պետական կոմիտեի էլեկտրոնային ռեգիստր,
- ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության միանվագ նպաստների և կենսաթոշակառուների էլեկտրոնային ռեգիստր
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եկամտային հարկի տեղեկատվական համակարգը:

Բացի վերոնշյալ տվյալների բազաներից՝ ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում օգտվում են նաև ՀՀ կենտրոնական բանկի «Միասնական տեղեկատվական տիրույթ» համակարգից:

ՀՀ քննչական կոմիտեում այլ պետական մարմինների տվյալների բազաներին հասանելությունն ապահովվում է «Էկենգ» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝ այդ բազաներին միանալու մասին «Էկենգ» փակ բաժնետիրական ընկերությանը պատշաճ կերպով հայտ ներկայացնելու և կնքված պայմանագրի հիման վրա՝ պահպանելով ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական միացման համար սահմանված և կիրառվող անվտանգության նվազագույն պահանջները: Հարկ է նշել, որ «Էկենգ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով վերոնշյալ տեղեկատվական բազաներից ստացված տեղեկատվությունն ամբողջական չէ:

Բացի այդ, ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգին հասանելության նպատակով ՀՀ քննչական կոմիտեի և հակակոռուպցիոն կոմիտեի կողմից համատեղ մշակվել է «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հակակոռուպցիոն

կոմիտեի կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ, որը շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ ՀՀ ազգային ժողով ուղարկելու նպատակով:

- Դատախազությունը հասանելիություն ունի ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրին, ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների բազային, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրին, ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրին, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, Պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազային, Կադաստրի կոմիտեի տվյալների բազային, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության տվյալների բազային:
- Հակակոռուպցիոն կոմիտե հասանելիություն ունի ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրին, ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների բազային, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրին, ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրին, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, Պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազային, Կադաստրի կոմիտեի տվյալների բազային, սակայն ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հասանելիություն չունի շարժական գույքի նկատմամբ կալանք դնելու վերաբերյալ համակարգին: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն արդեն իսկ ունի կենտրոնական դեպոզիտարիայի տեղեկատվական բազային հասանելիություն: Վերջնական գործարկման հետ կապված տեխնիկական աշխատանքներն ավարտական փուլում են:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Սույն միջոցառման իրականացման շրջանակներում ներգրավվել են շահագրգիռ մարմինները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմիններին էլեկտրոնային եղանակով ամբողջական հասանելության ապահովման և էլեկտրոնային հարցումներ կատարելու խոչընդոտները բացահայտվել են, վեր են հանվել խնդիրները և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Խնդիրները լուծման նպատակով անհրաժեշտ գործողությունների իրականացում: Իրավապահ մարմիններն ունեն	Իրավապահ մարմինների կողմից էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների տեղեկատվական բազաներին հասանելիություն տվող ծրագրային ապահովումը մշակվել է և լիարժեք գործարկվում է (2022թ.): Իրականացվել է առնվազն 5 հարցում (2022թ):	Իրավապահ մարմինների կողմից էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների տեղեկատվական բազաներին հասանելիություն տվող ծրագրային ապահովումը մշակվել է և լիարժեք գործարկվել է, կատարված հարցումները 2022 թվականին կազմել են շուրջ 170 միլիոն: Այսպիսով, սույն միջոցառման ակնկալվող արդյունքի, վերստուգիչ ցուցիչի և կատարված աշխատանքների համադրությունից հետևում է, որ սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ:**

էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննության համար:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Հաշվետու ժամանակահատվածում միջոցառումն իրականացնելուն խոչընդոտող գործոն է պետական համալիր համակարգերի միասնական ճարտարապետության բացակայությունը, որն այս պահին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և շահագրգիռ այլ մարմինների ներգրավմամբ իրականացման փուլում է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 32

Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով:
Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրի կարգավորումները ընդունվել են:
Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրի գործարկվում է և տվյալները համալրվում են:

Վերստուգիչ ցուցիչ

Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և գործարկվում է և տվյալներն ամբողջությամբ համալրվել են (2022թ.)

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող՝

Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)

Համակատարող

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ
☐Կատարված է մեծամասամբ
☐Կատարված է մասնակի
☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
☐Կատարված չէ

5. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը.**

Դեռևս 2020 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված միջազգային փորձի լայնածավալ ուսումնասիրության և դրա հիման վրա ուղարկված հարցումների պատասխանների վերլուծության արդյունքներով մշակվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նախագիծը 2020 թվականի սեպտեմբերի 16-ին ուղարկվել է շահագրգիռ պետական մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկների ամփոփումից հետո՝ նոյեմբերի 2-ին, Նախագիծն ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ՝ սահմանված կարգով ընթացք տալու և օրենսդրական նախաձեռնությամբ ՀՀ ազգային ժողով ուղարկելու համար: 2021 թվականի հունիսի 30-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը: 2021 թվականի սեպտեմբերի 28-ին ընդունվել է «Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա տեղեկությունների ցանկը և տեղեկությունների (հաշվետվությունների) ներկայացման ժամկետները» սահմանող ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 133-Ն որոշումը: Այսպիսով, Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի փաստացի գործարկումը սկսվել է 2021 թվականի նոյեմբերի 1-ից:

Ավելին, ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 205-Ն և 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1321-Ն որոշումների հիման վրա ընդունվել է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից եկամտային հարկի վերադարձման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարվող բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի միջոցով վարկառուի բանկային հաշվի վավերականության ստուգման կարգը սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 197-Լ և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1383-Լ համատեղ որոշումը, որն ուժի մեջ է մտնել 2022 թվականի հունվարի 1-ին և արդեն իսկ կիրառվում է:

2022 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից եկամտային հարկի վերադարձման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարվող բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի միջոցով վարկառուի բանկային հաշվի վավերականության ստուգման կարգը սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 197-Լ և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1383-Լ համատեղ որոշման համաձայն 2022 թվականի հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկի բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրում (այսուհետ՝ Ռեեստր) ներառվող տեղեկությունների հիման վրա իրականացվում է տեղեկությունների փոխանակում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ: Միևնույն ժամանակ, մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու նպատակով Ռեեստրում ներառվող տեղեկությունների հիման վրա մասնակիցների մեկ բանկային հաշվեհամարի կամ մասնակիցների կողմից տրամադրված բանկային հաշվեհամարի պատկանելիության և վավերականության վերաբերյալ տեղեկության ստացումը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համար ապահովելու նպատակով կազմվել են ««Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնք պաշտոնապես շրջանառվել են: Պայմանավորված Ռեեստրի գործարկման շրջանակներում ի հայտ եկած ընթացիկ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի ապրիլի 19-ի թիվ 64-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել «Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա տեղեկությունների ցանկը, տեղեկությունների (հաշվետվությունների) տրամադրման ձևը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ: Մասնավորապես, սահմանվել են կարգավորումներ քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելիս անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկություններ ներառելու մասին, մասնավորեցվել են տեղեկությունները լատինատառ ներկայացնելու դեպքերը: Բացի այդ, որոշակի տեխնիկական շտկումներ են կատարվել նաև 2022 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ մտած «փաստացի բաց» և «փաստացի փակ» բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների տրամադրմանն առնչվող դրույթներում:

Պայմանավորված Ռեեստրի գործարկման ընթացքում բանկերում ի հայտ եկած տեխնիկածրագրային խնդիրներով, ինչպես նաև ֆինանսական համակարգի անկանխատեսելի ծանրաբեռնվածությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 140-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել Որոշման մեջ և գործող բանկային հաշիվների մասով Ռեեստրի համալրման վերջնաժամկետ է սահմանվել 2022 թվականի սեպտեմբերի 30-ը:

2022 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Ռեեստրում տվյալները համալրված են:

6. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերի փաթեթը դեռևս 2021 թվականին ներկայացվել է բոլոր շահագրգիռ պետական մարմիններին՝ դիրքորոշման ստացման նպատակով: Ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագծերի փաթեթը լրամշակվել է: Քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում (https://www.e-draft.am/projects/2256) նախագծերի հանրային քննարկումը կազմակերպելու միջոցով: Հանրային քննարկման արդյունքներով առաջարկություններ չեն ներկայացվել:

7. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

Իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրի կարգավորումները ընդունվել են: Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրի գործարկվում է և տվյալները համալրվում են:	Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և գործարկվում է և տվյալներն ամբողջությամբ համալրվել են (2022թ.)	Սույն միջոցառման կատարման շրջանակներում Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և գործարկվում է և տվյալներն համալրվել են, գործընթացը կրում է շարունակական բնույթ: Այսպիսով, սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

8. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 33

Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Ազգային ժողով է ներկայացվել կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման առկա խոչընդոտների հաղթահարման վերաբերյալ առաջարկներ նախատեսող «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը:

Վերստուգիչ ցուցիչ

Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքն ընդունվել է և կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության մեխանիզմները կատարելագործվել են (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող՝

Արդարադատության նախարարություն

Համակատարող

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Ազգային անվտանգության ծառայություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

"Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը.**

Միջազգային համագործակցության իրականացման մեխանիզմների և դրանցում առկա խոչընդոտների ուսումնասիրության արդյունքում Արդարադատության նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և դեռևս 2020 թվականի օգոստոսի 3-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Մասնավորապես՝ Նախագծով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում քրեական գործերով իրավական օգնության իրականացման կարգն ու պայմանները և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով՝ քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ կարգավորում չստացած հարաբերությունները: Բացի այդ, Նախագծի կարգավորման շրջանակներում քրեական գործերով իրավական օգնությունն ընդգրկում է՝ 1) իրավական օգնության մասին հարցումներ (այդ թվում՝ վարույթային և ապացուցողական գործողություններ կատարելը, փաստաթղթերի և առարկաների հանձնումը, տեղեկությունների փոխանակումը, անձանցից ցուցմունքներ կամ բացատրություններ վերցնելը, կալանավորված կամ այլ անձանց վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը, առարկաների և վայրերի զննությունը, խուզարկությունը, իրեղեն և էլեկտրոնային կամ թվային ապացույցներ ձեռք բերելը և փոխանցելը, փորձաքննություններ անցկացնելը, որպես վկա, տուժող, գույքային պատասխանող, նրանց օրինական ներկայացուցիչներ, փորձագետ Հայաստանի Հանրապետություն կանչելը և վարույթային գործողություններ կատարելը, ազատությունից զրկված անձանց որպես վկա կամ առերեսման մասնակից փոխանցելը, քրեական գործի բացահայտման համար անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև էլեկտրոնային կամ թվային տվյալների, ձայնագրությունների, այդ թվում՝ բանկային, ֆինանսական, կորպորատիվ կամ գործարար փաստաթղթերի բնօրինակների կամ հաստատված պատճենների տրամադրումը, հանցավոր ճանապարհով ստացված կամ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների և միջոցների, դրանց բացակայության դեպքում համարժեք գույքի վրա կալանք դնելը, բռնագանձված գույքի բաշխումը և այլն: 2) Հանձնումը (էքստրադիցիա), այդ թվում՝ ժամանակավոր հանձնումը: 3) Համագործակցության այլ տեսակներ (այդ թվում՝ քրեական վարույթի փոխանցումը, դատապարտյալների փոխանցումը, պատժից պայմանական ազատված անձի նկատմամբ հսկողություն իրականացնելը, օտարերկրյա պետության կայացրած դատավճռի ճանաչումը, փոխարկումը և կատարումը): 4) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված այլ հարցումներ: Քրեական գործերով իրավական օգնությունն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետության իրավասու մարմինների միջև օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված բացառությունները:

Այնուհետև, 2021 թվականին Նախագիծը քննարկվել է միջազգային փորձագետների և շահագրգիռ մարմինների հետ, ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագիծը 2021 թվականին լրամշակվել է: Ներքին քննարկումների ամփոփումից հետո Նախագիծը սահմանված կարգով կրկին կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ Արդարադատության նախարարությունը և շահագրիռ այլ մարմինները մասնակցել են «Կոռուպցիայի հակազդմանն ուղղված Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) լրամշակման աշխատանքներին և աշխատանքային քննարկումներին: Հայաստանի Հանրապետության անունից ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ:

Համաձայնագիրը սահմանում է համագործակցության հետևյալ հիմնական խնդիրներն ու նպատակները. համաձայնեցված քաղաքականության, համատեղ ծրագրերի և գործունեության մշակում և իրականացում, հակակոռուպցիոն չափանիշների ներդրում, հակակոռուպցիոն մոնիթորինգի իրականացում, համագործակցության բարելավում և ազգային օրենսդրության ներդաշնակեցում, կարգավորող իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության մեխանիզմի կատարելագործում, հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման նկատմամբ պետական և հասարակական վերահսկողության ինստիտուտների զարգացում, կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ստեղծված հասարակական միավորումների գործունեությանը պետական աջակցության տրամադրում, կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավորությունների ընդլայնում, ֆիզիկական անձանց և կազմակերպությունների ֆինանսական գործարքները ամբողջությամբ կամ մասամբ որոշակի ժամկետով կասեցնելու, ինչպես նաև նրանց գույքը տնօրինելու իրավունքի սահմանափակման հնարավորության ապահովում, եթե կան բավարար հիմքեր ենթադրելու, որ դրամական միջոցները և (կամ) այլ գույքը կոռուպցիայից ստացված եկամուտներ են:

Համաձայնագիրը անդրադառնում է նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Համաձայնագիրը վավերացված պետությունների (այսուհետ՝ Կողմեր) ազգային ջանքերի և համագործակցության արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիոն հանցագործությունների թվի հետագա աճի սպառնալիքի հաղթահարմանն ուղղված ջանքերի միավորմանը, հակակոռուպցիոն կրթության ոլորտում տեղեկատվության փոխանակման և փոխգործակցության ապահովմանը, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կողմերի միջազգային հեղինակության ամրապնդմանը: Կողմերը ձեռնարկում են նաև անհրաժեշտ միջոցներ Կողմերի ազգային օրենսդրության բարելավման և ներդաշնակեցման համար՝ հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային պայմանագրերը, որոնցում իրենք կողմ են: Համաձայնագրի յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է ներպետական մակարդակում ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք իր իրավասու մարմիններին հնարավորություն կտան անհատույց հիմունքներով ստանալ հակակոռուպցիոն գործառույթներ և գործողություններ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ ավտոմատացված տեղեկատվական և հղման համակարգերից, ինչպես նաև տվյալների բազաներից:

Յուրաքանչյուր Կողմ կարող է տեղեկատվություն տրամադրել մյուս կողմին պրոակտիվ հիմունքներով, եթե կան հիմքեր ենթադրելու, որ այդ տեղեկատվությունը անհապաղ անհրաժեշտ է Կողմին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագիծը լրամշակումից հետո սահմանված կարգով կրկին կներակայացվի հանրային քննարկման, որը նախատեսվում է իրականացնել 2023-2024 թվականներին:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Ազգային ժողով է ներկայացվել կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման առկա խոչընդոտների հաղթահարման վերաբերյալ առաջարկներ նախատեսող «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը:	Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքն ընդունվել է և կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության մեխանիզմները կատարելագործվել են (2022թ.):	Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքն չի ընդունվել և կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության մեխանիզմները չեն կատարելագործվել: Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության մեխանիզմները նախատեսող օրենքի նախագիծը մշակվել է, սակայն նախագծի հանրային քննարկումը կիրականացվնի միայն 2023-2024 թվականներին: Ուստի սույն միջոցառումը կատարված չէ:	**Կատարված չէ**

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ չեն նշվել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 34

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Ստեղծվել և գործարկվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր:

Վերստուգիչ ցուցիչ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղված կառուցակարգերը ստեղծվել են (2021թ.) և գործարկվում են (2022թ.)

Հիմնական կատարող՝

Արդարադատության նախարարություն

Համակատարողներ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)

Ազգային անվտանգության ծառայություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի սահմանման նպատակով Ազգային ժողովի կողմից դեռևս 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունվել էին «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և

հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին օրենքները: 2020 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նշանակվել էր ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտը համակարգող տեղակալը, իսկ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմում ստեղծվել էր պատասխանատու ստորաբաժանում՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը (այսուհետ՝Վարչություն):

Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով Վարչության կազմավորումից հետո դեռևս 2020 թվականին ընդունվել են Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում ներկայացվող հայտարարագրերի նմուշային ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» թիվ 2044-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում պետության տիրապետությանը հանձնված գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը և հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 2066-Ն որոշումները:

Միջազգային կառույցների և այլ պետությունների հետ համագործակցության ապահովման նպատակով դեռևս 2020 թվականի նոյեմբերից ՀՀ գլխավոր դատախազությունը անդամակցում է CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ պաշտոնական ցանցին: Անդամակցության շրջանակներում ուղարկվել են հարցումներ, այդ թվում՝ Ռուսաստան, մեկական հարցումներ՝ Չեխիա, Սլովակիա, Ֆրանսիա, Հունաստան և Կիպրոս, որոնց արդյունքում ստացվել է թվով 6 պատասխան գրություն՝ 2021 թվականի դրությամբ: Միաժամանակ, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է մի շարք միջազգային հարցում՝ Ռումինիայից, Ուկրաինայից, Բելգիայից, Մոլդովայից:

2021 թվականի ապրիլի 7-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում կնքվող հաշտության համաձայնության կնքման կարգը և օրինակելի ձևը:

Բացի այդ, առկա գործիքակազմի կատարելագործման նպատակով, Գլխավոր դատախազության կողմից մշակվել և Արդարադատության նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերին շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի, ինչպես նաև հանրային քննարկման է ներկայացվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նշված օրենքն ընդունվել է 2022 թվականի հունիսի 9-ին և ուժի մեջ է է 2022 թվականի հուլիսի 10-ից: Նշված օրենքով հստակեցվել են գործող մի շարք կարգավորումներ:

2022 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում ստացվել է քրեական գործով 50 նյութ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 25 նյութ՝ 84 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ: Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 77 որոշում (9 որոշմամբ ուսումնասիրություն է սկսվել 2021 թվականի տարեվերջին փոխանցված նյութերի հիման վրա), իսկ 18 անձի դեպքում

կայացվել է ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին 18 որոշում: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով նախաձեռնվել է 2 ուսումնասիրություն:

Սկսված ուսումնասիրությունների շրջանակներում բանկային, վարկային, ապահովագրական, առևտրային և (կամ) նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով ներկայացվել է 134 դիմում, որից 127-ը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի և 7-ը՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարան: Ներկայացված դիմումներից չի բարարարվել 19-ը, որոնցից 4-ի բողոքարկման արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացվել է բողոքն ամբողջությամբ բավարարելու վերաբերյալ որոշում: Բողոքարկված մյուս գործով դեռևս դատական ակտ չի կայացվել:

Նույն ժամանակահատվածում 109 ուսումնասիրության շրջանակում կազմվել է ուսումնասիրության նախնական արդյունքների վերաբերյալ ամփոփագիր, որից 55-ով որոշվել է դադարեցնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը:

Բացի այդ, 43 ուսումնասիրության շրջանակում ներկայացվել է նաև հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին 52 դիմում, որից 18-ը ներկայացվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, իսկ 34-ը՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Ներկայացված դիմումների վերաբերյալ Վարչությունը ստացել է ամբողջությամբ կամ մասնակի բավարարման վերաբերյալ որոշումներ, և դրանք ուղարկվել են հարկադիր կատարման՝ համապատասխան անձանց գույքի (գույքերի) վրա դրվել է արգելանք:

Ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփման վերաբերյալ եզրակացություն է կազմվել 24 ուսումնասիրության շրջանակում, որից 3-ով որոշվել է ավարտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով ուսումնասիրությունը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 11 հայցադիմում, իսկ ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ևս 10 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ: Ներկայացված բոլոր հայցերը ներկայումս քննվում են ՀՀ հակակոռուպցիոն դատարանում: 2022 թվականին ներկայացված 21 հայցերով (2023 թվականի փետրվարի դրությամբ՝ 29 հայց) բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 52 միլիարդ ՀՀ դրամ, բռնագանձման են ենթակա նաև 296 գույքեր (ստացվել են նշված գույքերի մեծամասնության միջին շուկայական արժեքները, որոնց հանրագումարը շուրջ 34 միլիարդ ՀՀ դրամ է, իրավանաբական անձանց արժեքները գնահատված չեն):

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագիծը անցել է հանրային քննարկում, դրանց վերաբերյալ իրազեկվել են շահագրգիռ անձինք և քաղաքացիական հասարակությունը (https://www.e-draft.am/projects/3819/about):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Ստեղծվել և գործարկվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր:	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղված կառուցակարգերը ստեղծվել են (2021թ.) և գործարկվում են (2022թ.)	Առկա գործիքակազմերի կատարելագործման նպատակով Գլխավոր դատախազության կողմից մշակվել և Արդարադատության նախարարության կողմից շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի, ինչպես նաև հանրային քննարկման է ներկայացվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նշված օրենքն (ՀՕ-270-Ն) ընդունվել է 2022 թվականի հունիսի 9-ին և ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 10-ից: Նշված օրենքով հստակեցվել են գործող մի շարք կարգավորումներ: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունը ձևավորվել և գործում է՝ ապահովելով օրենքով իրեն վերապահված գործառույթների իրականացումը: Միջազգային համագործակցությունն իրականացվում է: Այսպիսով սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 35

Նոր Քրեական օրենսգրքի նախագծով Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Նոր Քրեական օրենսգրքի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը մշակվել և Ազգային ժողով են ներկայացվել:

Վերստուգիչ ցուցիչ

Նոր Քրեական օրենսգրքի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը ներկայացվել են Ազգային ժողով (2021թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող՝

Արդարադատության նախարարություն

Համակատարող

Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը.**

Հաշվի առնելով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման կապակցությամբ համակարգային օրենսդրական փոփոխություններ կատարելու, ինչպես նաև քրեական օրենսդրության բարեփոխումների փոխկապակցվածության ապահովման և հատվածային լուծումներից խուսափելու անհրաժեշտությունը՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության (այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների համար) ինստիտուտը[55] ներդրվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքում, որը 2021 թվականի մայիսի 5-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է և գործում է 2022թ. հուլիսի 1-ից: Իրավաբանական անձանց պատասխանատվությանն առնչվող դրույթները ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 1-ից:

Համաձայն նոր կարգավորումների՝ իրավաբանական անձինք քրեական պատասխանատվության են ենթարկվում ինչպես կոռուպցիոն, այնպես էլ այլ հանցագործությունների համար: Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող քրեական պատասխանատվության միջոցներ են սահմանվել տուգանքը, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը, հարկադիր լուծարումը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը: Իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն սահմանելիս հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ քրեական պատասխանատվությունը հնարավորություն է տալիս ունենալ քննության մեթոդների և հարկադրանքի միջոցների առավել լայն շրջանակ, օգտագործել իրավական փոխօգնության գործիքակազմ՝ բացահայտելու հատկապես կոռուպցիոն և անդրազգային հանցավորության դրսևորումները, որում ներգրավված կլինեն իրավաբանական անձինք: Նշվածը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից և Հայաստանի Հանրապետությանը միջազգային կառույցների կողմից տրված հանձնարարականներից:[56] Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իրավաբանական անձի մասնակիցները, բաժնետերերը կամ փայատերերը ձեռնարկել են ողջամտորեն անհրաժեշտ միջոցները հանցանք կատարած անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Քրեական նոր օրենսգրքի նախագծի լրամշակման փուլում Արդարադատության նախարարության կողմից կազմակերպվել է հանդիպում-քննարկումների շարք՝ Ազգային ժողովի պատգամավորների, պետական կառավարման համակարգի, քրեական հետապնդման մարմինների, փաստաբանների պալատի և դատական համակարգի ներկայացուցիչների մասնակցությամբ:

[55] Եթե նախկինում իրավաբանական անձի օգտին որոշակի գործողություններ կատարելու դեպքում քրեական պատասխանատվության էր ենթարկվում միայն տվյալ անձը, ապա այս դեպքում պատասխանատվության է ենթարկվում ոչ միայն տվյալ անձը, այլ այդ իրավաբանական անձը: Այսպես օրինակ, ընկերության տնօրենի գիտությամբ իր աշխատակցի կողմից այդ իրավաբանական անձի հարկային պարտավորություններից խուսափելու դեպքում նոր կարգավորումների համաձայն պատասխանատվության են ենթարկվելու թե՛ աշխատակիցը, թե՛ տնօրենը և թե՛ իրավաբանական անձը:

[56] ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի և ՏՀԶԿ-ի շրջանակներում ստանձնած պարտավորություններ, դրանց կատարման գնահատումներ:

Նախագիծը տեղադրվել է նաև Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում. հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/2115/about:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Նոր Քրեական օրենսգրքի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը մշակվել և Ազգային ժողով են ներկայացվել:	Նոր Քրեական օրենսգրքի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը ներկայացվել են Ազգային ժողով (2021թ.)	Սույն միջոցառման կատարման շրջանակներում ընդունվել է դեռևս 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ նոր Քրեական օրեսնգիրքը, որով ներդրվել է նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության (այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների համար) ինստիտուտը: Իրավաբանական անձանց պատասխանատվությանն առնչվող դրույթները ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 1-ից: Այսպիսով, սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 36

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Մշակվել և Ազգային ժողով է ներկայացվել օրենսդրական փաթեթ, որով կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառումը կհամապատասխանեցվի նոր Քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների շրջանակին:

Վերստուգիչ ցուցիչ

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումներ ի, նոր Քրեական օրենսգրքի և իրավակիրառ պրակտիկայի միջև հակասությունը վերացնող օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով (2022թ.)

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Արդարադատության նախարարություն

Համակատարող

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Քննչական կոմիտե (համաձայնությամբ)

Ոստիկանություն

Ազգային անվտանգություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի
☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը.**

2021 թվականի հունիսի 30-ին ՀՀ ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որը կաշառք ստանալու նմանակումը և կաշառք տալու նմանակումը նախատեսում է որպես գաղտնի քննչական գործողություններ: Նշված օրենսգրքի 251-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները նույն օրենսգրքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440-րդ, 477-րդ, 496-րդ և 497-րդ հոդվածների, ըստ այդմ՝ հետևյալ հանցակազմերի իմաստով՝ ընտրակաշառք ստանալ, ընտրակաշառք տալ, ընտրակաշառքի միջնորդություն, շորթում, մասնավոր ոլորտում կաշառք ստանալ, մասնավոր ոլորտում կաշառք տալ, Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալ, Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալ, ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալ կամ պահանջել, կաշառք ստանալ, կաշառք տալ, կաշառքի միջնորդություն, պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործել, պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալ, կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալ, կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիա, դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալ, դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալ: Հաշվի առնելով ՀՀ քրեական նոր օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի պատշաճ կիրառման ապահովման անհրաժեշտությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»

սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որով, ի թիվս այլնի, առաջարկվում է վերը նշված՝ 251-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը նախատեսել նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածում: Նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ ազգային ժողով, և 2022 թվականի հունիսի 9-ին ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի հունիսի 09-ի ՀՕ-154-Ն օրենքով համապատասխան փոփոխություններ են կատարվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում և դրանով իսկ լուծվել է նոր Քրեական օրենսգրքի և իրավակիրառ պրակտիկայի միջև հակասությունը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերի փաթեթը ներկայացվել է բոլոր պետական մարմիններին՝ դիրքորոշման ստացման նպատակով: Քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am (https://www.e-draft.am/projects/3889/about) կայքում՝ նախագծերի հանրային քննարկումը կազմակերպելու, ինչպես նաև ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումների միջոցով:

Նախագծերի փաթեթը քննարկվել է նաև միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել և Ազգային ժողով է ներկայացվել օրենսդրական փաթեթ, որով կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվհետախուզական միջոցառումը	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումներ ի, նոր Քրեական օրենսգրքի և	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի հունիսի 09-ի ՀՕ-154-Ն օրենքով համապատասխան փոփոխություններ են կատարվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում և դրանով իսկ լուծվել է նոր Քրեական օրենսգրքի և իրավակիրառ	**Կատարված է ամբողջությամբ**

կհամապատասխանեցվի նոր Քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների շրջանակին:	իրավակիրառ պրակտիկայի միջև հակասությունը վերացնող օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով (2022թ.)	պրակտիկայի միջև հակասությունը, ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարվել է:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 37

Հանրային իրազեկման արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է և իրականացվում է:

Վերստուգիչ ցուցիչ

Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է և իրականացվել է առնվազն 5 միջոցառում (2021-2022թթ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող՝

Արդարադատության նախարարություն

Համակատարող

Վարչապետի աշխատակազմ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Զանգվածային լրատվության միջոցներ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը.**

Արդարադատության նախարարության կողմից 2022թ. լրամշակվել է դեռևս 2020 թվականին մշակված «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը (այսուհետ՝ Հաղորդակցման գործողությունների ծրագիր)՝ հաշվի առնելով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում ներկայացված առաջարկությունները: Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է Վարչապետի 2022 թվականի հուլիսի 18-ի N 820-Լ որոշմամբ, ուժի մեջ մտել 2022 թվականի հուլիսի 19-ին:

Հաղորդակցման գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել են Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների վերաբերալ իրազեկման արշավներ հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում գովազդային տեսահոլովակների հեռարձակման/ցուցադրման, սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով:

Բացի այդ, Արդարադատության նախարարությունը կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավի շրջանակներում իրազեկող տեսահոլովակներ է հեռարձակել (ցուցադրել), տեղեկատվական նյութեր է հրապարակել սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում, հնարավորության դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցներում, ինչպես նաև, իրականացվել են տեղեկատվական արշավներ Կոռուպցիայի կանխարգելման և հակազդման մարմինների գործունեության վերաբերյալ, իրականացվել են վերապատրաստումներ և սեմինարներ գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով, պետական մարմինների մամուլի քարտուղարների կամ հասարակայնության կապերի մասնագետների և լրագրողների համար կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով, ինչպես նաև տեղեկատվական նյութեր են հրապարակվել Ազդարարման համակարգի և ազդարարման մեխանիզմների, հանրային իրազեկում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի՝ www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին:

Հարկ է նշել, որ Հաղորդակցման գործողությունների ծրագրի իրականացման կիսամյակային հաշվետվությունը հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում և հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքում, որի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումներով՝ https://moj.am/storage/uploads/REPORT%20ON%20COMMUNICATION%20ACTION%20PLAN.pdf; https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=138:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագիծը դրվել է հանրային քննարկման Իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում՝ «www.e-draft.am» (https://www.e-draft.am/projects/3879) և ներկայացվել է շահագրգիռ մարմիններին՝ վերջիններիս դիրքորոշման ստացման նպատակով: 2022թ. հունիսի 28-ին Նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է և իրականացվում է:	Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է և իրականացվել է առնվազն 5 միջոցառում (2021-2022թթ.):	Սույն միջոցառման կատարման շրջանակներում 2022 թվականին հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է և ամբողջությամբ իրականացվել է, ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 38

«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Սահմանվել են առարկայական չափորոշիչները:

Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» դասընթացը կամ առարկան:

Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար ստեղծվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր:

Վերստուգիչ ցուցիչ

Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների համար առնվազն 2 անգամ ցուցադրվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսոցողական նյութեր (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող

Բարձրագույն ուսումնական հաստատություններ

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը.**

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում մշակվել և իրականացվում է 428 մշակված թեմատիկ առարկայական ծրագրեր՝ «Կոռուպցիայի իրավական բնութագիրը», «Հակակոռուպցիոն քաղաքականությունը», «Հակակոռուպցիոն երևույթի հասկացությունը»,«Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում», «Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները և գնահատումները», «Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը և խնդիրները», «Հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները» և այլ թեմաներով, որոնց ուսանողների թիվը՝ 8430 է:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում մշակվել և իրականացվում են թվով 244 թեմատիկ առարկայական ծրագրեր՝ «Կոռուպցիայի դրսևորումներն ու մակարդակները», «Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Քրեական դատավարության իրավունք հասկացությունը/խնդիրները և սուբյեկտները, «Դատական քննության փուլերը/վարույթը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում/», «Միջազգային իրավունք», «Հասկացությունը և էությունը» և այլ թեմաներով, որոնց ուսանողների թիվը՝ 3396 է:

«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան բուհերում դասավանդվում է 2021-2022 ուսումնական տարվանից: Բարձրագույն ուսումնական հաստատություններում հասարակագիտական առարկաների շրջանակում իրականացվում են հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերող թեմաներով դասընթացներ: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմատիկ ծրագիրը դասավանդվում է ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում:

«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան ներառված է նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերում և դասավանդվում է:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Միջոցառման իրականացումը չի պահանջել հանրային քննարկում և քաղաքացիական հասարակության մասնակցություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ օրենսդրության բուհերն ինքնուրույն են ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման, հաստատման հարցերում:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Սահմանվել են առարկայական չափորոշիչները: Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» դասընթացը կամ առարկան: Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար ստեղծվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր:	Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների համար առնվազն 2 անգամ ցուցադրվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր (2022թ.):	«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան բուհերում դասավանդվում է 2021-2022 ուսումնական տարվանից: Բարձրագույն ուսումնական հաստատություններում հասարակագիտական առարկաների շրջանակում իրականացվում են հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերող թեմաներով դասընթացներ: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմատիկ ծրագիրը դասավանդվում է ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան ներառված է նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերում և դասավանդվում է: Հասարակագիտական առարկաների շրջանակներում իրականացվել են հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերող թեմաներով դասընթացներ և ուսանողների համար ցուցադրված հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութերը ցուցադրված են: Այսպիսով սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է ամբողջությամբ:	**Կատարված է ամբողջությամբ**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 39

Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Սահմանվել են առարկայական չափորոշիչները: Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է: Ավագ դպրոցների աշակերտների համար ստեղծվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր:

Վերստուգիչ ցուցիչ

Երևան քաղաքի առնվազն 40, մարզերի առնվազն 5 դպրոցների ավագ դպրոցների աշակերտներին ցուցադրվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսոցողական նյութեր (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող՝

Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)

Համակատարող

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

"Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը.**

Դեռևս 2021 թվականի փետրվարի 4-ին ընդունվել է «ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության N 136-Ն որոշումը, որը սահմանում է հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու դրույթները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլի 30-ի N 19-Լ հրամանով հաստատվել են 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով «Հասարակագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը: Առարկայական վերջնարդյունքներում և ծրագրային բացվածքում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին.

Կոռուպցիայի տեսակները, պատճառներն ու հետևանքները (9-րդ դասարան)

Տնտեսական մրցակցություն, ընտրություններ (ընտրախախտումներ), քաղաքացիական մասնակցություն և վերահսկողության ձևեր (10-րդ դասարան)

Կոռուպցիայի դեմ պայքարի ձևերն ու դրանց արդյունավետությունը (11-րդ դասարան):

2021-2022 ուսումնական տարվա արդյունքների վերլուծության հիման վրա լրամշակված «Հասարակագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը 2022-2023 ուսումնական տարում ևս դասավանդվել են ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Հիմք ընունելով 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչի և ծրագրերի փորձարկման արդյունքները՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 62-Ն հրամանով հաստատվել են հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի 7-րդ և 10-րդ դասարանների ծրագրերը:

Տավուշի մարզի շուրջ 80 հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում իրականացվում է նախագծային ուսուցում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացումը չի ենթադրում հարյաին քննարկում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

Սահմանվել են առարկայական չափորոշիչները: Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է: Ավագ դպրոցների աշակերտների համար ստեղծվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր:	Երևան քաղաքի առնվազն 40, մարզերի առնվազն 5 դպրոցների ավագ դպրոցների աշակերտներին ցուցադրվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսոցողական նյութեր (2022թ.):	Սույն միջոցառման կակատարման շրջանակներում սահմանվել են առարկայական չափորոշիչները: Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է, ավագ դպրոցների աշակերտների դասագրքերում ներառվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր, սակայն այդ նյութերի ուսուցանումն իրականացվել է միայն Տավուշի մարզի շուրջ 80 հանրակրթական ուսումնական հաստատություններում: Տվյալ դեպքում, նկատի ունենալով, Երևան քաղաքի առնվազն քառասուն դպրոցներում, ինչպես նաև առնվազն այլ չորս մարզում չեն ցուցադրվել հակակոռուպցիոն թեմաներով ուսուսողական նյութերը, սույն միջոցառումը գնահատվում է մասնակի կատարված:	**Կատարված է մասնակի**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

   Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40

Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության թեմայով

2022 թվականի ակնկալվող արդյունք

Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ:

Վերստուգիչ ցուցիչ

Յուրաքանչյուր տարի 50 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են (2021-2022թթ):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող՝

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Համակատարող

Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը**

2022 թվականի ընթացքում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է «Բարեվարքություն» թեմայով 10 վերապատրաստում, որին մասնակցել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված համապատասխան մարմինների 280 քաղաքացիական ծառայող: Վերապատրաստման դասընթացն ընդգրկել է հետևյալ թեմաները՝

- Բարեվարքության շրջանակը հանրային ծառայությունում
- Բարեվարքության կառավարում
- Բարեվարքությունը անձնակազմի կառավարման գործընթացներում
- Բարեվարքության բաղադրիչները:

«Բարեվարքություն» թեմայով վերապատրաստումը Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպման շրջանակներում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Վերը նշված վերապատրաստումն անցկացրել է ՀՀ պետական կառավարման ակադեմիան:

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ	Յուրաքանչյուր տարի 50 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են (2021-2022թթ):	Սույն միջոցառման շրջանակներում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է «Բարեվարքություն» թեմայով 10 վերապատրաստում, որին մասնակցել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված համապատասխան մարմինների 280 քաղաքացիական ծառայող: Ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 41

Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Քաղաքացիական ծառայողների ուսուցումը կազմակերպվել է հեռավար ուսուցման մոդելի կիրառմամբ

Վերստուգիչ ցուցիչ

Ըստ մոդուլների՝ իրականացվում է ուսուցում (2021թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող՝

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Համակատարող

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը.**

Ծրագրով նախատեսված արդյունքը ձեռք է բերվել դեռևս 2021 թվականի դրությամբ:

2021 թվականի 4-րդ եռամսյակում կազմակերպվել է «Բարեվարքություն» թեմայով հեռավար ուսուցում համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայողների համար, որին մասնակցել են թվով 133 քաղաքացիական ծառայողներ: 2022 թվականին 6 մոդուլներով հեռավար ուսուցում են անցել 784 քաղաքացիական ծառայողներ:

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ	Քաղաքացիական ծառայության համակարգում հեռահար ուսուցման մոդուլները մշակված են (2020թ.) Ըստ մոդուլների՝ իրականացվում է ուսուցում (2021թ.)	Քաղաքացիական ծառայության համակարգում հեռահար ուսուցման մոդուլները մշակված են և պարբերաբար, ըստ մոդուլների, իրականացվում է ուսուցում, ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42

Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը

Վերստուգիչ ցուցիչ

2022թ.-ից բոլոր թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների թեստավորման փուլը հեռարձակվում է:

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

"Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկլավող փաստացի արդյունքը.**

Դեռևս 2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը և Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջը, որից հետո 2020 թվականի հոկտեմբերի 1-ից պետական մարմիններում թափուր պաշտոնների համալրման մրցույթներն անցկացվում են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով: Բացի այդ, Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել և ամենօրյա ռեժիմով իրականացրել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակով իրականացվող գործառույթների,

գործողությունների շղթայի փորձարկման և դրանց արդյունքում քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը սպասարկող կազմակերպությանը առաջարկների ներկայացման աշխատանքներ: Համապատասխան մարմինների մարդկային ռեսուրսների և/կամ քաղաքացիական ծառայության գործընթացների համար պատասխանատուների համար կազմակերպվել է «Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի կիրառությունը և ֆունկցիոնալությունը» թեմայով իրազեկման դասընթացներ:

Ներկայումս պետական մարմիններում թափուր պաշտոնների համալրման մրցույթներն օնլայն հեռարձակման համակարգի հետ համատեղ անցկացվում են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգերի ստեղծման և գործարկման գործընթացներում հաշվի են առնվել Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, շահագրգիռ մարմինների և համակարգերը ստեղծող և գործարկող կազմակերպության ներկայացուցիչների միջև տեղի ունեցած հանդիպում-քննարկումների ժամանակ բարձրաձայնված կարծիքներն ու առաջարկները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության	2022թ.-ից բոլոր թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների թեստավորման փուլը հեռարձակվում է:	Գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը, ներկայումս պետական մարմիններում թափուր պաշտոնների համալրման մրցույթներն օնլայն հեռարձակման համակարգի հետ համատեղ անցկացվում են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով: Ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է:	**Կատարված է ամբողջությամբ**

տեղեկատվական համակարգը			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 43

Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում

2022 թվականի ակնկալվող արդյունք

Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և մարզերում, իրականացվող հարցման արդյունքում վեր են հանվել հանրության կարծիքով առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը, քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Վերստուգիչ ցուցիչ

Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ իրականացվել են 2 հարցումներ, հարցումների արդյունքները հրապարակվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի ու Արդարադատության նախարարության կայք էջերում (2022թ.):

Կատարող մարմին՝

Հիմնական կատարող՝

Արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Համակատարող

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ

Կատարման կարգավիճակը (2022 թվական)

☐Կատարված է ամբողջությամբ

"Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը.**

Դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 24-ն իրականացվել է հասարակության շրջանում առավել կոռումպացված ոլորտների վերհանման, կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ ուսումնասիրություն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համագործակցության միջոցով: Արդյունքում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնին (CRRC) պատվիրակվել է իրականացնել Հայաստանի բնակչության շրջանում հարցում՝ նպատակ ունենալով ստանալ հնարավորինս ճշգրիտ տեղեկություններ ՀՀ բնակիչների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ ընկալումների մասին: Հարցումը նախատեսված էր 18 և բարձր տարիքի ՀՀ քաղաքացիների համար, ընդհանուր՝ 1500 հարցվողների համար, որոնք բնակվում են ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի 10 մարզերի քաղաքային/գյուղական բնակավայրերում:

2022 թվականին վերլուծվել են հետազոտության արդյունքները և քննարկվել Հանձնաժողովի հետ, ինչի հիման վրա մշակվում է հետագա գործողությունների ծրագիրը:

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի կողմից և Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվում է «Հաշվետու ինսիտուտներ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագիր, որի նպատակային ուղղություններից է «Աջակցությունը ՀՀ ոստիկանության բարեփոխումներին»: Վերոնշյալի շրջանակներում ԵԱՀԿ աջակցությամբ IMR կազմակերպության կողմից իրականացվել է ՀՀ ոստիկանության գործունեության հանրային ընկալման վերաբերյալ համապարփակ հարցում: Համատեղ մշակված հարցման հարցաշարում՝ ի թիվս այլ հարցերի, ներառված էին նաև կոռուպցիայի, ոստիկանության հանդեպ հանրային վստահության մակարդակի հետ կապված հարցեր: Ըստ Ոստիկանության վերաբերյալ հանրային կարծիքի հարցման նախնական արդյունքների՝ հարցվողների 70%-ը ոստիկանության նկատմամբ իրենց վերաբերմունքը դրական են գնահատել: Ոստիկանությունը նաև առաջատար է իրավապահ հաստատությունների ոլորտում՝ վստահության 58% ցուցանիշով: Հարցման վերջնական և ավելի համապարփակ արդյունքները կհրապարակվեն ԵԱՀԿ կողմից՝ առաջիկայում:

Նշվածից բացի, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվել է Հանրային ոլորտի բարեվարքության վերաբերյալ հարցումը, շուտով արդյունքները կհրապարակվեն:

Միևնույն ժամանակ, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվել է Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf):

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Հարցման արդյունքները ուսումնասիրություն իրականացնողների կողմից քննարկվել է շահագրգիռ մարմինների և ոլորտային ներկայացուցիչների հետ:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ**	**Կատարման կարգավիճակը**
Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և մարզերում, իրականացվող հարցման արդյունքում վեր են հանվել հանրության կարծիքով առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն	Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ իրականացվել են 2 հարցումներ, հարցումների արդյունքները հրապարակվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի ու Արդարադատության նախարարության կայք էջերում (2022թ.):	Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ իրականացվել է մեկ հարցում, որի հրապարակայնությունը սահմանված կարգով ապահովվել է: Բացի այդ, իրականացվել է Հանրային ոլորտի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքները շուտով կհրապարակվեն: Այսպսիով սույն միջոցառումը մեծամասամբ է կատարվել:	**Կատարված է մեծամասամբ**

միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը, քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

ԳՈՐԾՈՆԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ) ՄՈՆԻԳՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այսպիսով, ամփոփելով 2022 թվականի, և ըստ այդմ, Հակակոռուպցիոն իրականացման եզրափակիչ մոնիթորինգի և գնահատման արդյունքները՝ հարկ է արձանագրել, որ 2019-2022 հակակոռուպցիոն ռազմավարությունը 80, 2%-ով իրականացվել է: 2022 թվականին նախատեսված է եղել ավարտել բոլոր 43 միջոցառումների կատարումը, սակայն փաստացի ամբողջությամբ կատարվել է 25 միջոցառում, մեծամասամբ՝ 8 միջոցառում, մասնակի՝ 7 միջոցառում, չի կատարվել 3 միջոցառում:

Ամբողջությամբ կատարված միջոցառումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հիմնականում ամբողջությամբ կատարված են այն միջոցառումները, որոնք միտված էին օրենսդրական փոփոխությունների իրականացմանը (օրինակ, հայտարարագրման համակարգի բարելավմանը և ծախսերի հայտարարագրման պահանջի սահմանմանն ուղղված օրենսդրական ակտերի ընդունումը, գնումների ոլորտի բալերավման նպատակով օրենսդրական փոփոխությունները, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության բարելավմանն ուղղված օրենսդրական ակտերի ընդունումը, նվերների, անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կարգավորումների բարելավումներ, նոր Քրեական օրենսգրքի և նոր Քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը, բանկային հաշիվների ստեղծմանն ուղղված օրենսդրական փոփոխությունը և այլն) կամ նոր մարմինների ստեղծմանը (այսպես օրինակ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Հակակոռուպցիոն կոմիտեի, հակակոռուպցիոն դատարանների ձևավորումը): Ընդ որում մի շարք ամբողջությամբ կատարված միջոցառումներ (օրինակ, 16--րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ միջոցառումները) դեպքում առաջընթաց է գրանցվել այն առումով, որ ավարտվել են նախատեսված ժամկետներից առավել վաղ ժամկետներում, ինչը հնարավորություն է տվել որոշ դեպքերում իրավակիրառ փորձ ունենալ մինչ հաշվետու ժամանակահատածի ավարտը:

Մեծամասամբ կատարված միջոցառումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանց ամբողջական կատարմանը հիմնականում խոչընդոտել են Ազգային ժողովի կողմից օրենքների ընդունման ձգձգումը կամ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների՝ Հանրապետության նախագահի կողմից սահմանադրականության վիճարկման հիմքով այդ օրենքների ուշ ուժի մեջ մտնելը և դրա արդյունքում վերապատարստումների հետաձգումը (օրինակ՝ 3-րդ միջոցառման դեպքում) և դրա հետևանքով, օրինակ մարմինների ուշ ձևավորումը (օրինակ՝ 2-րդ միջոցառման դեպքում), օրենսդրական կարգավորումների՝ ուշ ուժի մեջ մտնելու արդյունքում վերապատրաստումների ձգձգումը: Մեկ այլ դեպքում, օրինակ, 10-րդ միջոցառումը գնահատվել է մեծամասամբ կատարված այն հիմքով, որ «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման վերաբերյալ գնահատման արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթը չի քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստին, չնայած այն հանգամանքին, որ Քաղաքացիական ծառայության գարսենյակը հարցը ներկայացրել էր նիստի օրակարգի ընդգրկման նպատակով:

Մասնակի կատարված միջոցառումների դեպքում հիմնական խոչընդոտ է հանդիսացել ռեսուրսների անբավարարությունը (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կատարման ենթակա միջոցառումների դեպքում), կամ Ազգային ժողովի

կողմից օրենքների առավել ուշ ժամկետում ընդունվելը կամ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ժամկետներում նման մեծածավալ բարեփոխումը ամբողջական ավարտին հասցնելու անհնարինությունը:

Չկատարված միջոցառումների (միջոցառումներ 11, 14 և 33) առնչությամբ հարկ է նշել, որ այդ միջոցառումների շրջանակներում ևս որոշակի աշխատանքներ իրականացվել են, սակայն ըստ էության չեն ապահովվել մասնակի կատարված համարվելու համար սահմանված 30% և ավելի շեմը, կամ կատարված աշխատանքներն ըստ էության համահունչ չեն ռազմավարական նպատակի իրագործմանը, ուստի սահմանված մեթոդաբանությանը համապատասխան՝ այդ միջոցառումները գնահատվել են չկատարված:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 4 տարիների մոնիթորինգը ցույց է տվել, որ, ըստ էության, Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշմամբ ՀՀ-ում ստեղծված ռազմական դրության հետևանքով ստեղծված իրավիճակը, սահմանված սահմանափակումները և տվյալ ժամանակահատվածի համար պետական կառավարման համակարգի առաջնահերթությունների հարկադրված վերանայումը և փոփոխությունը էապես ազդել են Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վրա՝ հանդիսանալով բազմաթիվ միջոցառումների ձգձգման պատճառներից հիմնականը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման արդյունքում, ըստ էության, ամբողջությամբ կատարվել են շուրջ 25 միջոցառում, մնացյալ միջոցառումների անավարտ գործողությունների կապակցությամբ անհրաժեշտ է դիտարկել դրանք նոր հակակոռուպցիոն ռազմավարությամբ ավարտին հասցնելու անհրաժեշտությունը՝ այդպիսով իսկ ապահովելով հակակոռուպցիոն բարեփոխումների շարունակականությունը (մանրամասները ներկայացված են սույն զեկույցի հավելված 1-ում՝ անավարտ բարեփոխումների ցանկում):

Հակակոռուպցիոն ռազմավարության պատասխանատու մարմինների ինքնագնահատումների և Մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատու մարմնի՝ Արդարադատության նախարարության գնահատման ուսումնասիրությունից և համադրությունից (մանրամասները տես սույն զեկույցի Հավելված 2-ում) պարզ է դարձել, որ գնահատման արդյունքները մեծամասամբ համապատասխանում են, իսկ տարբերությունները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ պատասխանատուները գնահատումն իրականացրել են միայն իրենց իրավասության շրջանակում կատարված աշխատանքների մասով՝ որպես համակատարող մարմին:

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքային մոնիթորինգի իրականացման համատեքստում կարևոր է նաև Հակակոռուպցիոն ռազմավարության Հավելված 2-ով սահմանված՝ ռազմավարական ուղղությունների համար սահմանված արդյունքային ցուցիչների ապահովման առնչությամբ արձանագրված արդյունքների դիտարկումը:Այսպես.

- ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԲԱԺՆԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ

Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համարգին առնչվող միջոցառումների համար սահմանված են հետևյալ արդյունքային մոնիթորինգի ցուցիչները՝

• Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների թիվ. հիմքային՝ 2019թ.՝ 0, 2022թ. առնվազն 50

• Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն ներկայացված գործերի քանակ, հիմքային 2019թ.-0 գործ, 2022թ.՝ առնվազն 3 գործ

• Ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցված քրեական վարույթների թիվը. հիմքային՝ 2020թ.1232 գործ, 2020 թվականի համեմատությամբ 2022 թվականին աճ 10%-ով

Փաստացի գրացված արդյուքների մասով հարկ է նշել հետևյալը.

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների թիվ. հիմքային՝ 2019թ.՝ 0, 2022թ. 140, այսինքն՝ ակնկալվող արդյունքից շուրջ 3 անգամ ավելի արդյունք
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն ներկայացված գործերի քանակ, հիմքային 2019թ.-0 գործ, 2022թ.՝ 6 գործ, այսինքն՝ ակնկալվող արդյունքի կրկնակի արդյունք
- Ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցված քրեական վարույթների թիվը. հիմքային՝ 2020թ.1232 գործ, 2020 թվականի համեմատությամբ 2022 թվականին՝ 896, այսինքն՝ ակնկալվող 10% աճի փոխարեն նվազում շուրջ 27%

Այսպիսով, նշված ցուցանիշների համադրությունից բխում է, որ ըստ էության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը արդյունավետորեն կարողացել է իրականացնել վարչական վարույթներ: Ընդ որում, եթե դիտարկենք 1 տարվա ընթացքում տրված բարեվարքությունների եզրակացությունների քանակը (505), ապա այդ համատեքստում ևս կարելի է փաստել որ ըստ էության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ապահովել է Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված՝ Հակակոռուպցիոն ինիստուտիոնալ կանխարգելման մարմնից ակնկալվող արդյունքները:

Ինչ վերաբերում է իրավապահ մարմինների գործունեությանը, ապա ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցված քրեական վարույթների թվի նվազում է գրանցվել, չնայած, որ ակնկալվում էր 10% աճ: Նշվածի համատեքստում անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն՝ հասկանալու ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցված քրեական վարույթների թվի նվազման պատճառները:

Ըստ էության, հարկ է արձանագրել, որ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններին առնչվող ռազմավարական նպատակի արդյունքային ցուցանիշների համատեքստում դրական արդյունքներ ապահովվել են կոռուպցիայի կանխարգելման շրջանակում: Այս կապակցությամբ հարկ է նաև հաշվի առնել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն, ի տարբերություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, իր գործունեությունը սկսել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորումից շուրջ 2 տարի հետո:

Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների գործունեությանը, ապա վերջիններիս ստեղծվել են միայն 2022 թվականի ամռանը, ուստի վերջիններիս գործունեության արդյունավետությունը հնարավոր կլինի ուսումնասիրել հաջորդիվ տարիների ընթացքում:

- ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԲԱԺՆԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ

Կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող միջոցառումների համար սահմանված արդյունքային մոնիթորինգի ցուցիչների և դրանցով փաստացի գրանցված արդյունքների վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

<u>Կոռուպցիայի կանխարգելում ենթաբաժին</u>

• Տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիայի հանրային ընկալման վերաբերյալ հարցումների համեմատություն. հիմքային՝ ԹԻ և ՀՌԿԿ (CRRC) Հայաստան կազմակերպության կողմից իրականացված «2019թ. Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն» հետազոտության արդյունքներ, 2022 թվականի վերաբերյալ համանման հետազոտության արդյունքներ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համանման հարցում չի կատարվել 2022 թվականին, սույն ցուցիչի առնչությամբ հնարավոր չէ գնահատել փաստացի արձանագրված արդյունքները:

<u>Կոռուպցիայի կանխարգելում (բարեվարքություն) ենթաբաժին</u>

- **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրում, հիմքային՝ 2020թ.-35, 2022թ. ակնկալվող-50, 2022թ.փաստացի-42**

Հարկ է հավելել, որ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել է թվով 42 դիմումի և 10 մեդիա հրապարակման ուսումնասիրություն: 42 դիմումների վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է մասնագիտական խորհրդատվություն:

Այսպիսով, թեև մասնագիտական խորհրդատվության տրամադրման քանակը չի հատել հիմքային ցուցիչը, սակայն պետք է նշել, որ բացի 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ստացված դիմումներից և մեդիա հրապարակումներից, Հանձնաժողովն իրականացրել է նաև սեփական նախաձեռնությամբ թվով 107 ուսումնասիրություն՝ պատգամավորների կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման վերաբերյալ: Այսինքն, ըստ էության, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահանջների պահպանության նկատմամբ ապահովվել է վերահսկողություն:

- **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության վերաբերյալ եզրակացություններ. հիմքային՝ 2019-0, 2022թ.-ին՝ ակնկալվող՝ 100 եզրակացություն, փաստացի՝ 2022թ.-ին՝ 505 եզրակացություն**

Այսպիսով, 2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող թվով 512 անձանց վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել 505 խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Այսինքն, 2022թ. նախանշված հիմքային 100-ի շեմը գերազանցվել է 405-ով, ինչը վկայում է այն մասին, որ բարեվարքության ստուգման գործիքակազմն արդյունավետորեն կիրարկվում է:

<u>Կոռուպցիայի կանխարգելում (հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական շահառուներ, տնտեսական մրցակցության պաշտպանություն) ենթաբաժին, ցուցիչ՝</u>

- **Հայտարարատու անձանց շրջանակի ընդլայնում. հիմքային՝ 2019թ.-շուրջ 3000 հայտարարատու, 2022թ.-ակնկալվող՝ շուրջ 9000 հայտարարատու, 2022թ.- փաստացի՝ շուրջ 6000 հայտարարատու**

Այսինքն, սույն դեպքում եռակի աճի փոխարեն հայտարարատու պաշտոնատար անձի կրկնակի աճ է արձանագրվել: Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ ըստ էության, հայտարարագիր ներկայացնելու պարտականություն սահմանված է միջազգային փորձին համապատասխան կոռուպցիայի տեսանկյունից ռիսկային բոլոր պաշտոնների համար: Նշվածի համատեքստում հատկանշական է, որ 2022 թվականի դեկտեմբերին «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխության և լրացման արդյունքում 2024 թվականից հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը կծագի նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարների (կոլեգիալ գործադիր մարմնի անդամների) համար, ինչը ևս կհանգեցնի հայտարարատուների թվի աճին:

- **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հայտարարագրերի ստուգում և վերլուծություն. հիմքային՝ 2020թ.-637, 2020 թվականի համեմատությամբ 2022 թվականին-ակնկալվող աճ՝ 20%, փաստացի՝ 2022 թվականին-աճ 784% կամ 7,8 անգամ աճ**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի ընթացքում վերլուծված և ստուգված հայտարարագրերի թիվը՝ թվով 256 պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծություն (որից 97-ը բարեվարքության վերաբերյալ գույքային դրության ուսումնասիրության շրջանակներում, թվով 159 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների՝ ստուգված և վերլուծված հայտարարագրերի թիվը՝ 3044), թվով 1703 հայտարարագրերի ստուգում (ստուգված հայտարարագրերի թիվ): Ընդհանուր ստուգված և վերլուծված հայտարարագրերի թիվը՝ **շուրջ 5000**: Նշված արդյուքներից կարելի է եզրահանգել, որ հայտարարագրերի ստուգման գործընթացը արդյունավետորեն իրականացվում է:

- **Հայտարարագիրը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու կամ համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրված տվյալը սխալ կամ ոչ ամբողջական ներկայացնելու համար կիրառված պատասխանատվության միջոցները. հիմքային՝ 2020թ.-61, 2020 թվականի համեմատությամբ 2022 թվականին-10% աճ, փաստացի՝ 2020 թվականի համեմատությամբ 2022 թվականին-118 վարույթ կամ 193% աճ**

2022 թվականի հարուցված հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ թվով 118 վարույթներից կարճվել են թվով 107 վարույթ, իսկ վարչական տույժը կիրառվել է 11 վարույթի արդյունքում, որից 10-ի դեպքում կիրառվել է տուգանք՝ 200 000 ՀՀ դրամի չափով (որից, 8-ը՝ հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով, 2-ը՝ հայտարարագիր չներկայացնելու հիմքով), 1-ի դեպքում՝ նախազգուշացում վարչական տույժը՝ հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման հիմքով: Այսինքն, ըստ էության, արդյունավետորեն ապահովվել նաև հայտարարգրերին առնչվող իրավախախտումների բացահայտման և իրավական հետևանքի կիրառման մեխանիզմները:

- **Իրական շահառուների բացահայտման պահանջներ են սահմանվել առնվազն 3 ոլորտներում, փաստացի՝ բոլոր ոլորտներում**

Իրական շահառուների բացահայտման պահանջներ են սահմանվել ՀՀ-ում գրանցված բոոլոր իրավաբանական անձանց համար, բացի այդ, 2023 թվականի մարտի 10-ի դրությամբ իրավաբանական անձնաց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացվել է շուրջ 37000 հայտարարագիր: Այսինքն, իրական շահառուների բացահայտման պահանջը փաստացի կիրառվում է:

- **Միջազգային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության ինդեքսի 7–րդ՝ ապրանքային շուկա ենթաինդեքսի ցուցանիշ. հիմքային՝ 2019թ. -44-րդ հորիզոնական, 2022թ. - առաջընթաց առնվազն 5 հորիզոնականով**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշյալ ինդեքսի՝ 2022 թվականի տվյալները չեն հրապարակվել, ուստի հնարվոր չէ կատարել համեմատություն:

<u>Կոռուպցիայի կանխարգելում (պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում)) ենթաբաժին, ցուցիչ՝</u>

- **Ազդարարման էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված ազդարարումների քանակը. հիմքային 2019-188, 2022թ.- ակնկալվող աճ՝ 30%-ով, փաստացի՝ 116 ազդարարում, այսինքն՝ նվազում շուրջ 61%-ով**

Տվյալ դեպքում ազդարարման էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված ազդարարումների քանակի ակնկալվող աճի փոխարեն արձանագրված հետընթացը վկայում է այն մասին, որ կամ նվազել են կոռուպցիոն դեպքերը, կամ ազդրարաներն ունեն անվստահություն իրենց ազդարարումների քննության առնչությամբ կամ առկա է վախի մթնոլորտ: Նշված հետընթացի պատճառը

հասկանալու համար անհրաժեշտ է իրականացնելու ուսումնասիրություն՝ հասկանալու նման հետընթացի հնարավոր պատճառները, իսկ նոր հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսել այդ խնդիրների լուծման ուղիները:

- **Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am-ում նախագծերի հանրային քննարկումների մասնակցած անձանց աճ. հիմքային՝ 2019-թ. ըստ կայք կատարված այցելությունների քանակի՝ 244694 և ըստ ներկայացված առաջարկությունների՝ 2734, 2022թ՝ 30% աճ, 2022 թվականի դրությամբ www.e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի դիտելիությունը՝ այցելությունների քանակը 353312 (2022 թվականի ապրիլ-դեկտեմբերի ամիսների միջին ցուցանիշ) է, այսինքն՝ 2022թ՝ 144,3% աճ:**

Նշված վիճակագրական տվյալներից հետևում է, որ Իրավական ակտերի նախագծերի միասնական հարթակի այցելուների քանակը **144,3%-ով** աճել է, ինչը ցույց է տալիս հասարակական հետաքրքրության աճը իրավական ակտերի մշակման գործընթացին մասնակից լինելու տեսանկյունից, սակայն ներկայացրած առաջարկությունների վիճակագրության բացակայությունը հնարավորություն չի տալիս ամբողջական պարզել՝ արդյոք հասարակության փաստացի մասնակցության աճ գրանցվել է, թե ոչ:

- **Միջազգային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության ինդեքսի 1–ին՝ ինստիտուտներ շուկա ենթաինդեքսի թափանցիկություն ցուցանիշ. հիմքային՝ 2019թ. ՝ 91-րդ հորիզոնական, 2022թ. ՝ առաջընթաց առնվազն 5 հորիզոնականով**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշյալ ինդեքսի՝ 2022 թվականի տվյալները չեն հրապարակվել, ուստի հնարավոր չէ կատարել համեմատություն:

- **Միասնական հարթակով ստացվել է առնվազն 50 բողոք և հարցում, որոնց առնվազն 50-%-ին տրվել է համապատասխան լուծում, փաստացի՝ 2021 թվականին էլեկտրոնային հարցումների միասնական erequest.am հարթակով ուղարկվել են 8.000-ից ավելի բողոք և 14.000-ից ավելի հարցում**

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ բողոքների և հարցումների քանակը 2019 թվականի համեմատությամբ աճել է շուրջ 440 անգամ, սակայն դրանց քննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

➢ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն ռազմավարության Հավելված 2-ով սահմանված՝ կոռուպցիոն գործերի քննության առնչությամբ սահմանված արդյունքային ցուցիչների և փաստացի արձանագրված արդյունքների համադրության վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

- **Կոռուպցիոն հանցագործություններով հարուցված քրեական գործերի և մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի համեմատություն, հիմքային՝ 2020- հարուցված 1232 քրեական գործ, մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 183 քրեական գործ 410 անձի վերաբերյալ, 2022թ. ակնկալվող արդյունք՝ աճ 30%-ով, փաստացի արդյունք՝ 2022թ. 896 քրեական վարույթ (27 %-ով անկում) և մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 178 քրեական գործ 397 անձի վերաբերյալ (անկում 2.7%-ով)**

Այսպիսով, հարուցված քրեական գործերի և մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի համեմատության համատեքստում 2022 թվականին արձանագրվել է հետընթաց, ուստի անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ անկման պատճառները հասկանալու համար:

- **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով դատարան ուղարկված գործերի քանակ, հիմքային 2020թ.՝ 0, 2022թ. ակնկալվող՝ առնվազն 5 գործ/հայց, փաստացի՝ 2022թ. 21 գործ/հայց**

Նշյալի համատեքստում հարկ է հավելել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 11 հայցադիմում, իսկ ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ևս 10 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ: Ներկայացված բոլոր հայցերը ներկայումս քննվում են ՀՀ հակակոռուպցիոն դատարանում: 2022 թվականին ներկայացված 21 հայցերով (2023 թվականի փետրվարի դրությամբ՝ 29 հայց) բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 52 միլիարդ ՀՀ դրամ, բռնագանձման են ենթակա նաև 296 գույքեր (ստացվել են նշված գույքերի մեծամասնության միջին շուկայական արժեքները, որոնց հանրագումարը շուրջ 34 միլիարդ ՀՀ դրամ է, իրավանաբական անձանց արժեքները գնահատված չեն): Այսպիսով, նշված տվյալների, ակնկալվող արդյունքի և փաստացի արձանագրված արդյունքից կարելի է եզրահանգել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգերը, ըստ էության, հաջողությամբ կիրարկման գործընթաց են անցնում:

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն ռազմավարության Հավելված 2-ով սահմանված՝ հակակոռուպցիոն իրազեկման և կրթության առնչությամբ սահմանված արդյունքային ցուցիչների և փաստացի արձանագրված արդյունքների համադրության վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

- **Կառավարության կողմից հակակոռուպցիոն ծրագրերի մասին քաղաքացիների տեղեկացվածությունը, հիմքային՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից 2019թ. դեկտեմբերի 9–ին հրապարակված հարցումների արդյունքների համեմատություն 2022թ. համանման հարցման արդյունքների հետ:**

Նշված ուսումնասիրության համադրելի արդյունքներ 2022 թվականի համար հասանելի չեն:

Միևնույն ժամանակ հարկ է հավելել, որ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվել է Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, որի շրջանակում կատարված՝ պետական մարմինների և հասարարական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածության առնչությամբ հարցման արդյունքները ցույց են տվել, որ որ Հարցվածների 44,1%- ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի: Միևնույն ժամանակ, հասարակության մեջ մոտ 20%-ով ավելացել է կոռուպցիայի շուրջ տեղեկատվություն ստանալ ցանկացողների քանակը: Հարցվածներին առավել շատ հետաքրքրել են կոռուպցիայի առնչությամբ իրենց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող տեղեկատվությունը, տեղեկատվությունն այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում, պետական մարմինների թեժ գծերի մասին, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մասին և հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին տեղեկատվությունը:

- **Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններիուսանողների հասանելիությունը հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ կրթական ծրագրերին. հիմքային՝ 2019թ. -0, 2022թ. առնվազն 7 բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որպես պարտադիր ծրագիր:**

<u>Փաստացի արձանագրված արդյունք</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2020 թվականի հունվարի 20-ի թիվ 03/08.3/841-20 գրությամբ նախնական և միջին մասնագիտական (այսուհետ՝ ՆՄՄԿ) շուրջ 100 ուսումնական հաստատություններին հանձնարարվել է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմայով մշակել ուսումնական ծրագիր՝ 2020-2021 ուսումնական տարվանից «Իրավունքի հիմունքներ» առարկայի շրջանակում պարտադիր ուսուցանելու նպատակով: Վերոնշյալ

թեմայով թեմատիկ ծրագիրը մշակվել և դասավանդվում է 2020-2021 ուսումնական տարվանից սկսած ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում:

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում մշակվել և իրականացվում է 428 մշակված թեմատիկ առարկայական ծրագրեր՝ «Կոռուպցիայի իրավական բնութագիրը», «Հակակոռուպցիոն քաղաքականությունը», «Հակակոռուպցիոն երևույթի հասկացությունը», «Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում», Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները և գնահատումները», «Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը և խնդիրները», «Հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները» և այլ թեմաներով, որոնց ուսանողների թիվը՝ 8430 է:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում մշակվել և իրականացվում են թվով 244 թեմատիկ առարկայական ծրագրեր՝ «Կոռուպցիայի դրսևորումներն ու մակարդակները», «Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Քրեական դատավարության իրավունք հասկացությունը/խնդիրները և սուբյեկտները, «Դատական քննության փուլերը/վարույթը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում/», «Միջազգային իրավունք», «Հասկացությունը և էությունը» և այլ թեմաներով, որոնց ուսանողների թիվը 3396 է: Այսպիսով՝ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմատիկ ծրագիրը դասավանդվում է ՆՄՄԿ շուրջ 100 ուսումնական հաստատություններում:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

Երևանի պետական համալսարանի բակալավրիատի բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլաններով նախատեսված է «Իրավունքի հիմունքներ» կամընտրական դասընթացը, որի ուսումնասիրության շրջանակում անդրադարձ է կատարվում հակակոռուպցիոն քաղաքականությանը, ինչպես նաև Իրավագիտության ֆակուլտետի մագիստրոսական 4 կրթական ծրագրերում (Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ, Դատական իրավունք և փաստաբանություն, Քրեական արդարադատություն և փաստաբանություն, Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն) խորությամբ ուսումնասիրվում են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը ՀՀ-ում», «Կոռուպցիայի կանխարգելման քրեաիրավական հիմնախնդիրները» և «Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները» դասընթացները:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում «Քաղաքագիտություն» առարկայի շրջանակներում դասավանդվում է կոռուպցիա. կոռուպցիայի տեսակները (նյութական, բարոյական և այլն), Ինստիտուցիոնալ տնտեսագիտության՝ Անլեգալ տնտեսության ինստիտուցիոնալ տեսությունը և Ֆինանսական իրավունքի շրջանակներում՝ Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները: Ֆինանսահիրավական խախտման հասկացությունը, առանձնահատկությունները և կազմը: Կոռուպցիոն երևույթների դրսևորումները ՀՀ ֆինանսական համակարգում: «Կոռուպցիա» և

«կաշառք» հասկացությունների իրավական բովանդակությունը և առանձնահատկությունները: Ֆինանսական պատասխանատվության իրավական առանձնահատկությունները ՀՀ-ում: Ֆինանսահիրավական պատասխանատվության առանձնահատկությունները: Կոռուպցիոն իրավախախտումների դեմ պայքարի ֆինանսահիրավական միջոցները և ուղությունները:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում բոլոր կրթական ծրագրերում «Քաղաքագիտություն» դասընթացի նկարագրում ներառվել է «Պետության հակակոռուպցիոն քաղաքականության հիմնախնդիրները» վերնագրով թեմա: Թեմայի շրջանակներում ուսանողները ուսումնասիրում են հակակոռուպցիոն քաղաքականության ընդհանուր բնութագիրը, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման փորձը տարբեր պետությունների օրինակով, ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականությունը և այլ խնդիրներ:

Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի մասնագիտությունների գծով ներդրվել է «Ներգրավված քաղաքացի» դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական սկզբունքները, ուղղությունները, քաղաքականությունը:

Մշակվել է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» դասընթացը, որը նախատեսվում է որպես կամընտրական դասընթաց ներառել 2023-2024 ուսումնական տարվանից մի շարք մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլաններում: Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել կոռուպցիան ըստ ոլորտների, կոռուպցիայի պատճառները, ուսումնասիրության և չափման մեթոդները, ՀՀ և միջազգային հակակոռուպցիոն օրենսդրությունը, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունները և ռազմավարական պլանները:

Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի հասարակագիտության ամբիոնի կողմից անցկացվել է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» համահամալսարանական դասընթացը: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» դասընթացի ընդհանուր ժամաքանակը կազմում է 60 ժամ, որից 24-ը լսարանային՝ 6-ը սեմինար/գործնական պարապմունքներ, 18 դասախոսություն: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում վարկանիշային /ստուգարքային/ ամփոփումով: Դասընթացն ունի 2 կրեդիտ: Այն ուղղված էր հակակոռուպցիոն քաղաքականության, կոռուպցիայի կանխարգելման, պայքարի միջոցների, հանրությանը պայքարի գործիքակազմում ընդգրկելու, այդ համատեքստում՝ ինստիտուցիոնալ առկա և նոր լուծումների, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կառույցների և ներպետական իրավական ակտերի իրավադրույթների բովանդակության բացահայտմանը, դրանց վերլուծությանը: Դասընթացի նպատակն էր ներկայացնել կոռուպցիա հասկացությունը, դրա հակաիրավական նշանակությունը և դրսևորման ձևերը, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն քաղաքականությունը և դրա առանձնահատկությունները, տեսական վերլուծության ենթարկել Կոռուպցիայի դեմ պայքարի միջպետական, ներպետական 2 իրավական կառուցակարգերը, ներկայացնել 2023-2026թթ. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները, վերհանել ՀՀ-

ում առավել տարածված կոռուպցիոն խնդիրներն ըստ ոլորտի կարգավորման ու կոռուպցիոն վարքի ինստիտուցիոնալ և նորմատիվ առանձնահատկությունները:

Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում 2022-2023 ուսումնական տարվանից «Իրավունք» առարկայի շրջանակներում, որպես առարկայական ծրագրի մասն ներդրվել է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» պարտադիր դասավանդվող դասընթացը և ուսանողներին դասավանդվում է կոռուպցիայի հասկացությունը, կոռուպցիան ծնող պայմանները և պատճառները, հակակոռուպցիոն քաղաքականության մեջ պետության իրավական գործիքները և քաղաքացիական հասարակության դերը հակակոռուպցիոն քաղաքականության մեջ նյութերը:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում Մագիստրոսական կրթական ծրագրով բոլոր ՄԿԾ-երի ուսումնական պլաններում ընդգրկված է «Կառավարման և հաղորդակցման հմտություններ» դասընթացը, որի ծրագրում ներառված են նաև կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող առանձին թեմաներ: ԵԹԿՊԻ լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնը նույնպես կազմակերպում է «Կոռուպցիայի դրսևորումները և պայքար կոռուպցիայի դեմ» թեմայով դասընթացներ:

Գորիսի պետական համալսարանում կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող թեմաներ ուսումնասիրվում են «Իրավագիտություն» մասնագիտության «Քրեական իրավունք» առարկայի ծրագրի շրջանակներում: Քրեական իրավունք առարկան ուսումնասիրվում է առկա ուսուցման համակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կիսամյակներում, իսկ հեռակա ուսուցման համակարգի՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ կիսամյակներում: «Քրեական իրավունք» առարկայի ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում է կոռուպցիային վերաբերող հոդվածները և դրանց մեկնաբանությունները:

Բացի այդ, ԳՊՀ առկա ուսուցման 5-րդ և հեռակա ուսուցման 7-րդ կիսամյակում որոշ մասնագիտություններում դասավանդվում է «Իրավագիտություն» առարկան, որի առարկայական ծրագրի շրջանակներում ի թիվս իրավագիտության ճյուղերի ներառված է նաև քրեական իրավունք բաժինը, որի շրջանակներում ուսանողները ծանոթանում են կոռուպցիային վերաբերող հոդվածներին, մասնավորապես՝ կաշառք տալ, կաշառք ստանալ, կաշառքի միջնորդություն, ընտրակաշառք տալ, ընտրակաշառք ստանալ, ընտրակաշառքի միջնրդությունը և այլ հոդվածների:

Գավառի պետական համալսարանում մշակվել և գործածվում է «Գավառի պետական համալսարանի 2023-2027թթ. հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը», որի նպատակներն են համալսարանի կոռուպցիոն քաղաքականության հիմնական սկզբունքների և ուղղությունների ամրագրումը, ԳՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների նախատեսումը, ակնկալվող արդյունքների հստակեցումը, ուսանողների, դասախոսների, բոլոր տարակարգերի աշխատակիցների իրավունքների պաշտպանությանը նպաստումը:

Միաժամանակ, ԳՊՀ-ի բոլոր կրթական ծրագրերի համար իրականացվում է «Իրավագիտության հիմունքներ» դասընթացը, որի շրջանակում ուսումնասիրվում է հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքները, իսկ «Իրավագիտություն» բակալավրի

մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանում նախատեսված է «Քրեական իրավունք» դասընթացը, որի շրջանակներում դասավանդվում են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող թեմաներ:

«Հայբուսակ» համալսարանում «Իրավագիտություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողները կոնկրետ առարկաների շրջանակներում ուսումնասիրում են կոռուպցիան՝ որպես հանցակազմ պարունակող տարր:

Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսում «Վարչական իրավունք» առարկայական ծրագրում ներառված է «Կոռուպցիան և հանրային ծառայությունը» թեման՝ հետևյալ բովանդակությամբ. բարեվարքության հայեցակարգը, էթիկայի նորմեր և վարքագծի կանոններ, շահերի բախում, գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում, հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողովներ, բարեվարքության պատասխանատուներ:

Համալսարանում գործող Իրավաբանական կլինիկայի շրջանակներում պարբերաբար իրականացվում են սեմինարներ, քննարկումներ հետևյալ թեմաներով.

1. Կոռուպցիայի հասկացությունը, տեսակները, պատճառները և հետևանքները, կոռուպցիայի դրսևորման առանձնահատկությունները, գնահատման մեթոդները:

2. Հակակոռուպցիոն քաղաքականության էությունը, կանխարգելման և բացահայտման մեխանիզմները՝ հակակոռուպցիոն քաղաքականության և ռազմավարության էությունը, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը և հաստատությունները, կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման գործիքակազմը, կոռուպցիոն ռիսկերի գնահատումը, հանրային վերահսկողությունը:

3. Կոռուպցիայի համար պատասխանատվությունը՝ կոռուպցիոն բնույթի իրավախախտումները, դրանց տեսակներն ու առանձնահատկությունները, վարչական և քրեական պատասխանատվություն, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների որակում ու քննության առանձնահատկություններ, ապօրինի գույքի բռնագրավում, ակտիվների վերադարձ և այլն:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանում համահամալսարանական «Հասարակագիտություն» դասընթացի /3 կրեդիտ, 90 ժամ/ շրջանակներում որպես առարկայական ծրագրի մաս ավելացվել է 10 ժամ՝ հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքների թեմաները ներառելու համար: Թեմաների ուսուցման արդյունքում ուսանողը ձեռք է բերում վերջնարդյունքներ, որոնք վերաբերում են կոռուպցիայի բնութագրմանը, ծագմանը և հետևանքների հաղթահարմանը:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, հարկ է եզրահանգել, որ, ըստ էության, դպրոցներում, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող թեմաներ դասավանդվում են: Ըստ էության, այս ռազմավարական ուղղությամբ ևս հարկ է արձանագրել բարեփոխումների իրականացումը:

- **Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների հասանելիությունը կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող թեմաներով վերապատրաստման ծրագրերին. հակակոռուպցիոն վերապատրաստման ծրագրերի և դրանց մասնակիցների՝ 2019թ.՝ 49 քաղաքացիական ծառայող, 2022թ.՝ պետական կառավարման համակարգի, անկախ և ինքնավար մարմինների առնվազն 200 քաղաքացիական ծառայող:**

<u>Փաստացի արձանագրված արդյունք</u>

2022 թվականի ընթացքում Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպվել է «Բարեվարքություն» թեմայով 10 վերապատրաստում, որին մասնակցել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված համապատասխան մարմինների **280** քաղաքացիական ծառայող: Վերապատրաստման դասընթացն ընդգրկել է հետևյալ թեմաները՝

- Բարեվարքության շրջանակը հանրային ծառայությունում
- Բարեվարքության կառավարում
- Բարեվարքությունը անձնակազմի կառավարման գործընթացներում
- Բարեվարքության բաղադրիչները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Բարեվարքություն» թեմայով վերապատրաստումը Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպման շրջանակներում:

➢ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն ռազմավարության Հավելված 2-ով սահմանված՝ հակակոռուպցիոն իրազեկման և կրթության առնչությամբ սահմանված արդյունքային ցուցիչների և փաստացի արձանագրված արդյունքների համադրության վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

- **Ակնկալվող՝ տարեկան առնվազն 2 անգամ իրականացվել է հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգ, փաստացի՝ տարվա մեջ 2 անգամ իրականացվել է հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգ**

Այսպիսով, 2019-2022 թվականներին տարվա մեջ 2 անգամ իրականացվել է հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգ, որի արդյունքներն ամփոփվել են համապատասխան զեկույցներում կամ հաշվետվություններում: Ընդ որում,

իրականացվել է կիսամյակային և տարեկան մոնիթորինգ, իսկ տարեկան մոնիթորինգի արդյունքներն ամփոփվել են տարեկան մոնիթորինգի և գնահատման զեկույցներում/հաշվետվություններում: Նշված տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://moj.am/legal/browse/h_reports/:

- **Ակնկալվող՝ տարեկան առնվազն 5 անգամ հասարակությունը իրազեկվել է հակակոռուպցիոն ռազմավարության տարբեր միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ, փաստացի արձանագրված արդյունք՝ Կոռուպցիայի դեմ պայքարի հաղորդակցման 2022 թվականի գործողությունների ծրագրի շրջանակում՝ շուրջ 6 ամիս շարունակ՝ առնվազն 7 և ավելի անգամ**

Նշվածի համատեստում հարկ է հավելել, որ Կոռուպցիայի դեմ պայքարի հաղորդակցման 2022 թվականի գործողությունների ծրագրի շրջանակում՝ շուրջ 6 ամիս շարունակ՝ առնվազն 7 և ավելի անգամ հասարակությունը իրազեկվել է հակակոռուպցիոն բարեփոխումների մասին: Բացի այդ, Արդարադատության նախարարությունը և հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինները ևս պարբերաբար հասարակությանը իրազեկել է կատարվող հակակոռուպցիոն բարեոխումների և իրենց իրավակիրառ գործունեության վերաբերյալ: Նշված իրազեկումների մասին մանրամասն տեղեկատվությունը հասանելի է սույն զեկույցի՝ գործոնային մոնիթորինգի բաժնի 37-րդ միջոցառման վերաբերյալ հաշվետվության մեջ:

- **ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼԻ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՄԱԹԻՎ**

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանվել է եզրափակիչ մոնիթորինգի ցուցիչը՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթիվը հիմքային՝ 2018 թվական-35, 2022 թվական-50

Կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2019-2020 թվականների արդյունքներով Հայաստանի Հանրապետությունը զգալի աճ է գրանցել՝ 14 միավորով բարելավելով դիրքերը: Ունենալով 49 միավոր՝ Հայաստանը 2020 թվականին զբաղեցրել է 60-րդ հորիզոնականը (2019 թվականին՝ 77-րդ հորիզոնական, 2018 թվականին՝ 105-րդ): 2021 թվականի արդյուքներով 49 միավոր պահպանվել է: Սակայն Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթվի 2022 թվականի արդյունքներով արձանագրվել է 49-ը միավորից նվազեցում 3 միավորով՝ դառնալով 46-րդ միավոր:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ որպես հիմքային ցուցիչ նշված էր 2018 թվականի արդյունքը՝ 35 միավոր, ապա ստացվում է՝ Կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2022 թվականի համար ակնկալվող 42,8%

բարելավման փոխարեն արձանագրվել է 31,4%, ինչը ևս էական ձեռքբերում է: Այսինքն, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը, ըստ էության, իր դրական արձանագրումն է ստացել նաև հասարակական ընկալման մեջ:

Նման պայմաններում հաշվի առնելով նշյալը և Հակակոռուպցիոն ռազմավարության՝ 80,2%-ով կատարված լինելու հանգամանքը՝ հարկ է արձանագրել 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության բարեհաջող իրականացումը:

➢ ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼԻ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՄԱԹՎԻ ՀԵՏԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Այնուամենայնիվ, հաշվի առնելով նշված հետընթացը՝ մոնիթորինգի շրջանակներում իրականացվել է ուսումնասիրություն՝ հետընթացի պատճառների պարզման նպատակով, որի առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

Հայաստանում Կոռուպցիայի ընկալման 2022 թվականի համաթվի հաշվարկման շրջանակում հաշվի են առնվել հետևյալ 6 միջազգային ռեյտինգային զեկույցները, մասնավորապես՝

1. Ֆրիդոմ Հաուսի «Անցումային փուլում գտնվող պետություններ» զեկույցը, որտեղ գնահատվում է ժողովրդավարության վիճակը, որի շրջանակում հիմնականում դիտարկվում է հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը, պետության չափազանց մեծ ներգրավվածությունը երկրի տնտեսական կյանքում, կոռուպցիան և բյուրոկրատական քաշքշուկները տնտեսական ոլորտում, պաշտոնատար անձանց կողմից բիզնեսներ ունենալն ու դրանցով փաստացի զբաղվելը, պետական մարմինների գործունեության և վարչարարության, պաշտոնների նշանակման թափանցիկությունը, ազդարարների պաշտպանությունը, մամուլի անկախությունը և այլն:

2. PRS-Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2022 թ. ուղեցույց. ինդեքսը ներկայացնում է քաղաքական, տնտեսական, ֆինանսական և համակցված ռիսկերի վարկանիշներն ու կանխատեսումները, որի շրջանակում գնահատվում է կոռուպցիան քաղաքական համակարգի ներսում (հատուկ վճարումներ, կաշառք՝ կապված ներմուծման և արտահանման լիցենզիաների, հարկային գործընթացների հետ, ոստիկանության պաշտպանության կամ վարկերի հետ, չափից ավելի հովանավորչություն, նեպոտիզմ, աշխատատեղեր «պահելու», «լավությունների» փոխանակման, կուսակցությունների գաղտնի ֆինանսավորման և քաղաքականության և բիզնեսի միջև կասկածելի սերտ կապեր):

3. BF (TI) - Բերթելսմանի հիմնադրամի 2022 թ. տրանսֆորմացիոն համաթիվ. չափում է ժողովրդավարության, շուկայական տնտեսության և կառավարման որակը: Կոռուպցիայի առնչությամբ պարզվում է, թե որքանով են հետապնդվում կամ պատժվում իրենց պաշտոնը չարաշահող պետական պաշտոնատար անձինք և որքանով է կառավարությունը հաջողությամբ զսպում կոռուպցիան:

4. GI-Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2021 թ.վարկանիշ. ներառում է քաղաքական, տնտեսական, իրավական, հարկային գործառնական և անվտանգության ռիսկերի վերլուծությունը: Գնահատում են կոռուպցիայի լայն շրջանակ՝ մանր կաշառք տալուց մինչև ավելի բարձր մակարդակի քաղաքական կոռուպցիա (առաջարկվում է գնահատել կաշառակերության կամ այլ կոռուպցիոն գործողությունների բախվելու վտանգը՝ բիզնես իրականացնելու համար թույլտվություն ստանալու, արտահանման, ներմուծման, պայմանագրերի կնքման առնչությամբ և այլն):

Թեև վերոնշյալ 4 ինդեքսներով առանձին կոմպոնենտներով որոշ փոփոխություններ եղել են, սակայն ընդհանուր ինդեքսների փոփոխություն չի արձանագրվել:

2022 թվականի կոռուպցիայի ընկալման համաթվի նվազեցում արձանագրվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի ընկերությունների գործադիր տնօրենների հարցման և Ժողովրդավարության բազմազանության ծրագրի արդյունքներով:

5. Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների (Executive Opinion Survey) կարծիքի ամենամյա հարցում (2021թ.). հարցման նպատակն է պարզել ներմուծման, արտահանման, կոմունալ ծառայությունների, հարկերի, պետական պայմանագրերի և լիցենզիաների տրամադրման, բարենպաստ դատական որոշումների ընդունման առնչությամբ հաճախ ընկերությունների կողմից չփաստաթղթավորված հավելյալ վճարումների կամ կաշառքների դեպքերը, ինչպես նաև սովորական կոռուպցիայի արդյունքում պետական միջոցների տրամադրումը ընկերություններին, անհատներին կամ որոշակի խմբերին: Ըստ ԹԻ հրապարակած տեղեկատվության ՀՀ-ն տվյալ ցուցանիշով գրանցել է հետընթաց 13 միավորով:

6. VDEM-Ժողովրդավարության բազմազանության ծրագիր 2022 թվական. ծրագիրը չափում է ժողովրդավարությունը, որի շրջանակում կոռուպցիայի առնչությամբ դիտարկում է քաղաքական կոռուպցիան՝ տարբերակելով ինչպես գործադիր, օրենսդրական և դատական իշխանություններում, այնպես էլ քաղաքական դաշտի տարբեր ոլորտներում առկա խոշոր և մանր կոռուպցիան: ՀՀ-ն 2022 թվականին հետընթաց է գրանցել 4 միավորով:

Նշված բոլոր զեկույցներում հիմք են ընդունվում հասարակական, գործարար ոլորտի ընկալումները և ոլորտի փորձագետների դիրքորոշումները:

Հաշվի առնելով նշված զեկույցների գնահատման շրջանակը, համապատասխան զեկույցներով, ինչպես նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից ՀՀ-ում առկա խնդիրների առնչությամբ բարձրաձայնված խնդիրները՝ Կոռուպցիայի ընկալման համաթվի հետագա աճի ապահովման առնչությամբ անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր, որոնք ուղղված կլինեն մասնավորապես հետևյալ խնդիրների լուծմանը.

- բացառել պետական գնումների ընթացքում շահերի բախումը, օրինակ այնպիսի դեպքերը, երբ որևէ մարմնի ղեկավարի ընտանիքի անդամները կամ այլ սերտ առնչություն ունեցող անձինք հաղթեն տվյալ ոլորտի պետական մարմնի գնումներում.

- բացառել պաշտոնատար անձանց կողմից բիզնեսով անմիջական զբաղվելը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից բիզնես ունենալը այն ոլորտներում, որոնց նկատմամբ իրենք հսկողություն կամ կարգավորում են իրականացնում.
- բացառել պաշտոնավարման ընթացքում այնպիսի գործողությունների կատարումը, որոնք միտված են պաշտոնավարման ավարտից հետո իրենց համար աշխատանքի պայմաններ ստեղծելուն (դիցուք՝ որևէ կազմակերպության համար «լավություններ» անել հետագայում այդ ընկերությունում տնօրենի կամ այլ պաշտոն զբաղեցնելու պայմանով).
- ակտիվացնել ՓՄՁ-ների աջակցությանն ուղղված տնտեսական քաղաքականությունը, ակտիվ քայլեր ձեռնարկել գործարարությանը և շուկայի մուտքը խոչընդոտող խնդիրների (ներառյալ՝ լիցենզիաների, թույլտվությունների տրամադրում) վերհանման և լուծման ուղղությամբ.
- ապահովել զանգվածային լրատվության միջոցներով և համացանցով տարածվող՝ պաշտոնատար անձանց, առավելապես բարձաստիճան պաշտոնատար անձանց առնչվող բոլոր կոռուպցիոն դեպքերի պատշաճ քննությունը իրավասու մարմինների կողմից և արդյունքների մասին հասարակությանը հաղորդելը/իրազեկելը.
- բացառել կամ նվազագույնին հասցնել նեպոտիզմը պետական պաշտոնների նշանակման գործընթացում, բացառել հանրության կողմից կոռուպցիայի առնչությամբ վատ համբավ ունեցող անձանց նշանակումը բարձր պաշտոնների.
- բացառել էլիտայի կողմից պետության զավթումը (պետական միջոցների օգտագործումը, ներդրումները ոչ թե հանրությանը, այլ կոնկրետ անձանց օգուտ բերող նպատակներով, որոշումների կայացման (այդ թվում՝ օրենքների ընդունման) գործընթացում նրանց ազդեցությունը).
- բացառել դատարանների կողմից որոշումների կայացումն արագացնելու կամ հետաձգելու կամ ձեռնտու որոշումներ կայացնելու համար վճարների տրամադրման պրակտիկան.
- բացառել պաշտոնյաների կողմից իրենց դիրքի օգտագործումը քաղաքական կամ անձնական տեսանկյունից իրենց ձեռնտու որոշումների ընդունման համար:

Բացի այդ, հարկ է ապահովել բոլոր պետական մարմինների կողմից պատշաճ հաղորդակցումը այն հասարակական կազմակերպությունների և ոլորտային փորձագետների հետ, որոնք միջազգային կառույցների շրջանակում գնահատում են ՀՀ-ին, ապահովել բոլոր պետական մարմինների կողմից իրենց ոլորտային ռեյտինգային միջազգային գնահատումների առնչությամբ մշտական հսկողություն և հնարավորինս համագործակցություն այդ կառույցների հետ: Դա հնարավորություն կտա ժամանակին նկատել Հայաստանի այս կամ այն ցուցիչի գծով շեղումները, շտկել մեր երկրում իրականացվող ժողովրդավարական գործընթացների և կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումների հնարավոր ոչ ճիշտ մեկնաբանությունները միջազգային զեկույցներում և, դրանով իսկ նպաստել ՀՀ ռեյտինգի բարձրացմանը:

Համաշխարհային բանկի կոռուպցիայի վերահսկման ցուցիչը առնչությամբ հարկ է նշել, որ թեև Հակակոռուպցիոն ռազմավարությամբ այն ևս նախատեսված է եղել որպես եզրափակիչ մոնիթորինգի ցուցիչ, սակայն քանի որ 2022 թվականի վերաբերյալ դեռևս տվյալներ հասանելի չեն և հետևաբար հնարավոր չէ պարզել Հակակոռուպցիոն ռազմավարությամբ ակնկալվող՝ 2018 թվականի 42.79 ցուցանիշի համեմատությամբ 2022 թվականին արձանագրված 10% աճի արձանագրումը կամ որևէ այլ արդյունքի պարզումը:

Այսպիսով, ամփոփելով ամբողջ վերոշարադրյալը, հարկ է եզրահանգել, որ ըստ էության, ըստ ռազմավարական ուղղությունների՝ հիմնականում ամբողջապես կատարվել են կոռուպցիայի դեմ պայքարին և կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունավետությանն ուղղված միջոցառումները:

Հակակոռուպցիոն ռազմավարության պատասխանատու մարմինների ինքնագնահատումների և Մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատու մարմնի՝ Արդարադատության նախարարության գնահատման ուսումնասիրությունից և համադրությունից պարզ է դարձել, որ գնահատման արդյունքները մեծամասամբ համապատասխանում են, իսկ տարբերությունները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ պատասխանատուները գնահատումն իրականացրել են միայն իրենց իրավասության շրջանակում կատարված աշխատանքների մասով՝ որպես համակատարող մարմին:

Ամփոփելով արդյունքային մոնիթորինգի շրջանակում իրականացված ուսումնասիրության արդյուքները, ըստ ռազմավարական ուղղությունների, հարկ է նշել հետևյալը.

- <u>Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ձևավորումը.</u>

Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը ամբողջականացման փուլում է. ստեղծվել և գործունեություն են իրականացնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, Հակակոռուպցիոն Կոմիտեն, Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչությունը, Հակակոռուպցիոն դատարանները: Այնուամենայնիվ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետության ապահովման նպատակով անհրաժեշտ է այդ համակարգի մարմիններին ապահովել անհրաժեշտ ռեսուրսներով, իրականացնել աշխատակիցների շարունակական վերապատրաստումներ:

- <u>Կոռուպցիայի կանխարգելումը.</u>

Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ էական բարեփոխումներ են իրականացվել, որոնց արդյունքում՝

- բարեվարքության ստուգման պահանջ է սահմանվել դատավորների, դատախազների, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների թեկնածուների/թեկնածուների հավակնորդների համար,
- ընդլայնվել է հայտարարտուների շրջանակը, որը ներկայումս ընդգրկում է օրենսդիր, դատական, գործադիր իշխանություններում, անկախ և ինքնավար մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիայի տեսանկյունից ռիսկային բոլոր պաշտոնները, ինչպես նաև կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները (այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները), պետական մասնակցությամբ ընկերությունների, ինչպես նաև ՊՈԱԿ/ՀՈԱԿ-ների ղեկավար կազմը,
- հայտարարատուները պարտավորություն ունեն հայտարարագրելու ոչ միայն գույքը, եկամուտը, շահերը, այլև ծախսերը, այլև իրենց կողմից փաստացի տիրապետվող գույքը,
- ներդրվել է իրավիճակային հայտարարագրի ինստիտուտը,
- ստեղծվել է իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստր, իրական շահառուների (սեփականատերերի) բացահայտման պահանջ է սահմանվել Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց համար,
- բարելավվել է գնումների և տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտների օրենսդրությունը:
- ամբողջությամբ վերանայվել են շահերի բախման և անհամատեղելիության պահանջների բախման վերաբերյալ կարգավորումները, նվերներին առնչվող կարգավորումները, ներառյալ՝ նվերների հաշվառման և դրա նկատամբ վերահսկողության կառուցակարգեր ՝ ապահովելով միասնականություն, միևնույն ժամանակ նախատեսելով ոլորտային առանձնահատկություններից բխող հավերյալ անհամատեղելիության պահանջներ և այլն:

Սակայն սույն զեկույցով մատնանշված մնացյալ խնդիրների լուծման նպատակով առաջակվում է.

- անմիջական ղեկավար չունեցող պաշտոնների (անկախ և ինքնավար մարմինների անդամներ, համայնքների ղեկավարներ), նախարարների, նախարարների տեղակալների համար սահմանել վարքագծի կանոնները և բարեվարքության կառուցակարգեր, սահմանել այդ պահանջերի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին, խախտումների դեպքում սահմանել իրավական հետևանք,
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրել բավարար ռեսուրսներ՝ առանձին մարմիններում շահերի բախման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված վերջինիս ընդլայնված լիազորություններն արդյունավետ իրականացնելու նպատակով,
- ապահովել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող վիճակագրության վարումը և հրապարակումը,
- վերանայել կամ սահմանել վարքագծի կանոններ առանձին խումբ պաշտոնատար անձանց (պատգամավորներ, քննիչներ, դատախազներ) համար, և այդ կանոնների խախտման դեպքերի համար նախատեսել իրավական հետևանքներ,

- գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման նպատակով նախատեսել հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող միջոցառումների իրականացում, որպիսիք կարող են լինել պետության կողմից արտոնությունների տրամադրման դեպքում հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը որպես առավելության չափանիշ դիտարկելը, այլ առավելությունների սահմանումը այդ տնտեսվարող սուբյեկտների համար,
- նկատի ունենալով ԹԻ կոռուպցիոն ընկալման համաթվի իջեցման հիմնական պատճառները՝ գործուն մեխանիզմներ ներդնել դրանց լուծման ուղղությամբ,
- ապահովել պետական մասնակցությամբ ընկերությունների, ինչպես նաև ՊՈԱԿ/ՀՈԱԿ-ների ղեկավար կազմի՝ մրցութային կարգով և թափանցիկ ընթացակարգերով նշանակման կառուցակարգերի արդյունավետ կիրարկումը:

➢ <u>Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը.</u>

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով էական բարեփոխումներ են իրականացվել, որոնք հիմնականում ամփոփված են նոր Քրեական օրենսգրքում և նոր Քրեական դատավարության օրենսգրքում: Միևնույն ժամանակ ներդրվել են ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձման կառուցակարգերը: Այնուամենայնիվ սահմանված նոր կարգավորումների արդյունավետ կիրարկման նպատակով առաջարկվում է.

- բարելավել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մեթոդիկան՝ միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ: Այս համատեքստում առաջարկվում է նաև դոնորների աջակցությամբ միջազգային փորձագետներ ներգրավել և գործող մեթոդիկան ներկայացնել վերջիններիս՝ ուսումնասիրության և առաջարկների ներկայացման նպատակով,
- հակակոռուպցիոն քննիչների և օպերլիազորների համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ, որոնց շրջանակում կներկայացվեն նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայման մեթոդիկայի, հմտությունների լավագույն միջազգային փորձը, նոր տեխնոլոգիաների միջոցով ապացույցների ձեռքբերման հմտությունները,
- ապահովել կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ առանձնացված վիճակագրության վարումը կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ողջ շղթայի առնչությամբ, ինչը թույլ կտա գործի հարուցումից մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահը ամբողջական պատկերացում կազմել իրավակիրառ պրակտիկայի մասին,
- ազդարարման համակարգի բարելավման շրջանակներում շարունակել բարելավելու ազդարարների պաշտպանության մեխանիզմները:

➢ <u>Հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը.</u>

Հակակոռուպցիոն կրթության առնչությամբ իրականացված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ արդեն իսկ հակակոռուպցիոն կրթություն իրականացվում է ինչպես ավագ դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում, այնպես էլ պետական և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար: Այնուամենայնիվ, կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողականության ձևավորման համար անհրաժեշտ է կրթել հասարակությանը՝ վերջինիս պարբերաբար իրազեկելով ոչ միայն իրականացվող բարեփոխումների մասին, այլև կրթական, ուսուցողական նյութերի և տեսահոլովակների միջոցով հասարակությանը բացատրել՝ ինչ է կոռուպցիոն, ոնց է այն դրսևորվում, ինչ բացասական հետևանքների է հանգեցնում, և հասարակության անդամները ինչ պետք է անեն կոռուպցիան կանխարգելելու, ինչպես նաև բացահայտման հարցում պետությանը օժանդակելու համար:

- <u>Մշտադիտարկումը (մոնիթորինգը)</u>

Մոնիթորինգի և գնահատման գործիքակազմի կատարելագործման տեսանկյունից անհրաժեշտ է նախևառաջ ավարտին հասցնել թվային գործիքների կիրառմանն ուղղված աշխատանքները: Բացի այդ, մեխանիզմներ պետք է սահմանվեն հակակոռուպցիոն ծրագրերի և միջազգային պարտավորությունների կատարման համար մարմինների հաշվետվողականության մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ, որը կներառի ոչ միայն հաշվետվություններ կազմող անձանց և հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների շարունակական կարողությունների զարգացումը, այլև հաշվետվության ներկայացման և թիրախային բովանդակության ապահվման կարևորության շուրջ իրազեկման աշխատանքների շարունակականությունը:

Նշված աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ է մեխանիզմներ մշակել Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիթորինգի վարչության կողմից հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև միջազգային պարտավորությունների համակարգման գործընթացը բարդացնող խնդիրների լուծման ուղղությամբ: Մասնավորապես անհրաժեշտ է մեխանիզմներ նախատեսել իրավասու մարմիններից սահմանված ժամկետում և ամբողջական տեղեկությունների ստացման ապահովման, նույնաբովանդակ տեղեկատվության առնչությամբ տարբեր մարմինների կողմից ներկայացված տեղեկությունների անհամապատասխանության դեպքերի նվազեցման ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիթորինգի վարչության մեծածավալ գործառույթները և դրանց կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար՝ անհրաժեշտ է դիտարկել նշված վարչության հաստիքների համալրման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման հնարավորությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԱՆԱՎԱՐՏ ՄՆԱՑԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

N/N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ և ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՅՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ (ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ), ՈՐՈՆՔ ՉԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ ԿԱՄ ԹԵՐԻ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ
1	**Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում**	Թեև կատարողականի համատեքստում սույն միջոցառումն ամբողջությամբ կատարված է, սակայն նկատի ունենալով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթների մեծ ծավալը՝ հարկ է դիտարկել վերջինիս ռեսուրսների ընդլայման հնարավորությունները
2	**Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում**	Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումների ձևավորում, որոնք ապահովված կլինեն շենքային ու նյութատեխնիկական պայմաններով
3	**Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում**	Հակակոռուպցիոն մասնագիտացված դտարանի դատավորների առնվազն 50%-ի մասնագիտական պատրաստման ուսումանների անցկացում:

5	**Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում**	Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ոլորտային հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում
6	**Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում**	Ապահովել դոնորների ներգրավվածությունը հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարման գործընթացին համամասնորեն բաշխում և համակարգման և համակարգման մեխանիզմների կատարելագործում:
7	**Ազգային ժողովի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (անձ կամ ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում**	Անհրաժեշտ է ապահովել հակակոռուպցիոն պատասխանատուների և վերջիններիս փոխարինող անձանց տվյալների (անուն, ազգանուն, պաշտոն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ) հրապարակումը համապատասխան մարմինների կայքէջերի տեսանելի վայրերում՝ մշտական հիմունքներով:
8	**Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագրի մշակում:**	Կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգի հաստատում
9	**Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, թեկնածուների, դատախազների թեկնածուների, քննիչների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների,**	Քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամի ընտրության/նշանակման գործընթացում բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգերի ներդրում

	դատախազների և դատավորների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում:	
10	**«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում:**	«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման վերաբերյալ գնահատման արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթի քննարկում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում և բարձրացված խնդիրների լուծումների նախատեսում
11	**«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում:**	Մշակվել և ՀՀ Ազգային ժողով ներակայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համար առնվազն 2 ուղեցույցի ընդունում Բարեվարքության հարցերով կազմակերպիչներին իրենց գործունեությունն ապահովող համապատասխան գործիքակազմով ապահովում
12	**«Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի),**	Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց համար վարքագծի կանոններ սահմանում

	համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների սահմանում:	Պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնների հրապարակում պաշտոնական կայքէջերում
13	**Պատգամավորի, քննիչի, վարքագծի կանոնների սահմանում, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերանայում:**	Միջազգային փորձի հիման վրա պատգամավորի վարքագծի կանոնների սահմանում, Դատախազների և դատավորների վարքագծի կանոնները վերանայում Քննիչների և պատգամավորների համար վարքագծի կանոնների վերաբերյալ առնվազն 2 վերապատրաստման իրականացում
14	**Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում:**	Քաղաքացիական ծառայության մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի ընդունում:
15	**Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում:**	Քննարկման առարկա դարձնել հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության կամ հակակոռուպցիոն փորձաքննության լիազոր մարմնի և կիրարկման կառուցակարգերի սահմանման հարցերը
19	**Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության ապահովում, Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության դիտարկում**	Շահագրգիռ կողմերի հետ քննարկվել է Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության հարցը:

20	**Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում:**	Գործարար ոլորտի համար նախատեսված պետական աջակցության առնվազն 1 ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը համապատասխան իրավական ակտերով սահմանել որպես առավելություն տվող չափանիշ
24	**Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում:**	Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության արդյունավետության բարձրացմանն ուղղված իրազեկման աշխատանքների շարունակականության ապահովում
31	**Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով:**	Թեև կատարողական մակարդակով միջոցառումն ամբողջությամբ կատարված է, սակայն անհրաժեշտ է դիտարկել բազմաթիվ պետական շտեմարաններում առկա տվյալների, ներառյալ արխիվային նյութերի թվայնացման ապահովումը, ինչը հաճախ խոչընդոտում է էլեկտրոնային հարցումների արդյունքների արագ ստացումը կամ էլեկտրոնային եղանակով ստացումը:
33	**Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում**	Ընդունել «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքը, կատարելագործել կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության մեխանիզմները
38	**«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններիդասավանդման մոդուլներում**	Հակակոռուպցիոն թեմաներով մատչելի ուսուցողական նյութերի մշակում և դրանց ցուցադրություն բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների համար:

39	**Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում:**	Հակակոռուպցիոն թեմաներով մատչելի ուսուցողական նյութերի մշակում և դրանց ցուցադրություն Երևան քաղաքի առնվազն 40, մարզերի առնվազն 5 դպրոցների ավագ դպրոցների աշակերտներին:
43	**Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում**	Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ շարունակական հարցումների իրականացում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ				
Միջոցառման համարը	Կատարման կարգավիճակ			
	Կատարված է	Կատարված է մեծամասամբ	Կատարված է մասնակի	Կատարված չէ
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ				
Միջոցառման համարը	Կատարման կարգավիճակ			
	Կատարված է	Կատարված է մեծամասամբ	Կատարված է մասնակի	Կատարված չէ
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				

19				
20				
21				
22				
23				
24				
25				
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				
34				
35				
36				
37				
38				
39				
40				
41				
42				
43				
Ընդամենը (100%)	25	8	7	3

19				
20				
21				
22				
23				
24				
25				
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				
34				
35				
36				
37				
38				
39				
40				
41				
42				
43				
Ընդամենը (100%)	27	11	4	1

Կատարողականի ընդհանուր ցուցանիշը (%) Ծանոթագրություն՝ հաշվարկն իրականացվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի բանաձևով (25x 1 +8x0.75 + 7x0,5+3x0)/43*100)	2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ոլորտավարությունը կատարում՝ **80,2**%-ով:

Կատարողականի ընդհանուր ցուցանիշը (%) Ծանոթագրություն՝ հաշվարկն իրականացվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի բանաձևով (27x 1 +11x0.75 + 4x0,5+1x0)/43*100)	2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ոլորտավարությունը կատարում՝ **86,6** %-ով: